Պատմական Հայաստանի տարածքում հայտնաբերված տորաձև խարիսխները տարբերվում են այլ երկրների նույնատիպ խարիսխներից նաև արտաքին ձևի նրբագեղությամբ: Դրանց ձևավորման ակունքները հարկավոր է փնտրել տեղական ավանդույթների մեջ: Արմավիրում հայտնաբերվել են երկու խարիսխներ, որոնք ձևով տարբերվում են մնացածներից: Մեկը տուֆից է՝ մշակված ուղղանկյուն սալով, որի տորը կտրվածքում սեղանաձև է, մյուսը խոշորահատիկ բազալտից է՝ շատ նման առաջինին, բայց տարբերվում է սալի մշակումով: Եթե առաջին խարսխի սալն ամբողջությամբ մշակված էր, ապա երկրորդ խարսխի սալի ներքևի մասը մշակված չի և կլորավուն ձև ունի: Այդ խարսխի սալի չմշակված մասը դրվում էր հողի մեջ: Նկարագրված խարիսխները իրենց համաչափություններով հիշեցնում են տորաձև խարիսխները, բայց այստեղ տորն ունի իր սկզբնական կոնաձև տեսքը:

Արմավիրի բլուրի շերտագրական ուսումնասիրությունը վկայում է, որ խարիսխներից մեկը (ուղղանկյուն լավ մշակված սալով) գտնվել է մ.թ.ա. IIդ.

<sup>26</sup> Gall H. Neue Beobachtungen zu den Sag.Medischen Felsgraben.-In: Proceedings of the Annual Symposium of Archaeological Research in Iran.Tehran, 1974, p. 31, Fig. 11,12.

<sup>27</sup> Всеобщая история архитектуры, том 1, Архитектура древнего мира 2-е изд., 1973, стр. 251, рис. 44.

գետաբարից պատրաստված հատակի տակ՝ ուրարտական երկրորդական օգտագործման խարիսխների հետ<sup>28</sup>: Այստեղից կարելի է ենթադրել, որ այս խարիսխների օգտագործումը վերաբերում է աքեմենյան ժամանակներին: Դրանք շարունակում են գոյատևել մինչև մ.թ.ա II դ.՝ վաղ հելլենիստական շրջան: Ինչպես շերտագրական ուսումնասիրությունը, այդպես էլ այդ խարիսխների ձևերը հուշում են, որ դրանց ժամանակագրությունը վերաբերում է Ուրարտուից հելլենիզմ անցման փուլին:

Այդպիսով, պատմական Հայաստանի տարածքում դեռևս ուրարտական ժամանակներից փայտի կամ քարե սյուների տակ դրվում էին ձևավորված խարիսխներ, որոնք ունեին լավ մշակված գլանաձև վերնամաս, իսկ ներքևի մասը թողնված էր կիսամշակ, քանի որ դրվելու էր հողի մեջ: Ուշուրարտական խարիսխներին բնորոշ է անմիջապես հատակի վրա դրվող կլոր բարձիկի առկայությունը (Էրեբունի, Բաստամ)<sup>29</sup>: Մ.թ.ա. IV-III դդ. ի հայտ են գալիս մշակված ուղղանկյուն սալերով խարիսխներ (Արմավիր), որոնք կտրվածքում սեղանաձև վերնամաս ունեն: Այդ խարիսխների վերին տրամագիծը ավելի մեծ է, քան սյան բնի տրամագիծը: Եվ վերջապես, հելլենիստական ժամանակներում ի հայտ են գալիս տորաձև խարիսխները, որտեղ կլոր բարձիկը նստած է ուղղանկյուն հիմքի վրա, որի դեպքում նեղանում է տորի վերին մասի տրամագիծը՝ հավասարվելով սյան բնին (Ֆուստին): Վերը նշվածից երևում է, որ տորաձև խարիսխների ձևավորումը պատմական Հայաստանում ընթանում էր տեղական ավանդույթների հիման վրա: Մ.թ.ա. II դ. տորաձև խարիսխների համապարփակ կիրառությունը Հայաստանի ամբողջ տարածքում կասկածանքի տեղիք չի տալիս, որ այդ տարրի ձևագոյացումը Հայաստանում կապված է նաև ավելի վաղ ժամանակների տեղական շինարվեստի հետ: Ցավոք, վաղհայկական հուշարձանները շատ քիչ են ուսումնասիրված:

Տորաձև խարիսխների կիրառությունը Հայաստանում շարունակվում է գոյատևել և՛ վաղ և՛ ուշ միջնադարում: Այստեղ դրանք ձեռք են բերում նոր համաչափություններ և մշակումներ՝ ստանալով նոր հարդարանք: Այդպիսի խարիսխներ հայտնաբերված են Դվինում, Եղվարդում, Ջվարթնոցում<sup>30</sup>:

<sup>28</sup> Тер-Мартиросов Ф. К стратиграфии Армавирского холма, // ВОН, 1974, 1, стр. 63.

<sup>29</sup> Оганесян К. Архитектура Эребуни, / Арин-берд I, АРА, 9, Ер., 1961, рис. 19.

<sup>30</sup> Մնացականյան Ս., Ջվարթնոցը և նույնատիպ հուշարձանները. Եր., 1971, էջ 242, գծ. 56: Քալանթարյան Ա., Դվինի կենտրոնական թաղամասի 1971 -1973թթ. պեղումները//Լրաբեր ՀԳ, 1975, 7, էջ 94, նկ. 2,3:

Բացի տորաձև խարիսխներից, Հայաստանի տարածքում հայտնաբերված են, այսպես կոչված, *ատտիկյան խարիսխներ* [Աղ. IV, նկ. 1]: Դրանք ներկայացված են Գառնիի տաճարի, Արտաշատի (նկ.19) և Դվինի (երկու խարիսխ) հուշարձաններում:

Հայտնաբերված ատտիկյան խարիսխները փոքր տարբերություններով մոտենում են խարիսխների դասական տիպին: Օրինակ, Դվինի<sup>31</sup> տուֆից կերտված մի խարիսխը [Աղ. IV, նկ. 2] չունի պլինտի մաս և կազմված է երկու տորից: Առաջին և երկրորդ տորի միջև կան դարակիկներ, որոնց միջև առկա է սկոցիան (скоция), վերին տորն ունի դարակիկ՝ 1,50սմ չափով: Վերին տորի տրամագիծը 50սմ է: Այն փոքր է ներքևի տորից: Այս ձևը համապատասխանում է դասական նմուշներին: Դվինի երկրորդ խարիսխը [Աղ. IV, նկ. 3] չափերով մեծ է և ունի 14 սմ բարձրությամբ սալ, բայց կազմված է երեք տորերից, որոնցից առաջինի բարձրությունը 13սմ, երկրորդինը՝ 7սմ, իսկ երրորդինը՝ 6սմ: Տորի վերին տրամագիծը 62սմ է: Առաջին տորը նստած է սալի վրա: Բոլոր երեք տորերը իրարից անջատված են նեղ դարակիկներով (բարձրությունը՝ 3սմ) և ուղիղ գծով անցնող փորակով (выкружка): Տորերի միջև ընդհանուր բարձրությունը 10սմ է: Երկու խարիսխներում էլ ներքևի տրամագիծը ավելի մեծ է վերինինից:

Գառնիի հեթանոսական տաճարի սյան խարիսխները<sup>32</sup> [Աղ. IV նկ. 4] իրենց տրամատներով /կողապատկերով/ շատ են նմանվում Դվինի առաջին խարիսխին, միայն այն տարբերությամբ, որ Գառնիի խարիսխն ունի սալ (բարձրությունը՝ 12սմ) և ավելի մեծ է. քառակուսի պլինտի չափը 106սմ է, վերին տորի տրամագիծը՝ 74սմ, ընդհանուր խարսխի բարձրությունը՝ 36սմ, երկու տորի միջին հեռավորությունը՝ 10սմ:

2004թ. Արտաշատում հայտնաբերված ատտիկյան խարիսխը [Աղ. IV, նկ. 5] իր պրոֆիլով (կողապատկեր) ավելի բարդ է: Այստեղ բացակայում է սալը, բայց խարիսխը կազմված է երեք տորից: Առաջին և երկրորդ տորերը նստած են իրար վրա, իսկ երկրորդի և երրորդի միջև կան երկու դարակիկ և սկոցիա: Երրորդ տորի տակ կա մի փոքր ելուստ: Առաջին տորն ունի սահուն անցում դեպի բարձրացող սյան մասը (19,5 սմ. տրամագծով), որի վրա նստած է եղել սյունը, ներքևի՝ երրորդ տորի տրամագիծը 29սմ է: Խարսխի վերևի և ներքևի հորիզոնական հարթությունների միջին մասերում կա քառակուսի կտրվածքով անցք (վերևում խորությունը՝ 6,6սմ, իսկ ներքևում՝ 8,5սմ.): Այդ անցքերի միջոցով խարիսխը ուղղահայաց կապվում էր սյան և հատակի հետ մետաղյա կամ փայտե ցցաձողով:

<sup>31</sup> **Հարությունյան Վ.**, Դվին 1, Դվինի V-VII դարերի ճարտարապետական հուշարձանները, Եր., 1950, էջ 94, նկ. 37,38:

<sup>32</sup> **Санин А.** Архитектура античных сооружений Гарни, Ер.,1988, рис. 36.

Հայաստանում հայտնաբերված և նկարագրված ատտիկյան խարիսխները, ինչպես տեսնում ենք, նմանատիպ են հունական խարիսխներին: Ատտիկյան և տորաձև խարիսխները կիրառվում էին միաժամանակ:

Ատտիկյան սյան խարիսխները հայտնի են պարթևական հուշարձաններում (Շապուր, Խատրա, Աշուր, Դուրա-Եվրոպոս, ինչպես նաև Թերմեզ, Խալչայան, Կոբադիան, Այրտամ, Խատին-Ռաբաթ, Սուրխ-Կոտալ, Բեգրամ, Շոտարակ և այլն)<sup>33</sup>: Պետք է նշել, որ Միջին Ասիայում հայտնաբերված խարիսխների վերին բարձիկները (ատտիկյան օրդերի արևելյան առանձնատիպ) ունեն գոտիներ, որոնք բացակայում են Գառնիի, Արտաշատի և Դվինի նույնատիպ խարիսխների վրա և ավելի հստակ են վերարտադրում դասական խարիսխի ձևը: Հռոմեական օրդերի ատտիկյան տարատեսակը ի հայտ է գալիս մ.թ.ա. 470թ. Դելփիքում: Այն վերջնական վերափոխման է ենթարկվում և ստանում իր ձևավորումը մ.թ.ա. V դ. երկրորդ կեսին բուն Ատտիկայում, Աթենքի Ակրոպոլիսում (Նիկեի Ապտերոսում տաճարում, Էրեխտեոնում, Պրոպեդեոսի միջին օրդերում)<sup>34</sup>: Արդեն մ.թ.ա. III-II դդ. Փոքր և Կենտրոնական Ասիայի տարածքում խարիսխների այդ տարատեսակը ստանում է լայն տարածում: Հարկավոր է նշել, որ ինչպես Վիտրուվիոսն<sup>35</sup> է ենթադրում՝ մ.թ.ա. III-մ.թ. I դդ. ճարտարապետական հուշարձաններում հայտնաբերված ատտիկյան խարիսխների վրա պահպանված է կանոնիկ ձևը՝ երկու բարձիկ իրարից բաժանված դարակիկով և սկոցիայով<sup>36</sup>: Այդպիսին են հեթանոսական Գառնիի տաճարի խարիսխները և մեկ խարիսխ Դվինից: Դվինի և Արտաշատի նոր հայտնաբերված խարիսխները կազմված են երեք բարձիկներից և դրանց անջատող երկու դարակիկներից ու փորակից (выкружка): Խարիսխների այդ ձևը շեղված է հելլենիստական ժամանակաշրջանում ընդունված վերոնշյալ կանոնիկությունից: Հետևաբար, Դվինի և Արտաշատի նշված խարիսխները կարելի է թվագրել ավելի ուշ ժամանակով՝ հավանաբար մ.թ. I դարով: Հարկ է նշել, որ վաղ միջնադարյան Հայաստանում այդպիսի խարիսխներ չեն հանդիպում: Մեր կարծիքով, Հայաստանում ատտիկյան խարիսխների ծագումը պարզելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել անցյալ դարի 60-ական թվականներին Դվինից հայտնաբերված մ.թ.ա. II- I դդ. թվագրվող երկու խարիսխները<sup>37</sup> [Աղ. IV, նկ. 6, 7, 8]: Այդ խարիսխները կազմված են 2 սմ միջանկյալ

<sup>33</sup> Пугаченкова Г. Архитектурные памятники Нисы, ПЮТАКЭ, 1949, т. 1, стр. 211-213; Пугаченкова Г., Пути развития Южного Туркменистана поры рабовладения и феодализма, ПЮТАКЭ, 1958, т. 6, стр. 262, рис. 7; Литвинский Б., Зеймаль М. Каменные базы колонн из Вахшской долины, Изв. отд. ОН АН Таджикистана, 1960, вып. 1(22), стр. 77, рис. 2.

<sup>34</sup> Пичикян И. Торовидные базы (происхождение, хронология), նշվ. աշխ., էջ 58:

<sup>35</sup> Витрувий Десять книг об архитектуре, М., 1936, стр. 28, III, 5,2.

<sup>36</sup> Маркузон В. Архитектура архаической эпохи (750-480гг. до н.э.), Всеобщая история архитектуры, М., 1973, стр. 40.

<sup>37</sup> Քոչարյան Գ., Դվինը անտիկ դարաշրջանում, տախտակ VII, VIII:

արանքով իրար վրա դրված երկու տորից: Դրանց հիմքը ուղղանկյուն սալ է: Առաջին խարիսխը կերտված է վարդագույն տուֆից և ունի հետևյալ չափերը. սալը՝ 42 x 40սմ, բարձրությունը՝ 10 սմ, առաջին բարձիկն ունի 13 սմ բարձրություն, երկրորդը՝ 10 սմ, վերին դարակիկի բարձրությունը 2 սմ է, դարակիկի վերին տրամագիծը՝ 29 սմ: Երկրորդ խարիսխը սպիտակ կրաքարից է: Սալի չափերն են 39 x 37սմ, բարձրությունը՝ 10սմ, առաջին բարձիկի բարձրությունը՝ 10սմ, երկրորդինը՝ 8սմ, բարձիկի վրայի դարակիկի բարձրությունը՝ 3սմ, տրամագիծը՝ 27սմ: Երկու խարիսխների ներքևի բարձիկի տրամագիծը մեծ է վերևինի համեմատ: Խարիսխների կողապատկերը հիշեցնում է ատտիկյանը, չնայած բացակայում են դարակիկը և բաժանող երկու բարձիկները: Վերջերս նույնատիպ խարիսխի օրինակ հայտնաբերվել է նաև Շիրակավանում<sup>38</sup> [Աղ. IV, նկ. 9]: Նկատի ունենալով, որ նույն Դվինում, ուշ շերտում հայտնաբերվել են և ատտիկյան խարիսխներ, կարելի է ենթադրել, որ վերը նշվածները նախատատիկյանի տեղական տարբերակ են:

**Եզրահանգում.** Ծագումնաբանորեն կապված լինելով տեղական շինարվեստի ավանդույթներին՝ խարիսխները մ.թ. Iդ. փոփոխության են ենթարկվում Հայաստանը շրջապատող հելլենիստական երկրների մշակույթների ազդեցության ներքո: Համաձայն կատարված ուսումնասիրությունների տվյալների՝ ատտիկյան և տորաձև խարիսխները հիմնականում թվագրվում են մ.թ.ա IIIդ. - մ.թ. III դարերով: Շատ տարածքներ, որտեղ այդ խարիսխները միասնաբար տարածված էին, միաժամանակ գտնվում էին սերտ քաղաքական և պատմամշակութային փոխհարաբերությունների ոլորտում:

Հետևաբար, ատտիկյան և տորաձև խարիսխներին առկայությունը Հայաստանում, որոնք իրենց հերթին ներկայացված են տեղական նախատարատեսակներով, պատահական է: Լինելով հարևան երկրների հետ մշակութային ամենատարբեր մակարդակի կապերի մեջ՝ Հայաստանն ընդունում է այդ ժամանակաշրջանին բնորոշ ճարտարապետական ձևերի ազդեցությունները և վերամշակում դրանք տեղական ինքնատիպ շինարվեստի ավանդույթների հիման վրա:

Սյունա-հեծանային համակարգի օգտագործումը շարունակվում է մոնումենտալ շինություններում ինչպես վաղ, այնպես էլ ուշ միջնադարում: Վաղմիջնադարյան եկեղեցիների շքամուտքերը ձևավորում էին որմնասյուներով, որոնց խարիսխներն իրենց գեղարվեստական արտահայտչական ձևերով և համաչափությամբ հիշեցնում էին տորաձև անտիկ խարիսխները /Երերույք<sup>39</sup> (IV-Vդդ.)/,

<sup>38</sup> Տվյալ նյութը սիրով մեզ է տրամադրել հնագետ Համագասպ Խաչատրյանը, ինչի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

<sup>39</sup> **Азатян III.** Порталы в монументальной архитектуре Армении IV-XIV вв., Е., 1987, стр. 12, 58, 60, рис. 30.

Դվինի գահասրահի սյուների խարիսխները <sup>40</sup> (IV դ.) /նկ.35,36,37/: Դրանք ունեն 2.5 անգամ ավելի բարձր սալ, քան տորը (վերջինս հիշեցնում է անտիկ տորերի ձևը), բայց տորի վրա բարձրացող մասը՝ բաղկացած դարակիկներից և սկոցիայից, հիշեցնում է ատտիկյան խարիսխների ձևերը:

Նմանատիպ խարիսխներ ունի նաև Զվարթնոցի կամարաշարը (VIIդ.)<sup>41</sup> /նկ. 38/: Գառնի ամրոցի Սբ Սիոն եկեղեցու որմնախարիսխները (VIIդ.)<sup>42</sup> /նկ. 39/ ունեն բավականին բարձր սալ, որի վերնի մասն ավելի բարձր է և բաղկացած է երկու փորվածքից ու բեկվածքից: Այդ խարիսխները բավականին հարուստ մշակված տրամատ ունեն: Դրանց տորածն ներքնասալի վրա դրվում էին ատտիկյան խարսխի տարրերը: Դվին քաղաքի կենտրոնական թաղի ավերակ շենքի պեղումների ժամանակ ի հայտ է եկել խարիսխ (VIIդ.) /նկ. 39/, որն իր շրջանաձև մասից քառակուսու փոխարկվելու միջանկյալ տարածության անկյունների վրա ունի չորս ուռուցիկ եռանկյունաձև զարդեր: Նման տիպի խարիսխներ հանդիպում են Մշկավանքում (13դ.), Գեղարդում (13դ.) և այլ հուշարձաններում:

Այդպիսով, սկսած վաղ միջնադարից, հայկական շինարվեստում նկատվում են անտիկ տորածն խարիսխների տարբեր տիպերի գեղարվեստական յուրահատուկ մեկնաբանություններ՝ հիմնված ատտիկյան և տորածն խարիսխների վրա:

<sup>40</sup> **Հարությունյան Վ.**, Դվինի V-VII դարերի ճարտարապետական հուշարձանները, էջ. 62, նկ. 12:

<sup>41</sup> **Մնացականյան Ս.**, Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, գծ. 4, 15:

Աղյուսակ 1



1



2




3



4



6





6 a



5



7



2




3







4




5



6





## БАЗЫ КОЛОНН АНТИЧНОЙ АРМЕНИИ

*Канециан А. Г.*

**Ключевые слова:** *стоечно-балочная система, типы торовидных баз, типы аттических баз, структурные элементы, капитель, культ, дворец.*

Одним из важнейших элементов конструкций здания являются стойки-опоры, часто поддерживающие перекрытие. Стойки колонн в ряде сооружений, очевидно, из-за трудоемкости обработки камня делались из дерева. Для предохранения деревянных стоек-колонн от порчи, а также для создания сильного основания для передачи тяжести от стоек и перекрытий на грунт, они ставились не непосредственно на землю, а на каменные основания. Основания под стойками-колоннами были различны.

Проведен анализ развития форм баз. Беря свое начало с урартских баз под воздействием культуры окружающих Армению эллинистических стран, базы приобретают разнообразные формы. На территории современной Армении, в поселении Бениамин были обнаружены базы VI-V вв до н.э., персепольского типа, а в том же перестроенном сооружении в IV-III вв до н.э. появляются базы прототоровидного типа, которые своей художественной выразительностью, являются слиянием культур Малой Азии и ахеменидского Ирана. Со II в. до н.э. на территории исторической Армении широкое распространение получила торовидная форма баз (Арташат, Армавир, Гарни, Ширакаван, Капс, Спитак, Бениамин, Мохраблур, Эчмиадзин и др.). Эта форма характерна для всех Восточных стран. Происхождение торовидных баз, составляющих основу восточного ордера, явно азиатское и своими истоками восходит к ассирийской и раннеурартской архитектуре. Исследован и обобщен ряд найденных торовидных баз и проведена их классификация по художественной выразительности форм. Высекались они из различных каменных пород – туфа, базальта, белого известняка, мрамора, порфирита. Диаметр опорной плоскости баз также различен в зависимости от употребления деревянных или каменных колонн.

Наряду с разнообразными торовидными базами обнаружены четыре базы, так называемые “аттические”, относящиеся к первым векам н.э. (Гарнийский храм, Двин, Арташат). Эти базы своей профилировкой приближаются к классическим аттическим базам. Исследование показало, что как торовидные, так и аттические базы имели свои местные протоварианты. Их профилировка в эллинистический период подверглась изменению под воздействием культуры окружающих Армению стран.

## BASES OF COLUMNS OF ANCIENT ARMENIA

*Kanetsyan A. G.*

**Key words:** *load-carrying construction, antique toroidal base types, antique atticbase types, structural elements, capital, cult, palace.*

One of the most important elements of the building construction is the support pillars that often support the ceiling. Shafts of columns in a number of buildings were made of wood, evidently, because of the complexity of stone processing. To protect wooden columns from damage, as well as to create a strong foundation for transferring gravitation force from pillars and ceilings to the ground, the columns were not placed directly on the ground, but on stone bases. The bases under the pillars were different.

The analysis of the development of forms of bases was carried out. Taking its origin from the Urartian bases, the bases have taken on various forms under the influence of the culture of the Hellenistic countries surrounding Armenia. On the territory of modern Armenia, in the Benyamin settlement, the bases of the 6<sup>th</sup>-5<sup>th</sup> centuries BC, of the Persepolian type, were discovered. While bases of the toroidal prototype appear in the same reconstructed structure in the 4<sup>th</sup>-3<sup>rd</sup> centuries BC. By their artistic expressiveness, these bases are a symbiosis of the cultures of Asia Minor and Achaemenid Iran.

From the 2<sup>nd</sup> century BC in the territory of historical Armenia, the toroidal form of bases has become widespread (Artashat, Armavir, Garni, Shirakavan, Kaps, Spitak, Beniamin, Mohrablur, Echmiadzin, etc.). This form is typical for all Eastern countries. The origin of the toroidal bases that form the basis of the Eastern order is clearly Asian and goes back to Assyrian and Early Urartian architecture.

A number of found toroidal bases were investigated and summarized; the classification of these bases was carried out by their artistic expression of the forms. The bases were carved out of various stone rocks such as tuff, basalt, white limestone, marble, porphyrite. The diameter of the support plane of the bases is also different depending on the use of wooden or stone columns.

Along with a variety of toroidal bases, four bases, the so-called "Attic", dating back to the first centuries AD, were found (Garni temple, Dvin, Artashat). By their profiling, these bases approach the classical Attic bases. The study showed that both toroidal and attic bases had their local prototypes. Their profiling in the Hellenistic period underwent a change under the influence of the culture of the countries surrounding Armenia.

## References

1. **Azatyán Ch.**, Portali v monumentalnoy arkhitekture Armenii IV-XIVvv., Yerevan, 1987 (In Russian).
2. **Arakelyan B.**, Osnovnie rezultati raskopok drevnego Artashata v 1970 -1973, Yerevan, 1974, (In Russian).

3. **Areshyan G., Simonyan H., Sargsyan G., Kocharyan G., Ohanyan H.** Hajagitakan kentroni 1977-78 tt. dashtajin hnagitakan ashkhatanqneri, // Banber Yerevani hamalsarani, 2, 1979 **(In Armenian)**.
4. **Demirkhanyan A.** Severo-vostok Yerevana v epokhu Artashesidov (fragment materialnoyi dukhovnoy kulturi po dannym antichnogo poselenia v Avan-Arindzhy / IIv. do n.e.–I v.n.e./ **(In Russian)**.
5. **Ghafadaryan K.** Argishtikhinili qaghaki chartarapetuthiun, Yerevan, 1984 **(In Russian)**.
6. **Khalilov J.** Raskopki na gorodishhe Khinisli, pamjatniki drevney Kavkazskoy Albanii, SA, 1962 **(In Russian)**.
7. **Khalilov J., Babaev I.** O gorodakh drevney Kavkazskoy Albanii, SA, 1974 **(In Russian)**.
8. **Khachatryan Zh.** Sisiani dambaran@ ( m.t.a.I dari erkrord kes), Yerevan, 2009 **(In Armenia)**.
9. **Khachatryan H.** Beniamini antiq dastakerti hellenistakan zhamanakachrjani chartarapetutiun@ ( masn I), //GAA Shiraki hayagitakan kentroni Gitakan ashkhatutyunner II, 1999 **(In Armenia)**.
10. **Khachatryan H.** Beniamini antiq dastakerti hellenistakan zhamanakashrjani chartarapetutiun@ (masn II) //GAA Shiraki hayagitakan kentroni Gitakan achkhatutyunner, Gyumri, III, 2000 **(In Armenian)**.
11. **Kanetsyan A.** Planirovka zhilogo doma v Dzhrapi //GAA Shiraki hayagitakan kentroni Gitakan ashkhatutyunner, Gyumri, II, 1999 **(In Russian)**.
12. **Karapetyan I., Kanetsyan A.** Armaviri 2002 yev 2005tt. peghumner@, Hin Hajastani mshakujt@ XIVd, 2008, p.161-168 **(In Russian)**.
13. **Karapetyan I.** Karchaghburi peghumner@ (1975-1978), //Patma–banasirakan handes, 3, 1979 **(In Armenian)**.
14. **Kocharyan G.** Dvin@ antic darashrjanum, //Dvin III, Yerevan, 1991 **(In Armenian)**.
15. **Kruglikova I.** Delberjin (raskopki 1970-1972gg.), chast I, M, 1974 **(In Russian)**.
16. **Jessen A.** Iz istoricheskogo proshlogo Milsko-Karabakhskoj stepi, MIA, 1965 **(In Russian)**.
17. **Litvinskiy B., Zejmel M.** Kamennie bazi kolonniy Vakhchskoy dolini, Iz. OONAN Tadzhiqistana, 1960 **(In Russian)**.
18. **Harutyunyan V., Dvin I, Dvini V-VII** dareri chartarapetakan hushardzaner@ Yerevan, 1950 **(In Armenia)**.
19. **Markuzon V.,** Arkhitektura arkhaischeskoy epokhi (750 - 480 gg. 1Do.n.e.), // Vseobchaya istoria arkhitekturi, Moskva, 1973 **(In Russian)**.
20. Materiali po arkheologii Kavkaza (ekspedicia imperatorskogo Moskovskogo Arkheologicheskogo obshestva), Moskva, 1911 **(In Russian)**.
21. **Mnacakanyan S.** Zvardnoci yev nujnatip hushardzannery, Yerevan, 1971 **(In Russian)**.
22. **Oganesyan K.** Arkhitektura Erebuti, Arin-berd I, ARA, 9, Yerevan, 1961 **(In Russian)**.
23. **Oganesyan K.,** Krepost Erebuti, Verevan, 1980 **(In Russian)**.

24. **Pichikyan I.** Torovidnie bazi (proizskhozhdenie, khronologia)//Kultura i iskusstvo narodov Sredney Azii v drevnosti i srednevekove, M,1979 **(In Russian)**.
25. **Pugachenkova G.** Arkhitekturnie pamytniki Nisi, TИOTAKЭ, 1949, том.I **(In Russian)**
26. **Pugachenkova G.** Khalchaan: K problem khudozhestvennoy kulturi Severnoy Baktrii, Tashkent, 1966 **(In Russian)**.
27. **Pugachenkova G.** Iz istorii antichnoy kulturi Uzbekistana, Tashkent, 1973 **(In Russian)**.
28. **Pugachenkova G.** Puti razvitiya yuzhnogo Turkmenistana pori rabovladeniya i feodolizma, TИOAKЭ, 1958 **(In Russian)**.
29. **Qalantaryan A.,** Dvini kentronakan taghamasi 1971-1973t.t. peghumner@, //Lraber, 1975 **(In Armenia)**.
30. **Sainyan A.,** Arkhitektura antichnikh sooruzheniy Garni, Yerevan, 1988 **(In Russian)**.
31. **Ter-Martirosov F.** K stratigrafii Armavirskogo kholma, //VON, 1974 **(In Russian)**.
32. **Ter-Martirosov F.,** Shirak v epokhu klassicheskoy antichnosti, //GAA Shiraki hayagitakan kentroni Gitakan ashkha tutjunner, Gyumri, II, 1999. p. 35-36 **(In Russian)**.
33. **Vitruviy,** Desyat knig ob arkhitekture, Moskva, 1936 **(In Russian)**.
34. Vseobshaya istoria arkhitekturi, t. I, Arkhitektura drevnego mira 2-eizd., 1973 **(In Russian)**.

*Ընդունվել է՝ 03.03.2020*

*Գրախոսվել է՝ 05.04.2020*

*Հանձնվել է տպ. 20. 11.2020*

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Ամինիա ԿԱՆԵՑՅԱՆ՝** պատմական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ  
գիտաշխատող, ճարտարապետ, էլ. հասցե՝ amina-kanetsyan@mail.ru

ՀՏԴ՝ 902.03

ՔԵԹԻԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՀԱՏՎԱԾԻ  
ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

*Լեոն Պետրոսյան*

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

*Համազասպ Խաչատրյան, Լարիսա Եզանյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն  
Շիրակի երկրագիտական թանգարան

**Բանալի բառեր՝** *հնագիտություն, ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններ, դամբարան, դամբանաբլուր, կրոնիկա, թաղման ձևեր և ծեսեր, նյութական մշակույթ:*

Հոդվածում ներկայացված են 2014 թվականին Շիրակի մարզի Մայիսյան գյուղի վարչական տարածքում հողային աշխատանքների հետևանքով բացված ավերված դամբարանի և դրա շրջակայքում եղած վեց դամբարանների պեղումների արդյունքները: Պեղված դամբարանների կառուցվածքի, թաղման ձևերի և ծեսերի, հայտնաբերված նյութերի մանրամասն ուսումնասիրությամբ, դրանց՝ Հայաստանի ու Վրաստանի համաժամանակյա համալիրների հետ բաղդատմամբ բացահայտվել են ընդհանրություններն ու առանձնահատկությունները: Ըստ հայտնաբերված նյութերի՝ կատարվել է պեղված դամբարանների թվագրություն:

**Նախաբան.** 2014 թվականի աշնանը տեղեկություն ստացվեց, որ Շիրակի մարզի Մայիսյան համայնքի վարչական տարածքում հողային աշխատանքների ընթացքում ավերվել է անհայտ դամբարան. եքսկավատորը դուրս է բերել տուֆե սալեր, փշրված խեցեղենի բեկորներ և մարդու ոսկորներ: Ստացված տեղեկության հիման վրա ստեղծված ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության

ինստիտուտի ու Շիրակի երկրագիտական թանգարանի միացյալ արշավախումբը ձեռնամուխ եղավ տեղանքի ուսումնասիրությանը: Պարզվեց, որ ավերված դամբարանը գտնվում է Քեթի և Մայիսյան համայնքների սահմանագծին՝ վերջինիս վարչական տարածքում: Հողային աշխատանքները դադարեցվեցին: Այստեղ ավերված դամբարանի հարևանությամբ հայտնաբերվեցին ու պեղվեցին վեց սալարկղային դամբարաններ և մեկ դամբարանաբլուր: Ուշերոնգիդարյան դամբարանաբլուրը ամբողջությամբ կրկնում է Հայաստանում հայտնի նմանակներն իրենց բնորոշ նյութերով:

Ի տարբերություն սրանց՝ երկաթիդարյան նյութերը Հայաստանի այլ շրջանների համեմատությամբ դրսևորում են որոշակի տարբերություններ՝ բացառությամբ Թոեղքի և Արագածոտնի մարզի, որտեղ նյութական մշակույթը գրեթե նույնական է Շիրակի մշակույթին: Տեղագրական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ պեղված տարածքը ոչ թե նորահայտ առանձին դամբարանադաշտ է, այլ հանդիսանում է Քեթիի հայտնի դամբարանադաշտի արևմտյան ծայրամասը:

*Դամբարան անաջին.* Գտնվում է ուսումնասիրվող տարածքի կենտրոնական մասով հյուսիս-հարավ ձգված հեղեղատի ձախ կողմում: Փորման աշխատանքների հետքերն առկա էին: Գետնի մակերևույթին նշմարվում էին երկու դամբարանախցերի ծածկասալերը: Տարածքում բացվեց սալարկղային՝ 2,4մ x 1,2մ x 0,7մ չափերի դամբարանախուց, որի հյուսիսային կեսը ամբողջովին ազատ էր: Հատակից 0,38մ բարձրության վրա գտնվեց սափորի բեկոր, հատակի վրա՝ արևելյան կողմում, բացվեց փոքր խեցանոթ: Դամբարանախցի հարավարևելյան պատի դիմաց դրված գանգի հյուսիսային կողմում խմբավորված էին կմախքի որոշ ոսկորներ, և դրված էր միականթ գավաթ (աղ.VII, նկ.1):

*Դամբարան երկրորդ.* Գտնվում է նախորդի արևելյան կողմում՝ 5 մ հեռավորության վրա: Այստեղ գետնի մակերևույթին նշմարվում էին ծածկասալերի հատվածներ: Սրանցով ծածկված 2մ x 1,2մ x 1,1մ չափերի դամբարանախցում բացվեցին դիամասնատված երկու հանգուցյալների կմախքների մնացորդ և անոթի բեկոր (աղ.VII, նկ.2):

*Դամբարան երրորդ.* Գտնվում է հյուսիս-հարավ ձգվող դաշտամիջյան ճանապարհի աջ կողմում՝ 2-րդ դամբարանից 70 մ հարավ: Պարզվեց, որ ծածկասալը մեկն էր, մյուսները չէին պահպանվել: 2մ x 1,1մ x 0,9մ չափերի սալարկղային դամբարանախցի հյուսիսարևելյան պատը արտաքուստ (մասնատված) և այլ ուղեկցող նյութերը՝ 8 խեցանոթ խցում տեղադրելուց հետո: Դամբարանախցի արևելյան պատի դիմաց առկա էր ձիու գանգ: Հանգուցյալի գանգը բացվեց հարավային պատի դիմաց: Կմախքի ոսկորների մի մասը գտնվեց մուտքի պատի դիմաց՝ իրարից 1,5 մ հեռավորության վրա: Երկրորդ թաղումը բացվեց արևմտյան պատի դիմաց: Աջ կողքին պատկած կմախքի ոսկորների մյուս մասը դրված էր գանգի դիմաց (աղ.VII, նկ. 3):

*Դամբարան չորրորդ.* Գտնվում է 3-րդի հարավային կողմում: Գետնի մակերևույթին երևում էր փոքր ծածկասալի մի մասը: Պեղման ընթացքում բացվեց

0,3մ խորությամբ սալարկղային 0,5 x 0,5 մ չափերի դամբարան: Հյուսիսային պատի դիմաց դրված էր մեկ միականթ գավաթ, հարավայինի մոտ՝ մեկ ապարանջան: Այն, անշուշտ, նորածին երեխայի դամբարան էր (աղ.VII, նկ. 4):

*Դամբարան հինգերորդ.* Գտնվում է նախորդից 50 մ հարավ-արևելք: Գետնի մակերևույթին ներկայանում էր խաթարված՝ տեղաշարժված երկու ժայռաբեկորների տեսքով: Հարավային կողմում նշմարվում էին դամբարանի կողային սալերը: Պեղումները պարզեցին, որ գետնի մակերևույթին դիտվող քարերը ավերված դամբարանի կողային սալերն են: Խաթարված վիճակում բացվեցին նաև հանգուցյալի կմախքի որոշ ոսկորներ: Բացվեց 2 x 1,2 x 1,1մ չափերի սալարկղային դամբարանախույց: Արևելյան նեղ պատի մեջ ուղղահայաց կանգնեցված սալաքարը հավանաբար մուտքը փակող դռան դեր էր կատարել: Դամբարանախցում՝ արևմտյան պատի դիմաց, բացվեցին հանգուցյալի կմախքի ոսկորները և գանգը: Ինչպես նախորդ դամբարաններում, այստեղ ևս թաղումը կատարված էր դիամասնատման ծիսակարգով: Գտնվեցին նաև երկու կենդանիների գանգեր և վեց խեցանոթներ (աղ.VII, նկ. 5):

*Դամբարան վեցերորդ.* Գտնվում է նախորդից 2մ հարավ-արևմուտք: Արտաքնապես նշմարվում էր երկու ծածկասալերից մեկը: Պեղումներով հայտնի դարձավ, որ այն թալանված է: Հայտնաբերվեցին մարդկային երկու կմախքի մնացորդներ և զգալի քանակությամբ խեցեղենի բեկորներ, որոնք վկայում են դամբարանի կողոպտման փաստը (աղ.VII, նկ. 6): Դամբարանախցում գտնվեցին նաև տուֆ քարից, սխեմատիկ պատկերներով կուռքեր (աղ. IV, նկ. 8): Նրա հարավարևմտյան պատի դիմաց, հատակի ընդհանուր մակարդակից քիչ խորը արված փոսը ծածկված էր քարաբեկորներով: Ակներևաբար այստեղ են հավաքել առաջին թաղման մնացորդները, որոնց մեջ կային նաև մեկական բրոնզե և երկաթի մատանիներ (աղ.VII, նկ. 6):

*Առաջին դամբանաբլուրը* գտնվում է Քեթի գյուղի, «Քարոտ հողեր» կոչվող դամբանադաշտի հարավարևելյան ծայրամասում: Բացվել էր դամբանաբլուրի արևմտյան կողմի կրոմլեխի մի փոքր հատվածը: Պեղումներով բացվեց 14մ տրամագծով դամբանաթումբ, որի կրոմլեխը շարված է տվյալ տարածքում՝ քիչ հանդիպող սև քարով: Կրոմլեխի այն հատվածները, որտեղ բացակայում էր քարաշարը, լրացված էին մոտակայքից բերված կրաքարե լիցքով: Ստացվում է այն տպավորությունը, որ կրոմլեխից բացի՝ դամբանաթումբը գոտևորվել էր հիշյալ կրաքարերով: Կրոմլեխից հարավ-արևմուտք բացվեց փոքր քարարկղ՝ 2-3 խեցանոթներով:

Կրոմլեխի կենտրոնական մասում *յոթերորդ դամբարանն* էր՝ ծածկված մի ծայրով դեպի դամբարանի ներսը թեքված վարդագույն տուֆի չորս սալերով: Խցից դուրս՝ արևելյան կողմում դրված էր կլոր, մեջը փոքր-ինչ փորված քար, դամբարանի ծածկասալերի վրայի փոս ընկած մասում՝ վարդագույն տուֆից

պատրաստված «կտեես»: 2,5 x 1,3 x 1,2մ չափերի հիմնահողային դամբանախցում մասնատված դիակի գանգը դրված էր աջ այտի վրա: Ոչ լրիվ կմախքի ոսկորներ գտնվեցին դամբարանախցի հատակի տարբեր մասերում: Դրված էին նաև երկու քրեղան՝ մեկ մեծ և փոքր կճուճ (աղ. VII, նկ. 7/1):

*Դամբարան 7/2.* Գտնվում է նախորդ խցի հյուսիսարևելյան կողմում՝ 2մ հեռավորության վրա. ծածկված էր երեք սալերով, 2 x 1,1 x 0,55 մ չափերի հիմնահողային դամբարանախուցը նախորդի նման ուներ հյուսիս-արևմուտք՝ հարավ-արևելք ուղղվածություն: Խցում բացվեցին հինգ խեցանոթ և կենդանու ոսկորի բեկոր (նկ. 9) (աղ. VII, նկ. 7/2): Մեր կարծիքով՝ այստեղ գործ ունենք նույն հանգուցյալին պատկանող երկու խցերի հետ. մեկում կատարվել է դիամասնատված թաղում, մյուսում դրված էին ուղեկցող նյութեր: Ուստի դրանցում հայտնաբերված հնագիտական նյութերի ուսումնասիրությունը կատարում ենք համատեղ: Խցերում գտնվել են միայն խեցանոթներ՝ հիմնականում տարբեր ձևերի և կիրառության կճուճներ:

Դրանց առավել մոտ են երկուսը (աղ. I, նկ. 3, 6): Լայն հատակով, փքուն իրանով, բարձր ուսերով և ցածր վզով դրանք մերձենում են Հառիճի կարմիրբերդյան մշակույթին պատկանող թիվ 67 դամբարանի<sup>1</sup> նյութերին, հատկապես տվյալ մշակույթի ավարտական փուլին հատկանշական Քեթիի թիվ 19<sup>2</sup>, Շամիրամի 5<sup>3</sup>, Թալինի 121<sup>4</sup> և համաժամանակյա բազմաթիվ այլ հուշարձանների: Ներկայացվող կճուճների երկրորդ տարբերակը՝ փոքր, հարթ հատակով, նորից փքուն իրանով, սակայն փոքր-ինչ բարձր պարանոցով կճուճն է, որի ուսերը զարդարված են փայլեցմամբ արված եռանկյունաձև զարդերով (աղ. I, նկ. 3): Անոթը, իրանի փքունությամբ մնալով նախորդ փուլի սահմաններում, մինևույն ժամանակ հատակի փոքրությամբ, վզի բարձրությամբ և հատկապես փայլեցմամբ արված զարդով ամբողջությամբ համապատասխանում է Լճաշենի թիվ 5 դամբանաբլուրի<sup>5</sup>, Քեթիի թիվ 20<sup>6</sup>, Շիրակավանի թիվ 28<sup>7</sup> և բազմաթիվ այլ դամբարանների նյութերին: Մայիսյանի ուսումնասիրվող դամբանաբլուրի կճուճի երկրորդ տարբերակը ներկայացվում է երկու օրինակով. դրանք ունեն հարթ, լայն հատակ, ուռուցիկ իրան, ներս ձկված վիզ, թեքված շուրթ (աղ. I, նկ. 2,4):

<sup>1</sup> **Хачатрян Т. С.** Древняя культура Ширака, Ер., 1975, с. 112, рис. 67.

<sup>2</sup> **Петросян Л. А.** Раскопки памятников Кети и Воскеаска, Ер., 1989, табл. 43.

<sup>3</sup> **Арешян Г. Е., Оганисян В. Э., Мурадян Ф. М., Аветисян П. С., Петросян Л. А.** Конец среднего бронзового века в междуречье Аракса и Куры. // Պատմաբանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), հ. 1, 1990, էջ 60, աղ. II:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 68, աղ. VII:

<sup>5</sup> Հ. Մնացականյանի պեղումների նյութերը հրատարակված չեն:

<sup>6</sup> **Петросян Л. А.**, նշվ. աշխ., աղ. 44:

<sup>7</sup> **Թորոսյան Ռ. Ս., Խնկիկյան Օ. Ս., Պետրոսյան Լ. Ա.**, Հին Շիրակավան, Եր., 2002, աղ. XIX, նկ. 3:

Կճուճների այս տեսակը ամբողջությամբ դեռևս գտնվում է միջին բրոնզիդարի մշակութային տիրույթում, այն լավագույնս ներկայացնում է Հառիճի՝ ինչպես կարմիրբերդյան մշակույթի վաղ, այնպես էլ ուշ փուլերի<sup>8</sup> և Շիրակավանի թիվ 42<sup>9</sup> դամբարանային նյութերը:

Այդպիսիք առավել մեծ թիվ են կազմում Լճաշենում 1980-ական թթ. վերջերին մեր պեղած կարմիրբերդյան մշակույթի վերջին և անցման փուլերին պատկանող թիվ 135, 74, 72, 221 և մի շարք դամբարանային այլ համալիրներում<sup>10</sup>, որոնք, ուշ բրոնզում ձևափոխվելով (նեղ հատակ, ոլորուն շուրթ և ցածր վիզ), ստանում են նոր որակ և լայն տարածում: Կճուճների երրորդ տեսակը զգալի չափով տարբերվում է նախորդներից. այն ունի հարթ հատակ, ձգված իրան, բարձր ուսեր և ոչ շատ բարձր վիզ (աղ. I, նկ. 8): Իրանի ձգվածությամբ զգալի չափով մերձենում է, այսպես կոչված, հիդրիաներին:

Կճուճների ներկայացվող տեսակը ևս լավ հայտնի է միջին բրոնզի վերջին և ուշ բրոնզի անցման փուլին պատկանող Հառիճի թիվ 44<sup>11</sup>, Շիրակավանի բնակատեղիից<sup>12</sup>, Թալինի թիվ 121<sup>13</sup>, Քեթիի թիվ 18<sup>14</sup> և համաժամանակյա այլ հնավայրերից: Քննարկվող դամբարանի կճուճների վերջին տեսակն է ավազախառն կավից պատրաստված, հարթ հատիկազարդ հատակով, ուռուցիկ իրանով, ցածր վզով, դուրս ձկված շուրթով օրինակը: Հիշյալ նմուշի ուսերը զարդարված են երեք շարք հատիկաշարերով, իսկ իրանի ուռուցիկ մասով անցնում է մեկ ելունդավոր պարանագոտի (աղ. I, նկ.7): Նախ նշենք, որ խոհանոցային կճուճների այս տեսակը զգալի ընդհանրություններ ունի միջինբրոնզիդարյան ոչ խոհանոցային տեսակի հետ, և հայտնի է Լճաշենի թիվ 105 դամբարանից<sup>15</sup>, Շիրակավանի բնակատեղիից<sup>16</sup>: Նույն տեսակի տարբեր դրսևորումները հանդիպում են նաև միջինից ուշ բրոնզին անցման փուլին պատկանող Շամիրամի թիվ 5 դամբարանաբլուրում<sup>17</sup> և այլուր: Տեղին է նկատել, որ խոհանոցային կճուճները սկիզբ են առնում միջին բրոնզի կարմիրբերդյան փուլում և տարբեր դրսևորումներով շարունակում են գոյատևել բրոնզի և երկաթի դարաշրջաններում:

<sup>8</sup> Хачатрян Т. С., նշվ. աշխ., էջ 97-123:

<sup>9</sup> Թորոսյան Ռ. Ս., Խնկիկյան Օ. Ս., Պետրոսյան Լ. Ա., նշվ. աշխ., աղ. X:

<sup>10</sup> Նյութերը պատրաստվում են հրատարակման:

<sup>11</sup> Хачатрян Т. С. նշվ. աշխ., էջ 112, նկ. 67:

<sup>12</sup> Թորոսյան Ռ. Ս., Խնկիկյան Օ. Ս., Պետրոսյան Լ. Ա., նշվ. աշխ., աղ. IX, X:

<sup>13</sup> Арешян Г. Е. и др., նշվ. աշխ., էջ 68, աղ. VII:

<sup>14</sup> Петросян Л. А., նշվ. աշխ., աղ. 42:

<sup>15</sup> Պեղումները՝ Լ. Պետրոսյանի: Նյութերը հրատարակված չեն:

<sup>16</sup> Թորոսյան Ռ. Ս., Խնկիկյան Օ. Ս., Պետրոսյան Լ. Ա., նշվ. աշխ., աղ. VII, նկ. 1:

<sup>17</sup> Арешян Г. Е. и др., նշվ. աշխ., աղ. II:

Մայիսյանի դամբարանաբլուրի ժամանակագրական տեղորոշման խնդրում մեծ կարևորություն ունեն հայտնաբերված երկու քրեղանները, որոնցից մեկը (աղ. I, նկ.1) հանդիսանում է հայտնի միջինբրոնզիդարյան ձևի քիչ աղավաղված տեսակը: Նշենք, որ այս տեսակի սկզբնավորումը հայտնի է դեռևս թռեղք-վանաձորյան ժամանակաշրջանից, և հարատևել են մինչև մ.թ.ա. XV դարի սկիզբը: Նշված վերջին փուլերին են պատկանում Շիրակավանի բնակատեղին<sup>18</sup>, Ծաղկալանջի թիվ 39<sup>19</sup>, Քեթիի թիվ 20<sup>20</sup> դամբարանները և մի շարք այլ հնավայրեր: Ինչպես տեսնում ենք, քրեղանի այս տեսակը, լինելով միջինբրոնզիդարյան դասական օրինակներից մեկը, դադարում է գոյություն ունենալուց մ.թ.ա. XVI-XVդդ. սկզբներին: Միանգամայն այլ է վիճակը երկրորդ քրեղանի պարագայում. այն հակառակը՝ ուշբրոնզիդարյան դասական օրինակ է, ունի սև, փայլեցված արտաքին մակերես, հարթ հատակ, կիսագնդաձև իրան, դուրս ոլորված շուրթ: Իրանի կենտրոնով անցնում են երկու խորակոս գոտիներ. դրանք, ի դեպ, զարդարում են նաև անոթի հատակի մերձակա մասը (աղ. I, նկ. 5): Ձևի ընդհանրությամբ այն իր զուգահեռներն ունի ուշբրոնզիդարյան գրեթե բոլոր հուշարձաններում, չնայած հատակամերձ շրջանի զարդարմամբ այնքան հաճախ չի հանդիպում: Դրանք առավել շատ են Լճաշենի ուշ բրոնզի վաղ փուլին պատկանող թիվ 33, 128, 171, 189, 194, 196 և մի շարք այլ դամբարաններում<sup>21</sup>: Նման զարդերով քրեղան է հայտնի նաև Շիրակավանի թիվ 113<sup>22</sup> և ուշ բրոնզի հաջորդ փուլին վերագրված Լոռի-բերդի թիվ 9<sup>23</sup> դամբարանում: Այսպիսով, Մայիսյանի՝ 2014թ. պեղված դամբարանաբլուրում նյութերի համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տվյալ համալիրի նյութերը գրեթե 50/50 հարաբերակցությամբ վերաբերում են ինչպես միջին, այնպես էլ ուշբրոնզիդարյան ժամանակաշրջաններին, որը հիմք է դամբարանաբլուրը վերագրելու մ.թ.ա. XVI դարին:

Արշավախմբի կողմից պեղված վեց ամբողջական և մեկ կիսավեր սալարկղային դամբարաններում հայտնաբերված խեցեղենը գրեթե միատարր է, որի պատճառով տարբեր դամբարանների միատեսակ նյութերը նպատակահարմար ենք գտնում ուսումնասիրել համատեղ: Թիվ 1 դամբարանում գտնվել են մեկական օրինակ՝ գավաթ, քրեղան և զարդարուն մակերեսով կավանոթի բեկոր: Գավաթն ունի հարթ, լայն հատակ, ձգված իրան, քիչ դուրս թեքված շուրթ: Իրանը զարդարված է կտրելու եղանակով արված երկար կլորացող գոտիով, որի

<sup>18</sup> Թորոսյան Ռ. Ս., Խնկիկյան Օ. Ս., Պետրոսյան Լ. Ա., նշվ. աշխ., աղ. IX, X:

<sup>19</sup> Арешян Г. Е. и др., նշվ. աշխ., աղ. IX, նկ. 6:

<sup>20</sup> Петросян Л. А., նշվ. աշխ., աղ. 44, նկ. 3:

<sup>21</sup> Պեղումները՝ Լ. Պետրոսյանի: Նյութերը հրատարակված չեն:

<sup>22</sup> Թորոսյան Ռ. Ս., Խնկիկյան Օ. Ս., Պետրոսյան Լ. Ա., նշվ. աշխ., աղ. XI, նկ. 9:

<sup>23</sup> Деведжян С. Г. Лори-Берд I, Ер., 1981, табл. XVII, рис. 2, 3:

ներսում տվյալ ակոսին զուգահեռ արված են երկշար նույնաձև կետագծերից կազմված զարդեր (աղ. II, նկ. 5): Այն երկաթի ժամանակաշրջանի տարբեր հուշարձաններում հայտնի գավաթների մեկ այլ տարբերակ է: Տեղին է նշել, որ ինչպես Մայիսյանում պեղված սալարկղային դամբարաններից հայտնաբերված մյուս, այնպես էլ սույն գավաթն իր առավել մոտ նմանակն ունի Թոեղքի մ.թ.ա. IX-VIII դդ. թվագրվող թիվ 35<sup>24</sup> և թիվ 66<sup>25</sup> դամբարանների նյութերում: Ուսումնասիրվող գավաթը զգալի ընդհանրություն ունի նաև Շիրակավանի թիվ 101 սալարկղային դամբարանի նմուշի<sup>26</sup> և Սարապատի դամբարաններում հայտնաբերված օրինակների հետ<sup>27</sup>:

Ներկայացվող դամբարանում գտնված մյուս խեցանոթը հարթ, լայն հատակով, դեպի դուրս թեքված կողերով, ձեռածեփ քրեղան է (աղ. II, նկ. 4), որի զուգահեռները առկա են Կարմիր բերդի 43<sup>28</sup> և Թալինի 63<sup>29</sup> դամբարաններում: Մայիսյանի թիվ 1 դամբարանից գտնվել է նաև զարդարուն մակերեսով խեցանոթի բեկոր (աղ. II, նկ.1): Թիվ 2 դամբարանում գտնվեցին միայն փոքր կավանոթի բեկորներ (աղ. II, նկ. 6), որոնք իրենց ձևով և զարդանախշով նման են Անգեղակոթի թիվ 30 դամբարանի անոթին, որի ուսին միջանցիկ անցքով բռնակ կա: Ինչպես գավաթի, այնպես էլ փոքր կճուճի ճշգրիտ զուգահեռները մեզ հայտնի չեն:

Ի տարբերություն այս թալանված դամբարանների՝ թիվ երեք դամբարանը պահպանված էր անաղարտ. այնտեղ դրված էին ութ կավաման (աղ. VI): Դրանցից երեքն իրարից քիչ տարբերվող գավաթներ են (աղ. VI, նկ. 2,3,5): Երկուսը միմյանցից տարբերվում են նստուկի բարձրությամբ և զարդարմամբ (աղ. VI, նկ. 3,5): Երրորդն ունի քիչ բարձր նստուկ, ուռուցիկ իրան, դուրս թեքված շուրթ: Իրանի ուռուցիկ մասում պահպանված է բռնակի հիմնամասը: Ուսերին արված են երկու շարք ակոսագոտիներ: Երկրորդը նախորդից տարբերվում է նստուկի առավել բարձրությամբ և ուսերին ու վզին հատիկաձև, ուղղահայաց

<sup>24</sup> Менабде М., Давланидзе П. Могильник Триаleti, каталог I, Тбилиси, 1968, табл. IV, рис. 148.

<sup>25</sup> Նույն տեղում, աղ. XIV, նկ. 487:

<sup>26</sup> Թորոսյան Ռ. Ս., Խնկիկյան Օ. Ս., Պետրոսյան Լ. Ա., նշվ. աշխ., աղ. LIX, նկ. 11:

<sup>27</sup> Պետրոսյան Լ. Ա., Պեղումներ Սարապատում, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, I, Եր., 1993, աղ. XCIV, նկ. 8, 9, 13:

<sup>28</sup> Կատալոգ Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի III, Եր., 1972, աղ. XII, նկ. 11:

<sup>29</sup> Ավետիսյան Հ. Գ., Ավետիսյան Պ. Մ., Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI-VI դդ., Եր., 2006, աղ. 43, նկ. 21:

գծերի առկայությամբ: Գավաթների ուսումնասիրվող տեսակը հայտնի է Արթիկի թիվ 223<sup>30</sup>, Ռեդկին լագերի<sup>31</sup> դամբարաններից, Կառնուտից<sup>32</sup>, Մարալ-Դերեսից<sup>33</sup>, Թռեղքի 16<sup>34</sup> դամբարանից և Ոսկեհասկի 2, 4, 5-րդ կատակոմբներից<sup>35</sup>, որոնք հիմնականում հայտնի են նախաուրարտական շրջանի նյութերում: Երրորդ բաժակը նախորդներից տարբերվում է ինչպես հարթ, լայն հատակով, այնպես էլ բերանի բացվածքով (աղ. VI, նկ. 2): Վերջինիս նմանակները ևս հայտնի են Արթիկի 420<sup>36</sup> և Թռեղքի 7<sup>37</sup>, Շիրակավանի 101<sup>38</sup>, Քեթիի 41<sup>39</sup> և այլ դամբարաններից: Մայիսյանի թիվ 3 դամբարանի սափորները ներկայացված են երկու տարբերակով: Առաջինն ունի հարթ հատակ, գնդաձև իրան, միջին բարձրության վիզ, դուրս փռված շուրթ: Աղեղնաձև բռնակը միանում է շուրթից ուսին, որի վրա վերին մասում առկա է ելուստ, իսկ իրանին արված են ուղղահայաց, զուգահեռ փորվածքներ: Անոթի իրանի վերին մասը զարդարված է կտրելու եղանակով արված ալիքաձև երկու գոտիով, որի կենտրոնում արված է կեռիսաչ (աղ. VI, նկ. 6): Ներկայացվող անոթներն իրենց ձևով մեծ ընդհանրություններ ունեն Թռեղքի մ.թ.ա. IX-VIII դդ. թվագրված 65<sup>40</sup> և մի շարք այլ դամբարանների, ինչպես նաև Դիլիջանի<sup>41</sup> և Ոսկեհասկում<sup>42</sup> հայտնաբերվածների հետ: Մայիսյանի թիվ 3 դամբարանի սափորների մյուս տեսակն ունի թույլ ընդգծված հատակ, քիչ ձգված իրան, միջին բարձրության վիզ, դուրս թեքված շուրթ: Բռնակը միանում է շուրթից ուսին, որից ներքև իրանի վերին մասը զարդարված է սեղմումով արված թեք գծերից՝ եռանկյունիներից կազմված գոտիով: Այն ավարտվում է երեք շարք ակոսագոտիներով (աղ. VI, նկ. 8): Սափորների այս տարբերակի զուգահեռները

<sup>30</sup> Хачатрян Т. С. Арктикский некрополь, Ер., 1979, с. 2013.

<sup>31</sup> Мартиросян А. А. Армения в эпоху бронзы и раннего железа, Ер., 1964, с. 200, рис. 78 (14).

<sup>32</sup> Badalyan R. S., Avetisyan P. S. Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia I, Mt. Aragats and its Surrounding Region// BAR International Series 1697, 2007, p. 151, pl. I. fig. 6,7.

<sup>33</sup> Куфтин Б. А. Археологические раскопки в Триалети, I, Тбилиси, 1941, с. 279, табл. XIX.

<sup>34</sup> Менабде М., Давлианидзе Ц., նշվ. աշխ., աղ. II, նկ. 77:

<sup>35</sup> Петросян Л. А., նշվ. աշխ., տախտ. 65, նկ. 5; աղ. 66, նկ. 9-11, աղ. 67, նկ. 14:

<sup>36</sup> Хачатрян Т. С., նշվ. աշխ., նկ. 294:

<sup>37</sup> Менабде М., Давлианидзе Ц., նշվ. աշխ., աղ. I, նկ. 20, աղ. I, նկ. 31:

<sup>38</sup> Թորոսյան Ռ. Ս., Խնկիկյան Օ. Ս., Պետրոսյան Լ. Ա., նշվ. աշխ., աղ. LIX, նկ. 11:

<sup>39</sup> Петросян Л. А., նշվ. աշխ., աղ. 70, նկ. 2:

<sup>40</sup> Менабде М., Давлианидзе Ц., նշվ. աշխ., տախտ. VI, նկ. 82-84:

<sup>41</sup> Դիլիջանի երկրագիտական թանգարանի հնագիտական իրերի կատալոգ, Եր., 1969, աղ. XXX-XXXIII:

<sup>42</sup> Хачатрян Т. С., նշվ. աշխ., նկ. 294:

<sup>42</sup> Петросян Л. А., նշվ. աշխ., աղ. 65, նկ. 2; աղ. 68, նկ. 1, 2; աղ. 69, նկ. 1, 2, 4:

կան դամբարանային համալիրներում<sup>43</sup>, ինչպես նաև Դիլիջանի համաժամանակյա նյութերում<sup>44</sup>, Գոլովինոյի 1929 թ. պեղված կրոնիկներում<sup>45</sup> և Ոսկեհասկի վերը նշված կատակոմբներում: Ուսումնասիրվող դամբարանում մեկական օրինակով գտնվել են նաև ձուլած, խոհանոցային կճուճ և երկբոնակ անոթ: Վերջինս ունի հարթ հատակ, ուռուցիկ իրան, ոչ բարձր վիզ և դուրս ոլորված շուրթ: Անոթի իրանի հակադիր կողմերում առկա է մեկական բռնակ: Իրանի վրայի անցքերն արված են ճաքած անոթը կարելու համար (աղ. VI, նկ. 7): Այդպիսի երկուական անոթներ են հայտնաբերվել նաև Մայիսյանի ավերված (աղ. V, նկ. 5, 6) և թիվ 5 դամբարանից (աղ. III, նկ. 2): Այս անոթները մեծ կարևորություն ունեն ոչ միայն ժամանակագրական, այլև գործառական առումով: Ուստի հարկ է նշել, որ դրանց սկզբնավորումը տեսանելի է՝ սկսած ուշ բրոնզի երկրորդ փուլից, որպիսիք լավագույնս ներկայացնում են Արթիկի ուշ բրոնզի երկրորդ փուլի<sup>46</sup>, Լենինականի<sup>47</sup>, ինչպես նաև Շիրակավանի նույն ժամանակով թվագրվող 55, 106, 107 դամբարաններում<sup>48</sup>, սակայն իրականում այս նյութերի կիրառության հիմնական ժամանակաշրջանը մ.թ.ա. IX-VIII դարերն են, իսկ օգտագործման կարևոր տարածաշրջաններն են հանդիսացել Թոեղքը և Շիրակը: Սա, իհարկե, չի նշանակում, որ անոթների ուսումնասիրվող տեսակը Հայաստանի մյուս տարածաշրջաններում չի օգտագործվել: Դրանց առանձին օրինակներ հայտնի են Լոռիում՝ Չեչմանիս, Արարատյան դաշտում՝ Երևանի մաքրման կայաններ, արևելյան շրջաններում՝ Հարժիս և այլն: Շիրակում և Թոեղքում դրանց տարածված լինելը պայմանավորված է տվյալ տարածաշրջաններում զարգացած անասնապահության և անասնապահական մթերքների պահպանությամբ ու վերամշակմամբ: Անհրաժեշտ է նշել, որ Մայիսյանի թիվ 4 մանկական դամբարանում բացվել է նաև ուսումնասիրվող անոթներից մի փոքր տարբերվող տեսակ: Այն ունի հարթ հատակ, ցածր, լայնացող իրան, ցածր վիզ և մի քիչ դուրս թեքված շուրթ: Իրանի հակադիր մասերում, ինչպես նախորդների պարագայում, այստեղ ևս առկա է մեկական բռնակ (աղ. II, նկ. 3): Այս անոթի ճշգրիտ զուգահեռը հայտնի է Թոեղքի թիվ 37 դամբարանից<sup>49</sup> և Ռեդկլին լազերի մ.թ.ա. IX-VIII դդ. թվագրվող

<sup>43</sup> Менабде М., Давлианидзе Ц., նշվ. աշխ., աղ. IV, նկ. 151; աղ. V, նկ. 235; աղ. VI, նկ. 248; աղ. VII, նկ. 285:

<sup>44</sup> Դիլիջանի երկրագիտական թանգարանի հնագիտական իրերի կատալոգ, III, աղ. XXX-XXXIII:

<sup>45</sup> Мартиросян А. А. Раскопки в Головино, Ер., 1954, табл. XXI, рис. 1-3.

<sup>46</sup> Хачатрян Т. С., 1979, նշվ. աշխ., դամբ. 446, 548, 575, 594, 623:

<sup>47</sup> Мартиросян А. А., 1964, նշվ. աշխ., էջ 126, նկ. 51:

<sup>48</sup> Թորոսյան Ռ. Ս., Խնկիկյան Օ. Ս., Պետրոսյան Լ. Ա., նշվ. աշխ., աղ. XXIX, XLI, նկ. 1; LVIII, նկ. 10:

<sup>49</sup> Менабде М., Давлианидзе Ц., նշվ. աշխ., աղ. II, նկ. 74:

դամբարանից<sup>50</sup>: Ի դեպ, Շիրակի և Թոեղքի տարածաշրջանների՝ անասնապահական մթերքների վերամշակման կենտրոն լինելը հաստատում է նաև կաթնամթերքի վերամշակման անոթների՝ խնոցիների առկայությունը: Դրանցից մեկը գտնվել է թիվ 3, մյուսը՝ թիվ 5 դամբարաններում: Երկուսն էլ ունեն հարթ հատակ, ձգված իրան, ցածր վիզ: Հատակին արված է քիչ բարձր ելուստ, իրանին՝ դուրս ցցված եզրերով անցք, կողքին՝ նաև հորիզոնական բռնակ (աղ.VI, նկ.4):

Խնոցիները ևս մեծ թվով հայտնի են հատկապես Թեղքի և Շիրակի Թաքքիլիսա, Ցինցղարո, Արթիկ, Թալին, Շիրակավան, Քեթի, Ոսկեհասկ, Ռեդկինլագեր և այլ հնավայրերում: Թիվ 3 դամբարանում հայտնաբերված վերջին անոթը ձեռածեփ, հարթ լայն հատակով, ուռուցիկ իրանով, դուրս թեքված շուրթով խոհանոցային կճուճն է: Ուսերը զարդարված են ակոսագոտու երկու կողմերում արված հատիկաշարերով (աղ.VI, նկ. 1): Սա ևս իր նմանակն ունի Թոեղքի մ.թ.ա. IX-VIII դդ. թվագրվող<sup>51</sup> և Շիրակավանի 12<sup>52</sup> և այլ դամբարաններում: Թիվ 5 դամբարանի քրեղաններից մեկն ունի հարթ, լայն հատակ, երկթեք իրան, դուրս ոլորված շուրթ: Իրանի վերին մասը ծածկված է հորիզոնական երկու լայն ակոսագոտիներով (աղ. III, նկ. 6): Առաջին տարբերակի զուգահեռները հայտնի են Թալինի 5, 51, 63 և բազմաթիվ այլ դամբարաններում<sup>53</sup>, Շիրակավանի 12, 50<sup>54</sup>, Թոեղքի 37, 65<sup>55</sup> և այլ դամբարաններում: Քրեղանների երկրորդ տարբերակի նմանակները, որոնք հաճախ օժտված են բռնակով (աղ. III, նկ.5), ևս լավ հայտնի են Թալինում (դդ. 54, 60, 71 և այլն): Այդպիսիք կան նաև Արթիկի 631<sup>56</sup>, Շիրակավանի թիվ 11 դամբարաններում<sup>57</sup>: Թիվ 5 դամբարանում գտնվել է նաև մեկ բավական ինքնատիպ կավաման, որն ունի հարթ, լայն հատակ, երկթեք իրան, դուրս թեքված շուրթ: Վզի հիմքում արված են երեք շարք ակոսագոտիներ, իրանի ուռուցիկ մասը գեղեցկացնում է ելուստների շարքը (աղ. III, նկ. 1): Նշենք միայն, որ այս անոթի զուգահեռները հայտնի չեն, և ըստ ամենայնի տվյալ ժամանակաշրջանի եզակի անոթներից մեկն է, որը որոշ չափով նման է Դիլիջանի նյութերին<sup>58</sup>: Նյութերի ինքնատիպությամբ և բազմազանությամբ է աչքի ընկնում Մայիսյանի թիվ 6 դամբարանը: Այստեղ գտնված սափորը զգալի չափով տարբերվում է

<sup>50</sup> Мартиросян А. А., 1964, նշվ. աշխ., էջ 200, նկ. 78 (5):

<sup>51</sup> Менабде М., Давланидзе Ц., նշվ. աշխ., աղ. II, նկ. 56; աղ. IV, նկ. 158:

<sup>52</sup> Թորոսյան Ռ. Ս., Խնկիկյան Օ. Ս., Պետրոսյան Լ. Ա., նշվ. աշխ., աղ. LXX VIII, նկ. 6:

<sup>53</sup> Ավետիսյան Հ. Գ., Ավետիսյան Պ. Ս., նշվ. աշխ., աղ. 2, 33, 43:

<sup>54</sup> Թորոսյան Ռ. Ս., Խնկիկյան Օ. Ս., Պետրոսյան Լ. Ա., նշվ. աշխ., աղ. LXX VIII, նկ. 6:

<sup>55</sup> Менабде М., Давланидзе Ц., նշվ. աշխ., աղ. IV, նկ. 162; աղ. VI, նկ. 286:

<sup>56</sup> Хачатрян Т. С., 1979, նշվ. աշխ., դ. 631:

<sup>57</sup> Թորոսյան Ռ. Ս., Խնկիկյան Օ. Ս., Պետրոսյան Լ. Ա., նշվ. աշխ., աղ. LXVI, նկ. 6:

<sup>58</sup> Դիլիջանի երկրագիտական թանգարանի հնագիտական իրերի կատալոգ, աղ. XXXVII, նկ. 5:

նախորդ դամբարանների օրինակներից. այն ունի քիչ բարձր նստուկ, գնդաձև իրան, շատ նեղ, աստիճանաձև, հետզհետե լայնացող վիզ և դուրս փոշված շուրթ: Չորս ելուստներով զարդարված բռնակը շուրթի տակից միանում է անոթի ուսին: Իրանի ստորին մասում արված է երկու հորիզոնական ակոսագոտի: Ուսերը զարդարված են վերին և ստորին մասերում երկուական ակոսագոտիների միջև արված երեք շարք ալիքագոտիներով (աղ. IV, նկ. 5): Մեր սափորներին առավել մոտ են Թռեղքի 10<sup>59</sup> և 65<sup>60</sup> դամբարանների Թաք Քիլիսայի<sup>61</sup>, ինչպես նաև Շիրակավանի 12<sup>62</sup> դամբարաններից ու հատկապես Սաղախլոյից հայտնաբերվածները<sup>63</sup>: Ուսումնասիրվող դամբարանի մյուս անոթն ունի հարթ հատակ, գնդաձև իրան, նեղ վիզ: Իրանի ուռուցիկ մասում ունի մեկ բռնակ: Իրանի վերին մասը զարդարված է ակոսագոտիներով (աղ. IV, նկ. 7): Կարծես այս անոթի կրկնակը լինեն Արթիկի 211 և 631 դամբարաններից<sup>64</sup> գտնվածները: Այս անոթների հետ մեծ ընդհանրություններ ունեն Այգեջատի 13, Թալինի 37, 51 դամբարանի<sup>65</sup> և Թռեղքի թ. 4, 31 և այլ դամբարաններից գտնվածները<sup>66</sup>: Ուսումնասիրվող դամբարանում գտնվել է նաև բաժակ, որն ունի հարթ, լայն հատակ, եկթեք իրան: Բռնակը միանում է շուրթից իրանի ստորին մասին: Իրանի վերին մասը զարդարված է ուղղահայաց զուգահեռ զծերով (աղ. IV, նկ. 1): Այդպիսիք հայտնի են Կարմիր բերդից<sup>67</sup>, Ծաղկաշատից<sup>68</sup>, Թաք Քիլիսայից<sup>69</sup>: Նշենք նաև, որ բաժակների այս տեսակը մեծ ընդհանրություններ ունի նաև Դիլիջանում հայտնաբերվածների հետ<sup>70</sup>: Նշված զուգահեռների ժամանակագրական սահմաններն են մ.թ.ա. IX-VII դդ.: Մայիսյանի թիվ 6 դամբարանում կճուճները երկուսն են: Մեկը պատկանում է խոհանոցային տեսակին. ունի հարթ, լայն հատակ, քիչ ձգված իրան, դուրս թեքված շուրթ, ուսերին կտրելու եղանակով արված են թեք զծեր (աղ. IV, նկ. 3): Նման անոթ հայտնի է Կարմիր բերդի 43<sup>71</sup>, Սարապատի մի

<sup>59</sup> Менабде М., Давлианидзе П., նշվ. աշխ., աղ. II, նկ. 41:

<sup>60</sup> Նույն տեղում, աղ. VII, նկ. 285:

<sup>61</sup> Куфтин Б. А., նշվ. աշխ., էջ 293, աղ. XXIX:

<sup>62</sup> Թորոսյան Ռ. Ս., Խնկիկյան Օ. Ս., Պետրոսյան Լ. Ա., նշվ. աշխ., աղ. LXVII, նկ. 1-4:

<sup>63</sup> Morgan J. de Mission Scientifique au Caucase, t. I. – Paris: S. n., 1889, p. 146, fig. 151 (1).

<sup>64</sup> Хачатрян Т. С., 1979, նշվ. աշխ., դամբ. 211, 631:

<sup>65</sup> Ավետիսյան Հ. Գ., Ավետիսյան Պ. Ս., նշվ. աշխ., աղ. 4, նկ. 3; աղ. 28, նկ. 2; աղ. 33, նկ. 5:

<sup>66</sup> Менабде М., Давлианидзе П., նշվ. աշխ., աղ. I, նկ. 10; աղ. III, նկ. 137:

<sup>67</sup> Դիլիջանի երկրագիտական թանգարանի հնագիտական իրերի կատալոգ, աղ. XVII, նկ. 2:

<sup>68</sup> Խնկիկյան Օ. Ս., Դամբարանների պեղումներ Թումանյանի շրջանի Ծաղկաշատ գյուղում, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, I, Եր., 1993, աղ. LXXXVII, նկ. 18:

<sup>69</sup> Куфтин Б. А., նշվ. աշխ., աղ. XXIX:

<sup>70</sup> Դիլիջանի երկրագիտական թանգարանի հնագիտական իրերի կատալոգ I, աղ. XXI, նկ. 5:

<sup>71</sup> Դիլիջանի երկրագիտական թանգարանի հնագիտական իրերի կատալոգ III, 1975, աղ. X, նկ. 8:

շարք<sup>72</sup>, Թռեղքի 36, 55<sup>73</sup>, Շիրակավանի 114 դամբարաններից<sup>74</sup>: Թիվ 6 դամբարանի երկրորդ կճուճը ևս ունի հարթ հատակ, ուռուցիկ իրան, դուրս թեքված շուրթ: Իրանին արված են կետերից կազմված անորոշ ձևերի զարդեր (աղ. IV, նկ. 4): Այս կճուճի զուգահեռները ևս տեսանելի են Թռեղքի 6, 15<sup>75</sup>, Ռեդկին լազերի թիվ 4 դամբարաններում<sup>76</sup>: Բացի ներկայացված խեցանոթներից՝ ուսումնասիրվող դամբարանում գտնվել է նաև Շիրակի դաշտին մինչ այժմ հայտնի երկաթիդարյան դամբարաններում դեռևս մեզ անհայտ մի կավանոթ, որն ունի գորշ բաց վարդագույն մակերես, հարթ հատակ, դեպի քիչ դուրս ձկված շուրթ՝ լայնացող կողերով: Բարձրությունը 32 սմ է (աղ. IV, նկ. 6): Այս անոթն արտաքին տեսքով մոտ է Կարմիր բլուրից գտնված չաներին<sup>77</sup> միայն այն տարբերությամբ, որ Մայիսյանի նմուշի կողերը մի փոքր ավելի ուղղահայաց են: Բացի ներկայացված վեց դամբարանների նյութերից՝ Հ. Խաչատրյանի կողմից հավաքվեցին նաև մեկ ավերված դամբարանի նյութեր (աղ. V), որոնցից նկ. 1, 2, 3, 5, 6-ի մասին այլ դամբարանների համանման նյութերի ուսումնասիրման ժամանակ արդեն խոսվել է: Մնում են միայն խոհանոցային երեք կճուճներ (աղ. VI, նկ. 1) (աղ. V, նկ. 4) և մեկ բրոնզե մատանի (աղ. V, նկ. 7): Նախ նշենք, որ խոհանոցային կճուճների այս տեսակը լավ հայտնի է մ.թ.ա. IX-VIII դդ. պատկանող դամբարաններից, այդ թվում և Մեծամորի հրդեհված շերտի ժամանակով թվագրվող 6 դամբարանից<sup>78</sup> և համաժամանակյա բազմաթիվ այլ հնավայրերից: Որպես ընդհանուր երևույթ՝ Մայիսյանում պեղված դամբարաններում խիստ սակավ են ոչ միայն մետաղյա իրերը, այլև ուլունքները: Թիվ 4 դամբարանում գտնվել է մեկ բրոնզե ականջօղ (աղ. II, նկ. 2): Նշենք միայն, որ այս նյութերը երկաթիդարյան ժամանակաշրջանի տարածված նյութերից են և հայտնի են մի շարք հուշարձաններից: Նույնը կարելի է ասել նաև Մայիսյանի թիվ 5 (աղ. III, նկ. 7) և 6 (աղ. IV, նկ. 2) դամբարաններում գտնված սարդիոնից և շաղախից ուլունքների մասին:

*Եզրահանգում.* 2014 թ. ԳԱԱ ՀԱԻ-ի և ՇԵԹ-ի միացյալ հնագիտական արշավախմբի կողմից իրականացված փրկարարական աշխատանքներով Շիրակի մարզի Մայիսյան գյուղի վարչական տարածքում ուսումնասիրվեցին վեց սալարկղային դամբարաններ և մեկ դամբանաբլուր: Դամբանաբլուրն ունի սև քարերով շարված և մոտակա բլուրներից բերված սպիտակ կրաքարով կրկնակի

<sup>72</sup> Պետրոսյան Լ. Ա., նշվ. աշխ., աղ. LXXVI, նկ. 13:

<sup>73</sup> Менабде М., Давланидзе П., նշվ. աշխ., աղ. IV, նկ. 158, աղ. V, նկ. 228:

<sup>74</sup> Թորոսյան Ռ. Ս., Խնկիկյան Օ. Ս., Պետրոսյան Լ. Ա., նշվ. աշխ., աղ. LXXIV, նկ. 13:

<sup>75</sup> Менабде М., Давланидзе П., նշվ. աշխ., աղ. I, նկ. 26, աղ. II, նկ. 56:

<sup>76</sup> Դիլիջանի երկրագիտական թանգարանի հնագիտական իրերի կատալոգ, I, աղ. IX, նկ. 35:

<sup>77</sup> Նույն տեղում, III, 1975, աղ. XXXVIII, նկ. 8:

<sup>78</sup> Խանգաղյան Է.Վ., Մկրտչյան Կ. Հ., Պարսամյան Է. Ս., Մեծամոր, Եր., 1973, աղ. XXXVIII, նկ. 1-4:

ամրացված 14մ տրամագծով կրոմլեխ: Դամբանաբլուրի տակ բացված երկու հիմնահողային խցերից մեկում կատարվել է դամբարանատիրոջ թաղումը, մյուսում գտնվել են նրան պատկանող իրերը: Այլ է իրավիճակը տվյալ դամբարանադաշտի երկաթիդարյան՝ սալարկղային դամբարաններում: Եթե դամբանաբլուրի բրոնզիդարյան թաղման խցերը կրկնում են նախորդ՝ կարմիրբերդյան փուլի ձևերը, և հստակ դիտվում էին թաղման ծիսակարգի և ուղեկցող նյութերի ընդհանրությունները, որոնք բավականին միատեսակ (կճուճներ, քրեղաններ) են, ապա դրանից ավելի քան 600 տարի հետո կատարված երկաթիդարյան թաղումները թե՛ ձևով և թե՛ ծիսակարգով, սալարկղային դամբարանաձևերը իրենց ձևով ու նյութական մշակույթի բազմազանությամբ ցուցադրում են երկաթիդարյան ժամանակաշրջանի հասարակության կյանքում տեղի ունեցած զարգացումները, որոնց արդյունքն է տնտեսությունում օգտագործված առարկաների մեծ տեսականին: Չնայած պեղված դամբարանների սակավությանը՝ այնուամենայնիվ, հստակ երևում են Մայիսյանի նյութերի ընդհանրությունները Արագածոտնի մարզի և Թոռեղի նյութերի հետ: Նկատելի է ևս մեկ իրողություն՝ մետաղի սակավությունը, որը հավանաբար պայմանավորված է մետաղահանքերի հեռավորությամբ: Տեղագրական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ պեղված տարածքը ոչ թե նորահայտ առանձին դամբարանադաշտ է, այլ հանդիսանում է Քեթիի հայտնի դամբարանադաշտի ծայրարևմտյան հատվածը:


## РАСКОПКИ НОВОНАЙДЕННОГО УЧАСТКА НЕКРОПОЛЯ КЕТИ


*Петросян Л. А., Хачатрян А. А., Еганян Л. Г.*

**Ключевые слова:** *археология, эпохи поздней бронзы и раннего железа, склеп, курган, кромлех, формы и ритуал погребений, материальная культура.*


Благодаря спасательным работам, осуществленным совместной экспедицией Института археологии и этнографии и Краеведческого музея Ширака, на административной территории села Маисян (Ширакский регион) были изучены шесть цистовых могил и один курган. Курган имеет кромлех диаметром 14 м, построенный из черных камней и вдвойне укрепленный белым известняком, принесенным из ближайших холмов. В одном из двух подкурганых ямных погребений был обнаружен скелет покойника с тремя сосудами, а в другом были открыты только сосуды. Мы уверены, что эти две камеры принадлежали одной и той же персоне. Соответствующие параллели известны из Лчашена и других памятников, которые датируются переходным периодом от среднего к позднему бронзовому веку (первая половина XVI в. до н.э.). В цистовых захоронениях погребения были сделаны ритуалом декарнации или перехоронения: эти погребения датируются последним этапом ранне железного века (IX-VIII вв. до н.э.). В результате изучения местности было установлено, что этот участок крайняя западная часть большого некрополя Кети.

Աղյուսակ I







1  
0 3 6 cm




2  
0 0,5 1 cm



3  
0 1 2 cm




4  
0 0,5 1 cm




5


0 1 2 cm





6




Աղյուսակ IV












Նկ. 1. Դամբարան 1




Նկ. 2. Դամբարան 2




Նկ. 3. Դամբարան 3




Նկ. 4. Դամբարան 4




Նկ. 5. Դամբարան 5




Նկ. 6. Դամբարան 6



Նկ. 7. Դամբարան 7



Նկ. 7. Դամբարան 7/1



Նկ. 7. Դամբարան 7/2

**EXCAVATIONS OF THE NEWLY FOUND KETI NECROPOLIS**

*Petrosyan L. A., Khachatryan H. H., Yeganyan L.G*

**Key words:** *Archaeology, the Late Bronze and Early Iron Age, crypt, barrow, cromlech, forms and rituals of burials, material culture.*

Due to salvage actions realized in 2014 by the united expedition of the Institute of Archaeology and Ethnography and Local Museum of Shirak in the administrative district of the village Mayisyan (Shirak region) six cist graves and one barrow were studied. The barrow has a cromlech with 14 m diameter which was built in with black stones and repeatedly fortified by white limestone brought from the nearest hills. In one of two pit-graves opened under the barrow the skeleton of the deceased was found with three vessels, and in the other one only vessels were present. We are sure that both chambers belonged to the same person. Corresponding parallels are known from Lchashen and other sites which date back to the first half of the 16<sup>th</sup> century BC - the transitional period from the Middle to the Late Bronze Age. In cist graves the burials were performed by the rite of decarnation or reburial and date back to the final phase of the Iron Age (9-8th centuries BC). As a result of the study of the area, it was established that this site is an extremely sublime part of the large necropolis of Keti.

**R e f e r e n c e s**

1. **Khachatryan T. S.**, Drevniaya kultura Shiraka, izd. Gos. universiteta, Yerevan, 1975 **(In Russian)**.
2. **Petrosyan L. A.**, Raskopki pamiatnikov Keti i voskehaska, izd. AN Arm. SSR, Yerevan, 1989 **(In Russian)**.
3. **Areshyan G. E., Oganisyan B. E., Muradyan F. M., Avetisyan, Petrosian L.A.** Konets srednego bron zovogo veka v mezhdureche Araksa i Kuri, Patma-banasirakan handes, 1, 1990 **(In Russian)**.
4. **Torosyan R. A., Khnkikyan O. S., Petrosyan L. A.** Hin Shirakavan, HH GAA Gitutyn hrat, Yerevan, 2002 **(In Armenian)**.
5. **Devedjyan S. G.** Lori-Berd I, HSSR GA hrat., Yerevan, 1981 **(In Armenian)**.
6. **Menabde M., Davlianidze Ts.** Mogilnik Trialeti, Katalog I, izd. AN Gruz.SSR, Tbilisi, 1968 **(In Russian)**.
7. **Petrosyan L. A.**, Pegumner Sarapatum, Hnagitakan ashkhatanknere Hayastani norakaruytsnerum I, HH GAA hrat., Yerevan, 1993 **(In Armenian)**.
8. Katalog Yerevan kaghaki patmutyan tangarani hnagitakan ireri III, HH Mshakuyti nakhararutyan hrat. Yerevan, 1972 **(In Armenian)**.
9. **Avetisyan H. G., Avetisyan P. S.**, Araratyan dashti mshakuyte m.t.a. XI-VI darerum, EPH hrat. Yerevan. 2006 **(In Armenian)**.

10. Khachatryan T. S. Artikskiy nekropol, izd. YU, Yerevan, 1979 (In Russian).
11. Martirosyan A. A. Armenia v epokhu bronzi i rannego zheleza, izd. AN Arm.SSR, Yerevan, 1964 (In Russian).
12. Kuftin B. A., Arkheologicheskie raskopki v Trialeti I, izd. AN Gruz.SSR, Tbilisi 1941 (In Russian).
13. Dilidjani erkragitakan tangarani hnagitakan ireri katalog, HSSH kult. min. hrat. Yerevan, 1969 (In Armenian).
14. Martirosyan A.A., Raskopki v Golovino, izd. AN Arm. SSR, Yerevan, 1954 (In Russian).
15. Khnkikyan O.S., Dambaranneri peggumner Tumanyani shrdjani Tsaghkashat gyughum, Hnagitakan ashkhatanknere Hayastani norakaruytsnerum I, HH GAA hrat. Yerevan, 1993 (In Armenian).
16. Khandazyan E.V., Mkrtchyan K.H., Parsamyan E.S., Metsamor, HSSH GA hrat. Yerevan, 1973, Hnagitakan ashkhatanknere Hayastani norakaruytsnerum I, HH GAA hrat., Yerevan, 1993 (In Armenian).

*Ընդունվել է՝ 23. 03. 2020*

*Գրախոսվել է՝ 03. 09. 2020*

*Հանձնվել է տպ.՝ 20. 11. 2020*

**Տեղեկություններ հեղինակների մասին**

**Լևոն ՊԵՏՐՈՍՅԱՆ՝** պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, էլ. հասցե՝ galstyan-1966@mail.ru

**Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝** ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի և ՇԵԹԻ ավագ գիտաշխատող, էլ. հասցե՝ smuseum@web.am

**Լարիսա ԵԳԱՆՅԱՆ՝** պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի և ՇԵԹԻ առաջատար գիտաշխատող

ՀՏԴ՝ 902.03

ԼԵՌՆԱԿԵՐՏԻ ԿԵՆՂԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ 2019 ԹՎԱԿԱՆԻ  
ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
*Զարիկյան Նուշիկ<sup>1</sup>, Վարդանյան Բենիկ<sup>2</sup>, Դավթյան Ռուբեն<sup>3</sup>,  
Մանուկյան Սոնա<sup>1</sup>, Սարիբեկյան Մարիամ<sup>1</sup>*

1 ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
2 ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,  
3 Սոցիալական մարդաբանության Մաքս Պլանկի ինստիտուտ, Հալլե, Զաալե, ԳՖՀ

**Բանալի բառեր՝** Արագածի հյուսիսարևմտյան լանջեր, Լեռնակերտ, Վերի Բերդ, Վարի Բերդ, կենդանաբանություն, հնամիջավայր, բրոնզի դարի անասնապահություն, ուշ բրոնզի դար, վաղ հելլենիստական ժամանակաշրջան:

Սույն հոդվածում ուսումնասիրվել է Արագածի հյուսիսարևմտյան լանջերում գտնվող Լեռնակերտի հուշարձանախմբի 2019 թվականի պեղումներից հայտնաբերված մ.թ.ա. III-I հազարամյակներին վերաբերող կենդանաբանական մնացորդները, որոնք ենթարկվել են տեսակային, քանակական, համատեքստային վերլուծության և ԴՆԹ հետազոտության: Լեռնակերտի օրինակով հետազոտությունները ցույց են տվել վաղ բրոնզի, ուշ բրոնզի, վաղ և ուշ երկաթի դարերում անասնապահության, որսորդության և դրանց ածանցվող ոլորտների դերը հին հասարակությունների կյանքում:

**Նախաբան.** Լեռնակերտ գյուղը գտնվում է Շիրակի մարզում՝ Արագածի հյուսիսարևմտյան լանջին, ծովի մակերևույթից 1980 մ բարձրության վրա (Նկ. 1): Հուշարձանախումբը բաղկացած է բրոնզ-երկաթիդարյան երկու ամրոցներից,

դրանց շուրջը տարածվող դամբանադաշտերից, ջրաբաշխ հնագույն համակարգից, մեգալիթյան բնույթի այլ կառույցներից: Ամրոցներից Վարի Բերդը (բարձրությունը ծ. մ.՝ 2020 մ) գտնվում է գյուղից մոտ 0.4 կմ հարավ, իսկ Վերի Բերդը (բարձրությունը ծ. մ.՝ 2120 մ)՝ 2.5 կմ հարավ-արևելք, Վարի Բերդից՝ 1.2 կմ արևելք: Ամրությունները կառուցված են տարածքում աչքի ընկնող բնական ժայռոտ բլուրների հարթեցված գագաթներին (Նկ. 2)<sup>1</sup>:

Լեռնակերտում սիստեմատիկ պեղումները սկսվեցին 2019 թ., որտեղ հայգերմանական արշավախումբը<sup>2</sup> սկսեց ուսումնասիրել Վերի Բերդի, Վարի Բերդի բերդները և դրանց շրջակա դամբանադաշտերը: Վերի Բերդի առաջին պեղավայրը դրվեց ամրոցի հյուսիսային մասում: Հյուսիսարևելյան միջնաբերդի և ամրոցի միջև ընկած պարսպի վրա դրվեց երկրորդ պեղավայրը, իսկ միջնաբերդի ներսում՝ երրորդը: Վերի Բերդի հարավարևելյան հատվածում՝ հիմնապարսպից 3 կմ հյուսիս, տեղորոշվում է չորրորդ պեղավայրը: Հինգերորդ պեղավայրը գտնվում է ամրոցի հյուսիսարևմտյան միջնաբերդից երկու մետր արևելք: Վերջինս ընդգրկում էր պարսպից դեպի լանջն իջնող երկու հարթակները:

Վարի Բերդի առաջին պեղավայրը դրվեց ամրոցի հյուսիսային երկրորդ հարթակում՝ հիմնապարսպին կից:

Սույն ուսումնասիրության նպատակը Լեռնակերտի 2019 թվականից ստացված հնակենդանաբանական տվյալների հետազոտությունն է՝ Շիրակի բրոնզ-երկաթիդարյան հուշարձանների տվյալների համատեքստում:

Հողվածում քննության են առնվում նաև անասնապահությանը վերաբերող որոշ խնդիրներ:

#### **Հետազոտության մեթոդը**

Հնակենդանաբանական մնացորդներն ուսումնասիրվել են հողվածի առաջին հեղինակի կողմից՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության կենդանաբանության լաբորատորիայում: Ոսկրային մնացորդները խմբավորվել և նույնացվել են ըստ Vereshchagin, 1967, Heptner, 1988, Hillson, 2009 and Mashkour et al 2015<sup>3</sup> աշխատություններում նկարագրված մեթոդների:

<sup>1</sup> 2019 թ. պեղումների հիմնական արդյունքները տե՛ս Vardanyan B., Davtyan R., Manukyan S., Saribekyan M., Lernakert: ein neues archaologisches Projekt in Shirak // Archaeology of Armenia in Regional Context, Avetisyan P., Bobokhyan A. (ed.), Yerevan, 2020, pp. 187-199.

<sup>2</sup> Հետազոտություններն իրականացվել են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Սոցիալական մարդաբանության Մաքս Պլանկի ինստիտուտ, Հայլե, Ջալալե, ԳՖՀ համատեղ արշավախմբի միջոցներով:

<sup>3</sup> Vereshchagin N., The Mammals of the Caucasus. A History of the Evolution of the Fauna, Jerusalem, 1967; Heptner, V.G., Nasimovich, A.A., Bannikov, A.G., Hoffman, R.S., Mammals of the Soviet Union, Vol. I. mithsonian Institution Libraries and National Science Foundation, 1988, Washington; Hillson S., Mammal Bones and Teeth: An Introductory Guide to Methods of Identification (UCL Institute of Archaeology

### Հետազոտության սկզբնաղբյուրներ

Լեռնակերտի Վերի Բերդ հիմնադրման ժամանակաշրջանն ըստ ամրոցի կառուցվածքի համեմատական և խեցեղենի ձևատիպաբանական հետազոտության, վերաբերում է Հայաստանի ուշ բրոնզի դարի (այսուհետ՝ ՈԻԲԴ) երրորդ փուլին (մ.թ.ա. 14-13-րդ դարեր): №5 պեղավայրը գտնվում էր ամրոցի հյուսիսային մուտքից արևմուտք՝ ընդգրկելով պարսպաշարերով սահմանազատված ձեռակերտ երկու հարթակները (մակարդակ I-III, երկ.՝ 13 մ, լայն.՝ 1.5 մ):

№5 պեղավայրի 1-ին մակարդակից (№1 հարթակ) հայտնաբերվել են մի ոչխարի, մի կովի և մի եվրոպական այծյամի, իսկ նույն պեղավայրի 2-րդ մակարդակում նույնացվել են 2 ոչխարի, 2 այծի, 2 կովի, մի ձիու և մի եվրոպական այծյամի մնացորդներ: 3-րդ մակարդակից հայտնաբերված մնացորդների տեսակային կազմը ներկայացված է ընդամենը մի ոչխարի և մի ձիու առանձնյակներով:

Վերի Բերդ ամրոցի բնակեցման ավարտական փուլն ըստ խեցեղեն արտադրանքի համեմատական ուսումնասիրության և թվագրության ռադիոածխածնային տվյալների, վերաբերում է վաղ հելլենիստական ժամանակաշրջանին՝ մ.թ.ա. 5/4-րդից 3-րդ դդ. (մ.թ.ա. 364-204<sup>4</sup>): Այս դարաշրջանին են վերաբերում Վերի Բերդի №1-4,6 պեղավայրերը և №5 պեղավայրի վերին շերտերը (Սկ. 3):

№1 պեղավայրում հայտնաբերվել է ուղղանկյուն հատակագծով կացարան՝ չոր շարվածքով կառուցված պատերով (Աղ. 1):

Այս պեղավայրի կենդանական մնացորդները տեսակային կազմով բազմազան են. նույնացվել են մի ձիու, 5 ոչխարի, 4 այծի, 5 կովի, 3 խոզի, մի ազնիվ եղջերուի, եվրոպական մի այծյամի և մի կրծողի ոսկրային մնացորդներ<sup>5</sup>:

№2 և №3 պեղավայրերը գտնվում էին ամրոցի արևելյան միջնաբերդի պատերի վրա: Երկրորդ և երրորդ պեղավայրերով փորձեցինք հստակեցնել ամրոցի միջնաբերդի ժամանակագրական, կառուցվածքային խնդիրները:

Երկրորդ պեղավայրում կենդանական կազմը ներկայացված է ընդամենը մի այծի և մի կովի մնացորդներով, իսկ №3-ում՝ ոչխարի, կովի և խոզի առանձնյակներով: Չորրորդ պեղավայրում հաստատագրվել են մի ձի, մի կովի և մի ոչխարի առանձնյակ, իսկ ամրոցի հյուսիսարևելյան լանջին պեղված №2 դամբանից՝ մի ոչխարի և մի կովի ոսկրային մնացորդ (Աղ. 1):

Publications (LCP), University College London institute of Archaeology, 2009, p. 64; **Mashkour, M., Beech, M.** (Eds.), (2015). Archaeozoology of the Near East 9. Chapter 11: Examples of Animal Exploitation in Urban Sites During the Bronze Age. Oxbow Books.

<sup>4</sup> Մանհայմի Կուրտ-Էնգելհորն կենտրոնի (ԳՖՀ) լաբորատորիա, Lab. Nr. 44413, Armenien, LK-019-0002, cal. BC 364-204.

<sup>5</sup> Կրծող կենդանու գոյությունը մշակութային շերտում պայմանավորված է պեղավայրում այդ կենդանիների մեծաթիվ բներով:

Այսպիսով՝ ըստ նախնական տվյալների, Լեռնակերտի Վերի Բերդը կառուցվել է մ.թ.ա. 14-13-րդ դարերում, մինչդեռ այլ տվյալները ցույց են տալիս ամրոցի շահագործման բավականին լայն ժամանակաշրջան, ընդհուպ մինչև մ.թ.ա. 5/4-րդից 3-րդ դդ.) (Նկ. 3):

Պատկերը այլ էր Լեռնակերտի Վարի Բերդում և դրան հարակից տարածքներում: Վարի Բերդի հյուսիսային երկրորդ հարթակում դրված առաջին պեղավայրի տվյալներով, տարածքն ունեցել է բնակեցման երեք փուլ՝ վաղ բրոնզի դար (այսուհետ՝ ՎԲԴ) (ներկայացված է մշակութային շերտով), ՈԻԲԴ (Վարի Բ. №1 դամբան) և ՎԵԴ-ը (Նկ. 3, Աղ. 2):

Վաղբրոնզիդարյան մշակույթը Լեռնակերտում ներկայացված է միաշերտ հնավայրով, որտեղից հայտնաբերված խեցեղենի և մետաղական առարկայի համեմատական ուսումնասիրությունը տարածաշրջանի հայտնի մյուս հնավայրերի հետ թույլ է տալիս բնակավայրի գոյության ժամանակահատվածը տեղադրել ՎԲԴ դարի II փուլում (Կուր-Արաքս II, 2900-2600 թթ. մ.թ.ա.)<sup>6</sup>: Վաղբրոնզիդարյան բնակավայրի №2 պեղավայրում նույնացվել է ընդամենը կովի մեկ առանձնյակի ոսկորներ (Աղ. 2):

Ամրոցի բնակեցման և կառուցման հիմնական փուլը վերաբերում է ՎԵ ժամանակաշրջանին (մ.թ.ա. 12-10-րդ դարեր): Վարի Բերդի առաջին պեղավայրից կենդանաբանական մնացորդները ներկայացված են մեկ այծի, մեկ կովի, մեկ խոզի և մեկ այծյամի մնացորդներով:

Այսպիսով՝ ըստ 2019 թվականի պեղումներից ստացված նախնական տվյալների, Լեռնակերտի տարածքը բնակեցվել է ՎԲԴ երկրորդ փուլում (ԿԱ II): ՎԲԴ և ՎԵԴ վերաբերող կենդանաբանական տվյալների սակավության պատճառով դեռևս չենք կարող խոսել տնտեսության մեջ անասնապահության և որսորդության դերի մասին: ՈԻԲԴ-ում, ըստ Վերի Բերդի տվյալների, ընտանի կենդանիներից զարգացած էր խոշոր և մանր եղջերավոր անասունների և ձիերի բուծումը: Առավել խոսուս է վաղհելլենիստական ժամանակաշրջանին վերաբերող տվյալները, ըստ որի՝ Շիրակի բարձրլեռնային այս հնավայրում ի հայտ են գալիս ընտանի և վայրի կենդանիների տեսակների մնացորդներ (Աղ. 1):

### **Հետազոտության արդյունքները**

Կենդանիների տեսակային կազմը

Կենդանաբանական նյութն ուսումնասիրելու և կենդանիների տեսակները որոշելու համար ուսումնասիրվել են 1348 անատոմիական միավոր, որոնցից

<sup>6</sup> Smith A., Badalyan R., Avetisyan P., The Archaeology and Geography of Ancient Transcaucasian Societies, Vol. 1: The Foundations of Research and Regional Survey in the Tsaghkahovit Plain, Armenia, Oriental Institute Publications (OIP), Vol. 134, The Oriental Institute of the University of Chicago, 2009, p. 34.

մատչելի և տիպորոշիչ էին 714-ը (ընտրության 53%-ը), ձևախեղված/մասնատված՝ 636-ը (ընտրության 47 %-ը):

Կենդանիներն ընտրություն ներկայացված են ութ տեսակով: Ընդհանուր առմամբ՝ գրանցվել է 56 առանձնյակի մնացորդ, դրանցից ընտանի են 21-ը, որոնցից՝ մանր և խոշոր եղջերավոր անասուն (այսուհետ՝ ՄԵԱ, ԽԵԱ) (13 ոչխար, 8 այծ, 16 կով/ցուլ)<sup>7</sup>, 6 ձի (*Equus caballus*) և 6 խոզ (*sus scrofa domestica*), իսկ վայրի կենդանիներից՝ 1 ազնիվ եղջերու (*Cervus elaphus*), 5 եվրոպական այծյամ (*Capreolus capreolus*) և մեկ կրծող (Աղ. 1-2, 6)<sup>8</sup>:

Վերի Բերդի №2 ուշբրոնզիդարյան դամբանում, աճյունի գանգի արևելակողմում դրված էին 6-8 տարեկան խոշոր եղջերավոր անասունի (*B. taurus taurus*) ձախակողմյան երեք կողերը, երկու սրունքները կամ ծնկի «խաղեր (*lateralen trochlea*): Վարի բերդի №1 դամբանի լիցքից<sup>9</sup> հայտնաբերվել են ձիու (*Equus caballus*) և կովի (*B. taurus taurus*) մնացորդներ, իսկ Վարի Բերդի ամրոցի երկրորդ դարավանդի հետախուզական №1 պեղավայրից հայտնաբերվել են մի այծի (*Capra hircus*), խոզի (*sus scrofa domestica*), կովի (*B. taurus*) և եվրոպական այծյամի (*Capreolus capreolus*) ոսկորներ (Աղ. 6):

Ի տարբերություն Հայաստանի բրոնզ-երկաթիդարյան ժամանակաշրջանի կենդանաբանության համեմատաբար մասշտաբային ուսումնասիրության՝ հելլենիստական և անտիկ ժամանակաշրջանի հուշարձանների վերաբերյալ տվյալները սակավաթիվ են: Այնուամենայնիվ, Լեռնակերտի վաղ հելլենիստական ժամանակաշրջանի (մ.թ.ա. 5/4-3-րդ դարեր) տվյալների համեմատական ուսումնասիրությունը Հայաստանի համաժամանակյա այլ հուշարձանի տվյալների հետ, տալիս է հետևյալ պատկերը. ընտանի կենդանիներից գերակշռող է խոշոր եղջերավոր անասունների ոսկորների քանակը, որին հաջորդում են մանր եղջերավորները, ապա ձիու մնացորդները (Աղ. 3): Ստացված համեմատական տվյալները վկայում են, որ մ.թ.ա. I հազարամյակի երկրորդ կեսում Հայաստանի հին հանրությունների կյանքում ԽԵԱ և ՄԵԱ շարունակում էին մնալ սննդի ապահովման գլխավոր դերակատար:

<sup>7</sup> Տարածաշրջանի բրոնզ-երկաթիդարյան հնավայրերում նկատվում են ԽԵԱ գլխաքանակի գերակշռություն ՄԵԱ հանդեպ: Համեմատության համար տե՛ս **Obermeier H.**, Tierknochenfunde aus Horom, Armenia von der frühen Bronzezeit bis in späturartäische Zeit // *Archäologische Mitteilungen aus Iran und Turan*, Band 38, 2006, pp. 141-209; **Генджян А.**, *Итоги изучения видового состава животных из поселений эпох бронзы и железа Ширакского марза (раскопки 2004-2015гг.) // Հայաստանի կենսաբանական հանդես*, 2017, №69 (3). *стр.* 58-62.

<sup>8</sup> **Hillson S.**, *Mammal Bones and Teeth: An Introductory Guide to Methods of Identification* (UCL Institute of Archaeology Publications (LCP), University College London institute of Archaeology, 2009, p. 64.

<sup>9</sup> Վարի Բերդի հարավային և հարավարևմտյան լանջերում տարածվող ուշբրոնզիդարյան դամբանադաշտը իջեցված է վաբրոնզիդարյան բնակավայրի մեջ:

### **Կենդանական մնացորդների քանակական ուսումնասիրություն**

Հիմնվելով գրանցված և ճանաչելի կենդանական ոսկորների քանակական հաշվարկի վրա՝ նկատելի է, որ ընտրություն գերակշռողը կողոսկրերն են (n=108): Քննվող ընտրություն առկա են մեծ քանակությամբ ատամներ (n=72) և ստորին ծնոտի մասեր (n=79), որոնց մորֆոմետրիկ տվյալներն են մեծապես նպաստել տեսակների որոշման գործընթացում:

Հատկանշական է, որ կենդանիների գանգերը մասնատված են (n=70): Գանգերի առկայությունն ապացուցում է, որ բնակավայրում նշված կենդանիները եղել են սննդի հիմնական աղբյուրը, որ օգտագործվել են նաև տնտեսական (երկրագործական) նպատակներով:

Լեռնակերտի կենդանական ընտրություն վերջույթները ներկայացված են եզակի նմուշներով: Պահպանված հազվադեպ օրինակների վրա ակնհայտ են մեխանիկական ազդեցության հետքեր, որոնք վկայում են մսագործության մեջ դրանց օգտագործված լինելու մասին:

### **Ոսկորների վրա ձևափոխությունների հետքերի ուսումնասիրություն**

Լեռնակերտի ոսկրային մնացորդները ենթարկվել են նաև հետքաբանական հետազոտության, ըստ որի՝ առանձնացվել են ոսկորների վրա ներգործության հետևյալ տեսակները՝

- *Մսագործության հետքեր:* Մեծ քանակությամբ ոսկորների վրա նկատվել են մսագործության հետքեր: Կարելի է եզրակացնել, որ բնակավայրից հայտնաբերված ոսկորները եղել են սննդային մնացորդներ (Նկ. 4ա-գ):

- *Ախտաբանություն:* Ոսկրային ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են հիվանդությունների մի քանի ախտանշաններ (Նկ. 5):

- *Գիշատիչների հետքեր:* Մնացորդների ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են գիշատիչների ատամների հետքերի փաստագրմամբ ոսկորներ: Հաստատագրումը վկայում է բնակավայրի հնամիջավայրի ու հատկապես ֆաունայի բազմազանության մասին (Նկ. 6):

- *Կլիմայական հետքեր:* Կլիմայական հետքեր կրող ոսկրային մնացորդներ չեն գրանցվել:

- *Մարսողության հետքեր:* Որոշ ոսկորների եզրերին (ոչ մեծ քանակությամբ) նկատելի են գիշատիչ թռչունների մարսողական ֆերմենտների հետքեր, ինչը վկայում է տարածքում մշտական բնակություն հաստատած գիշատիչ թռչունների առկայության մասին<sup>10</sup>:

<sup>10</sup> 2019-2020 թթ. աշխատանքների ընթացքում Վերի Բերդ ամրոցի հարևանությամբ նկատվել են ուրուր, բազե և այլ թռչուններ: Լեռնակերտի Խորունկ գետի ձախափում առկա է նաև «Հավքի

- *Այրված (սևացած) ոսկորներ*: Գրանցվել են քիչ քանակով այրված ոսկորներ, որոնք նույնպես սննդային մնացորդներ են, իսկ մրոտվածությունը կրակի ներգործության արդյունք է (Նկ. 7):

- *Գործիքներ և պերճանքի առարկաներ*: Գրանցվել են ոսկրային մնացորդներ, որոնց վրա նկատելի են մարդածին ներգործության հետքեր: Վերջիններս օգտագործվել են կա՛մ որպես աշխատանքային գործիք, կա՛մ որպես զարդ: Լեռնակերտից հայտնաբերվել են այժի կամ ոչխարի ֆալանգներից պատրաստված կախիկներ (Նկ. 8): Ոսկրից այս առարկաների վրա անցքերը բացված են ստորին մասում: Անցքերը համաչափ են՝ 3-5 մմ տրամագիծ: Վերջիններս վրա մշակման այլ հետքեր չեն նկատվում: Այս կախիկներն իրենց գուգահեռներն ունեն մ.թ.ա. II-I հազարամյակների տարբեր հուշարձաններում: Մասնավորապես հիշատակելի են Հոռոմի ՈԻԲ-ՎԵ<sup>11</sup>, Կարճաղբյուրի մ.թ.ա. VI-IV դդ.<sup>12</sup> և այլ հնավայրերի օրինակները: Վերջիններս հավանաբար եղել են հմայիլներ՝ ծառայելով չարը վանելու կամ գուշակություններ անելու համար:

#### **Կենդանիների տարիքային կազմ**

Հիմնվելով Ի. Սիլվրիի՝ կենդանիների տարիքի որոշման մեթոդների վրա՝ կարելի է նշել, որ որոշված առանձյակների 84%-ը մատղաշ են (Brothwell et al, 1969<sup>13</sup>), 5%-ը՝ հասուն, իսկ ծեր առանձյակները կազմում են ընտրույթի 11%-ը (Աղ. 4-):

#### **Ձիաբուծությունը Լեռնակերտում (ԴՆԹ տվյալներ)**

Շիրակի մարզի քննվող ժամանակահատվածի տարբեր հնավայրերում հայտնաբերվել են ձիերի տարբեր տեսակների մնացորդներ:

Հայաստանի տարածքը եղել է ձիաբուծության տարածաշրջանային նշանավոր կենտրոն: Լեռնակերտում ձիերի թիվը հասնում է վեցի, որոնցից մեկը հայտնաբերվել է վաղբրոնզիդարյան շերտից, երկուսը վերաբերում են ուշ բրոնզի դարին, երեքը՝ վաղ հելլենիստական ժամանակաշրջանին:

Արագած լեռան լանջերի տարբեր հուշարձաններից ձիերի ոսկրային մնացորդներ հայտնի են Հոռոմի, Ծաղկահովիտի, Գեղարտտի ՈԻԲ-ՎԵ դարի

---

բներ» կոչվող բլրաշղթա, որտեղ մշտապես բնակություն են հաստատել ուրուրները և բազեները (K-38-124-Բ-գ):

<sup>11</sup> Obermaier 2006: 165, Abb. 38, 40.

<sup>12</sup> Կարապետյան Ի., Հայաստանի նյութական մշակույթը մ.թ.ա. VI-IV դդ. (ըստ ՀՀ տարածքում կատարված հնագիտական պեղումների), Պատ. իսմբ.՝ Բ.Ն. Առաքելյան, Հայաստանի հնագիտական հետազոտություններ, հ. 19, Եր., «Գիտություն» հրատ., 2003, էջ 84, Աղ. 54.12:

<sup>13</sup> Brothwell D., Higgs E. S., Grahame Cl., Science in archaeology: a survey of progress and research. Chapter 6. The Ageing of Domestic Animals. Thames and Hudson, London P. 283-302.

շերտերից<sup>14</sup>: Ըստ Ազատանի (12-6 դդ. մ.թ.ա.) և Հայկաձորի (9-7/6 դդ. մ.թ.ա.) 2004-2015 թթ. պեղումների տվյալներով, ՎԵԴ-ում Ազատանում նույնացված ձիերի թիվը հասնում է 18-ի, իսկ ուշերկաթիդարյան շրջանում՝ 7-ի (Հայկաձոր)<sup>15</sup>: ՎԲԴ հնավայրերում քիչ քանակությամբ, սակայն հայտնաբերվել են ձիերի ոսկրային մնացորդներ (քանակը տատանվում է 1-17 առանձնյակի սահմաններում): Մասնավորապես հիշատակելի են Գեղարոտի<sup>16</sup>, Մեծ Մեպասարի<sup>17</sup>, Շենգավիթի, Մեծամորի, Գառնիի, Թագավորանիստի և Մաստարայի տվյալները<sup>18</sup>: Այսպիսով՝ առկա տվյալները վկայում են, որ Արագածի հյուսիսարևմտյան լանջերը, ի դեմս Լեռնակերտի, առնվազն մ.թ.ա. II հազարամյակում մաս են կազմել ձիու ընտելացման և շահագործման հայաստանյան ընդհանուր գործընթացներին, ինչը հետագա դարերում դառնում է առավել ցայտուն և նշանակալի:

Լեռնակերտի վաղ հելլենիստական ժամանակաշրջանի շերտերից (մ.թ.ա. 5/4-3-րդ դարեր) ձիու ոսկորներ հայտնաբերվել են №№1, 4, 6 պեղավայրերից:

Վերի Բերդից հայտնաբերված ձիու ատամը հետազոտվել է Թուլուզի (Ֆրանսիա) մոլեկուլյար մարդաբանության կենտրոնում<sup>19</sup>: Ըստ հետազոտության՝ պարզվել է, որ խոսքը գնում է հովատակի (արու ձի) առանձնյակի մասին: Կենդանու ԴՆԹ կազմը թույլ չի տալիս հստակորեն առանձնացնել նրա ենթատեսակը՝ տեսակի խառնվածության և պահպանվածության պատճառով, սակայն այն իր գենետիկ կազմով մոտ է *Equus caballus* (ընտելացված ձի) տեսակին:

Հայաստանում հելլենիստական և անտիկ ժամանակաշրջանի ձիաբուծության վերաբերյալ տեղեկություններ են պարունակում նաև հունական աղբյուրները: Հիշատակելի են Քսենոփոնի տեղեկությունները Հայաստանում բուծվող ձիերի մասին, որոնք ավելի փոքր էին պարսկական ձիերից, սակայն ավելի առույգ<sup>20</sup>: Ստրաբոնը հիշատակում է ձիաբուծության ծավալներին նպաստող

<sup>14</sup> Obermaier 2006:152.Tab. 1; Badalyan R., Avetisyan P. Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia I, Mt. Aragats and its Surrounding Region. BAR International Series 1697, Oxford, 2007:270, 108.

<sup>15</sup> Генджян 2017, 60, Табл. 2.

<sup>16</sup> Monahan B., The faunal remains, in: Badalyan R. et al., Village, fortress, and town in Bronze and Iron Age Southern Caucasia: A preliminary report on the 2003–2006 investigations of Project ArAGATS on the Tsaghkahovit Plain, Republic of Armenia // Archäologische Mitteilungen aus Iran und Turan, Band 40, 2008, pp. 90-97, Tabl. 6a.

<sup>17</sup> Генджян 2017, 60, Табл. 2.

<sup>18</sup> Եսայան Ս., Կառամարտիկ գորամասերը և հեծելագորը Հին Հայաստանում, Եր., ԵՊՀ հրատ., 1994, էջ 11:

<sup>19</sup> Հետազոտության համար շնորհակալություն ենք հայտնում Թուլուզի (Ֆրանսիա) մոլեկուլյար մարդաբանության կենտրոնի աշխատակից, պրոֆ. Լ. Օրլանդոյին:

<sup>20</sup> Քսենոփոն, Անաբասիս, IV. V, 31-36:

ընդարձակ արոտավայրերի գոյության մասին, որոնք չեն զիջում Մարաստանին<sup>21</sup>: Ըստ նրա՝ սատրապական Հայաստանը որպես տարեկան տուրք Աքեմենյան արքունիք էր ուղարկում 20 հազար նժույգ: Հայաստանի մ.թ.ա. I հազարամյակի այլ հուշարձանների տվյալները ևս վկայում են, որ ձիաբուծությունը Շիրակում ունեցել է կարևոր տնտեսական և ռազմական նշանակություն:

*Եզրահանգում.* Ըստ Լեոնակերտի 2019 թվականի պեղումներից ձեռք բերված կենդանաբանական տվյալների ուսումնասիրության՝ կարող ենք նշել, որ տարածաշրջանում անասնապահությունը տնտեսության զարգացած ճյուղերից մեկն էր: Կենդանաբանական այս տվյալները տեղեկություններ են հաղորդում նաև Լեոնակերտի հին հանրային սննդային կազմի մասին: Ըստ այդ տվյալների՝ սննդակարգում օգտագործվել են տարատեսակ միս և մսամթերք, որտեղ գերիշխող էին մանր և խոշոր եղջերավոր անասունից ստացված բարիքները: Վերջինիս գերիշխող լինելը վկայում է նաև բուծման բարձր մակարդակը, քանի որ ԽԵԱ-ն ակնհայտորեն ունեին մսի բերքատվության առավելություններ: Վերջիններս օգտագործվել են նաև երկրագործության մեջ՝ որպես լծկան կենդանիներ: Բացի մսամթերքից՝ նշված կենդանիների մնացորդները վկայում են տվյալ ժամանակահատվածի տնտեսության տարբեր ճյուղերի զարգացվածության մասին (կաշեգործություն, մանածագործություն և կաթնամթերքի վերամշակում ևն): Որսը քննվող հուշարձանում և ժամանակահատվածում շարունակում է կրել երկրորդային բնույթ:

Չնայած ձիաբուծության մասին տվյալները դեռևս քիչ են, սակայն ըստ ԴԼԹ հետազոտության, հնարավոր եղավ պարզել Լեոնակերտում բուծված տեսակը, որը տարածաշրջանում հանդիպող հիմնական տեսակն էր:

<sup>21</sup> **Ստրաբոն**, Աշխարհագրություն, XI, 14.9:

## ИТОГИ ИЗУЧЕНИЕ ПАЛЕОЗООЛОГИЧЕСКИХ МАТЕРИАЛОВ ИЗ РАСКОПОК 2019 ГОДА В ЛЕРНАКЕРТЕ (ШИРАК, АРМЕНИЯ)

*Зарикян Н. А., Варданыан Б. В., Давтян Р. Д.,  
Манукян С. М., Сарибекян М. С.*

**Ключевые слова:** *Северо-восточные склоны горы Арагац, Лернакерт, Вери Берд, Вари Берд, зоология, археосреда, поздний бронзовый век, раннеэллинистическое эпоха*

По зоологическим данным, полученным при раскопках в Лернакере в 2019 году, можно сказать, что животноводство было одной из наиболее развитых отраслей экономики региона в эпоху бронзы и железа. Эти зоологические данные также предоставляют информацию о составе питания древних сообществ Лернакерта. Согласно этим данным, в рационе использовались различные виды мяса и мясных продуктов, в которых преобладали товары, полученные от крупного и крупного рогатого скота. О преобладании последних свидетельствует высокий уровень селекции, так как крупный рогатый скот явно имела преимущества в производстве мяса.

В подборке восемь видов животных всего зарегистрированы остатки 56 особей, из которых 21 домашний, из них: мелкий рогатый скот (13 овец, 8 коз, 16 коров / быков), 6 лошадей (*Equus caballus*), 6 свиней (*sus scrofa domestica*) и диких животных: 1 благородный олень (*Cervus elaphus*), 5 европейских оленей (*Capreolus capreolus*) и один грызун (Табл. 1-2, 6).


## A PRELIMINARY REPORT ON THE FAUNAL REMAINS FROM LERNAKERT (2019 excavations) (Shirak, Armenia)

*Zarikyan N. H., Vardanyan B. V., Davtyan R. D.,  
Manukyan S. M., Saribekyan M. S.*

**Key words:** *North-West slopes of the Mt. Aragats, Lernakert, Veri Berd, Vari Berd, zoology, Environmental archaeology, Bronze age animal husbandry, Early Bronze Age, Late Bronze Age, Hellenistic Age, Early Armenian Period.*

According to the zoological data gathered during the excavations in Lernakert in 2019, it is possible to say that animal husbandry was one of the developed economic areas in the area. Zoological data also provide information on the composition of nutrition of ancient Lernakert. According to the same data, different types of meat and meat products were used in daily rations, most of which consisted of products from small and large cattle. The prevalence of the latter is evident in high quality breeding, as large cattle had superiority in meat production.

There were 8 types of animals. In total 56 individual animals were registered, out of which 21 were domestic, from them: small and large cattle (13 sheep, 8 goats, 16 cows/bulls), 6 horses (*Equus caballus*), and 6 pigs (*sus scrofa domestica*) and the rest were wild animals: 1 red deer (*Cervus elaphus*), 5 European roe deer (*Capreolus capreolus*) and one rodent (Tables 1-2, 6).




**Նկար 1** Լեռնակերտի դիրք (© Լեռնակերտ նախագիծ)



**Նկար 2** Վերի Բերդի ընդհանուր պատկերը, տեսքը արևելքից (© Լեռնակերտ նախագիծ)

Լեռնակերտի կենդանաբանությունն ըստ 2019 թվականի պեղումների արդյունքների



Նկար 3 Լեռնակերտի կենդանական կազմի փոփոխությունն ըստ դարաշրջանների (ըստ որոշված առանձնյակների քանակի)


Աղյուսակ 1 Վերի Բերդի կենդանական մնացորդների տեսակային կազմն ըստ պեղավայրերի (NISP՝ որոշված տեսակների քանակը, MNI՝ նվազագույն առանձնյակների քանակը)

| Տեսակ                       | Վերի Բերդ, պեղ. №1 |    | Վերի Բերդ, պեղ. №2 |    | Վերի Բերդ, պեղ. №3 |    | Վերի Բերդ, պեղ. №4 |    | Վերի Բերդ, պեղ. №5 (1) |    | Վերի Բերդ, պեղ. №5 (2) |    | Վերի Բերդ, պեղ. №5 (3) |    | Վերի Բերդ, դամբ. №2 |    |
|-----------------------------|--------------------|----|--------------------|----|--------------------|----|--------------------|----|------------------------|----|------------------------|----|------------------------|----|---------------------|----|
|                             | NI                 | M  | NI                 | M  | NI                 | M  | NI                 | M  | NI                     | M  | NIS                    | M  | NI                     | M  | NI                  | M  |
|                             | SP                 | NI | SP                 | NI | SP                 | NI | SP                 | NI | SP                     | NI | P                      | NI | SP                     | NI | SP                  | NI |
| <i>Ovis aries</i>           | 65                 | 5  | -                  | -  | 9                  | 1  | 22                 | 1  | 10                     | 1  | 24                     | 2  | 8                      | 1  | 16                  | 1  |
| <i>Capra hircus</i>         | 13                 | 4  | 3                  | 1  | -                  | -  | -                  | -  | -                      | -  | 5                      | 2  | -                      | -  | -                   | -  |
| <i>Bos primigenius</i>      | 17                 | 5  | 4                  | 1  | 8                  | 1  | 25                 | 1  | 12                     | 1  | 40                     | 2  | -                      | -  | 4                   | 1  |
| <i>Equus caballus</i>       | 13                 | 1  | -                  | -  | -                  | -  | 5                  | 1  | -                      | -  | 6                      | 1  | 6                      | 1  | -                   | -  |
| <i>Sus scrofa domestica</i> | 37                 | 3  | -                  | -  | 7                  | 1  | -                  | -  | -                      | -  | -                      | -  | -                      | -  | -                   | -  |
| <i>Cervus elaphus</i>       | 9                  | 1  | -                  | -  | -                  | -  | -                  | -  | -                      | -  | -                      | -  | -                      | -  | -                   | -  |
| <i>Capreolus capreolus</i>  | 26                 | 1  | -                  | -  | -                  | -  | -                  | -  | 8                      | 1  | 9                      | 1  | -                      | -  | -                   | -  |
| <i>Rodentia</i>             | 15                 | 1  | -                  | -  | -                  | -  | -                  | -  | -                      | -  | -                      | -  | -                      | -  | -                   | -  |
| Total                       | 347                | 21 | 7                  | 2  | 24                 | 3  | 72                 | 3  | 30                     | 3  | 84                     | 8  | 14                     | 2  | 20                  | 2  |


**Աղյուսակ 2** Վարի Բերդի կենդանական մնացորդների տեսակային կազմն ըստ պեղավայրերի (NISP՝ որոշված տեսակների քանակը, MNI՝ նվազագույն առանձնյակների քանակ)

| Տեսակ                       | Վարի Բերդ, դավր. №1 |     | Վարի Բերդ պեղ. №1 |     | Լեռնակերտ, պեղ. №2 |     |
|-----------------------------|---------------------|-----|-------------------|-----|--------------------|-----|
|                             | NISP                | MNI | NISP              | MNI | NISP               | MNI |
| <i>Ovis aries</i>           | -                   | -   | -                 | -   | -                  | -   |
| <i>Capra hircus</i>         | -                   | -   | 5                 | 1   | -                  | -   |
| <i>Bos primigenius</i>      | 4                   | 1   | 40                | 1   | 1                  | 1   |
| <i>Equus caballus</i>       | 1                   | 1   | -                 | -   | -                  | -   |
| <i>Sus scrofa domestica</i> | -                   | -   | 2                 | 1   | -                  | -   |
| <i>Cervus elaphus</i>       | -                   | -   | -                 | -   | -                  | -   |
| <i>Capreolus capreolus</i>  | -                   | -   | 3                 | 1   | -                  | -   |
| Total                       | 5                   | 2   | 50                | 4   | 1                  | 1   |

**Աղյուսակ 3** Հայաստանի անտիկ ժամանակաշրջանի հուշարձանների ֆաունիստիկ կյուրթերի համեմատական պատկերն ըստ ընտանի կենդանիների տվյալների<sup>22</sup>




**Աղյուսակ 4** Կենդանիների տարիքային պատկերը





<sup>22</sup> Աղյուսակում նշված են ոսկորների քանակը: Արտաշատի, Կապսի և Հողմիկի տվյալների աղբյուրը Манасерова, Н., Фауна млекопитающих античной и средневековой Армении // Հայաստանի կենսաբանական հանդես, 1991, №44 (3), стр. 163-166, табл. 1.

Աղյուսակ 5 Կենդանիների տարիքային պատկերը.




Աղյուսակ 6 Կենդանական մնացորդների տեսակային կազմի ընդհանուր պատկերը.






Նկար 4 Ոսկրային մնացորդների վրա մսագործության հետքեր (ա-գ) (©Զարիկյան)




Նկար 5 Ախտավոր ոսկրային մնացորդ (©Զարիկյան)

Նկար 6 Ոսկրային մնացորդների վրա գիշատիչների ներգործության հետքեր (©Զարիկյան)



Նկար 7 Այրված ոսկորներ (©Զարիկյան)



Lernakert 2019, Veri Berd, Tr. 06, Loc. 01

Նկար 8 Ոսկրից պատրաստված կախիկ (©Լեռնակերտ նախագիծ)

## REFERENCES

1. **Strabon**, Ashkharhagrut'yun, XI, 14.9 (In Armenian).
2. **Gendzhyan A.**, Itogi izucheniya vidovogo sostava zivotnykh iz poseleniy epokh bronzy i zheleza Shirakskogo marza (raskopki 2004-2015gg.) // Hayastani kensabanakan handes, 2017, №69 (3), str. 58-62. (In Russian).
3. **Yesayan S.**, Karramartik zoramastery yev hetselazory Hin Hayastanum, Yerevan, YePH hrat., 1994. (In Armenian).
4. **Karapetyan I.**, Hayastani nyut'akan mshakuyt'y m.t'.a. VI-IV dd. (yst HH taratsk'um katarvats hnagitakan peghumneri), Pat. khmb. B.N. Arrak'elyan, Hayastani hnagitakan hetazotut'yunner, Hator 19, Yerevan, «Gitut'yun» hrat., 2003. (In Armenian).
5. **K'senofon**, Anabasis, IV. V, 31-36. (In Armenian).

Ընդունվել է՝ 29. 01.2020  
Գրախոսվել է՝ 06.02.2020  
Հանձնվել է տպ.՝ 20. 11. 2020

### **Տեղեկություններ հեղինակների մասին**

**Նուշիկ ԶԱՐԻԿՅԱՆ**՝ կենսաբանական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող,  
Էլ. հասցե՝ nzarikian@gmail.com

**Բենիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ**՝ պատմական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող,  
Էլ. հասցե՝ benik.vardanya@iae.am

**Ռուբեն ԴԱՎԹՅԱՆ**՝ Սոցիալական մարդաբանության Մաքս Պլանկի ինստիտուտ,  
Հայլե, Զաալե, ԳՖՀ, հետազոտող, Էլ. հասցե՝ rouben.davtyan@gmail.com

**Սոնա ՄԱՆՈՒԿՅԱՆ**՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
հետազոտող, Էլ. հասցե՝ sonamanukyan1992@gmail.com

**Մարիամ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
հետազոտող, Էլ. հասցե՝ mariamgsaribekyan@gmail.com

ՀՏԴ՝ 930.272

ՀՆԱԳՈՒՅՆ ՏԱՐՈՆԻ ՔՐՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Մարգիս Պետրոսյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

**Բանալի բառեր`** *աստված, քուրմ, զինվոր, անվանադիր, դաշտ, լեռ, տեղանուն, երկրանուն, Հասուվա, Տարոն, Տուրուբերան:*

Հոդվածում քննարկվել են պատմական Տարոն գավառի քրմության վերաբերյալ եղած հնագույն վկայությունները՝ պահպանված թե՛ իսթական սեպագիր աղբյուրներում և թե՛ հայկական ավանդազրույցներում: Վերջիններից կարևորը Տարոնի անվանադիր համարված Տարբանի մասին ավանդազրույցն է: Համադրելով այդ տեղեկությունները հայերեն *Տորբան* բառի արմատներին՝ հեղինակը հանգել է այն եզրակացության, որ իրականում Տարբանի նախատիպը եղել է հնագույն Տարոնի քուրմ-արքաների հավաքական կերպարը, իսկ նրա *Տարբան* անունը տարբերակն է հայերեն *տորբան* «վարդապետ» բառի: Հնագույն Տարոնի մանդա և սալա ցեղերի կառամարտիկների մեջ եղել են ոչ միայն զինվորական դասի, այլև քրմական դասի ներկայացուցիչներ: Այս վերջինները պետք է պատկերված լինեն ծամավոր զինվորների տեսքով:

**Նախաբան.** Հնադարյան որևէ երկրի և նրա բնիկ ժողովրդի պատմական հեռավոր անցյալի ուրվագծման փորձը հավաստի համարվել չի կարող այնքան ժամանակ, քանի դեռ նրան վերաբերող գրավոր աղբյուրներին (եթե այդպիսիք կան) և հնագիտական նյութերին չեն միացել տեղական հին ավանդազրույցների ու բանահյուսության այլ ժանրերի տրամադրած և գիտական վստահելի վերլու-

ծության ենթարկված նյութերը: Այս դեպքում կարևորվում են նաև գրավոր աղբյուրների (եթե այդպիսիք կան) և ավանդազրույցների մեջ առկա հատուկ անունների գիտական ստուգաբանությունները: Ընդ որում, առավել կարևոր են տեղանունները՝ մանավանդ հազարամյակներ տեսած աշխարհագրական անվանումները: Տեղանունների գիտական հավաստի ստուգաբանությունների հիման վրա կարելի է կարևոր հետևություններ անել ոչ միայն հազարամյակներ առաջ այն ստեղծած տեղաբնիկների լեզվի և էթնիկական պատկանելության, այլև նրանց վարած տնտեսաձևի, հասարակական կառույցների, կենցաղի և դրանց հիմքի վրա բարձրացած պաշտամունքի և կրոնի ինչ-ինչ տարրերի վերաբերյալ:

1. *Հնագույն Տարոնի մասին ավանդազրույցը.*

*Հասուվա երկրի տեղորոշումը*

Մովսես Խորենացու համար աղբյուր ծառայած Ուլիմպիոդորոսու հույն փիլիսոփային հայտնի ավանդազրույցի համաձայն՝ Նոյ նահապետի Մեմ որդին Հայկական Տավրոսում երկու ամիս բնակվելուց հետո «անուանե յանուն յիր զլեառնն Սիմ եւ դառնայ անդրէն յարեւելս հարաւոյ՝ ուստի եկն: Իսկ ի կրտսերագունից որդւոցն նորա Տարբան անուն, երեսուն ուստերօք եւ հնգետասան դստերօք եւ նոցին արամբք մեկնեալ ի հօրէն՝ բնակե անդէն ի նոյն գետեզեր, յորոյ անուն եւ զգաւառն անուանե Տարօն»<sup>1</sup>: Կասկած չկա, որ սա հին հայկական ավանդազրույց է՝ ձևափոխված Նոյ նահապետի Մեմ որդու և Տարոն-Սասունի Սիմ լեռան անունների նմանաձայնության պատճառով (դրա վերաբերյալ ստորև): *Տարբան* անունը բնիկ հայկական է՝ տարբերակը *տորբան* «վարդապետ- (ություն)» բառի<sup>2</sup>: Հմմտ. *-n/-w* համարժեքությունը *-p-*ից առաջ արտացոլող *աշորայ/աշարայ, խորովել/խարել, մորեխ/մարախ, տորմիդ/տարմ, Կորդուք/Καρδοουχ (-οι)* արմատակից զույգերը, ըստ այսմ, *Տարբան//տորբան*:

Հնագույն Տարոնը *Հասուվա* (խեթ. *Hašawa*) անվամբ հիշատակված է նախ խեթ թագավոր Խաթուսիլի I-ի (մ.թ.ա. 1650-1620 թթ.), ապա նաև սրա հաջորդների կողմից<sup>3</sup>: Խեթ թագավորը Եփրատի գետանցով մտել էր Իսուվա (հետագա Ծոփքը), ապա ներխուժել Հասուվա, որն ավելի ընդարձակ է եղել, քան հետագա Տարոնը: Խաթուսիլի I-ի Տարեգրության ռուսերեն թարգմանիչ Վ. Վ. Իվանովի

<sup>1</sup> Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ **Խորենացի**), Եր., 1981, գիրք Ա, գլ. գ:  
<sup>2</sup> **Պետրոսյան Ս. Գ.**, Սեպագրային Durubani/հայերեն *տորբան* // Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի գիտական նստաշրջանի նյութեր, Վանաձոր, 2009, էջ 65-70:  
<sup>3</sup> «Keilschrifttexte aus Boghazköi», Staatliche Muzeum zu Berlin, Vorderasiatische Abt, Berlin, 1961, X, 1-2 (Ռուսերեն թարգմանությունը **Վ. Վ. Իվանովի**, տե՛ս *Летопись Хаттусилиса I*, «Хрестоматия по истории Древнего Востока», часть I, М., 1980, стр. 263-265), **Պետրոսյան Ս. Գ.**, Մուրսիլի I-ի արևելյան արշավանքի երթուղին, // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. IV, Գյումրի, 2001, էջ 53-61:

կարծիքով, Հասուվայի անունը՝ Կաššawa, նույնական լինելով լուվիերեն Կաššawa «արքայական» բառի հետ, նշել է խեթական մի փոքր քաղաք Փոքր Ասիայի հարավ-արևելքում<sup>4</sup>: Ջ. Գարստանգն ու Օ. Գերնին այն տեղորոշում են հյուսիսային Ասորիքում և նույնացնում տեղի Խասում (Կաššu, Կաššum) բնակավայրի հետ<sup>5</sup>: Այդ նույն կարծիքին է նաև Գ. Գիորգաձեն<sup>6</sup>: Հասուվան Հայկական լեռնաշխարհում՝ Եփրատից արևելք է տեղորոշվում Է. Վայդների, Վ. Խաչատրյանի և տողերիս հեղինակի աշխատություններում<sup>7</sup>: Այդուհանդերձ, այն Իսուվային չնույնանալով, մեր կարծիքով, նույնը լինել չի կարող նաև հետագա Մեծ Հայքի Մոկք նահանգի Արքայից գավառի հետ, թեպետև այդ երկու տեղանունները կարծես թե նույնիմաստ են: Բանն այն է, որ մեր Հասուվայի անվան «արքայական» ընկալումը գալիս է նրա խեթալուվիական գրության ձևից (հմմտ. Կաššu, Կաššum. վերջինը արքադ. ուղղ. հոլ. -um վերջավորությամբ): Խեթական դպիրները, ծանոթ լինելով խեթական մի առասպելից հայտնի Կաššawa//«Արքայական» քաղաքի անվանը (ըստ առասպելի՝ այստեղից մի արծիվ էր հղվել Պիրվա աստծու մոտ<sup>8</sup>), դրա ազդեցությամբ են ստեղծել հայկական Հասու- (վա) տեղանվան Կաššawa ձևը: Վ. Խաչատրյանը հստակ ցույց է տվել, որ Հասուվա երկիրը գտնվել է ներկայիս Շերեֆեղդին լեռներից արևելք, որովհետև խեթ թագավորներից մեկը նրան հասնելու համար հարկ է համարել նախօրոք անցնել Իսուվան (հետագա Ծոփքը), Ուրուրուվան (Որոր/Օրորի շրջանը) և Պալունան (Պալունիքը)<sup>9</sup>: Իսկ Պալունիքը՝ բուն Տարոնի հյուսիսարևմտյան հարևանը եղել էր նրա երբեմնի մասը<sup>10</sup>: Հասուվայի և հետագա Տարոնի նույնական լինելը հաստատվում է նաև Խաթուսիլի I-ի այն հաղորդմամբ, ըստ որի՝ Հասուվայից նա ներխուժել էր «Արևի աստվածության երկրներ»<sup>11</sup>, այսինքն՝ Վանա լճի ավազան, որի Խախա երկրից հափշտակված ավարի մեջ խեթ թագավորը հիշատակում է նաև «մեկ նավ, որի քիթը ոսկեպատ» էր<sup>12</sup>: Այս նավի առկայությունը Խախայում ցույց է տալիս, որ նա գտնվել է ինչպես Հասուվայի, այնպես էլ Վանա լճի հարևանությամբ: Իսկ այդպիսին էր հետագա Բզունիքի դիրքը՝ Տարոնից արևելք,

<sup>4</sup> Иванов В. В., նշվ. աշխ., էջ 323:

<sup>5</sup> Gasstrang J., Gurney O. R. The Geography of the Hittite Empire, London, 1959, p. 52-56.

<sup>6</sup> Гиоргадзе Г. Г. Ранняя Малая Азия и Хеттское царство, «История древнего Мира, I, Ранняя древность», М., 1989, стр. 222.

<sup>7</sup> Weidner E. Politische Dokumente aus Kleinasien, Leipzig, 1923, S. 45; Хачатрян В. Восточные провинции Хеттской империи (Вопросы топонимики), Ер., 1971, стр. 124-125: Պետրոսյան Ս. Գ., Մուրսիլի I-ի ..., էջ 57-58:

<sup>8</sup> Гамкрелидзе Т. В., Иванов В. В., Индоевропейский язык и индоевропейцы, т. I-II, Тб., 1984, т. II, стр. 538.

<sup>9</sup> Хачатрян В., նշվ. աշխ., էջ 124:

<sup>10</sup> Адонц Н. Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, стр. 311.

<sup>11</sup> Иванов В. В., նշվ. աշխ., էջ 265:

<sup>12</sup> Նույնը:

նրա և Վանա լճի միջև: Խաթուսիլին այս երկիրը *Խախա* է կոչում իր արքայանիստ քաղաքի անունով, ինչպես վարվում է նաև Հասուվայի, Խալպայի և այլ դեպքերում:

2. *Հնագույն և հին Տարոնի տեղանունների ստուգաբանություններից*

«Աշխարհացոյց»-ից գիտենք, որ Մեծ Հայքի Տարոն (Տարաւն/Տարօն) գավառը մասն էր կազմում Տուրուբերան նահանգի (աշխարհ) և եղել է նրա կենտրոնական գավառը, որի անունով ամբողջ նահանգը կոչվել է նաև *Տարաւն* կամ *Կողմն Տարաւնոյ*<sup>13</sup>: *Տարօն/Տարաւն* տեղանվան ստուգաբանության հարցում մեզ համար հենակետ է ծառայում այն հանգամանքը, որ տարբեր դարաշրջաններում նա ուղղակի *Դաշտ*<sup>14</sup> է կոչվել՝ որպես «ներքև» նշող անդամը՝ «վերև» նշող Հայկական Տավրոսի կենտրոնական մասի (Սասնա լեռներ) *Լեռ* անվան հետ միասին կազմած հակադրամիասնության: Սրանց բնակիչներն էլ համապատասխանաբար կոչվել են *դաշտեցի* և *լեռնցի/սարեցի*:

*Տար-աւն* բաղադրիչներից բաղկացած երկրանվան մեջ *-աւն* բաղադրիչը վերջածանց է՝ առկա նաև *գեղաւն*, *գործաւն*, *կրաւն*, *ցրաւն*(ք) բառերում<sup>15</sup>: *Տարաւն*>*Տարօն* երկրանվան առաջին բաղադրիչ *տար-* արմատն առկա է նաև *տարած* (<տար-ած) «սփռվող, ծավալական», «փռվելը, տարածվելը» բառում (սրանից են *տարածական*, *տարածութիւն* և այլն): Այս բառը համարվում է ասուրերենից կատարված փոխառություն, բայց սեմական այլ լեզուներում նրան զուգահեռ ձևեր չկան<sup>16</sup>: Ըստ երևույթին, մեր *տար-* արմատը հ.-ե. ծագում ունի և ստեղծվել է նախաձայն \*s-ի անկումով այն նույն արմատից, որից են ազգակից լեզուների հետևյալ բառերը. հուն. στέρνον «լանջ, հարթություն», հին հնդկ. staras «շերտ», prastarás (<pra-staras) «անկողին», «հարթություն, հարթավայր», ռուս. простор (<про-стор) «ազատ տարածություն, լայնարձակություն», միջ. իռլ. srath (<sthar) «ափ, հովիտ» և այլն<sup>17</sup>: Սրանց նման նախաձայն հ.-ե. \*s-ի պահպանումով ունենք *ստոր* բառը (արմատի միջին ձայնադարձից) > *ստորի*, *ստորոտն* և այլն: Մինչև նույն արմատից ծագած բառերում *-ր*-ից առաջ *ա/n* համարժեքության մասին խոսք եղավ վերևում:

Սասնա լեռների *Սիւ/հին* անունը Նոյի Սեմ որդու անվան հետ ոչ մի կապ չունի: Այդ անձնանվան եբրայական Šēm ձևը հունարենում է դարձել Σήμ>*Սէւ*<sup>18</sup>:

<sup>13</sup> Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջեր 85, 106, 107:

<sup>14</sup> Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. II, Եր., 1988, էջ 30:

<sup>15</sup> Զահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊՆԺ), Եր., 1987, էջ 355:

<sup>16</sup> Աճառյան Հ. Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. IV, Եր., 1979, էջ 383:

<sup>17</sup> Фасмер М. Этимологический словарь русского языка, т. III, М., 1971, стр. 379, 380-381, 768.

<sup>18</sup> Աճառյան Հ. Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. IV, Եր., 1948, էջ 489:

Լեռնանվան հիմքում հայ. *uhi* բառն է. «*Uhi*-կոթող, կամ դուխօղ, կամ լեառն»<sup>19</sup>, որը ծագում է հ.-ե. \*kem- «ծածկել, պատել» արմատից<sup>20</sup>: Մառցապատմանը հաջորդած հալոցքի տաք ու խոնավ կլիմայի պայմաններում Հայոց երկնասլաց լեռները ծածկվում էին խիտ ամպերով և մառախլապատ էին: Դրանով է պայմանավորված, որ հ.-ե. \*kem- արմատից ծագած հնդեվրոպական ազգակից լեզուների շատ բառեր առնչվում են թե՛ «լեռ», «երկինք» և թե՛ «ամպ, մառախուղ» հասկացություններին<sup>21</sup>: Սասնա լեռները հետագայում ևս ամպահավաք և մառախլապատ էին: Ահա թե այդ փաստը ինչով է պայմանավորել ավանդազրույցը: Երբ Աստղիկ դիցուհին լողանալիս է լինում Արածանի գետում, իր մերկությունը դիտողներից ծածկելու համար «հնարած է Աստղիկը, որ մշուշ պատե այն ամբողջ միջավայրը, այսինքն՝ Մշո դաշտը ծագած ի ծագս, թե՛ ամառն, թե՛ ձմեռն, մինչև ի ծունկս սարերուն, որով անհնարին կլինի որևիցե կողմի լեռներեն տեսնվիլ, և գուցե այս շարունակ և թանձր մշուշեն այդ երկիրը կոչված լինի նաև Մուշ»<sup>22</sup>: Մեր *Uhi* բառի «կոթող» և «լեառն» նշանակությունների արմատակիցներն են հին բարձր գերմ. himil «երկինք, առաստաղ», գերմ. Himmel «երկինք», հոլանդ. hemel «երկինք, տանիք» բառերը<sup>23</sup>:

Ինչպես վերևում տեսանք, ավանդազրույցի հայտնի օրինակում Տարբանը, լինելով Տարոնի անվանադիրը, նաև համարվում էր Մեմի որդին: Այստեղ, *Uhi* անձնանվան և *Uhi* լեռնանվան նմանահնչյունից բացի, իր դերը կարող էր ունենալ Մեմի և Տարբանի քրմեր լինելու հանգամանքը: Հրեական հայտնի հին ավանդազրույցների համաձայն, այդպիսի գործառույթներ կրողը՝ առաջին հոգևորականն ու մարգարեն եղել է Նոյի որդիներից Մեմը, որը և եղել է Ջրհեղեղից հետո Աստծուն առաջին գոհաբանական զոհ մատուցողը: Ռափայել հրեշտակապետը հենց նրան էր հանձնել աշխարհի բոլոր բժիշկների համար գիտելիքների շտեմարան ծառայած «Բուժումների գիրքը»<sup>24</sup>: Տարբանից բացի՝ հնագույն Տարոնի քրմական գործառույթներ կրած վիպական անձնավորություն է համարվել նաև Մեղտեսը: Ինչպես նա, այնպես էլ նրա կողմից հիմնադրած համարվող Մեղտի բնակավայրը կրում են քրմին վայել անուններ: *Մեղտես* և *Մեղտի* անունների

<sup>19</sup> «Բարձրիք Հայոց», Քննական բնագիրը և առաջաբանը **Հ. Ամալյանի** (այսուհետև՝ «Բարձրիք հայոց»), Եր., 1975, էջ 288 և 429-ի ծան. 203:

<sup>20</sup> **Джаукян Г.**, Взаимоотношение индоевропейских, хуррито-урартских и кавказских языков, Ер., 1967, стр. 77, 143, ՀԼՊՆԺ, էջ 131, 174:

<sup>21</sup> **Гамкрелидзе Т. В., Иванов В. В.**, նշվ. աշխ., հ. II, էջ 667-670.

<sup>22</sup> **Մրվանձտյանց Գ.**, Երկեր, հ. I, Եր., 1978, էջ 71-72:

<sup>23</sup> **Джаукян Г.**, նշվ. աշխ., էջ 77, 143:

<sup>24</sup> **Щедровицкий Д. В.** Сим, Хам, Иафет, «Мифы народов мира», т. II, стр. 436.

հիմքում հ.-ե. \*meldh-«գոհաբերելիս աղոթել, աստվածներին աղոթել»<sup>25</sup> նախա-  
 ձևն է, որի արմատակիցն է հայ. մաղթ «աղոթք, մաղթանք» բառը<sup>26</sup>:

Հնագույն Տարոնի քրմերի հոգևոր ոլորտի գործունեության հետ ուղղակի  
 կապի մեջ է նաև Հասուվա (Hašawa) երկրի և նրա կենտրոնի անունը: Հասուվա  
 անվան -ուվա վերջավորությունը լինելու է խեթ դպիրների կատարած հավե-  
 լումը՝ որպես խեթալուվիական լեզուներին բնորոշ տեղանվանակերտ վերջա-  
 ծանց: Հմմտ. նրանց իսկ հիշատակած Հայկական լեռնաշխարհի բնակավայրի  
 անունների Iksuna և Iksunuwa զույգ ձևերը, Oror (Ռոր) ձևի դիմաց Ururuwa ձևը,  
 Փոքր Ասիայի արևմուտքի Ἄσρα երկրանվան դիմաց խեթական Ašawa ձևը և  
 այլն: Hašawa//Հասուվա տեղանվան հիմքում հայերեն «Հասու - իմաստուն, կամ  
 գիտուն»<sup>27</sup> բառն է: Հ.-ե. \*ḫk- > hsu- արմատից ունենք նաև հասկանալ, «հասու  
 լինել, իմանալ, ըմբռնել», հասանել «հասկանալ, իմանալ, վերահասու լինել»,  
 հասանողություն «մտքի ըմբռնում» բառերը և այլն<sup>28</sup>:

### 3. Հնագույն Տարոնի քուրմ-զինվորներն ու նրանց սերունդները

Հայ քրմերը, մտավոր գործունեության ոլորտի տնօրինողները լինելուց  
 բացի, օժտված են եղել ռազմական որոշակի գործառույթներով: Քրմապետերը  
 նաև քրմերի գնդերի հրամանատարներն էին: Հովհան Մամիկոնյանի օգտագոր-  
 ծած մի փաստաթղթում (ըստ երևույթին, Ջենոբ Գլակի արխիվից էր) բերված են  
 Տարոնի մի քանի քրմապատկան գյուղերի հանած զինվորականության տեսակ-  
 ներն ու թվաքանակը: Ըստ դրա, Կուառը հանել է 1030 հեծյալ և 2000 հետևակ,  
 Մեղտին՝ 800 հեծյալ և 1030 հետևակ, Տուսը՝ 400 հեծյալ, Խորնին՝ 700 հեծյալ և  
 1007 հետևակ, Բրեխը՝ 2040 հեծյալ, 840 աղեղնավոր, 1080 տիգավոր և 280 պար-  
 սավոր<sup>29</sup>: Փաստաթղթի վերջում կարդում ենք. «Արդ այս աւանագեղքս ի բնե  
 տուեալ էին կոռցն ի ծառայութիւն»<sup>30</sup>: Մեր կարծիքով, Հայոց բանակում զինվոր-  
 քրմերի գոյությամբ է պայմանավորված եղել հին-վաղքրիստոնեական Հայաս-  
 տանում կարճազատների գոյությունը:

Ըստ Փավստոս Բուզանդի՝ Տարոնի Հացեկաց գյուղը՝ Մեսրոպ Մաշտոցի  
 ծննդավայրը, կարճազատներին պատկանած գյուղ էր<sup>31</sup>: Կարճազատ

<sup>25</sup> Պետրոսյան Ս. Գ., Պետրոսյան Լ. Ս., Եոյակ բնակավայրի համակարգը հին Հայաստանում և  
 Ռուսիայում, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. II, Եր., 1999, էջ 137-138:

<sup>26</sup> Պետրոսյան Ս. Գ., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Եր., 2006, էջ  
 218-221:

<sup>27</sup> «Բարզիքը Հայոց»,... էջ 181:

<sup>28</sup> Աճառյան Հ. Հ., ՀԱԲ, հ. III, Եր., 1977, էջ 46-47:

<sup>29</sup> Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Աշխատութեամբ և առաջաբանով Աշ. Աբրահամ-  
 յանի, Եր., 1941, էջ 111-112:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 112:

<sup>31</sup> Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք.Պատկանյանի (այսուհետև՝ Բու-  
 զանդ), Եր., 1987, գիրք Գ, գլ. Ժթ:

տրված ընդունելի բացատրությունները՝ «ստորին աստիճանի ազատ-ազնվական»<sup>32</sup>, «փոքր ազատ, երկրորդական կամ աննշան ազնվական»<sup>33</sup>, այդուհանդերձ, անորոշ են թողնում ազնվականական այս խավի ծագման հարցը: *Կարճագատ* անվանումն արդեն իր *-ագատ* բաղադրիչով ցույց է տալիս հասարակական այդ խավի ազատների դասից սերելու իրողությունը: Իսկ դրանք երկուսն էին՝ զինվորականներ և հոգևորականներ, որոնք արտոնյալ և ապահարկ էին՝ ի տարբերություն հարկատու անազատների: Անհավատալի է, որ կարճագատները ի սկզբանե պատկանեին զինվորական դասին, հետո ինչ-որ ժամանակ, ինչ-ինչ պատճառով զրկվեին իրենց ունեցած արտոնությունների մի մասից և այդ իսկ պատճառով կոչվեին *կարճագատներ*: Բայց հավատալի է, եթե նրանք ի սկզբանե պատկանել են քրմության այն խավին, որը հոգևոր ոլորտի գործառույթների հետ ունեցել է նաև զինվորական պարտականություններ: 301թ. հետո այդ խավը զրկվել էր հոգևոր ոլորտի գործառույթներ իրականացնելու իրավունքից, բայց պահպանել էր զինվորական պարտականությունները՝ դրանց համապատասխան հողատիրական իրավունքով:

Մ.թ.ա. XIV դ. վերջին կամ XIII սկզբին (ճշգրիտ թվականը վերջնականապես որոշված չէ) Քաղեշ քաղաքի մոտ՝ հյուսիսային Ասորիքի Օրոնտես գետից ոչ հեռու, կատաղի ճակատամարտ է տեղի ունեցել Ռամսես II-ի եգիպտական բանակի և խեթ թագավոր Մուվատալիի գլխավորած բանակի միջև: Ճակատամարտի որոշ մանրամասներ հայտնի են եգիպտական արձանագրություններից, իսկ առանձին դրվագներ՝ բարձրաքանդակներից<sup>34</sup>: Բարձրաքանդակները ցույց են տալիս, որ խեթական բանակը էթնիկական տեսակետից միատարր չի եղել, ինչը հաստատվում է արձանագրությունների հաղորդումների միջոցով<sup>35</sup>:

Ուշագրավ են մանավանդ խեթական բանակի գերված այն զինվորները, որոնք եգիպտական բարձրաքանդակներում պատկերված են երկարափեշ հագուստներով, և որոնց մեջ կան նաև երկար ծամավորներ<sup>36</sup>: Կարծում ենք, թե սրանք լինելու էին Հայկական լեռնաշխարհից՝ մասնավորապես Տարոնից (լայն առումով), որովհետև պատկերված են արմենոիդ մարդաբանական տիպին բնորոշ դիմագծերով: Երկարափեշ զինվորների հնարավոր հայկական ծագման առթիվ հիշենք նաև Ստրաբոնի կողմից համեմատության մեջ դրված հայերի և

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 426-427:

<sup>33</sup> Աճառյան Հ. Հ., Հայոց գրերը, Եր., 1984, էջ 70:

<sup>34</sup> Ceram C. W., նշվ. աշխ., էջ 169-192, նկ. 30-35:

<sup>35</sup> Герни О. Р. Хетты, М., 1987, стр. 34, 98, Պետրոսյան Ս. Գ., Հայկական լեռնաշխարհի հնագույն կառավարողների մասին, // «ՎԷՆ» համահայկական հանդես, 2014, թիվ 4, էջ 29-30:

<sup>36</sup> Герни О. Р., նշվ. աշխ., էջ 128-129 ներդիրի նկ. 5 և 6: Նաև՝ Պետրոսյան Ս. Գ., Ջարմայր նահապետի և «Քաղղեացուց» արքայացանկի շուրջ, // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XVII, Գյումրի, 2014, էջ 68, նկ. 1 և 2:

հունական Թեսալիայի բնակիչների հագուստները՝ նույնպես երկարափեշ: Ըստ նրա՝ նմանության պատճառը լինելու է ինչպես հայերի և թեսալացիների ազգակցությունը, այնպես էլ բնակլիմայական նման միջավայրերը<sup>37</sup>:

Թեպետև խեթագետները եգիպտացիների պատկերած երկարափեշ զինվորներին «խեթեր» են համարում, բայց որ դրանք խեթեր չեն եղել, բխում է նաև Օ. Գերնիի հետևյալ տողերից. «Ինչ վերաբերում է խեթական հետևակի հանդերձանքին ու զինվածությանը, ապա տարօրինակ անհամապատասխանություն կա (դրանք պատկերող - Մ. Պ.) եգիպտական բարձրաքանդակների և բուն խեթական հուշարձանների միջև: Առաջիններում խեթերը պատկերված են կարճ թևքերով երկար զգեստներով, բայց անատոլիական հուշարձաններում զինվորները (և պատերազմի աստվածը) հագած են կարճ, մինչև ծնկները չհասնող տունիկաներ»<sup>38</sup>: Բացի դրանից, խեթ «զինվորներն ունեն մարտական տապար և կարճ թուր, իսկ եգիպտական պատկերաքանդակների երկարազգեստ խեթական զինվորներն, ընդհակառակը, ունեն երկար նիզակներ»<sup>39</sup>: Ի դեպ, Ի. Մ. Դյակոնովի կարծիքով, «Զիակառքերի միջոցով մարտ վարելու արվեստը Փոքր Ասիա կարող էր թափանցել նաև՝ շրջանցելով խուռիներին, օրինակ, «Մանդագեղի» կամ «Սալա ցեղի» նման ինչ-որ վարձկան զորքերի միջոցով»<sup>40</sup>, իսկ վարձկաններ տրամադրած սալա և խեմուա ցեղերի հայրենիքը նա տեղորոշում է «Հայկական լեռնաշխարհում՝ Եփրատի և Վանա լճի միջև, հնարավոր է նաև ավելի արևելք»<sup>41</sup>: Ընդ որում, այդ նույն տարածքում էր գտնվում Տարոնը՝ մանդա և սալա ցեղերի վերնախավերից ծագած Մանդակունի և Սաղկունի/Սլկունի նախարարություններով<sup>42</sup>: Իսկ սա փաստ է, որ խոսում է մանդա և սալա ցեղերի հայրենիքը ևս Տարոնում գտնվելու մասին<sup>43</sup>:

Եգիպտական բարձրաքանդակների վերոհիշյալ երկարափեշ զինվորներից ծամավորների վերաբերյալ ենթադրում ենք, որ դրանք քուրմ-զինվորներ են եղել: Հովհան Մամիկոնյանը Գիսանե աստծու պաշտամունքն իրագործած քրմերի վերաբերյալ գրում է. «Եւ Գիսանէ զի գիսաւոր էր, վասն այնորիկ և պաշտօնեայք նորա գէսք ունէին, գոր [Գրիգոր Լուսավորիչը] հրամայեաց կտրել»<sup>44</sup>: Հրամանն

<sup>37</sup> Strabo, XI, 14, 12 (Մտրաբոն, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Եր., 1940, էջ 63):

<sup>38</sup> Герни, նշվ. աշխ., էջ 97: Հմմտ. Ceram C. W., նշվ. աշխ., էջ 28:

<sup>39</sup> Герни, նշվ. աշխ., էջ 98:

<sup>40</sup> Дьяконов И. М., Предыстория армянского народа. История Армянского нагорья с 1500 по 500 г. до н. э., Ер., 1968, стр. 43.

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 52-53:

<sup>42</sup> Ղափանցյան Գ., Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Եր., 1961, էջ 45-46:

<sup>43</sup> Дьяконов И. М., նշվ. աշխ., էջ 53:

<sup>44</sup> Յովհան Մամիկոնեան, նշվ. աշխ., էջ 109:

իրագործել է Հայոց բանակի արևմտյան ստորաբաժանման («դռան») հրամանատար Անգեղոսան իշխանը: «Եւ լուեալ զայս իշխանն Անկեղ տանն, ետ հրաման զերծել զգէս նոցա և խաղացուցանել զնոսա ի Փայտակարան քաղաք ի տուն բանտին արս ՆԼԸ (//438)»<sup>45</sup>: Իսկ Գիսանէ «մեծ աստվածը» իր եղբայր Դեմետրի հետ միասին իրենց ձոնված տաճարներն ունեին Տարոնի Քարքե լեռան վրա:

Խեթական բանակում ծառայած կառավարտիկները տարբերվում էին միմյանցից նաև իրենց սանրվածքով: Էդ. Մեյերի դիտարկումներով, այստեղ այն կառավարտիկներից բացի, որոնց ծամը երկու զանգուրով իջնում է թիկունքին, կան նաև այնպիսիները, որոնք խուզում են գլխի մազերը՝ թողնելով միայն գլխի հետևից կախված մի հյուսք: Ընդ որում, ինչպես նա է նկատել տալիս, տարբեր են նաև այդ երկու խմբերի կրած վահանները և դրանց մարտակառքերը:<sup>46</sup> Կառավարտիկների սանրվածքի տարբերության առթիվ Ա.Խաչատրյանը գրում է. «Բնավ զարմանալի մի բան պիտի չլինի, եթե վերջին ձևի հերահարդարումը գտնենք և հին հայերի մեջ»<sup>47</sup>: Նա վկայակոչում է Փավստոս Բուզանդի հաղորդումները տարոնցի պատանի Արտավազդ Մամիկոնյանի և տխրահռչակ Մերուժան Արծրունու վերաբերյալ, որոնք «ցից, ցցունք» կամ «զէս» ունեին<sup>48</sup>: Սրանցից առաջինի սանրվածքի այդ ձևը, Փավստոս Բուզանդի համոզմամբ՝ «ըստ մանկութեան օրինի՝ ըստ կրօնից հայոց էր», բայց Մերուժանի այդօրինակ սանրվածքի առթիվ որևէ պատճառաբանություն չի բերում: Նկատի առնելով, որ քրիստոնեությունն ուրացած այդ անձնավորությունը Բուզանդի երկում նաև *կախարդ* է կոչվում և նշվում է, թե ինչպես է ճակատամարտից առաջ «անցեալ ըստ ուղին՝ իջանէր ի հմայս քաղղէութեան, զքուէս հարցանէր. և ոչ գոյր նմա յաջողակ յուռութ կախարդանացն՝ յոր յուսայրն»<sup>49</sup>, պարզ է դառնում, որ սա հետևել էր իր նախնի հեթանոս քրմերի օրինակին:

Կարծում ենք, թե Ա. Խաչատրյանի գրքում բերված «Գարեջուր խմելու տեսարան Քյուլ-թեփեից» (սա Փոքր Ասիայի Քյուլ-թեփե հնավայրն է) բացատրությամբ նկարը ներկայացնում է երկու քուրմ-կառավարտիկների գարեջուր խմելու ծիսական գործողությունը: Նախ բերենք Ա. Խաչատրյանի թարգմանությունը ավելի քան 100 տարվա հնությամբ Էդ. Մեյերի աշխատությունից: «Քյուլթեփեում գտնվել է օձաքարի (Serpentin) մի գլանակնիք»<sup>50</sup>: Գլխավոր տեսարանը ներկայացնում է երկու մարդ, որոնք իրենց առջև դրված մի ամանից գարեջուր են ծծում

<sup>45</sup> Յովհան Մամիկոնեան, նշվ. աշխ., էջ 107:

<sup>46</sup> Meyer Ed., Geschichte des Altertum, II, B. I. Abteilung, Die Zeit der egyptischen grossmacht, 1928 (տե՛ս **Խաչատրյան Ա.**, Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Եր., 1933, էջ 107-108):

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 108:

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 108-109:

<sup>49</sup> Բուզանդ, Ե, իսգ:

<sup>50</sup> Նկարը տե՛ս **Խաչատրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 253:

երկար եղեգնափողերով... Սրա հիմքը կազմող սովորույթը նկարագրում է Քսենոփոնը<sup>51</sup>, հաղորդելով արմենների մասին, թե նրանք քաղցր (իմա՝ ախորժեղի – Ս. Պ.) զարեջուրը (բառացի՝ զարեգինի) ամաններից խմում էին. զարեհատիկները լողում էին զարեջրի երեսին. ամանում դրված էին հանգուցազուրկ եղեգնափողեր՝ մեծ ու փոքր, որոնցով պետք էր ծծել, երբ ուզեին խմել...»<sup>52</sup>: Քյուլթեփեի գլանակնիքը ուշագրավ է նաև նրանով, որ «գիսակ-ցցուն են կրում այն երկու մարդիկ, որոնք բոլորովին համաձայն են հեթիտ զորքերի կառամարտիկներին»<sup>53</sup>:



Բերված նկարի ոչ թե սովորական, այլ ծիսական զարեջրախում պատկերելու մասին են խոսում զարեջրի ամանից վերև գտնվող արևի և սրանից աջ՝ կենաց ծառի խորհրդանշանները: Վերջինից աջ էլ պատկերված է ինչ-որ թևաբաց թռչուն, իսկ սրա ներքևում՝ մի կատվազգի գիշատիչ: Ցից (ցցունք, գես) ունեցող քուրմ-կառամարտիկների պատկերները գլանակնիքին հենց այնպես չեն հայտնվել: Դա պետք է վկայությունը լինի այն քուրմ-կառամարտիկների քուրմ-հրամանատարին պատկերելու մասին:

**Եզրահանգում.** 1.Տարոն գավառի անվանադիրը համարված Տարբանի մասին ավանդազրույցը այնքան հին պատմական շերտ ունի, որ այն առնչել են Նոյ նահապետի ժամանակներին, իսկ Տարբանին համարել են Նոյի Սեմ որդու որդին: Իրականում Տարբանի նախատիպը եղել է հնագույն Տարոնի քուրմ-արքաների հավաքական կերպարը, իսկ նրա *Տարբան* անունը տարբերակն է հայերեն *տորթան* «վարդապետ» բառի:

2.Մ.թ.ա. XVII-XIII դարերում Հասուվա երկիրը՝ հնագույն Տարոնն իր շրջակայքով, ռազմաքաղաքական կարևոր ուժ է եղել, իսկ նրա մանդա և սալա ցեղերի կառամարտիկները՝ որպես վարձկաններ, ծառայել են իսթական բանակում: Դրանց մի մասը քուրմ-գինվորներ է եղել:

3. Մատուցված, քննարկված և մեկնաբանված տարաբնույթ նյութը, մեր կողմից հատուկ անուններին տրված ստուգաբանությունների հետ միասին հիմք

<sup>51</sup> Xen. Anabasis, IV, V, 25.

<sup>52</sup> Հնմտ. Քսենոփոն, Անաբասիս, թարգմանությունը Սիմոն Կրկյաշարյանի, Եր., 1970, էջ 97:

<sup>53</sup> Meyer Ed., Reich und Kultur der Chetiter, 1914, S. 55 (տե՛ս **Խաչատրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 102-103):

են տալիս պնդելու, որ խեթական թագավորների արշավանքների և դրանց նախորդած ժամանակաշրջաններում Հասուվայի՝ հետագա Տարոնի բնակչությունը եղել է հայախոս և մասն է կազմել հնդեվրոպական-հայկական էթնոսի: Նա եղել է աշխարհակալ խեթ թագավորների բանակների ավերիչ արշավանքներին դիմադրող ու դիմադարձող առաջամարտիկը:

## О ЖРЕЧЕСТВЕ ДРЕВНЕЙШЕГО ТАРОНА

*Петросян С. Г.*

**Ключевые слова:** *бог, жрец, воин, эпоним, поле, гора, топоним, ойконим, Хасува, Тарон, Турубера.*

Как в хеттских клинописных источниках, так и в армянских сказаниях, сохранились древние свидетельства о жречестве древнеармянской области Тарон. Одно из свидетельств, это сказание о Тарбане - эпониме Тарона. Сопоставляя имя Тарбана с корнями армянского слова *торбан*, мы приходим к выводу, что на самом деле прототипом Тарбана был собирательный образ древних таронских царей-жрецов, а его имя *Тарбан* является вариантом армянского слова *торбан* «вардапет (архидиакон)». Среди воинов племен манда и сала древнего Тарона были не только представители военного, но и жреческого сословия. Последние, наверно, изображены в виде бойцов с косами.

## ABOUT THE PRIESTHOOD OF THE ANCIENT TARON

*Petrosyan S. G.*

**Key words:** *God, priest, warrior, eponym, field, mountain, toponym, oikonym, Hasuva, Taron, Turuberan.*

In Hittite cuneiform sources and in Armenian legends have been preserved ancient testimonies about the priesthood of the ancient Armenian region of Taron. One of the testimonies is the legend of Tarban, the eponym of Taron. Comparing the name of Tarban with the roots of the Armenian word *torban*, we come to the conclusion that the prototype of Tarban was the collective image of the ancient Taron king-priests, and his name Tarban is a variant of the Armenian word *torban* "vardapet (archdeacon)". Among the warriors of the Manda and Sala tribes of ancient Taron were not only representatives of the military, but also of the priestly class. The latter are probably depicted as fighters with scythes.

## References

1. Movsisi Xorenacvov Patmut'yun Hayoc, Yerevan, 1981 (In Armenian).
2. **Petrosyan S. G.** Sepagrayin Durubani/hayeren torban, //Vanadz'ori petakan Mankavarzh'akan instituti git. Nstash' rjani nyut'er, Vanadz'or, 2009 (In Armenian).
3. **Ivanov V. V.** Ljetopis' Xattusilisa I, «Xrestomatiya po istorii Drjevnjogo Vostoka», ch.I, M., 1980 (In Russian).
4. **Fasmer M.** Etimologichjeskij slovar' russkogo jazyka, t. III, Moskva, 1971 (In Russian).
5. **Petrosyan S. G.** Mursili I-i arevelyan arshavanqi yert' ughin, //HH GAA ShHH kentroni «Gitakan ashxatut'yunner», IV, Gyumri, 2001 (In Armenian).
6. **Giorgadze G. G.** Rannyaya Malaya Aziya i Xettskoe carstvo, «Istoria drjevnego mira, I, Ranyaya drevnost'», M., 1989 (In Russian).
7. **Xachatrjan V.** Vostochnie provincii Xettskoy imperii (Voprosi toponomiki), Yerevan, 1971 (In Armenian).
8. **Adonc N.** Armenia v epoxu Justinyana, Yerevan, 1963 (In Armenian).
9. **Yeremyan S.** Hayastanə əst «Ashxarhacovc»-i, Yerevan, 1963 (In Armenian).
10. **Hakobyan T. Melik-Baxshyan St., Barseghyan H.** Hayastani yev harakic shrjanneri tghanunneri barraran, h. II, Yerevan, 1988 (In Armenian).
11. **Jahukyan G.** Hayoc lezvi patmut'yun. naxagrayin zh'amanakashrjan, Yerevan, 1987 (In Armenian).
12. **Ach'arryan H.** Hayeren armatakan barraran, h. I-IV, Yerevan, 1971-1979 (In Armenian).
13. **Ach'arryan H.** Hayoc andznanneri barraran , h. IV, Yerevan, 1948 (In Armenian).
14. «Barrgirq hayoc», Qnnakan bnagirə yev arrajabanə **H. Amalyani**, Yerevan, 1975 (In Armenian).
15. **Dzhaukjan G.** Vzaimootnosheniye indoyevropeyskix, xurrito-uratskix i kavkazskyx yazikov, Yerevan, 1967 (In Russian).
16. **Srvandz'tyanc G.** Yerker, h. I, Yerevan, 1978 (In Armenian).
17. **Sh'ojedrovicki D. V.** Sim, Xam, Jafet, «Mify narodov mira», t. II (In Russian).
18. **Petrosyan S. G., Petrosyan L. S.** Yeryak bnakavayreri hamakargə hin Hayastanum yev Rusiayum, ShHH kentroni «Gitakan ashxatut'yunner», h. II, Gyumri, 1999 (In Armenian).
19. **Petrosyan S.G.**, Daserə yev yeradasut'yan drsevorunnerə hin Hayastanum, Yerevan, 2006 (In Armenian).
20. **Yovhan Mamikonean** Patmut'yun Taronoy, Yerevan, 1941 (In Armenian).
21. **P'avstosi Bivzandacvov** Patmut'yun Hayoc, Yerevan, 1987 (In Armenian).
22. **Ach'arryan H.**, Hayoc grerə, Yerevan, 1984 (In Armenian).
23. **Gerni O. R.** Xetty, Moskva, 1987 (In Russian).
24. **Petrosyan S. G.** Haykakan lernashxarhi hnaguyn karramartikneri masin, //«Vem», 2014, № 4 (In Armenian).
25. **Petrosyan S. G.** Zarmayr nahapeti yev «Qaghdeacvoc» arqayacanki masin, //ShHH kentroni «Gitakan ashxatut'yunner», Gyumri, h. XVII, 2014 (In Armenian).

26. **Dyakonov I. M.** Predystoriya armyanskogo naroda, Istoriya Armyanskogo nagorria s. 1500 po 500 g. do n. e., Yerevan, 1968 (**In Russian**).
27. **Ghap'ancyan G.** Hayoc lezvi patmut'yun (hin shrjan), Yerevan, 1961 (**In Armenian**).
28. **Xachatryan A.** Hayastani sepagrakan shrjani qnnakan patmut'yun, Yerevan, 1933 (**In Armenian**).
29. **Qsenop'on** Anabasis, t'argmanut'yunə Simon Krkyasharyani, Yerevan, 1970 (**In Armenian**).

*Ընդունվել է՝ 20.08.2020*

*Գրախոսվել է՝ 09. 11. 2020*

*Հանձնվել է տպ.՝ 20. 11. 2020*

**Տեղեկություններ հեղինակի մասին**

Մարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ պատմական գիտությունների դոկտոր,

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի

առաջատար գիտաշխատող, էլ. հասցե՝ vahe1996@mail.ru

ՀՏԴ՝ 93.94

ԵՐՎԱՆԴՈՒՆԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԹԱԳԱԴՐՄԱՆ  
ՀՆԱՐԱՎՈՐ ՎԱՅՐԻ ՄԱՍԻՆ  
*Լուսինե Պետրոսյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

**Բանալի բառեր՝** *Արմե-Շուբրիա, Անգեղտուն, Օլիբերիա, թագադրվել, հանգստարան, Երվանդունիներ, Արտաշիսյաններ, Ամպրոպի աստված, Արևի աստված, երկվորյակներ:*

Հոդվածում քննարկվել են Արմե-Շուբրիայի արքայատոհմի, Երվանդունիների և Արտաշիսյանների ազգակցական առնչությունները՝ կապված այդ արքայատոհմերի ներկայացուցիչների թագադրման վայրի հետ: Համադրելով Ստրաբոնի, Ապիանոսի հաղորդումները հայկական տեղանվանական տվյալներին՝ հեղինակը փորձել է պարզել այդ արքայատոհմերի թագադրման վայրի հնարավոր տեղադրությունը: Այն փաստը, որ Տիգրան Մեծը թագադրվել էր ոչ թե իր պապի կառուցած ու նրա անունը կրող մայրաքաղաքում՝ հռչակավոր Արտաշատում, այլ Մեծ Հայքի հարավային ծայրամասում, նշանակում է, այդ վայրը նրա արքայատոհմի համար սրբազան է համարվել: Իսկ այդ վայրը՝ Օլիբերիան, ժամանակին գտնվել է Արմե-Շուբրիա ցեղամիության արևելյան մասում և ունեցել է պատանուներին՝ հավանաբար հենց թագադրման վայրի նշանակություն: Իսկ այդպիսին այն կարող էր լինել դեռևս Արմե-Շուբրիայի թագավորների ժամանակներից: Արմե-Շուբրիայի արևելյան այդ հատվածը՝ Նփրկերտի շրջանը, կոչվել է նաև Մեծ Ծոփք, իսկ Ծոփքի հին (նախազարեհյան) արքայատոհմը Երվանդունի էր: Ուրեմն Օլիբերիան եղել է Արմե-Շուբրիայի թագավորների, Պարույրից սերած

Երվանդունիների (մինչև 189թ.) և Երվանդունիների սերունդ Արտաշիսյանների թագադրման վայրը:

**Նախաբան.** Ասորեստանյան և ուրարտական աղբյուրներում հիշատակված Արմե-Շուբրիա երկիրը գտնվել է Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան մասում՝ հետագա Մեծ Հայքի Ծովք և Աղձնիք նահանգների տարածքներում: Ասորեստանի և Ուրարտուի թագավորները բազմիցս արշավանքներ են ձեռնարկել դեպի Արմե<sup>1</sup>-Շուբրիա<sup>2</sup>: Այս երկմիասնական կառուցվածքով թագավորությունը, հնդեվրոպական երկվորյակ աստվածությունների (Արևի և Ամպրոպի) մասին պատկերացման համաձայն, եղել է երկվորյակային պաշտամունքի երկիր: Ուստի Ասորեստանի թագավոր Ասարհադդունը, մ.թ.ա. 673թ. նվաճելով այն, փոխարենը ստեղծեց երկու վարչական միավոր, որոնք իրենց կենտրոն բնակավայրերի անուններով կոչվում էին Սրբսու և Kullimmeri<sup>3</sup> Ուփում և Քղիմար: Ըստ երևույթին, նրա արևմտյան կեսը՝ հետագա Անգեղտունով, համարվել է Ամպրոպային երկվորյակի տիրույթ, իսկ արևելյան կեսը՝ Նփրկերտով, Արևային երկվորյակի տիրույթ:

*1. Անգեղտունը և Օլիբերիան՝ որպես հնագույն հանգստարան և թագադրման վայր*

Արևմուտքին է վերաբերում ամպրոպային *Անգեղեայ Տորք*-ի առասպելը և գավառի կենտրոն բերդի *Անգղ* անունը (<անգղ թոչուն)<sup>4</sup>: Արևմուտքի հետ Տորքի կապը հաստատվում է Վաղարշակ թագավորի գործունեության մասին Մովսես Խորենացու հետևյալ հաղորդմամբ. Վաղարակը «ի գաւակէ Պասքամայ, ի Հայկի թոռնէ, Տորք անուն կոչեցեալ... հաստատէ կուսակալ արեւմտից. եւ յերեսացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անգեղ տուն»<sup>5</sup>:

Ասորեստանի թագավոր Աշուրբանասպալից հետո (մ.թ.ա. 668-633թթ.) ասորեստանյան արձանագրությունները լռում են Շուբրիայի մասին<sup>6</sup>: Ուրեմն, երկիրը ոտքի էր կանգնել, և երկու մասերը միավորվել էին, հավանաբար, Սկայորդու որդի Պարույրի գլխավորությամբ: Որ Շուբրիան թոթափել էր ասորեստանյան տիրապետությունը, և որ նրա երկու մասերը միավորվել էին, հավաստում է հայկական ավանդությունը: Սրա համաձայն՝ Պարույրը մասնակցել է Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի գրավմանը (մ.թ.ա. 612թ.): Հայ ժողովրդի

<sup>1</sup> Арутюнян Н. Биайнили (Урарту), Ер., 1970, стр. 243-246, 249, 346.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 74-76, 90-91:

<sup>3</sup> Саркисян Д. Страна Шубрия, Ер., 1989, с. 52-53, 59-60, 79.

<sup>4</sup> Կենտրոնի *Անգղ* (*անգղ թոչուն*) անվան համար հմնտ. թագավորական հանգստարաններում անգղերի առկայությունը և նրանց մասնակցությունը խեթերի ու իրանցիների թաղման ձեւերում:

<sup>5</sup> Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, Աշխարհաբար թարգմ. և մեկնաբանութ. Ստ. Մալխայանցի (այսուհետև՝ **Մովսէս Խորենացի**), Եր., 1981, գիրք Բ, գլուխ Ը:

<sup>6</sup> Саркисян Д., նշվ. աշխ., էջ 59:

պատմության ակադեմիական հրատարակության 1-ին հատորում ասված է, որ Արմե-Շուբրիայում մ.թ.ա. 652-612թթ. իշխել է ցեղապետ Պարույրը, իսկ Ուրարտուում 6-րդ դարի սկզբներին գահ է բարձրացել Երվանդունի տոհմը: Այնուհետև, Արմե-Շուբրիան և Ուրարտուն միավորվել են և կազմել մի ընդարձակ Հայկական թագավորություն, որը հայերի կողմից կոչվել է Հայք, իսկ օտարների կողմից՝ Արմինա, Արմենիա»<sup>7</sup>:

Ասորեստանի Աշուրնասիրապալ 2-րդ թագավորը (մ.թ.ա. 883-859թթ.) Անգեղտուն գավառի տարածքը հիշատակում է *Ջամբա* անունով<sup>8</sup>, որի ստուգաբանությունը խոսում է նրա «ամպրոպային» բնույթի մասին<sup>9</sup>: Նույնպիսի բնույթի են նաև Շուբրիայի թագավորների և արքայազունների կրած *Նիկ-Թեշուր*, *Լիզի-Թեշուր*, *Շերպի-Թեշուր* անունները՝ իրենց *Թեշուր* բաղադրիչով<sup>10</sup>: Տեղին է հիշել, որ Տորքի սերունդները համարված Անգեղտան նախարարական տոհմի ներկայացուցիչները Արշակունյաց դարաշրջանի Մեծ Հայքում զինվորական բարձր պաշտոններ էին զբաղեցնում և, ըստ «Ջօրանամակ»-ի, գլխավորում էին Հայոց բանակի չորս հիմնական մասերից մեկը՝ «*Արևմտյան դռան*» գորամիավորումը<sup>11</sup>: Ըստ Ագաթանգեղոսի «Հայոց պատմության»՝ Անգեղտան իշխանը կոչվում է մի դեպքում «մեծ իշխանն Անգեղ տան», մեկ այլ դեպքում հիշատակվում չորս բղեշխներից անմիջապես հետո, մյուս իշխաններից առաջինը<sup>12</sup>: Սա խոսում է Տորքի և նրա հիմնադրած տոհմի ռազմական գործառույթների մասին:

Իսկ ովքե՞ր էին Անգեղտան իշխանական տոհմի սերունդները: Արդյո՞ք ընդունված կարծիքի համաձայն՝ Բագրատունիները: Դիմենք Անանուն պատմիչին (Սեբեոս): Ըստ նրա՝ Արամանյակի սերնդից էր Փառնավազը. «Սա ծնաւ զԲագամ և զԲագարատ, և Բագարատ ծնաւ զԲիրատ, և Բիրատ ծնաւ զԱսպատ: Եւ որդիքն Բագարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանս *արեւմտից*, այս ինքն է Անգեղ տուն. վասն զի կոչեցաւ Բագարատ և Անգեղ, զոր ի ժամանակի յայնմիկ ազգ բարբարոսացն (իմա՛ հեթանոս հայերը – Լ. Պ.) աստուած կոչեցին»<sup>13</sup>: Ինչպես տեսանք, Անանուն պատմիչը Բագրատունիների

<sup>7</sup> Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ), ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 1-ին, Եր., 1971, էջ 438:

<sup>8</sup> **Дьяконов И.** Ассиро-вавилонские источники по истории Урарту, «Вестник древней истории», 1951, N 2-4, надп. N23.

<sup>9</sup> **Պետրոսյան Ս.**, Արամանյակի որդիները և նրանց տիրությունները եռադասության տեսանկյունից, //ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», N 10, Գյումրի, 2008, էջ 30:

<sup>10</sup> **Саркисян Д.** Страна Шубрия, с. 28: **Հմայակյան Ս.**, Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 42-43:

<sup>11</sup> **Адонц Н.** Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, стр. 251, 285.

<sup>12</sup> **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն, քնն. բնագիրը Գ. Տեր-Սկրտչյանի և Ս. Կանայանցի, աշխարհաբար թարգման. և ծանոթ. Արամ Տեր-Ղևոնդյանի, Եր., 1983, ՃԺԲ, 795, ՃԻԶ, 872:

<sup>13</sup> Սեբեոսի եպիսկոպոսի պատմություն Հայոց (այսուհետև՝ **Սեբեոս**), Եր., 1939, գլ. Ա, էջ 6-7:

մասին ակնարկ անգամ չի անում: Ըստ այսմ, Մովսես Խորենացու քննադատական խոսքերը ոչ թե Անանունի (կամ նրա աղբյուրի) հասցեին են ուղղված, այլ Բագրատունիներին Անգեղտան իշխանների միջոցով Արամանյակին (և Հայկին) առնչողների: Խորենացին իր մեկենաս Սահակ Բագրատունուն գրում է, թե որոշ անվստահելի մարդիկ սխալ են անում, որ Բագրատունիների թագադիր ցեղը համարում են Հայկից սերած<sup>14</sup>: Ստ. Մալխասյանցն այս առթիվ նկատել է տալիս. «Ովքե՞ր են այդ անվստահելի մարդիկ, որոնք Բագրատունյաց ցեղը ծագեցնում էին Հայկից... Փնտրել այդ անվստահելի մարդկանց՝ զուր աշխատություն է: Հայաստանում Խորենացու ապրած ժամանակ, բացի մի երկու տասնյակ մարդկանցից, որոնց անունները մեզ հասել են, ապրում էին էլի ուրիշ շատ մարդիկ, որոնք կարող էին Բագրատունյաց, Հայկի և ուրիշների մասին զանազան բաներ պատմել»<sup>15</sup>: Այսպիսով, Անգեղտան իշխանների տոհմաբանությունը անհարկի կերպով վերագրվել է Բագրատունիներին: Ամենայն հավանականությամբ, շփոթի տեղիք է տվել Անգեղտան իշխանական տոհմում Բագրատ անվան առկայությունը:

Անգեղտան իշխանների շարքում երկվորյակ եղբայրների՝ Բագամի և Բագարատի (Անգեղի) գոյությունն արդեն խոսում է տոհմում երկվորյակների պաշտամունքի մասին: Սա հիշեցնում է Երվանդունիների առասպելական նախնիների Երվանդ և Երվազ երկվորյակներին<sup>16</sup>: Նրանցից Երվանդը ամպրոպային զինվոր էր, իսկ Երվազը՝ արեգակնային քուրմ<sup>17</sup>: Անգեղտան իշխանների տոհմաբանության մեջ երկվորյակների (և սրանց պաշտամունքի) առկայությունը կարծես խոսում է նրանց՝ Երվանդունիների մի ճյուղը լինելու մասին: Ըստ Մ. Խորենացու Երվանդ Սակավակյացը Հայկազուններից էր՝ հիշատակված Վարդգես Մանուկի առասպելում<sup>18</sup>: Ուրեմն, Երվանդը Հայկազուն է՝ Սկայորդուց ծնված Պարույրի սերունդ՝ «Որ ի Սկայորդույն Պարույր»<sup>19</sup>: Իսկ Տիգրան Երվանդյանի հայրը՝ Քսենոփոնի հիշատակած Հայոց թագավորը<sup>20</sup>, «իբր դինաստիայի առաջին գահակալը չէր: Նա հիշատակում է իր հորը, որը նրան թողել էր այդ ժառանգությունը»<sup>21</sup>: Երվանդունիները եթե Պարույրի սերունդներից էին, ապա

<sup>14</sup> Մովսես Խորենացի, Ա, իբ:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 471-472, ծան. 75:

<sup>16</sup> Նույն տեղում, Բ, լէ:

<sup>17</sup> Մ. Պետրոսյանը *Երվանդ* անունն առաջացած է համարում հ.-ե. \*peru-nt- Ամպրոպի աստծու անունից (հմմտ. Perkunas, Перун, Parjanya և այլ, տե՛ս **Պետրոսյան Մ.**, Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Եր., 2006, էջ 337 նաև՝ էջ 429, աղ. Գ):

<sup>18</sup> Մովսես Խորենացի, Բ, կէ:

<sup>19</sup> Մովսես Խորենացի, Ա, իա:

<sup>20</sup> Xen. Kyrop., III, 1 (Քսենոփոն, Կյուրոպեդիա, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Եր., 2000, էջ 94-107):

<sup>21</sup> Քսենոփոն, Կյուրոպեդիա, III, 1, 33, էջ 104:

ժառանգական տիրույթ պետք է ունենային նախկին Արմե-Շուբրիայի տարածքում. Պարույրը Արմե-Շուբրիայից էր: Շուբրիայի թագավորներից սերած Երվանդունի տոհմի նախնական տիրույթն էլ լինելու էր Անգեղտուն գավառը՝ Ամպրոպի աստծու՝ Տորքի պաշտամունքի կենտրոնը: Իսկ Երվանդունիների սերունդ Անգեղտան իշխանները ազգակից պետք է լինեին Ծոփք-Կոմագենեի Երվանդունիներին:

Ըստ երևույթին, Ամպրոպային երկվորյակի տիրույթ Անգեղտանը (Արմե-Շուբրիայի արևմտյան մասում) թագավորները թաղվում էին, իսկ Արևային երկվորյակի տիրույթ՝ Նփրկերտում (Արմե-Շուբրիայի արևելյան մասում)՝ թագադրվում: Ըստ այսմ, Երվանդունիները պիտի թագադրվեին Արմե-Շուբրիայի նախկին տարածքի արևելյան մասում, իսկ այդ տարածքը սրբազան էր համարվելու, այսինքն՝ լինելու էր պաշտամունքային որևէ կենտրոն: Ստրաբոնի հաղորդմամբ՝ այդ վայրը կոչվում էր Օլիբերիա: Տիգրան Մեծի նվաճումները նկարագրելուց հետո Ստրաբոնն ավելացնում է. «Այս բոլորով հզորացած՝ Օլիբերիայի մոտ կառուցեց մի քաղաք՝ այս տեղի և Եփրատի կամուրջի միջև, որ կոչեց Տիգրանակերտ»<sup>22</sup>: Ըստ Ապիանոսի՝ Տիգրան Մեծն այնտեղ է թագադրվել, որտեղ հետագայում կառուցել է Տիգրանակերտը<sup>23</sup>: Փաստորեն Տիգրան Մեծը թագադրվել էր ոչ թե իր պապի կառուցած մայրաքաղաք և պապի անունը կրող հռչակավոր Արտաշատում, այլ Մեծ Հայքի ծայրամասում: Այդ ծայրամասը՝ Նփրկերտի շրջանը, կոչվել է նաև Մեծ Ծոփք, իսկ Ծոփքի հին (նախազարեհյան) արքայատոհմը ևս Երվանդունի էր:

Գ. Սարգսյանը ճիշտ է նկատում. «թագադրման վայրը չէր կարող որևէ պատահական աշխարհագրական կետ լինել, այլ կապված պիտի լիներ հայ ժողովրդի կամ թագավորական դինաստիայի ինչ-որ հին ավանդությունների հետ»<sup>24</sup>: Այդուհանդերձ, նա ենթադրում է, որ Տիգրան Մեծը Անգեղտանն է թագադրվել, որը Արտաշիսյան արքայատոհմի հանգստարանն է եղել<sup>25</sup>: Գ. Սարգսյանի տեսակետն ընդունելի է մասնակիորեն. Անգեղտունը սրբավայր եղել է, բայց թագադրման վայր՝ ամենայն հավանականությամբ՝ ոչ: Փավստոս Բուզանդի այն վկայությունը, թե Անգեղտան ամրոցում և Դարանաղի գավառի Անի ամրոցում գտնվել են Արշակունի թագավորների հանգստարանները<sup>26</sup>, Գ. Սարգսյանը մեկնաբանում է այսպես. «Անգեղում թաղված թագավորների անունները անհայտ են

<sup>22</sup> Strabo, XI, 14, 15 (Ստրաբոն, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Եր., 1940, էջ 67):

<sup>23</sup> Appian., Mithr., 67 <http://ancientrome.ru/antlitrt.htm?a=1467012000> (հասանելի է 05.07.2020). (Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Եր., 1944, էջ 137):

<sup>24</sup> Սարգսյան Գ., Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Եր., 1966, էջ 64:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 64:

<sup>26</sup> Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, թարգմ., ներած. և ծան. Ստ. Մալխասյանցի (այսուհետև՝ Փավստոս Բուզանդ), Եր., 1968, Գ, իդ:

մնում, իսկ Անիում... թաղված էին բոլոր հայ Արշակունիները, սկսած թերևս հենց Տրդատ Ա-ից... Իսկ ովքե՞ր են թաղված եղել Անգեղում: Փավստոսի պնդմամբ՝ դարձյալ Արշակունիները: Վերջինս, սակայն, պետք չէ բառացիորեն հասկանալ: Անանունի և Խորենացու տվյալները պարզ ցույց են տալիս, որ ուշ շրջանի հայ պատմական ավանդությունը Հայկյաններից հետո ուրիշ հայկական թագավորական դինաստիա, բացի Արշակունիներից, չի ճանաչել, և սրանց մեջ ներմուծել է նաև Արտաշիսյաններին...»<sup>27</sup>: Մերուժան Արծրունու զլխավորած պարսից զորքի վայրագությունները նկարագրելիս Փավստոս Բուզանդն ասում է. «Եւ գային պահ արկանէին շուրջ զԱնգեղ զամուր բերդան, որ է յԱնգեղ տանն զաւառին. Զի անդ էին բազում Հայոց թագաւորացն գերեզմանք շիրմացն արանցն Արշակունեաց. Բազում գանձք մթերեալ մնացեալ կային *ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ*: Չուան պահ արկին զբերդան. Ապա իբրեւ ոչ կարէին առնուլ վասն ամրութեան տեղոյն, թողուին և գնային»:<sup>28</sup> Ասվածի համաձայն՝ Փավստոս Բուզանդը Անիում թաղված Արշակունիներին անվանում է «հայոց առաջին թագավորներ», Անգղում թաղվածների առնչությամբ հիշատակում է «նախնիներ»: Այս տարբերությունը նկատի առնելով՝ նշանավոր գիտնականը գտնում է, որ Անգեղում թաղված պետք է լինեին Արտաշիսյան դինաստիայի թագավորները. որոնք «իրականում ավելի հին էին»<sup>29</sup>: Բայց չէ՞ որ Երվանդունիները առավել ևս հին էին: Ուրեմն, Անգեղտունը եղել է նախ Արմե-Շուրբիայի, ապա՝ նրանց սերունդ Երվանդունիների և վերջիններիս սերունդ համարված Արտաշիսյանների հանգստարանը: Իսկ նրանք բոլորը թագադրվել են Օլիբերիայում:

## 2. Օլիբերիայի հետագա կարգավիճակը

Օլիբերիան ի սկզբանե Արտաշիսյաններին չի պատկանել, թեպետև նրանց նախնիները նույնպես թագադրվել են այստեղ (հմմտ. ուրարտական թագավորների՝ Մուծաձիրում թագադրվելը): Այն Արտաշես 1-ինն էր վերցրել հին տերերից՝ Բագրատունիներից, դարձրել արքունի տիրույթ, իսկ փոխարենը, համաձայն Մովսես Խորենացու, իր դայակ Սմբատ Բագրատունուն տվել Մելիկյան Ասորիքից նվաճած Տնորիք//Կորդրիքը<sup>30</sup>, որի կենտրոնը Ալկի ամրոցն էր<sup>31</sup>: Արտաշեսի Արտավազդ որդու դավերի մասին Խորենացին հաղորդում է. «Իսկ Սմբատայ տեղի տուեալ գնաց զկողմամբք Ասորեստանի, իւրովք կամօք թողլով

<sup>27</sup> Մարգարյան Գ., Հելլենիստական դարաշրջանի ..., էջ 63:

<sup>28</sup> Փավստոսի Բիզանդացու Պատմություն Հայոց, Բնագիրը Ք.Պատկանյանի (այսուհետև՝ Բիզանդ), Եր., 1987, Դ, իդ:

<sup>29</sup> Մարգարյան Գ., նշվ. աշխ., էջ 64:

<sup>30</sup> Մովսես Խորենացի, Բ, ծգ:

<sup>31</sup> Երեմյան Ս. Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (այսուհետև՝ Աշխարհացոյց), Եր., 1963, էջ 32:

զիշխանութիւն զօրացն Հայոց, ընդ որ խանդայրն Արտաւագդ: Հրամանաւ Արտաշիսի բնակէ ի Տնորիս, որ այժմ կոչի Կորդրիք, ի յԱլկի նստուցեալ զբազմութիւն գերայն. Քանզի էր ի ծերութեան կին արարեալ յատրեստանեաց հուպ յայն կողմանս, զոր յոյժ սիրեաց, վասն այնորիկ եւ զնորին կողմամբք բնակեցաւ»<sup>32</sup>: Դրանք ժողովրդական բանահյուսության մեջ հորինված պատճառներն են: Կարևորն այն է, որ Սմբատ Բագրատունին՝ Արտաշեսի դայակը<sup>33</sup> և բարերարը, ոչ թե իր կամքով է հաստատվել Տնորիքում, այլ «հրամանաւ Արտաշիսի»: Այստեղ նա կառուցել է Սմբատաբերդը և հիմնադիրը դարձել Բագրատունիների *Սամբատայ էթնոս*՝ «ազգ Սամբատայ» կոչված ճյուղի:<sup>34</sup> Այս առթիվ Գ. Սարգսյանը գրում է. «Հավանորեն քաջ զիտենալով, որ Տնորիքը երբեք Բագրատունյաց տոհմին չի պատկանել, Խորենացին անհրաժեշտ է գտել հատուկ հիմնավորում տալ Սմբատի այնտեղ բնակվելուն»<sup>35</sup>: Այո՛, Խորենացին փորձել է բացատրել Սմբատի հայտնվելը Ալկիում: Բայց, որ Տնորիքը՝ Սմբատից սկսած Բագրատունյաց տոհմին պատկանել է, փաստում են «ազգ Սամբատայ» տոհմանունը և *Սմբատաբերդ* տեղանունը: Իսկ վերջինիս գոյությունը Խորենացին չիմանալ չէր կարող, երբ գիտեր, որ Կորդրիքը նախկինում Տնորիք է կոչվել. «բնակէ ի Տնորիս, որ այժմ կոչի Կորդրիք»:<sup>36</sup>

Ճիշտ է, Արտաշես 1-ինը Օլիբերիան դարձրել էր արքունի տիրույթ, բայց այստեղ պահպանել էր Բագրատունիների՝ հայոց թագավորներին թագադրելու իրավունքը: Ըստ այսմ, հասկանալի է, թե ինչու էր Տիգրան Մեծը թագադրման վայր ընտրել հենց Մեծ Հայքի այդ ծայրամասը: Այստեղ էլ Բագրատունիների նախնիները թագադրում էին նախ Շուրբիայի (Արմե - Շուրբիա), ապա Հայոց թագավորներին, որոնք Պարույրի՝ Երվանդունի սերունդներն էին: Այստեղ հետագայում թագադրվում էին Ծոփքի թագավորները, երբ Օլիբերիան մասն էր կազմում Ծոփքի թագավորության և կոչվում էր Մեծ Ծոփք: Խոսքը մինչև Սելևկյան նվաճումն ու մինչև Զարեհի՝ այստեղ կառավարիչ կարգելու մասին է (վերջինս Երվանդունի տոհմից չէր):

Անգեղտունը «160 թ. մոտերքը Ծոփքի Արկաթիաս Երվանդունի թագավորը խլեց այս գավառը Մեծ Հայքից և միացնելով Ծոփքին՝ դարձրեց իր թագավորության կենտրոնը. Անգղը վերանվանվեց Արկաթիակերտ (Ἀραθιάκερτα) և

<sup>32</sup> Մովսէս Խորենացի, Բ, ծգ:

<sup>33</sup> Նույն տեղում, Բ, լէ; Բ, խէ:

<sup>34</sup> ՀԺՊ, հ. 1-ին, էջ 747:

<sup>35</sup> Սարգսյան Գ., նշվ. աշխ., էջ 170-171:

<sup>36</sup> Մովսէս Խորենացի, Բ, ծգ:

հոշակվեց իբրև մայրաքաղաք, իսկ գավառը կոչվեց նաև *Մեծ Փոփք*<sup>37</sup>: Անգեղտունը իր ժառանգական տերերից բռնագրավել և արքունի տիրույթ էր դարձրել, հավանաբար, Տիրան թագավորը (338-350թթ.), որը և կառավարիչ էր այստեղ դրել ներքինի Դրաստամատին<sup>38</sup>: «Յաղագս Անգեղ տանն» գլխում Մուշեղ Մամիկոնյանի համար Բուզանդը գրում է. «Հարկաներ եւ յԱնգեղ տունն զբազումս, եւ հաներ ընդ սուր: Բայց աշխարհն զի ոստան արքունի լեալ էր վաղ, բնակիչք գաւառին և ինքեանք կային ի հարկի ծառայութեան»<sup>39</sup>: Նկատի առնենք, որ Տիրանի կառավարման տարիներին էին կոտորվել Ռշտունի և Արծրունի նախարարական տոհմերը<sup>40</sup>:

Հայտնի է, որ նախապես թագադրման արարողակարգը քրմապետի առանձնաշնորհումն էր: Բագրատունյաց նախնու՝ նաև քուրմ լինելու մասին է խոսում Խորենացու՝ նրան տված բնութագիրը՝ «առնն զօրաւորի եւ իմաստնոյ»<sup>41</sup>, նաև թագադիր լինելու հանգամանքը: Նույնը պարզվում է Անանուն պատմիչի որակումից, որը Բագրատ Փառազյանին կոչում է «եւ հայր արքայի, և եղբայր»<sup>42</sup> և միաժամանակ համարում է թագադիր<sup>43</sup>: Փավստոս Բուզանդը ևս Բագրատունիների համար գրում է. «որ թագաւորքն թագակապքն լեալ էին ի բնէ ազգին թագաւորութեանն Արշակունոյ»<sup>44</sup>:

Անկախ այն բանից՝ Արտաշիսյանները Երվանդունիների հետնորդներն էին հայրակա՞ն գծով (ըստ Անանուն պատմիչի և «Քարթլիս ցխովրեբա»-ի)<sup>45</sup>, թե՞ մայրական, նրանց արքայատոհմի հիմնադիր Արտաշես 1-ինը իր անունից դրված սահմանաքարերի արամեական արձանագրություններում իրեն Երվանդական (RWNDKN)//Երվանդունի էր կոչում: Պարզ է, որ այդ տեսակետին էր լինելու նաև նրա թոռը՝ Տիգրան Մեծը, որը թագադրվել էր Օլիբերիայում: Ըստ երևույթին թագադրվել էր այն Բագադատեսի (Բագարատ) ձեռքով, որը հետագայում նրա կողմից նշանակվեց Ասորիքի կառավարիչ: Որ Երվանդունիների թագադիրները ևս Բագրատունիներն են եղել, վկայում է Մովսես Խորենացին, երբ ասում է, որ Երվանդ Վերջինը թագավորեց «առանց արանց յազգէն Բագրատունեաց լինել թագադիր»<sup>46</sup>:

<sup>37</sup> Աշխարհացոյց, էջ 35:

<sup>38</sup> Փավստոս Բուզանդ, Ե, է:

<sup>39</sup> Նույնը:

<sup>40</sup> Նույն տեղում, Գ, ժը:

<sup>41</sup> Մովսես Խորենացի, Բ, գ:

<sup>42</sup> Մեքեոս, գլ. Բ, էջ 10:

<sup>43</sup> Նույն տեղում, գլ. Ա, էջ 9:

<sup>44</sup> Բիւզանդ, Ե, խդ:

<sup>45</sup> Մեքեոս, գլ. Բ, էջ 11: Карталис цховреба (История Грузии), Тб., 2008, стр. 31.

<sup>46</sup> Մովսես Խորենացի, Բ, լէ:

*Եզրահանգում.* Արմե-Շուբրիա երկմիասնական կառուցվածքով թագավորության արևմտյան կեսը՝ հետագա Անգեղտուն գավառով, եղել է Արմե-Շուբրիայի թագավորների, նրանց հաջորդ՝ Երվանդունիների (մինչև 189թ.) և Երվանդունիների սերունդ Արտաշիսյանների թագավորական հանգստարանը: Իսկ արևելյան կեսը՝ Նփրկերտով, եղել է նրանց բոլորի թագադրման վայրը: Թագադրումը կատարում էին տեղի Բագրատունի իշխանական տոհմի ներկայացուցիչները: Պատահական չէր, որ Տիգրան Մեծը իր թագադրման վայր ընտրել էր ոչ թե իր պապի կառուցած և պապի անունը կրող հանրահայտ մայրաքաղաք Արտաշատը, այլ Մեծ Հայքի հարավարևմտյան այս ծայրամասը:

## О ВОЗМОЖНОМ МЕСТЕ КОРОНАЦИИ ЕРВАНДИДСКИХ ЦАРЕЙ

*Петросян Л. С.*

**Ключевые слова:** *Арме-Шубрия, Ангехтун, Олиберия, короноваться, усыпальница, Ервандиды, Арташесиды, бог Грома, бог Солнца, близнецы.*

Западная половина двуединого царства Арме-Шубрия, с дальнейшей провинцией Ангехтун, была царской гробницей Арме-Шубрии, их последпотомков Ервандидов (до 189 г.) и преемников последних - Арташесидов. А восточная половина, с центром Нпркерт, была местом коронавания всех их. Коронацию проводили представители местной династии Багратуни. Не случайно Тигран Великий выбрал место своей коронации на юго-западе Великой Армении – в Олиберии, а не знаменитую столицу Арташат, построенную и названную его дедом Арташесом.

## ABOUT THE PLACE OF THE CORONATION ERVANDID KINGS

*Petrosyan L. S.*

**Key words:** *Arme-Shubria, Angeghtun, Oliberia, coronation, cemetery, Ervandids, Artashesids, Thunder-god, Sun-god, twins.*

The western half of the two-part kingdom of Arme-Shubria, with the further province of Angeghtun, was the royal cemetery of Arme-Shubria, their ensuing Yervandids (until 189) and the successors of the Yervandids - Artashesids. And the eastern half, with the center of Nprkert, was the place of the coronation of all of them. The coronation was carried out by representatives of the indigenous Bagratuni dynasty. It is no accident that Tigran the Great chose his place of coronation the south-western part of Great Armenia and not the famous capital Artashat, built by his grandfather Artashes.

## References

1. **Arutyunjan N.** Biajnili (Urartu), Yerevan., 1970 **(In Russian)**.
2. **Sarkisjan D.** Strana Shubria, Yerevan., 1989 **(In Russian)**.
3. **Movsisi Xorenacvov** Patmut'yun Hayoc, Yerevan, 1981 **(In Armenian)**.
4. Hay zh'oghovrdi patmut'yun, HSSH GA hrat., Yerevan, 1971, h. 1 **(In Armenian)**.
5. **Djakonov I.** Assiro-vavilonskiye istochniki po istorii Urartu, «Vestnik drjevnej istorii», 1951, N 2-4 **(In Russian)**.
6. **Petrosyan S.** Aramanyaki vordinerə yev nranc tiruyt'nerə erradasut'yan tesankyunic, //HH GAA SHHH kentroni «Gitakan ash'xatut'yunner», N 10, 2007 **(In Armenian)**.
7. **Hmayakyan S.** Vani t'agavorut'yan petakan kronə, Yerevan, 1990 **(In Armenian)**.
8. **Adonc N.** Armenia v epoxu Justiniana, Yerevan, 1970 **(In Russian)**.
9. **Agatangehos,** Hayoc patmut'yun, Yerevan, 1983 **(In Armenian)**.
10. **Sebeosi** episkoposi patmut'yun Hayoc, Yerevan, 1939 **(In Armenian)**.
11. **Petrosyan S.** Daserə yev erradasut'yan drsevorunnerə hin Hayastanum, Yerevan, 2006 **(In Armenian)**.
12. **Qsenop'on,** Kyuropedia, t'argm. S. Krkyasharyani, Yerevan, 2000 **(In Armenian)**.
13. **Strabo,** Qaghec yev t'argmanec H. Ach'arryan, Yerevan, 1940 **(In Armenian)**.
14. **Appian.** Mitridates, <http://ancientrome.ru/antlitr/t.htm?a=1467012000> **(In Russian)**
15. **Sargsyan G.** Hellenistakan darashrjani Hayastanə yev Movses Xorenacin, Yerevan, 1966 **(In Armenian)**.
16. **P'avstosi Byuzandacvov** Patmut'yun Hayoc, bnagirə Q. Patkanyani, Yerevan, 1987 **(In Armenian)**.
17. **P'avstos Byuzandaci** Patmut'yun hayoc, t'argm. yev nerats. St.Malkhasyanci, Yerevan, 1968 **(In Armenian)**.
18. **Yeremyan S.** Hayastanə əst «Ashxarhacoyc»-i, Yerevan, 1963 **(In Armenian)**.

*Ընդունվել է՝ 24. 08. 2020*

*Գրախոսվել է՝ 05.10. 2020*

*Հանձնվել է տպ.՝ 20. 11. 2020*

### Տեղեկություններ հեղինակի մասին

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոնի  
գիտաշխատող, էլ. հասցե՝ vahe1996@mail.ru

ՀՏԴ՝ 93.94

ՇԻՐԱԿՑԻՆԵՐՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ XXդ. ՄԿՁԲԻՆ.  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐ, ԹԵ՞ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ<sup>1</sup>  
*Արմեն Հայրապետյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

**Բանալի բառեր՝** *Առաջին համաշխարհային պատերազմ, Ալեքսանդրապոլ, գաղթականներ, Ամերիկա, Ղազարապատ, Շիրակ, Ռիվերսայդի ցեմենտի գործարան, աղբ:*

1990-ական թվականների սկզբներից, պայմանավորված մի շարք արտաքին և ներքին պատճառներով, տարբեր ուղղություններով Շիրակից սկսվեց անկանոն մի արտագաղթ, որն ընդգրկեց հասարակության բոլոր խավերը և խիստ բացասական ազդեցություն ունեցավ մարզի սոցիալ-տնտեսական դրության և ժողովրդագրական պատկերի վրա: Գաղթելու արատավոր երևույթը վերջին 150 տարիներին շիրակցու համար դարձել է կենսակերպ:

Սույն հոդվածի շրջանակներում գիտական գրականության, ժամանակակիցների հուշերի և պարբերական մամուլի հաղորդումների համադրմամբ՝ առանձին քննության առարկա է դարձել XXդ. սկզբին Շիրակից դեպի ԱՄՆ սկսված արտագաղթի պատմությունը, ներկայացվել են շիրակցիների՝ հայրենի գավառը լքելու պատճառները, արտագաղթի մասշտաբները, ժամանակի առաջադեմ մտավո-

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 18SH-6A007 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

րականության վերաբերմունքն այդ երևույթի նկատմամբ: Զուգահեռաբար նաև լուսաբանվել է ԱՄՆ-ում հայտնված գաղթականության վիճակը:

**Նախաբան.** «Առասպելական» հարստությամբ օժտված այդ երկիրը հային գրավեց մոտ 170 տարի առաջ: Տնտեսական, քաղաքական ու կրոնական հանգամանքներից դրդված՝ պանդխտության ցուպը առաջինը ձեռքն առավ արևմտահայը՝ XIXդ. 50-ական թվականներին: Համիդյան «գուլում»-ի տարիներին անհատական տեղաշարժը վերածվեց զանգվածային գաղթի: Երիտթուրքական հեղաշրջումից հետո, երբ Օսմանյան քաղաքացիների համար հոշակվեցին «ժողովրդավարական ազատություններ», հայերի արտահոսքը կարճ ժամանակով թուլացավ: Սակայն, արդեն Ադանայի ջարդերից հետո (1909թ.) կյանքի ու գույքի անապահովությունը արևմտահային կրկին մղեց գաղթականության: Որպես հետևանք՝ մինչև Առաջին աշխարհամարտն Օսմանյան կայսրությունից Ամերիկա արտագաղթած հայերի թիվը հասավ 51.950-ի<sup>2</sup>:

XXդ. սկզբին հասավ Ամերիկա գաղթելու արևելահայի հերթը: Եթե արևմտահայը փախչում էր կրոնական ու ազգային հալածանքներից, ապա արևելահայի գաղթելու պատճառը հիմնականում տնտեսական էր՝ հողի սակավություն, ռոռզման ցանցի բացակայություն, բնակլիմայական անբարենպաստ պայմաններ, երկրագործության մեջ կիրառվող նահապետական մեթոդներ և այլն: Երևույթներ, որոնք գյուղացու մեջ մեռցրին նախաձեռնության ոգին, և նա, փրկության այլ ելք չգտնելով, դիմեց պանդխտության: «Գնում էին գիւղից և քաղաքից թողած տուն տեղ, ծնողներ, դեռատի կանայք ու զաւակներ,-գրում է «Ժայռ» պարբերականը,-գնում էին հանքերի մեջ թաղելու իրանց ջահիլ ջիւան կեանքը, բաժին դառնալու դժւարին աշխատանքների, որոնցից վաղուց ձեռք են քաշել ամերիկացի բանուորները»<sup>3</sup>:

Այդուհանդերձ, արևելահայերի հոսքը դեպի ԱՄՆ, ի հակադրություն արևմտահայերի, մեծ մասշտաբներ չընդունեց: Ըստ ԱՄՆ-ի Գաղթականական հանձնախմբի տվյալների՝ մինչև Առաջին աշխարհամարտը երկիր մուտք գործած արևելահայերի թիվը կազմեց մոտ 4.500 մարդ<sup>4</sup>: Ընդ որում, ճնշող մեծամասնությունը գաղթել էր Ալեքսանդրապոլից և Արևելյան Շիրակի գյուղերից: «1904 թուականից յետոյ՝ Շիրակի երիտասարդութեան մի մասը գաղթեց հեռաւոր

<sup>2</sup> Malcom V.M., The Armenians in America. Boston, Chicago, 1919, p. 65.

<sup>3</sup> Փայլակ, Գաղթականական հոսանք դեպի Ամերիկա//«Ժայռ», Ալեքսանդրապոլ, 1910, N 79, 17 հոկտեմբերի, էջ 1-2:

<sup>4</sup> Մ2., 1903թ. յունւարից մինչեւ 1914թ. փետրւարի 9 Ամերիկայի զանազան նահանգներում սպանւած եւ վիրաւորւած կովկասահայերը//«Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1914, N 16, 29 ապրիլի, էջ 2-3:

Ամերիկա,-գրում է Ս. Գալոյանը,-մի ժողովուրդ՝ տոկուն նկարագրի տեր, որի պայերը չնայած զանազան բռնապետների ծանր լուծին կառջած մնացել են Ալաբեազի կանաչ լանչքին եւ Ախուրեանի ավերին, նրա զուակները դիմեցին կամաւոր գաղթի»<sup>5</sup>: Դրանք 18-35 տարեկան երիտասարդներ էին, հիմնականում ամուսնացած, որոնք արագ հարստանալու և հայրենիք վերադառնալու հույսով թողեցին իրենց ընտանիքներն ու շտապեցին Ամերիկա<sup>6</sup>:

*Շիրակցիների արտահոսքը դէպի Ամերիկա XX դ. սկզբներին*

Ի՞նչն էր ստիպում շիրակցուն հսկայական դժվարությունների գնով հատել օվկիանոսը, որո՞նք էին գաղթի իրական պատճառները:

Հայրենի գավառից արտահոսքի գլխավոր պատճառը տնտեսական ողորմելի վիճակն էր, որում հայտնվել էր շիրակցին: Շատակեր Շարայի հացառատ Շիրակը, որ ժամանակին իր բերքաշատ դաշտերով և անուշահամ աղբյուրներով կերակրում էր տասնյակ հազարավորների, XX դ. սկզբին հայտնվել էր տնտեսական ծայրահեղ ծանր վիճակում: Ծայր աղքատությունը ստիպում էր պարտքերի մեջ թաղված գյուղացուն թողնել սիրելիներին, տունն ու տեղը, երկրագործական հալալ աշխատանքը և, պանդխտության ցուպը ձեռքն առած, ուղևորվել Ամերիկա: «Եթէ քառասուն կապով էլ կապէք, Շիրակի երիտասարդ ուժերը թոչնչու են ծովերի վրայից Ամերիկա», -համոզված գրում էր «Ախուրեան»-ը 1913թ.<sup>7</sup>:

Առաջնային խնդիրը սակավահողությունն էր:

Ալեքսանդրապոլի գավառի ազգաբնակչության թիվը 1840-1914թթ. ընթացքում աճեց մոտ 6 անգամ՝ 38000-ից<sup>8</sup> հասնելով 223344-ի<sup>9</sup>, մինչդեռ հողային ֆոնդը մնաց նույնը: 1906թ. կատարված հաշվումների համաձայն՝ գավառի գյուղական տնտեսությունների 57%-ն ուներ 6 օրավարից պակաս հող (3 հա-ից պակաս)<sup>10</sup>, 40%-ը՝ 10-6 օրավար, և միայն 3%-ն ուներ 10 օրավարից ավելի: Եվ դայն դեպքում, երբ 1906թ. գավառի ազգաբնակչությունը հաշվում էր 186934

<sup>5</sup> Գալոեան Ս., Շիրակի հայերի գաղթը դէպի Ամերիկա, Լու Անջելու, Չալիֆօրնիա, 1950, էջ 57:

<sup>6</sup> Mirak R., Torn Between Two Land. Armenians in America, 1890 to World War I. Cambridge, 1983, p. 58.

<sup>7</sup> Գիւղ քահանա, Նոր հասանք դէպի Ամերիկա, «Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1913, N 9, 24 մարտի, էջ 2:

<sup>8</sup> Հայաստանի ազային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 82, 85, 86, 87:

<sup>9</sup> Пространство и население губернии и областей Кавказского края к 1-му января 1914г. (каренное и вр.-проживающее)//“Кавказский Календарь на 1914 год”, Тифлис, 1915, отд. II, стр. 250-252.

<sup>10</sup> Երևանի նահանգի լեռնային գավառներում 1 օրավար հողը հավասար էր 1/2 դէսյատինի կամ 0,5464 հեկտարի (Մանրամասն տե՛ս Ս. Зелинский Экономический быт государственных крестьян в Шорагеле Александропольского уезда Эриванской губернии, «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», Тифлис, 1885, т. I, с. 36, 63-64):

մարդ<sup>11</sup>: 1906-1914թթ. ընթացքում բնակչության թիվն աճեց 36410-ով (16%-ով), իսկ հողի քանակը, ինչպես արդեն նշեցինք, մնաց անփոփոխ: «Այն գիւղը, որ մի քանի տարի առաջ 30 ծուխ ուներ, այժմ դառել է 100 ծուխ, եթե առաջ գիւղացին ուներ 20 օրաւար հող և 4 հոգանոց ընտանիք, ապա տարիներ անց ընտանիքի անդամների թիւը դարձել է 11, իսկ հողի քանակը նւագել է: Եվ ուրեմն ոնց ապրի գիւղացին,-հարցնում է «Մշակ»-ը,-եթե տարվա մէջ 4 ամիս պարապմունք ունի, իսկ 8 ամիս անգործ պառկած ուտում է»<sup>12</sup>:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ հողի սակավության պատճառով 1880-1914 թթ. Ալեքսանդրապոլի գավառը լքեց շուրջ 40.000 մարդ<sup>13</sup>: Եթե սրան հավելենք նաև բնական պատահարների անվերջանալի շարանը, որ յուրաքանչյուր տարի պատուհասում էր շիրակցուն՝ կարկտահարություն, տարեցտարի կրկնվող երաշտ ու ոռոգման ջրի բացակայություն, ապա Շիրակի գյուղացիական տնտեսությունների թշվառ պատկերը, կարծում ենք, ամբողջական տեսք կստանա:

Ինդրով մտահոգ արևելահայ մամուլի էջերում XXդ. սկզբի Շիրակի գյուղերից յուրաքանչյուրի մասին կարելի է մեկ տասնյակից ավել թղթակցություններ գտնել հետևյալ բովանդակությամբ. «Սոնգիրլի գիւղը բաղկացած է 170 տնից, որի բնակիչների թիւը հասնում է 1300-ի: Վերջին տարիներին բերքը գիւղում շատ վատ է, ցանած արտերը չեն հնձում երաշտի պատճառով: Գիւղը զուրկ է նաև ջրի կողմից, առի ջրի երես գիւղացիները տեսնում են միայն ապրիլ և մայիս ամիսներում: Սոնգիրլւայ ժողովուրդը գտնում է վերին աստիճանի չքաւոր դրութեան մէջ: Ամբողջ գիւղում 20-25 տուն հազիւ է կարողանում սեփական միջոցներով ապրուստ հայթայթել: Գիւղը դատարկել է երիտասարդներից: Հոսանքը սկսել է Ամերիկա, Թիֆլիս, Բագու և Ռուսաստան: Ամիս չի լինում, որ 10-15 մարդ դուրս չգայ գլխաւորապէս դէպի Ամերիկա<sup>14</sup>:

Ծանր տնտեսական վիճակը հանգեցրեց շիրակցու՝ հողի նկատմամբ ունեցած վերաբերմունքի փոփոխության: «Գեղջուկի համար հողը ներկայումս այն չէ, ինչ որ էր առաջ,-գրում է Հ. Տեր-Հակոբյանցը,-այժմ հողի վրայ նա չի նայում որպէս իրեն կերակրող հարազատ մօր, դրա համար էլ այլևս չի կապւած

<sup>11</sup> Памятная книжка Эриванской губернии на 1908 год, под редакцией секретаря Эриванского губернского статистического комитета, Члена Губернского по поселянским делам присутствия В.Е. Василева, издание Эриванского губернского статистического комитета, Эривань, 1908, отд. III, стр. 2-3, 8-9, 22-23, 46, 100-117:

<sup>12</sup> **Տէր-Մելիքիսեղէկեան Սարիբեգ**, Դէպի Ամերիկա, //Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1913, N 65, 24 մարտի, էջ 2:

<sup>13</sup> Գաղթի խնդիրը // «Արեւ» լրագիր, Ալեքսանդրապոլ, 1914, N 5, 1 յունիսի, էջ 2:

<sup>14</sup> **Կուրդիներէն Ա.**, Թղթակցութիւն. Սոնգիրլի գիւղ // «Գաւառի ձայն» լրագիր, Ալեքսանդրապոլ, 1913, N 5, 29 դեկտեմբերի, էջ 4:

հողի հետ: Ընդհակառակը, նա պատրաստ է հենց առաջին պատեհ առիթով թողնելու հողը և ուրիշ զբաղմունքների մեջ իր ապրուստը որոնելու»<sup>15</sup>: Գրեթե 80% գյուղական ազգաբնակչությամբ գավառում մեկ անձին բաժին ընկնող տարեկան միջին եկամուտը կազմում էր ընդամենը 36ռ. 44 կոպեկ<sup>16</sup>, այն դեպքում, երբ Ամերիկայից եկած լուրերը հավատացնում էին, թե կարելի է օրական մինչև 5 ռուբլի եկամուտ ունենալ: «Էլ ո՞ր ախմախը կարող է համբերել, էլ ո՞ր շիրակցու քունը կը տանի», - հարցնում է «Մշակ»-ը<sup>17</sup>:

Հայրենի գավառից հեռանալը նոր երևույթ չէր: Ժամանակակիցների հավաստմամբ՝ XX դարասկզբին շիրակցիների կարելի էր հանդիպել Մանջուրիայից մինչև Եգիպտոս և Ամերիկա<sup>18</sup>:

Երևանի նահանգի հյուսիսային այս գավառից հայ ազգաբնակչության զանգվածային արտահոսքը սկսվեց 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո, երբ Ալեքսանդրապոլ քաղաքից մեծ թվով հայեր մշտական բնակության տեղափոխվեցին նորանվաճ Կարս, Կաղզվան, Սարիղամիշ, Օլթի և Արդահան: Հեռացող մահմեդականներից գնելով վերջիններիս պատկանող անշարժ գույքը՝ սրանք կարճ ժամանակահատվածում դարձան կրպակների, վաճառատների, հյուրատների ու արհեստանոցների տերեր: Հաջորդ երկու տասնամյակների ընթացքում ալեքսանդրապոլցիների թիվն այդ քաղաքներում հասավ մոտ 2000 ընտանիքի, «որոնք իրենց բոլոր յարաբերությունները կտրած են իրենց ծննդավայրից, ոչ տուն ու կալւածք ունին, ոչ էլ ուրիշ որևէ առնչութիւն»: Ըստ Ատրպետի՝ «թէն սրանք կամերալնիի մէջ արձանագրւած էին որպէս Ալեքսանդրապոլցիներ, քանի որ դժարութիւններ ունեն Կարսի շրջանի բնիկ գրւելու համար, բայց երբ առիթից օգուտեն, բոլորն էլ դուրս կգան մեր քաղաքացիութիւնից»<sup>19</sup>:

Նույն ժամանակահատվածում ևս 2000 ընտանիքներ, հիմնականում Ալեքսանդրապոլից և հարակից գյուղերից, մշտական բնակություն հաստատելու նպատակով տեղափոխվեցին Թիֆլիս, Բաքու, Անդրկասպյան շրջաններ և նույնիսկ Սիբիր:

<sup>15</sup> **Տէր-Յակովբեանց Յ.**, Միսլ ճանապարհ//«Ժայռ», Ալեքսանդրապոլ, 1911, N 12, 17 փետրվարի, էջ 1:

<sup>16</sup> ԱՄՆ-ում մեկ անձին բաժին ընկնող տարեկան միջին եկամուտը 1910թ. դրությամբ կազմում էր 346ռ., Անգլիայում՝ 273ռ., Գերմանիայում՝ 184ռ., Բուլղարիայում՝ 104ռ., Ռուսաստանի կենտրոնական նահանգներում՝ 84ռ. (Մանրամասն տե՛ս **Տէր-Յակովբեան Յ.**, Ալեքսանդրապոլի գաւառի տնտեսական վիճակը//«Ժայռ», Ալեքսանդրապոլ, 1910, N 75, 2 հոկտեմբերի, էջ 2):

<sup>17</sup> **Տէր-Մելիքիսեղեկեան Սարիբեգ.** Դէպի Ամերիկա//«Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1913, N 65, 24 մարտի, էջ 2:

<sup>18</sup> **Գիւղ քահանա,** Նոր հոսանք դէպի Ամերիկա//«Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1913, N 9, 24 մարտի, էջ 3:

<sup>19</sup> **Ատրպետ,** Գաղթը//«Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1911, N 6, 28 յունւարի, էջ 1:

Նոր երևույթ չէր շիրակցու համար նաև արտագնա աշխատանք կոչվածը: Պանդխտության ցուպին նա դիմեց XIXդ. 80-ական թվականների սկզբներից: Գավառի հարավային գյուղերից, իրենց սայլերով գնում էին հիմնականում Երևան ու Կարս՝ երկար ժամանակով աշխատելու: XXդ. սկզբին, պայմանավորված պարբերաբար կրկնվող անբերրիությամբ և գյուղատնտեսական ապրանքների թանկությամբ, արտագնա աշխատանքի մեկնողների թիվն առավել մեծ մասշտաբներ ընդունեց: «1906-1910 թվերին շիրակցիներն այնքան շատ էին Երևանում, որ տեղացիները ուղղակի հոգնել էին «անօթի շորագեացիների» ձեռքից,-գրում է «Ախուրեան»-ը,-սրանք ցերեկը աշխատում էին դուրսը, իսկ աշնան ցուրտ գիշերները իրանց յոզնած ու ջարդած մարմնին հանգստութիւն էին տալիս Երևանցիների տների բակերում (չարդաղներում), դուրսը, ուր ոչ տաք թոնիր էր լինում և ոչ էլ փափուկ անկողին»<sup>20</sup>:

Արտագնա աշխատանքի ամենատարածված ձևը քաղն էր: Հունիսից մինչև հոկտեմբեր Երևանի, Թիֆլիսի և Ելիզավետպոլի նահանգների տարբեր գյուղերում կարելի էր հանդիպել հարյուրավոր շիրակցի երիտասարդների, որոնք «խմբերով գերանդիներն ուսերին անցնում են գիւղից-գիւղ, կատակներ անելով, առոյգ, զւարթ, իսկ վերադարձին շատերը թոյլ, դալկացած, տենդով բռնած՝ ամիսներով գերի են դառնում դողերոցքին»<sup>21</sup>:

XXդ. սկզբին կապիտալիստական հարաբերությունների զարգացումն ու բանվոր դասակարգի ձևավորումը շիրակցու համար արտագնացության նոր հորիզոններ բացեցին՝ Նովոռոսիյսկ, Տուապսե, Գելենջիկ, Սուխում, Կավկասկ, Արմավիր և այլուր: Շատ էին հատկապես Բաքու մեկնողները: «Տեղի նախթ աշխարհը իր մագուտի հորերով ու զաւօղներով... գրաւել էր Շիրակեցի բանուորին, արհեստաւորին ու ինտելլիգենտ դասին, թէ՛ գիւղերից, և թէ՛ Ալեքսանդրապոլ քաղաքից», - վկայում է «Ախուրեան»-ը<sup>22</sup>:

Սոտավորապես նույն տարիներին սկսվեց նաև շիրակցիների հոսքը դեպի Ամերիկա: Այդ երկրի մասին տեղեկությունները տարածվեցին Ալեքսանդրապոլի գավառ արտաքսված ռուս աղանդավորներից, ովքեր XIX դարավերջին գաղթեցին Կանադա (Վինիպեգ) և Միացյալ Նահանգներ (Լոս Անջելես), ապա մտերիմներին ուղարկած հուսադրող նամակներով հորդորեցին վերջիններիս հետևել իրենց օրինակին<sup>23</sup>: Հայաբնակ առաջին գյուղը, որ զանգվածաբար անցավ ԱՄՆ, Կարսից հարավ-արևելք ընկած Կարակալան էր: 1877-1878թթ. ռուս-

<sup>20</sup> Գիւղ քահանա, Նոր հոսանք դեպի Ամերիկա/«Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1913, N 9, 24 մարտի, էջ 3:

<sup>21</sup> Նույնը:

<sup>22</sup> Նույնը:

<sup>23</sup> Mirak R., Torn Between Two Land. Armenians in America, 1890 to World War I. Cambridge, 1983, p. 49.

թուրքական պատերազմից հետո հիմնված գյուղը բնակեցված էր Ալեքսանդրապոլից և հարակից գյուղերից գաղթած բողոքական հայերով, և ըստ Ս. Գալոյանի՝ հենց «կրօնն էլ եղավ պառճառը, որ նրանք գաղթեն դեպի Ամերիկա, որովհետև այդ կրօնը նոր էր Հայաստանում եւ պետութեան կողմից հալածուում էր»<sup>24</sup>: Առաջինը՝ 1904թ. գաղթեց Մուշեղյանների գերդաստանը, ապա նաև՝ համագյուղացիները:

Ալեքսանդրապոլի գավառից ԱՄՆ անցած առաջին հայը ղազարապատցի Բագրատ Հարությունյանն էր, որ, հետևելով իր մորեղբայրներին՝ Մուշեղյաններին, ծնողներից գաղտնի հեռացավ տնից և մի քանի ամիս անց հայտնվեց Լոս Անջելեսում: «Սրանից էլ սկսեց Շիրակի բոլոր գիւղերի երիտասարդութեան շարանը դեպի Ամերիկա», - գրում է Ս. Գալոյանը<sup>25</sup>: Ղազարապատից «Ամերիկյան տենդը» անցավ Բաբոլի, ապա տարածվեց ողջ գավառով մեկ: Այնպես որ արդեն 1908-1909թթ. Ալեքսանդրապոլից, Խլի Ղարաքիլիսայից, Տավշանդշլաղից, Սվանվերդիից, Ղազարապատից, Բաբոլիից, Թալիբօղլիից, Իմիրխանից, Բաշգյուղից, Ղութնիղըշլաղից, Հոռոմից կամ Ալիխանից գաղթածների կարելի էր հանդիպել Բոստոնում, Չիկագոյում, Ֆրեզնոյում, Ֆիլադելֆիայում, Ռիվերսայդում և այլուր: Ցավոք, ո՛չ ժամանակի պարբերական մամուլի էջերում, ո՛չ էլ Հայաստանի ազգային արխիվի համապատասխան ֆոնդերում մեզ չհաջողվեց վիճակագրական տեղեկություններ գտնել գաղթածների ընդհանուր թվի մասին<sup>26</sup>:

Հատկապես մեծ էր շիրակցիների թիվը Լոս Անջելեսում: Տեղավորվելով Բոյլ-Հայթս թաղամասում՝ առաջին գաղթականները հիմնականում զբաղվում էին մանրածախ առևտրով ու աղբահանությամբ («րըբիշ»): Ընդ որում, առավել հարգված էր վերջին զբաղմունքը, որի մենաշնորհը նրանք համառ պայքարում խլեցին մեքսիկացիներից, սևամորթներից, իռլանդացիներից ու իտալացիներից: Ժամանակակիցների հաշվումներով՝ ոլորտում զբաղված էին շուրջ 200 շիրակցիներ (100 կառք): Պայմանավորվելով բնակելի տների և խանութների սեփականատերերի հետ՝ սրանք հավաքված աղբն ամեն օր դուրս էին բերում քաղաքից և հատուկ պաշտոնյայի ներկայությամբ այրում: Իսկ եթե որևէ մեկը որոշում էր

<sup>24</sup> Գալոյան Ս., Շիրակի հայերի գաղթը դեպի Ամերիկա, Լոս Անջելես, Կալիֆորնիա, 1950, էջ 65:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 77:

<sup>26</sup> Շիրակցիների երկրորդ մեծ գաղթը դեպի ԱՄՆ սկսվեց 1921թ. և շարունակվեց մինչև 1923թ.: Աշխարհամարտի տարիներին ԱՄՆ-ում մնացած երիտասարդները տեղավորվեցին և քաղաքացիություն ստացան, իսկ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո բոլոր ջանքերը գործադրեցին իրենց հարազատներին ևս ԱՄՆ տեղափոխելու համար:

«գործից» հեռանալ, ապա իր կառքը, ձիերը և հաճախորդներին որոշակի դրամական փոխհատուցման դիմաց «փոխանցում էր» մեկ ուրիշին<sup>27</sup>:

Իրենց անձնուրաց աշխատանքի շնորհիվ շատերը ոչ միայն արժանացան տեղական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքին, այլև հարստացան ու ընդլայնեցին «գործը»՝ հաջողությամբ մրցակցելով այլազգերի հետ: Օրինակ՝ ալեքսանդրապոլցի Ջ. Աղաջանյանն իր ընկերության մասնաճյուղերը հիմնեց Սանտա Աննայում, Ման Փեդրոյում, Ուիլմինգթոնում, Մանտա Մարիայում և այլուր:

Սյդուհանդերձ, շիրակցիների «հաջողություններն» աղբահանության ոլորտում միանշանակ չընդունվեցին Լոս Անջելեսի հայության շրջանում: Օրինակ՝ նույն քաղաքում ապրող արևմտահայերը, որ գերազանցապես առևտրականներ էին, նորեկների այս նախասիրության նկատմամբ արգահատելի վերաբերմունք ունեին՝ գտնելով, որ «զիբիլճին» վարկաբեկում է հայի անունը:

Շիրակցիների հոսքն «Ավետյաց երկիր» հատկապես մեծ մասշտաբներ ընդունեց 1910-1914 թթ.: Գաղթելու ձգտումից նրանց հետ չպահեցին նույնիսկ ԱՄՆ-ում պարբերաբար կրկնվող տնտեսական ճգնաժամերի ու գործազրկության բարձր մակարդակի մասին մամուլում տարածված լուրերը: Օրինակ՝ «Գաւառի ձայն»-ն իր ընթերցողին տեղեկացնում էր, որ 1913թ.՝ դեմոկրատների իշխանության գալուց հետո, մեծ գործարանատերերն ի նշան բողոքի զանգվածաբար փակել էին գործարանները՝ միլիոնավոր բանվորների մատնելով աղքատության: Տնտեսական ճգնաժամի պատճառով միայն Չիկագոյում 1914թ. փետրվար ամսի դրությամբ գործազուրկների թիվը հասել էր 300.000-ի: Նյու Յորքում այդ թիվը կրկնակի մեծ էր: Պարբերականի կարծիքով՝ աղաղակող այս փաստերը պիտի ստիպեին հայերին դադարեցնել կորստաբեր գաղթը, պիտի ստիպեին հասկանալ, որ «Ամերիկան առաջւանը չէ»<sup>28</sup>: Բայց, ապարդյուն: Ըստ մեր ունեցած տվյալների՝ 1913-1914թթ. նորեկների թիվը նվազելու փոխարեն եռապատկվեց: Օրինակ՝ Լոս Անջելեսում շիրակցիների թիվը հասավ 1351-ի<sup>29</sup>:

Տեղական լեզվին ու սովորություններին անձանոթ, նյութական միջոցներից և որևէ գործ ձեռնարկելու ընդունակություններից զուրկ շիրակցին այժմ ստիպված էր ցածր վարձատրությամբ կատարել ամերիկացու համար անհրա-

<sup>27</sup> XXդ. սկզբին «րըբիշի» գործ սկսելու համար անհրաժեշտ էր 250-300 դոլար (մոտ 500-600ռ.), և շատերը մի քանի տարի աշխատում էին գործարաններում այդ գումարը հավաքելու համար: Առաջին աշխարհամարտի նախօրեին այդ թիվը հասավ 1500 դոլարի (Մանրամասն տե՛ս **Remmius**, Ամերիկեան նամակներ//«Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1914, N 63, 23 մարտի, էջ 3):

<sup>28</sup> Մի գաղթեք Ամերիկա//«Գաւառի ձայն» լրագիր, Ալեքսանդրապոլ, 1914, N 23, 6 մարտի, էջ 1:

<sup>29</sup> **Remmius**, Ամերիկեան նամակներ, «Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1914, N 63, 23 մարտի, էջ 3:

պույր աշխատանք Միսսուրի նահանգի Բսթ Սենթ Լուիսի պողպատի գործարաններում, Մինեսոտայի Սենթ Փոլ քաղաքի երկաթուղու շինարարության վրա, Ռոդ Այլենդի հանքերում կամ Ռիվերսայդի ցեմենտի գործարանում: Այսինքն՝ աշխատել այնտեղ, ուր ամենից շատ էր սպառվում մարդկային կյանքը, մաշվում ֆիզիկական ուժը, ուր սովորական երևույթ էր ոչ բնական մահը: Երբեմն էլ հացի կարիքը ստիպում էր դիմել շտրեյբրեյխության՝ փոխարինել գործադուլավոր բանվորներին, ինչը մեծ թշնամանքի տեղիք էր տալիս տեղացիների մոտ<sup>30</sup>:

Հատկապես ծանր էր Ռիվերսայդի ցեմենտի գործարանում աշխատող 300 դուգքյանդցիների վիճակը, որ ստիպված էին փոշու և թունավոր օդի պայմաններում 94 փաունդ (43կգ) կշռող ցեմենտով բեռնված պարկեր տեղափոխել: Բազմաթիվ հայերի համար «կենդանի մահ» էր նաև Ռոդ Այլենդի ածխահանքերի և ներկի գործարանների խոնավ ու քիմիական նյութերով հագեցած օդում աշխատելը:

*1903թ. յունւարից մինչև 1914թ. փետրւարի 9 Ամերիկայի զանազան նահանգներում սպանւած եւ վիրաւորւած կովկասահայերը<sup>31</sup>*

| N  | Ճննդավայրը | անձը                | դեպքի վայրը          | տարեթիվը       | դեպքը  | վնասի փոխհատուցում              |
|----|------------|---------------------|----------------------|----------------|--|---------------------------------|
| 1. | Տավշաղշլաղ | Հակոբ               | Լիբավայից -Նյու Յորք | 1913 հունվար   | Կովի է բռնվել նավաստիների հետ, նետվել օվկիանոսն ու խեղդվել |                                 |
| 2. | Բողազքեասն | Երանոս Մուրադյան    | Չիկագո               | 1913թ. փետրվար | Գործարանում վթարի պատճառով կորցրել է ոտքը                  |                                 |
| 3. | Ղափի       | Կարապետ Առուշանյան  | Սենթ Լուիս           | 1913թ. փետրվար | Գործարանում կոտրել է ոտքը                                  | Ստացել է 400 դոլար փոխհատուցում |
| 4. | Բաբոլի     | Հարություն Հակոբյան | Լոս Անջելես          | 1913թ. փետրվար | Գործարանում կորցրել է ձեռքի մատը                           |                                 |
| 5. | Արթիկ      | Ստեփան Գրիգորյան    | Նևադա                | 1913թ. փետրվար | Թունելի շինարարության ժամանակ դարձել է փլուզման զոհ        |                                 |
| 6. | Փիրթիքեան  | Մկրտիչ Գրիգորյան    | Լոս Անջելես          | 1913թ. մարտի 7 | Գործարանում կուրացել է մեկ աչքից                           |                                 |
| 7. | Բողազքեասն | Գրիգոր Դանիելյան    | Սենտ Լուիս           | 1913թ. ապրիլ   | Երկաթի գործարանում կորցրել է ոտքի մատները                  | Ստացել է 275 դոլար փոխհատուցում |

<sup>30</sup> Մուշեղ Եպիսկոպոս, Ամերիկահայ տարեցոյցը, Ա տարի, 1912, Պոստոն, էջ 194:

<sup>31</sup> Մշ., 1903թ. յունւարից մինչև 1914թ. փետրւարի 9 Ամերիկայի զանազան նահանգներում սպանւած եւ վիրաւորւած կովկասահայերը//«Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1914, N 16, 29 ապրիլի, էջ 2-3:

**Արմեն Հայրապետյան**

|     |               |                      |               |                    |  |                                  |
|-----|---------------|----------------------|---------------|--------------------|--|----------------------------------|
| 8.  | Արթիկ         | Անհայտ               | Չիկագո        | 1913թ. ապրիլ       | Անհայտ պայմաններում սպանվել է երկաթի գործարանում                     |                                  |
| 9.  | Մոլլա Գյոկչա  | Խաչիկ Պոզիկյան       | Լոս Անջելես   | 1913թ. ապրիլ       | Դիակը հայտնաբերվել է Լոս Անջելեսի մոտ                                |                                  |
| 10. | Տավշաղշլաղ    | Անհայտ               | Ռիվերսայդ     | 1913թ. ապրիլ       | Անհայտ պայմաններում մահացել է էլեկտրական սարքավորումների գործարանում |                                  |
| 11. | Փիրթիբեան     | Մատթեոս Մուրադխանյան | Լոս Անջելես   | 1913թ. մայիսի      | Հրագենային վնասվածք է ստացել   |                                  |
| 12. | Տավշաղշլաղ    | Գեղամ Զաքարյան       | Րիվերսայդ     | 1913թ. հուլիս      | Սպանվել է հրագենային կրակոցից  |                                  |
| 13. | Հաջինազար     | Անհայտ               | Չիկագո        | 1913թ. հուլիս      | Մահացել է երկաթի գործարանում պայթյունի հետևանքով                     |                                  |
| 14. | Ալեքսանդրապոլ | Անհայտ               | Լոս Անջելես   | 1913թ. օգոստոս     | Գործարանում կորցրել է ձեռքի մատները                                  |                                  |
| 15. | Թումարտաշ     | Վաղարշակ Նիկոլյան    | Բուենոս Այրես | 1913թ. օգոստոս     | Սպանվել է անհայտ պայմաններում  |                                  |
| 16. | Տավշաղշլաղ    | Հովիկ                | Բուենոս Այրես | 1913թ. սեպտեմբեր   | Սպանվել է անհայտ պայմաններում  |                                  |
| 17. | Սվանվերդի     | Արմենակ Հակոբյան     | Լոս Անջելես   | 1913թ. հոկտեմբեր   | Գործարանում ստացել է ողնաշարի կոտրվածք                               | Ստացել է 200 դոլար փոխհատուցում  |
| 18. | Ղութնիդշլաղ   | Գեղամ Հարությունյան  | Չիկագո        | 1913թ. հոկտեմբեր   | Դարձել է երկաթուղային վթարի զոհ                                      |                                  |
| 19. | Եզանլար       | Արշակ Գևորգյան       | Լոս Անջելես   | 1913թ. հոկտեմբեր   | Ստացել է գանգի մեխանիկական վնասվածք                                  | Ստացել է 1000 դոլար փոխհատուցում |
| 20. | Արթիկ         | Սմբատ Տոնակալյան     | Չիկագո        | 1913թ. դեկտեմբեր   | Երկաթի գործարանում կորցրել է ոտքերը                                  |                                  |
| 21. | Արթիկ         | Ներսես Փինթյան       | Չիկագո        | 1913թ. դեկտեմբեր   | Երկաթի գործարանում կոտրել է ոտքը                                     |                                  |
| 22. | Տավշաղշլաղ    | Հովհաննես Տոնոյան    | Ռիվերսայդ     | 1914թ. փետրվարի 20 | Գործարանում կորցրել է աջ ձեռքի մատները                               |                                  |

Համընդհանուր գործազրկության պայմաններում շիրակցիներին հաջողվում էր գերազանցապես կաշառքի միջոցով մշտական աշխատանք գտնել նույնիսկ արդյունաբերական խոշոր գործարաններից զուրկ Լոս Անջելեսում: «Շիրակցիները առաջին գործաւոր տարրն էին, որ ստեղծեցին գործարանների վերակացուներին կաշառելու աղտոտ սովորութիւնը, -գրել է «Մշակ»-ը,-տալիս էին օղի, սիգար, ժամացոյց, դրամ, շատ տեղերում 20-30 դոլար ուտեցնելով կարողանում էին գործ առնել»<sup>32</sup>:

Ի դեպ, կաշառատվության արատավոր երևույթը շուտով վերածվեց համընդհանուր ախտի՝ ամենուրեք հայերի դեմ հանելով այլազգի բանվորներին:

*Մշտական աշխատանքով ապահովված շիրակցիների թիվը*

*Լոս Անջելեսում 1914թ. դրությամբ*<sup>33</sup>

| <i>N</i> | <i>ոլորտը</i>    | <i>գրադվածների թիվ</i> | <i>N</i> | <i>ոլորտը</i> | <i>գրադվածների թիվ</i> |
|----------|------------------|------------------------|----------|---------------|------------------------|
| 1.       | աղբահանություն   | 200 մարդ               | 10.      | հավաքարար     | 5 մարդ                 |
| 2.       | ցեմենտի գործարան | 200 մարդ               | 11.      | լվացարար      | 12 մարդ                |
| 3.       | մետաղաձուլարան   | 180 մարդ               | 12.      | դերձակ        | 6 մարդ                 |
| 4.       | սպակու գործարան  | 30 մարդ                | 13.      | կոշկակար      | 3 մարդ                 |
| 5.       | թղթի գործարան    | 25 մարդ                | 14.      | մանրավաճառ    | 11 մարդ                |
| 6.       | կաշվի գործարան   | 35 մարդ                | 15.      | ժամագործ      | 1 մարդ                 |
| 7.       | փայտամշակում     | 15 մարդ                | 16.      | հացագործ      | 5 մարդ                 |
| 8.       | կառապան          | 18 մարդ                | 17.      | դարբին        | 2 մարդ                 |
| 9.       | դռնապահ          | 3 մարդ                 |          |               |                        |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 751 մարդ         |                        |          |               |                        |

Ժամանակի առաջադեմ մտավորականությունը դեմ էր Մայր հայրենիքից երիտասարդ ուժերի արտահոսքին: «Գաւառի ձայն», «Ախուրեան», «Արագած», «Արեւ», «Տայր», «Մշակ», «Հորիզոն» և այլ պարբերականների էջերից առանձին հոդվածներով, թղթակցություններով ու խմբագրականներով նրանք բազմիցս անդրադարձել են Շիրակի դաշտից դեպի Ամերիկա սկսված արտագաղթի խնդրին, ներկայացնելով արտագնա աշխատանքի մեկնելու կորստաբերությունը՝ փորձել են հետ պահել գյուղացուն այդ կործանարար քայլից, լուսաբանել են Ամերիկայում առկա տնտեսական խնդիրներն ու այդ երկրում հայտնված հայության վիճակը, սթափվելու կոչ են արել երևակայական խոստումներով հափշտակված ժողովրդին: «Հայ գիւղացի, Ամերիկայից եկած դոլլարները չեն, որ պետք է բարելաւեն քո դրութիւնը,-գրել է «Գաւառի ձայնը»,-անձայր կարիքի առաջ դրանք կհալւեն, որպէս ձիւնը արևի տաքութիւնից»<sup>34</sup>:

<sup>32</sup> Մշ., նշվ. աշխ., էջ 2-3:

<sup>33</sup> Remmius, Ամերիկեան նամակներ, «Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1914, N 63, 23 մարտի, էջ 3:

<sup>34</sup> Միսլ ճանապարհ//«Գաւառի ձայն» լրագիր, Ալեքսանդրապոլ, 1914, N 9, 17 յունւարի, էջ 2:

Մամուլը ներկայացրել է նաև արտագաղթը խթանող հիմնական պատճառները. ծայրահեղ աղքատություն՝ պայմանավորված սակավահողությամբ և գյուղատնտեսության հետամնացությամբ: «Ալեքսանդրապոլի գաւառացին, եթէ նոյն իսկ ուզենա էլ անկարող է երկրագործութիւնից հնարաւոր չափով օգտուել և հողի տւածով բաւականանալ,-համոզված էր Հ. Տեր Հակոբյանը,-որովհետև նա տգէտ է, անձանօթ գոյութեան կռի համար գիտութեան ընծայած զենքերին, չգիտէ հողի մշակութեան ու շահագործման աւելի արդիւնաւոր միջոցներ քան այն, ինչ որ ժառանգել է դեռ նախապատմական ժամանակներից»<sup>35</sup>:

Ի դեպ, Հ. Տեր Հակոբյանը համոզված էր, որ տնտեսականից գատ՝ կար մեկ այլ պատճառ ևս, որ շիրակցուն ստիպում էր գաղթել: «Մեր գիւղացի ժողովուրդը կամաց-կամաց սկսում է դուրս գալ իր նախկին խաւար վիճակից,-գրել է նա,-այդ յառաջադիմութեան հետ միասին աւելանում են նաև նրա կենսական պահանջները, որոնց այլևս բաւարարութիւն տալ չեն կարողանում հողի ներկայ նահապետական ձևի մշակութիւնից ստացւած արդիւնքը»<sup>36</sup>:

Վերջապէս, հողագուրկ և պարտքերի մեջ թաղված գյուղացու վրա մոգական ազդեցություն էին թողնում «Նոր Աշխարհից» վերադարձածների պատմությունները օվկիանոսից այն կողմ իրենց սպասող հրաշքների մասին: Ցավոք, ոչ մեկը գործնականում չփորձեց ստուգել այդ լուրերի իսկությունը: Այնպէս որ նույնիսկ Հ. Թումանյանն էր հավատացած, որ բանվորն ԱՄՆ-ում լրդում է մեղր ու կարագի մեջ, ստանում 28 ռուբլի օրավարձ ու ապրում 4-8 սենյականոց բնակարանում<sup>37</sup>:

Շիրակից գյուղական ազգաբնակչության արտագաղթը հանգեցրեց լրջագույն տնտեսական խնդիրների: Ամերիկյան ոսկով հարստանալու սին հույսերով կուրացած գյուղացին 300-400 ռուբլի ճանապարհածախսը հայթայթելու համար նախ վաճառում էր իր անասուններն ու հողը, ապա դժոխային՝ 40 կամ 50%-ով պարտք վերցնում վաշխառուներից՝ հույս ունենալով, թե տեղ հասնելուց 2-3 ամիս անց կկարողանա այն վերադարձնել: Փաստորեն, դեռ Ամերիկա չհասած, նա վերջնականորեն քայքայում էր իր՝ առանց այն էլ անմխիթար վիճակում գտնվող տնտեսությունը և հայտնվում հսկայական պարտքերի տակ: Եվ նույնիսկ այդպիսի զրկանքներից հետո խիստ կասկածելի էր, թե արդյո՞ք նրան կհա-

<sup>35</sup> **Տեր-Յակովբեան Յ.**, Ալեքսանդրապոլի գաւառի տնտեսական վիճակը//«Ժայռ», Ալեքսանդրապոլ, 1910, N 75, 2 հոկտեմբերի, էջ 1-2:

<sup>36</sup> **Տեր-Յակովբեանց Յ.**, Միալ ճանապարհ//«Ժայռ», Ալեքսանդրապոլ, 1911, N 12, 17 փետրվարի, էջ 2:

<sup>37</sup> **Թումանյան Յովհ.**, Մեծ տօնը և հայ ուսուցիչն ու գրողը//«Հորիզոն» օրաթերթ, Թիֆլիս, 1913, N 230, 13 հոկտեմբերի, էջ 1: **Վրացեան Ս.**, Ամերիկեան կարկանդակները. Տնտեսական կեանքն ու քաղաքական կուսակցութիւնները//«Հորիզոն» օրաթերթ, Թիֆլիս, 1914, N 33, 13 փետրարի, էջ 2:

ջողվի ափ իջնել «Ավետյաց երկրում»: Ներգաղթի աճող տեմպերը սահմանափակելու նպատակով ամերիկյան իշխանությունները, 1911 թ. սկսած, նավամատույցներում բացեցին գաղթականների ընդունման կետեր, որոնցում յուրաքանչյուր նորեկ ենթարկվում էր բժշկական մանրագնին քննության: Անառակները, հանցագործները, հիվանդություն կամ ֆիզիկական արատ ունեցողները (տհաս, հոգեկան հիվանդ, կույր, անդամալույծ) զրկվում էին երկիր մուտք գործելու իրավունքից: Արգելվում էր սահմանը հատել նաև այն անձանց, ովքեր ԱՄՆ էին ժամանում գաղտնի պայմանավորվածությամբ կամ էմիսարների միջոցով: Օրինակ՝ Պորտլանդում ափ իջած 44 դարաքիլիսեցիների, որ շարունակելու էին ճանապարհը դեպի Չիկագո, արգելվեց մուտքն ԱՄՆ, որովհետև խուզարկությամբ նրանց մոտ հայտնաբերվեցին միննույն ձեռագրով գրված նամակներ՝ ուղղված Չիկագոյի տարբեր բնակիչների: Դա թույլ տվեց իշխանություններին մտածել, թե բոլորը գնում են միննույն մարդու մոտ: Մեկ այլ դեպքում արգելվեց 17 սոցյալիստների մուտքը ԱՄՆ, որովհետև պարզվեց, որ «նրանց մօտ (Հայաստան-Ա.Հ.) է գնացել Ամերիկա եղած իրանց երկրացին և խորհուրդ տվել, թե ինչպես գնալ Ամերիկա և գործ ստանալ Բիվերգայդի ցեմենտի գաւօղում»<sup>38</sup>:

Արգելվում էր սահմանը հատել նաև այն անձանց, որոնց իշխանությունները կկասկածեին մուրացկանության մեջ: Ինչպես գիտենք, ճանապարհաձախսը հոգալու համար արտագնա աշխատանքի մեկնողները վաշխատուներից գումար էին վերցնում, որը բավարարում էր մինչև ԱՄՆ: Մուտքի արտոնագիր ստացածների հիմնական մասն այնուհետև ճանապարհը շարունակում էր ոտքով՝ թափառելով քաղաքից քաղաք և հաճախ մուրացկանություն անելով: Այս երևույթը վերացնելու նպատակով ԱՄՆ իշխանությունները 1911թ. սկսած աշխատանքային միգրանտներին պարտադրեցին տեղաշարժվել բացառապես երկաթուղով: Ընդ որում, բացի երկաթուղու վարձից, նրանք պարտավոր էին իրենց մոտ մշտապես ունենալ նվազագույնը 50ո.: Այդ մասին առաջին անգամ բարձրաձայնեցին հենց արտագնա աշխատանքի մեկնածները՝ «Ախուրեան» պարբերականի էջերում. «Մենք Կալիեստոն եկանք չորս հարիւր հոգով, որից 60-ը շիրակցի հայեր էինք: Կամիսիան բոլորիս քննեց, ապա... 60 հայերիս պահեցին շոգենալի մեջ: Մեզ բացատրեցին, որ թոյլ չեն տալիս գնալու, որովհետև մենք էժան գնով աշխատելով, տեղական ժողովրդի գործը ձեռքից կը խլենք և յետոյ այստեղի կանոններով բացի երկաթուղու վարձը, 50ո. էլ աւելի մարդ փող պիտի ունենայ, որ կարողանայ գնալ»<sup>39</sup>:

<sup>38</sup> Մ. Տ., Ամերիկա գնացողներին//«Արագած», Ալեքսանդրապոլ, 1912, N 18, 1 մարտի, էջ 2:

<sup>39</sup> Լրատու, «Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1911, N 7, 30 յունւարի, էջ 4:

Շատ հաճախ գաղթականներին նույնիսկ չէր հաջողվում ԱՄՆ հասնել: Նման մի դեպքի անդրադարձել է Գևորգ Մելքունյանցը՝ «Ժայռ» պարբերականի էջերում հրապարակելով նամակը 100 շիրակցիների, որոնք 1911թ. հունվարի 30-ին հասել էին Գերմանիայի Բրեմեն քաղաք և գնացքից դուրս գալուց անմիջապես հետո ձերբակալվել: Ըստ հոդվածագրի՝ քաղաքային իշխանությունները հայերին մեկ օր պահել էին բանտում, ապա տեղեկացնելով, որ ԱՄՆ-ը գաղթականների համար սահմանը փակել է, պահանջել էին իրենց ծախսով անհապաղ վերադառնալ հայրենիք<sup>40</sup>:

Աննախանձելի էր նաև այն պանդուխտների վիճակը, ում այնուամենայնիվ հաջողվում էր «Նոր Աշխարհում» հաստատվել: Ժամանակի պարբերական մամուլի էջերում կարելի է գտնել հուսահատության եզրին հասած պանդուխտների տասնյակ նամակներ, որոնցում վերջիններս գթություն և հայրենիք վերադառնալու համար ճանապարհաձախս էին աղերսում՝ նկարագրելով այն աղետալի կացությունը, որում հայտնվել էին: «Գործ չկայ, օրերով պարապ ենք մնում, մի օր աշխատում ենք և այդ փողով դժարութեամբ միայն կարողանում ենք կերակրել: Որպեսզի աշխատանք գտնենք, վազում ենք մի քաղաքից միւր: Փող չունենք հաւաքած, որ պարզերես հայրենիք վերադառնանք», - «Գաւառի ձայն»-ի էջերում գրում էր շիրակցի հեռավոր Ամերիկայից: Մեկ ուրիշն ավելացնում էր. «Մեզ գրում էին, թէ քո քեֆին կաշխատես օրական 8 ժամ, ես գնացի և տեսայ 10-ից և 12-ից ոչ պակաս: Շատ օրեր ճաշ չենք ունենում, իսկ առաւօտներին բաւականանում ենք միայն անհամ սուրճով»<sup>41</sup>:

Ցանկանալով հետ պահել հայրենակիցներին գաղթելու կորստաբեր քայլից՝ «Գաւառի ձայն»-ը հրապարակում էր նաև պանդխտությունից վերադարձածների հիշողությունները. «Ես աշխատում էի ցեմենտի գործարանում, - պատմում է մի դուզքյանդցի, - առաւօտեան ժամը 8-ից սկսում էր գործը, ճաշին մի ժամ հանգըստանում էինք ու էլի սկսում մինչև երեկոյ: Աշխատանքը շատ դժար էր, կարելի է ասել անտանելի: Ամբողջ օրը ցեմենտի փոշու մէջ էինք... , բերաններս ու քթերս լցում էր փոշին և մենք ամեն անգամ դուրս էինք քաշում ցեմենտի կոշտացած կտորները... , ես դեղնել ու նիհարացել էի: Գործարանից դուս գալուց յետոյ այլևս տեղ չը գտայ, որ կարողանայի աշխատել: Ես բերանիս հացը կտրում տուն էի ուղարկում, որ հոգսերը հոգան, բայց մեր տանը մտածում էին, թէ...

<sup>40</sup> Մելքունյանց Գևորգ, Գաղթականի յուշերից//«Ժայռ», Ալեքսանդրապոլ, 1911, N 11, 12 փետրվարի, էջ 1:

<sup>41</sup> Հմայք-անուշ, Բանտրների դրութիւնը Ամերիկայում//«Գաւառի ձայն» լրագիր, Ալեքսանդրապոլ, 1914, N 9, 17 յունւարի, էջ 3:

ձեռքերս գրպաններումս դրած, ուտում խմում, ման եմ գալիս, ու սկսել էին նոր պարտքեր անել»<sup>42</sup>:

Ամեն գնով շիրակցուն դարիբության կորստաբեր քայլից հետ պահելու հույսով՝ մամուլը նույնիսկ դիմեց XXդ. սկզբի համար աննախադեպ քայլի. մուտք գործեց գյուղացու անձնական կյանք, փորձեց բացատրել, որ պանդխտությունը պատճառ է դարձել սեռավարակային հիվանդությունների տարածման: «Ցաւը այնքան մեծ չէր լինի, -գրում է «Գաւառի ձայն»-ը, -եթէ այդ ախտերը մնային միայն գաղթականի մէջ, սակայն այդպէս չէր»<sup>43</sup>: Արտագնա աշխատանքից վերադարձած երիտասարդն «առանց բժշկական քննութեան» ամուսնանում էր ու սեռական ճանապարհով հիվանդությունը փոխանցում կնոջը, իսկ սրա միջոցով՝ նաև երեխաներին:

Դարասկզբին մեծ տարածում ստացած այդ ախտն ուղղակի չարիք դարձավ Ալեքսանդրապոլի գավառի գյուղական ավանդապահ ազգաբնակչության համար՝ վտանգելով ամբողջ սերունդների գոյությունն ու հանգեցնելով լրջագույն բարոյահոգեբանական բարդությունների:

**Եզրահանգում.** Ամփոփելով XXդ. սկզբին Արևելյան Շիրակից դեպի ԱՄՆ սկսված միգրացիոն գործընթացների համառոտ քննությունը՝ նշենք հետևյալը. Առաջին շիրակցին օվկիանոսը հատեց 1904թ., իսկ արդեն 1910-1914 թվականներին պանդխտությունը զանգվածային մասշտաբներ ընդունեց: Հայրենի գավառից հեռանալու հիմնական պատճառը տնտեսական ողորմելի վիճակն էր, որ ստիպում էր պարտքերի մեջ թաղված գյուղացուն թողնել ընտանիքը և ուղևորվել Ամերիկա, ուր տեղական լեզվին, օրենքներին ու սովորություններին անձանոթ՝ նա պիտի ցածր վարձատրությամբ կատարեր ամերիկացու համար անհրապույր աշխատանք պողպատի կամ ցեմենտի գործարաններում, երկաթուղու շինարարության վրա կամ հանքերում:

Ժամանակի առաջադեմ մտավորականությունը փորձեց հետ պահել գյուղացուն պանդխտության կործանարար քայլից, պարբերական մամուլի էջերում լուսաբանեց ԱՄՆ-ում առկա տնտեսական խնդիրներն ու այնտեղ հայտնված հայության վիճակը, սթափվելու կոչ արեց երևակայական խոստումներով հափշտակված ժողովրդին: Սակայն, ապարդյուն: Տարբեր հաշվումներով՝ 1908-1914թթ. ընթացքում Ալեքսանդրապոլից ու հարակից գյուղերից ԱՄՆ գաղթեց

<sup>42</sup> Տեր-Միքայելեան, Գաղթի մասին//«Գաւառի ձայն» լրագիր, Ալեքսանդրապոլ, 1914, N 13, 30 յունւարի, էջ 2:

<sup>43</sup> Մէջլումեան Ջ., Փոքր Պարնի գիւղ//«Գաւառի ձայն» լրագիր, Ալեքսանդրապոլ, 1914, N 18, 16 փետրւարի, էջ 3:

մոտ 2500 հոգի: Առաջին աշխարհամարտի տարիներին արտահոսքը գրեթե դադարեց: Այն վերսկսվեց Հայաստանի առաջին Հանրապետության անկումից հետո և շարունակվեց մինչև 1923թ.: Ընդ որում, եթե 1908-1914թթ. գաղթողներն աշխատանքային միգրանտներ էին, որոնք դրամ վաստակելուց հետո որպես կանոն վերադառնում էին հայրենիք, ապա 1921-1923թթ. գաղթն ունեցավ շատ ցավալի հետևանքներ: Աշխարհամարտի տարիներին ԱՄՆ-ում մնացած երիտասարդները տեղավորվեցին և քաղաքացիություն ստացան, իսկ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո այլևս հայրենիք վերադառնալ չցանկացան: Փոխարենը նրանք բոլոր ջանքերը գործադրեցին իրենց հարազատներին ևս ԱՄՆ տեղափոխելու համար:

### **ШИРАКЦЫ В АМЕРИКЕ В НАЧАЛЕ XXв.: ТРУДОВЫЕ МИГРАНТЫ ИЛИ ЭМИГРАНТЫ ?**

*Այրապետյան Ա. Ս.*

**Ключевые слова:** *Первая мировая война, Александрополь, мигранты, Америка, Казарпат, Ширак, Риверсайдский цементный завод, мусор.*

По данным Иммиграционного комитета США, первый трудящийся-мигрант из Ширака прибыл в Соединенные Штаты в 1904 году., а уже в 1910–1914 гг. эмиграция приобрела массовый характер. Основной причиной бегства из родного уезда была плачевная экономическая ситуация, которая и заставила обремененного долгами крестьянина, покинуть семью и уехать в Америку. В «Новом Свете» уроженец Ширака, незнакомый с местным языком, законами и обычаями, должен был работать на низкооплачиваемой и непривлекательной для американца работе на сталелитейном заводе в Восточном Сент-Луисе, в шахтах Род-Айленда или на Риверсайдском цементном заводе.

Прогрессивная интеллигенция того времени пыталась остановить миграцию. На страницах периодической печати она освещала экономические проблемы в США и положение армян появившихся там, призывая к трезвости очарованных обещаниями людей. Все же зря. По разным подсчетам, из Александрополя и окрестных деревень в 1908–1914 гг. в Соединенные Штаты имигрировали около 2500 человек.

Во время Первой мировой войны имиграция практически прекратилась. С новой силой она возобновилась в 1918г. (после падения Республики Армения), и продолжалась до 1923 года. Более того, в 1908–1914 гг. эмигрантами были трудовые мигранты, которые, зарабатывая деньги, обычно возвращались на родину, а имиграция 1921–1923 гг. имела очень болезненные последствия. Во время Первой мировой войны оставшиеся в Соединенных Штатах молодые люди, получили политическое гражданство и обосновались, а после установления Советской власти в Армении они привезли сюда своих родственников.

SHIRAK PEOPLE IN THE UNITED STATES OF AMERICA AT THE  
BEGINNING OF THE 20<sup>TH</sup> CENTURY: LABOUR MIGRANTS OR  
EMMIGRANTS ?

*Hayrapetyan A. S.*

According to the US Immigration Commission, the first labour migrant from Shirak crossed into the United States in 1904, and already in 1910–1914 the outflow reached a massive scale. The main reason for leaving the homeland was the poor economic situation, which forced the indebted villager to leave his family and migrate to America.

Unfamiliar with the local language and customs of the “New World”, a poor Shirak resident now had to do low-paying, unattractive for an American work at the East St. Louis Steel Plant in Missouri, the construction of the St. Paul Railroad in Minnesota, the Rhode Island mines, or the Riverside cement plant.

The progressive intellectuals of the time tried to keep the peasant from the destructive step to migrate, covered in the periodicals the economic problems existing in the United States and the plight of the Armenians who moved there and called for sobriety the people spellbound by imaginary promises. However, it had no result.

According to various estimates, between 1908 and 1914, about 2,500 people migrated to the United States from Alexandrapol and surrounding villages. During the First World War, the outflow almost stopped. It resumed after the fall of the first republic of Armenia and continued until 1923. However, if in 1908-1914 the emigrants were labour migrants who, as a rule, returned to their homeland after earning money, in 1921-1923 the migration had very painful consequences. In 1914-1918 the youth that had moved to the US, settled in there receiving citizenship, and after the establishment of Soviet rule in Armenia, they made every effort to move their relatives too to the United States.

## References

1. Atrpet Gaght@//«Akhurean» oratert, Aleksandrapol, 1911, N 6, 28 yunvari (In Armenian).
2. Galoyan S. Shiraki hayeri gaght@ depi Amerika, Los Anjels, Kalifornia, 1950 (In Armenian).
3. Gaxti khndir@ // «Arev» Iragir, Aleksandrapol, 1914, N 5, 1 yunisi (In Armenian).

4. **Givxi kahana** Nor hosanq depi Amerika //«Akhurean» oratert, Aleksandrapol, 1913, N 9, 24 marti (In Armenian).
5. Hayastani azgayin arkhiv, fond 93, ts'uts'ak 1, gorts 82, 85, 86, 87 (In Armenian).
6. **Hmayk-anush** Banvorneri druthyun@ Amerikayum//«Gavari dzayn» Iragir, Aleksandrapol, 1914, N 9, 17 yunvori (In Armenian).
7. **Kurghinean A.** Tghtaktsutivn. Songivrli givgh//«Gavari dzayn» Iragir, Aleksandrapol, 1913, N 5, 29 dektemberi (In Armenian).
8. **Lratu**, «Akhurean» oratert, Aleksandrapol, 1911, N 7, 30 yunvori (In Armenian).
9. **Malcom V. M.** The Armenians in America. Boston, Chicago, 1919 (In English).
10. «**Այնպիսի**» Pokr Parni givgh // «Gavari dzayn» Iragir, Aleksandrapol, 1914, N 18, 16 petrvari (In Armenian).
11. **Mejlumeants Georg** Gaghtakani husheric // «Jayr», Aleksandrapol, 1911, N 11, 12 petrvari (In Armenian).
12. **Mirak R.** Torn Between Two Land. Armenians in America, 1890 to World War I. Cambridge, 1983 (In English).
13. Mi gaghtheq Amerika // «Gavari dzayn» Iragir, Aleksandrapol, 1914, N 23, 6 marti (In Armenian).
14. **Msh.** 1903t. yunvarits minchev 1914t. petrvari 9 Amerikayi zanazan nahangnerum spanvats yev viravorvats kovkasahayer@ // «Akhurean» oratert, Aleksandrapol, 1914, N 16, 29 aprili (In Armenian).
15. **M.T.** Amerika gnacoghnerin//«Aragats», Aleksandrapol, 1912, N 18, 1 marti (In Armenian).
16. **Mushegh yepiskopos** Amerikahay tarecuyc@, A tari, 1912, Poston (In Armenian).
17. Pamyatnaya knijka Erivanskoy gubernii na 1908 god, pod redaktsiyey sekretarya Erivanskogo gubernskogo statisticheskogo komiteta, Chlena Gubernskogo po poselyanskim delam prisustviya V.Ye. Vasileva, izdaniye Erivanskogo gubernskogo statisticheskogo komiteta, Erivan, 1908, otd. III (In Russian).
18. **Paylak** Gaghtakanakan hosanq depi Amerika, «Jayr», Aleksandrapol, 1910, N 79, 17 hoktenber (In Armenian).
19. Prostranstvo i naseleniye gubernii i oblastey Kavkazskogo kraya k 1-mu yanvaryu 1914g. (karennoye i vr.-prozhivayushcheye), «Kavkazskiy Kalendar na 1914 god», Tiflis, 1915, otd. II (In Russian).
20. **Remmius**, Amerikean namakner // «Mshak» oratert, T'iflis, 1914, N 63, 23 marti (In Armenian).
21. Skhal chanaparh // «Gavari dzayn» Iragir, Aleksandrapol, 1914, N 9, 17 yunvori (In Armenian).

22. **Ter-Melikisedekean Saribeg** Depi Amerika // «Mshak» oratert, Tiflis, 1913, N 65, 24 marti (In Armenian).
23. **Ter-Mikayean** Gaghti masin // «Gavari dzayn» Iragir, Aleksandrapol, 1914, N 13, 30 yunvari (In Armenian).
24. **Ter-Yakovbean Y.** Aleksandrapoli gavarrı tntesakan vichak@, «Jayr», Aleksandrapol, 1910, N 75, 2 hoktenberi (In Armenian).
25. **Ter-Yakovbeants Y.** Skhal chanaparh, «Jayr», Aleksandrapol, 1911, N 12, 17 petrvari (In Armenian).
26. **Tumanean Yovh.** Mets ton@ yev hay usucichn u grogh@ «Horizon» oratert, T'iflis, 1913, N 230, 13 hoktemberi (In Armenian).
27. **Vratsean S.** Amerikean karkandakner@. Tntesakan keankn u kaghakakan kusak-cutivnner@, «Horizon» oratert, Tiflis, 1914, N 33, 13 petrvari (In Armenian).
28. **Zelinskiy S.** Ekonomicheskıy bit gosudarstvennikh krestyan v Shoragele Aleksandropolskogo uyezda Erivanskoy gubernii, «Materiali dlya izucheniya ekonomicheskogo bita gosudarstvennikh krestyan Zakavkazskogo kraya», Tiflis, 1885 (In Russian).

*Ընդունվել է՝ 04. 08. 2020*  
*Գրախոսվել է՝ 15. 09. 2020*  
*Հանձնվել է տպ.՝ 20. 11. 2020*

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ՝** պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրեն,  
Էլ. հասցե՝ a.hayrapetyan@shirakcenter.sci.am

ՀՏԴ՝ 93.94

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
*Գևորգ Այվազյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

«...ուսումնարան, ուսումնարան, ի՞նչ է պատճառը,  
ի՞նչ մի գրաւիչ և օգտակար բան է բովանդակում իւր մեջ  
այդ խօսքը, որ ամենքն էլ ազահուրթեամբ այդ են ցանկանում...»<sup>1</sup>

**Բանալի բառեր՝** մասնավոր դպրոց, լուսավորչություն, աշակերտ, աշակերտուհի, գերմաներեն, զարգացում, հոգաբարձություն, մանկավարժ, դասագիրք, հասարակական գործիչ, դաստիարակություն:

Հոդվածում ներկայացվում է 1860-1870-ական թթ. Ալեքսանդրապոլի մասնավոր դպրոցների պատմության հիմնական իրողությունները՝ ազգային կրթական համակարգի զարգացման համատեքստում ուսումնասիրելով և ցույց տալով լուսավորչական հայացքների տեր գործիչների՝ փոքր կրթօջախներում ուսուցման և դաստիարակության բովանդակությունը փոխելուն միտված աշխատանքը:

Նոր շրջանառվող փաստերի համադրմամբ լուսաբանվել են մեծ մասամբ հոգևորականների կողմից բացված ազգային դպրոցների շենքային պայմանների բարելավման, կանոնավոր ուսումնական ծրագրով առաջնորդվելու, մայրենի լեզվով դասագրքեր հրատարակելու, դասավանդողների մասնագիտական որակավորման բարձրացմանը վերաբերող հարցերը:

Հետազոտությունը պարզում է, որ Ալեքսանդրապոլի մասնավոր դպրոցների իրական կարիքները գնահատելուց հետո մշակվել է

<sup>1</sup> «Մեղու Հայաստանի» (այսուհետև՝ ՄՀ), 1872, Թիֆլիս, №22, շաբաթ, 29 յուլիսի, էջ 81-82:

համապատասխան ռազմավարություն, և դա կյանքի կոչելու համար կատարվել են կարևոր գործնական քայլեր:

**Նախաբան.** XIX դարի Ալեքսանդրապոլի ազգային կրթական հաստատությունների պատմության վերաբերյալ 1918-1920թթ. առաջ և խորհրդային շրջանում ստեղծվել են փաստառատ աշխատություններ: Դրանք դպրոցների հոբելյանները նշանավորող գրքեր են, վիճակագրական նյութեր, տեղեկատուներ, ականատեսների վկայություններ, հրապարակային հաշվետվություններ և արխիվային վավերագրերի ժողովածուներ: Ցաքուցրիվ այդ տեղեկությունների գիտական համակարգման փորձ է թերևս մեր այս հոդվածը, որը նվիրված է Ալեքսանդրապոլում 1865-1875թթ. ծավալված լուսավորչական շարժմանը: Ուզում ենք առանձնացնել այդ ուղղությամբ ոլորտի գիտական Վ.Պարսամյանի, Վ.Երկանյանի, Ս.Խուդոյանի կատարած աշխատանքները:

Ալեքսանդրապոլի հայկական մասնավոր դպրոցների գործունեությունը Արևելյան Հայաստանում անգրագիտության վերացման զանգվածային արշավի համատեքստում իր ժամանակին հասարակական-քաղաքական մեծ հնչեղություն է ստացել: Պատճառները տարբեր էին. Ռուսական և Օսմանյան կայսրությունների արտաքին քաղաքականությունը, Ալեքսանդրապոլում հմուտ մանկավարժական և հասարակական ուժերի կենտրոնացումը, տեղի «նորահաս»<sup>2</sup> երիտասարդության կազմակերպչական ջանքերի զարգացումը, քաղաքային մասնավոր դպրոցների քանակով Անդրկովկասում առաջիններից մեկը լինելու գործոնը, մեթոդական նորամուծությունները, ազատասիրական նկրտումները:

Գումրի-Ալեքսանդրապոլը XIX դարում «բարեգարդվում է» Արևմտյան Հայաստանի «գույներով». նրա հնադարյան դեմքը՝ 1837թ. ռուսաց կայսր Նիկոլայ I-ի (1825-1855) կողմից հիմնադրված բերդ-ամրոցով Ալեքսանդրապոլը, Ռուսական կայսրության համար ձեռք է բերում հատուկ կարևորություն: Նրա դերն ավելի է աճում 1853-1856թթ. Արևելյան պատերազմից հետո, երբ 1856թ. մարտի 30-ի Փարիզի հաշտության պայմանագրով սահմանափակվում են Ռուսական կայսրության կենսական իրավունքները Սև ծովում: Ի հեճուկս դրան՝ 1860-ական թթ. կեսերից Կովկասի զինվորական շրջանի պատասխանատուներն այլ բերդերի թվում ռազմամթերքի պահեստավորման, վերանորոգչական և կառուցապատման մեծամասշտաբ աշխատանքներ են իրականացնում Ախալցխայում

<sup>2</sup> Խոջայեանց Յ., Գումրի//«Արարատ», Վաղարշապատ, 1871, թիւ Թ, յունուար, էջ 315:

և Ալեքսանդրապոլում: Զինվորականների խոսքով՝ Անդրկովկասի, Պարսկաստանի և Թուրքիայի հետ 800 վերստ (853.44 կմ)<sup>3</sup> ձգվող սահմանի միակ նշանակալի ամրոցը Ալեքսանդրապոլն էր<sup>4</sup>:

Այդ հանգամանքների, համակայսերական մշակութային վերելքի և հասարակության ինքնաբուխ ձգտումների ազդեցությամբ Ալեքսանդրապոլում սկզբնավորվում է դպրոցների բացման, եղածների բարելավման լուսավորչական շարժում: Լուսավորչության ոլորտում Գերմանիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Իտալիայի, Մեծ Բրիտանիայի, Բալկանյան երկրների XVIII-XIX դդ. փորձի ուսումնասիրությունն ալեքսպոլցի հոգևոր-կրթական գործիչներին ի սկզբանե դնում է շահեկան վիճակում: «Դպրոցասեր» Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի գահակալմամբ (1866-1882) նրանց եռանդը կրկնապատկվում է:

Քաղաքացիական հասարակություն դաստիարակող կրթական համակարգի կատարելագործման հարցերում ալեքսպոլցի գործիչներին առաջնորդում էին Ս.Պետերբուրգի և Կ.Պոլսի «ազգայինների» հորդորները: Միայնակ հակառակորդ Ռուսական և Օսմանյան տերությունների մայրաքաղաքներից եկող ազդակներն Ալեքսանդրապոլի լուսավորչական շարժմանը տալիս էին քաղաքական երանգավորում: Դա իր բազմազան կողմերով հիշեցնում էր 1830-1840-ական թթ. Կ.Պոլսում արևմտահայ և 1850-1860-ական թթ. Նոր Նախիջևանում արևելահայ ժողովրդավարական տարրերի՝ իրենց իրավունքների նվաճման համար պայքարը ամիրա-աղաների դեմ, միայն թե՛ արդեն Հայաստանի հողում:

XIX դարի երրորդ քառորդում՝ արևելահայ կրթական-հասարակական կյանքի վերելքի ժամանակահատվածում, ժողովրդական կրթությունն ապագայի համար խորը արմատներ էր գցում: Ժողովրդական կրթության տարածմանն ահագին նպաստում էին հայ պարբերական մամուլի աշխատակիցները, ուսանողները, պետական օրենքները, հայաբնակ քաղաքներում և գյուղերում Գևորգ Դ Վեհափառի դպրոցաշինական ձեռնարկները և այդ ուղղությամբ նրա բացառիկ հետևողականությունը: Թիֆլիսահայ պատմաբան, պետական ծառայող Ալեքսանդր Երիցյանի (1841-1902) բնորոշմամբ՝ Կովկասի փոխարքայությունում ապրող հայերը 1860-1870-ական թթ. ձգտում էին մեկ բանի՝ իրենց երեխաների դաստիարակությանը<sup>5</sup>:

<sup>3</sup> Երկարության ռուսական հին չափ. 1 վերստը հավասար է 1. 0668 կիլոմետրի:

<sup>4</sup> Военно-статистический сборникъ. Выпускъ IV. Россія. СПб., Печатано въ Военной Типографіи, 1871, Отдѣль II, с.187.

<sup>5</sup> **Ерицовъ А.** Обь армянскихъ школахъ//«Кавказъ», Тифлисъ, 1873 №114, с.1.

Ալեքսանդրապոլի և համանուն գավառի վանական և ծխական դպրոցները մեթոդական առումով սնվում էին Շիրակի «ալմա մատեր»-ից՝ Ալեքսանդրապոլի Հոգևոր դպրոցից<sup>6</sup>: 1860-ականների կեսից դպրոցի վարչական և ուսումնական մասերը բարեփոխվում էին: Լավ հիմքերի վրա է դրվում ռուսաց լեզվի դասավանդումը: Դպրոցի նորընտիր հոգաբարձուները<sup>7</sup> հոգաբարձության նախագահի պաշտոնակատար, ծագումով կարսեցի Հովսեփ ավագ քահանա Կոստանյանցի (1825-1892) գլխավորությամբ 1869/1870 ուստարում<sup>8</sup> աշխատանքի են հրավիրում ռուսաց լեզվի երկու ուսուցիչների: Դրանցից մեկը՝ Ալեքսանդրապոլի գավառական դպրոցի առաջնակարգ ուսուցիչ Միքայել Ավետիքի Տեր-Միքայելյանցը, ազատ ժամերին կատարելու էր նաև Հոգևոր դպրոցի տեսչի պարտականությունները:

Իր խառնվածքով հասարակական գործչի իսկական տիպար, ծագումով կարնեցի Պետրոս Հայկազունին (Դավթյան, 1839-1927) հոգաբարձուների աշխատանքը ստվերելու դիտավորությամբ գրել է. «...միայն շրթունքներին նեղութիւն տալուց և օդը թնդացնելուց ի գատ, ուրիշ ի՞նչ արին- մի տեսուչ ընտրեցին, ուրիշ ի՞նչ մի գործ յառաջադրեցին, կամ թէ մեր նորընտիր Տեսուչը ի՞նչ մի կարևոր յեղափոխութիւն արաւ ուսուցիչների մասին, բաց ի տեսուչ տիտղոսից և ամսականից...»<sup>9</sup>: Հայկազունու հրապարակային կիրքը չի հանդարտվել երկար ժամանակ: Հետագայում տեսուչ<sup>10</sup> Մ. Տեր-Միքայելյանցի անունից մի «աղուեսագործ անձ» Թիֆլիսի «Մեղու Հայաստանի» թերթում զրպարտում է Ալեքսանդրապոլի գավառական դպրոցի կրոնի և հայոց լեզվի ուսուցիչ Հ. ավ. քին. Կոստանյանցին, թե նրա պատճառով այդ դպրոցում հայոց լեզվի դասավանդումը ցածր մակարդակի վրա է<sup>11</sup>:

Նշված դեպքերը դրվագներ են 1860-1870-ական թթ. Ալեքսանդրապոլի երկու ազդեցիկ հոգևոր-հասարակական խմբավորումների հակադրությունից, նաև լուսավորչական շարժման նախաքայլեր:

<sup>6</sup> 2020թ. լրանում է դպրոցի հիմնադրման 180-ամյակը:

<sup>7</sup> Միրական Գորոյեանց, Յարութին Յարութինեանց (Ալեքսանդրապոլի մաքսային գրասենյակի քարտուղար), Թադևոս Տիգրանեանց, Յովհաննէս Բաբայեանց, խոստումնալից երիտասարդ Արշակ Վարդպատրիկեանց: Հոգաբարձությունը դպրոցի կառավարման խորհուրդն էր:

<sup>8</sup> Ալեքսանդրապոլի դպրոցներում ուսումնական տարին սկսվում էր սեպտեմբերից և տևում մինչև մայիս ամիս:

<sup>9</sup> **Հայկազունեան Պ.**, Խմբագրութեան Արարատ ամսագրոյ//«Արարատ», 1870, թիւ ԺԲ, ապրիլ, էջ 309:

<sup>10</sup> 1869թ. սեպտեմբերից մինչև 1871թ. առաջին կիսամյակի վերջ:

<sup>11</sup> «Մեղու Հայաստանի» (այսուհետև՝ ՄՀ), 1873, №50, շաբաթ 29 դեկտեմբերի, էջ 3: Նույն թերթում 1874թ. հունվարի 7-ի թղթակցության մեջ Մ. (Տեր) Միքայելյանցը գրում է, որ ինքն այդ անունով Ալեքսանդրապոլից լուր չի հաղորդել, և դա իր «բարեհոգի բարեկամներից» մեկի ձեռքի գործն է: Տե՛ս ՄՀ, 1874, №3, շաբաթ 19 յունուարի, էջ 3:

Խմբավորումներից մեկի կորիզը քաղաքի «Բարենպատակ» ընկերությունն էր (1869-1875), որի գործավար Պ. Հայկազունին առիթը բաց չէր թողնում հանրությանը ցուցադրելու հակառակ կողմի բացթողումները: Երկրորդ խմբավորման պարագլուխը Ալեքսանդրապոլի հոգևոր վիճակային կառավարության ղեկավար անդամ Հ. ավ. քին. Կոստանյանցն էր: Նա էր հիմնականում Մայր Աթոռ Սբ Էջմիածնից խանդավառությամբ համակարգում Ալեքսանդրապոլի և համանուն գավառի հոգևոր դպրոցների աշխատանքը: Դպրոցների հոգաբարձությունների մասին յուրաքանչյուր քննադատություն ուղղակի կամ անուղղակի վերաբերում էր նրան:

Սկզբում «Բարենպատակ» ընկերության հիմնադիր անդամ և Պ. Հայկազունու մորեղբայր Աստվածատուր Իս(ահ)ակյանցն է նկատել, որ այդ խմբավորումները գավառամտության ծնունդ են. «...այժմ դարձնում եմ իմ հաեացքս դեպ ի ձեզ, յարգի համաքաղաքացիք և խնդրում եմ, որ կուսակցութեան ոգին հեռացնելով ձեզանից, նմանապես և Ղարսեցի, Արգիւրումցի և Բայազեդցի բառերը, այդ տնաքանդ և քաղաքակործան որոշումը, աչքի առաջ ունենալով որ ժամանակն է արծաթ, և ոչ արծաթը, այսուհետև սկսեք միախորհուրդ համաձայնութեամբ. և սիրաշողկապ յարակցութեամբ հիմնադրութիւն անել հետզհետե ազգաշահ գործքերի...»<sup>12</sup>:

Խմբավորումների դիմադրության առանցքն ազգային հաստատությունների ղեկավարման իրավունքի նվաճումն էր: Կարդալ է պետք, թե Ալեքսանդրապոլի կարնեցիների կողմը բռնած Կարապետ Մատինյանցը ինչպես է գովում այդ խմբավորման ֆինանսական հենասյուներից երկուսի՝ խոշոր առևտրականներ Հովհաննես Կորանեանցի և Պետրոս Չիթոցեանցի առատաձեռնությունը<sup>13</sup>:

Խմբավորումների հասարակական-քաղաքական մտեցումները նորից տարորոշվում են, երբ Հոգևոր դպրոցի հոգաբարձության հրավերով 1871թ. սկզբին Ս.Պետերբուրգից Ալեքսանդրապոլ է ժամանում Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի շրջանավարտ, Շվեյցարիայի (գերմանական հատված) Կյուսնախտ քաղաքի<sup>14</sup> ուսուցչական սեմինարիան ավարտած Սարգիս Բեկնազարյանը (1849-1894): Նրան Կյուսնախտ էին ուղարկել «քանի մի բեթերսպուրկցի հարուստ հայեր», որոնցից մեկը՝ Ս. Սանասարյանը, Ս. Բեկնազարյանի ավարտելու կա-

<sup>12</sup> Իսակեանց Ա., Ալեքսանդրապոլու հիւանդանոցը//ՄՀ, 1871 օգոստոս 7, №30, էջ 236: Հմմտ. Մարտիկեանց Ս., Մէկ քանի խօսք Աղեքսանդրապոլի վերայ//«Արարատ», թիւ 9, 1869, էջ 141:

<sup>13</sup> Մատինեանց Կ., Խմբագրութեան Արարատ ամսագրոյ//«Արարատ», 1870, թիւ Ա, մայիս, էջ 37:

<sup>14</sup> Գեղատեսիլ Կյուսնախտը գտնվում է Ցյուրիխ լճի ափին:

պակցությամբ հայ վարպետի պատրաստած ոսկյա բաժակ է նվիրում սեմինարիայի տնօրեն Ֆրիզեին<sup>15</sup>: Բեկնազարյանի ճանապարհածախսը՝ 400 ռուբլի, վճարել էին Հոգևոր դպրոցի հոգաբարձությունը և Ալեքսանդրապոլի հայ հասարակությունը: Վերջինս գործնականում ցույց էր տալիս, թե քաղաքի համար որքան կարևոր էր լավ դպրոցներ ունենալը: Պատկերավոր ասած՝ ալեքսանդրապոլի հասկանում էին, որ Շվեյցարիայից Ալեքսանդրապոլ են գալիս գերմանական մանկավարժությունը, հաղթական քաղաքական միտքը, սոցիալիստական գաղափարախոսությունը, առաջադեմ երիտասարդությունը և մարդասիրությունը:

Ալեքսանդրապոլի հոգևոր վիճակի առաջնորդն այդ ժամանակ Դորպատի համալսարանում ուսանած, գերմաներենի գիտակ Գրիգոր վարդապետ Աղափիրյանն էր (1827-1897): Նա ռուսաց լեզու էր դասավանդում Արդուրյան իգական դպրոցում:

Ս.Բեկնազարյանը դատարկաձեռն չէր եկել: Նա Հոգևոր արական և Արդուրյան դպրոցների համար բերել էր 600 ռուբլի արժողությամբ «...ուսումնական իրեղենք վերաբերեալ մատեմատիկայի, աշխարհագրութեան և բնագիտութեան, ... Սրբազան պատմութեան... մարդագիտական մօդելներ գիպսից պատրաստած, որ շատ ձեռնտու իրեղենք են մարդու կազմութեան բաւականին լրութեամբ ծանօթացնելու...»<sup>16</sup>: Դրանք գնվել էին արտասահմանից և սանկտպետերբուրգցի հրատարակիչ-գրավաճառ Հ. Ա. Իսակովից (1811-1881):

Ս. Բեկնազարյանը Հոգևոր դպրոցի տեսչի պարտականությունները կատարում է 1871թ. փետրվարի 1-ից մինչև 1873/1874 ուստարվա առաջին կիսամյակի ավարտը. «...Տեսչական պաշտօնի հրաւիրուած Պ.Սարգիս Բեկնազարեանցի կարգաւորութեամբն և դիւրիմաց դասախօսութեամբն քիչ ատենուան մէջ կուտայ բուսուցանել անուշահոտ վարդեր. ազգիս ներկայ և ապագայ սերնդոց համար կրնայ պատրաստել պիտանացու և օգտակար անդամք, յուրախութի՛ւն Աղեքսանդրապօլու ազգային Դպրոցին...»<sup>17</sup>: Ս. Բեկնազարյանը Հոգևոր և Արդուրյան դպրոցներում գերմաներենը դարձնում է պարտադիր ուսումնական

<sup>15</sup> Վարդանեան Փ., Գերմանական մանկավարժութեան կարեւորութիւնը, //«Արևելյան մամուլ», Ջնյուտնիա, 1873, մայիս, էջ 209: Հմմտ. «Հայկական աշխարհ», Թիֆլիս, 1867, № 4-5, ապրիլ-մայիս, էջ 221-222: «...Ֆրիզեն ուշադիր է և համակրութիւն է ցոյց տալի մեր Հայ երիտասարդներին և բաւական է նոցանից...»: Տե՛ս \*\*\*, Իմ ճանապարհորդական տպաւորութիւնները, //ՄՀ, 1874, №13, շաբաթ, 30 մարտի, էջ 1:

<sup>16</sup> Նամակ Ալեքսանդրապօլից, //«Մշակ», Թիֆլիս, 1873, №31, օգոստոսի 16, էջ 3:

<sup>17</sup> Մեծատունեանց Ե., Հայոց Հոգ. Ուսումնարան Աղեքսանդրապօլոյ, //«Արարատ», 1871, թիւ Դ, օգոստոս 31, էջ 251: Հմմտ. Խօջայեանց Յ., Գիւմրի, //«Արարատ», Ժ, 1871, փետրուար, էջ 347:

առարկա: Նորեկ տեսուչն իր այդ քայլով խախտում է Ալեքսանդրապոլի հասարակական կյանքի ազգային պահպանողական անդորրը: Նրան անմիջապես ընդդիմանում են Պ. Հայկազունին և «ընկերակիցները»:

Հայկազունին կրթության ժողովրդավարացման ջատագով էր: 1869թ. հուլիսին դիմելով Ալեքսանդրապոլի հասարակությանը՝ գրել է. «...յորդորեցեք բարեկարգել ուսումնարանները Եւրոպական լուսաւորեալ ուսուցիչներով, որոնցից հետևում են ուղիղ հասկացողութիւններ, որոնք կեանքի առաջին խնդիրներն են...»<sup>18</sup>: Նա նույնիսկ դրական է արտահայտվել զարգացած ուսուցչի կերպար մարմնավորող Ս. Բեկնազարյանի և Հոգևոր դպրոցում նրա կատարած մանկավարժական նորամուծությունների մասին՝ սրտի խորքից հայտնելով իր անկեղծ շնորհակալությունը: Բայց գերմաներենի դասավանդման հարցում Հայկազունին անզիջում էր: Նրա կարծիքով՝ գերմաներենին ընտելանալու համար Ալեքսանդրապոլի դպրոցների սովորողներին ժամանակ է պետք. «...Եւ ես չգիտեմ, ինչ են երևակայել Գերմաներէնը ներս բերելով, արդեօք Պրուսացոց յաղթութիւնը<sup>19</sup>, թէ՞ ամբոխի համոզմունքը, որ մարդու իւելքը նորա գիտեցած լեզուների թուովն է չափում...Եթէ հարստներն են այդ բանը ցանկացել, նոքա միշտ կարող են ուսուցանել իրանց ապագայ թութակներին: Բայց ժողովուրդը իւեղճ է, և բաւական է նորան, եթէ երկու լեզու<sup>20</sup> չափաւորապէս սովորէ, նորա հետ մտաւոր և բարոյական կրթութիւն ստանայ, մանաւանդ բարոյական...»<sup>21</sup>: Այս ելույթից պարզվում է Հայկազունու քաղաքական կողմնորոշումը, որն ըստ էության անհամաձայնությունն էր հայրենիքի բզկտված մասերի՝ երկաթով և արյամբ միավորման գերմանական բանաձևին: Դրանով Հայկազունին ընդառաջ էր գնում հայկական դպրոցների նկատմամբ պետության վարած քաղաքականությանը:

Թիֆլիսից «Հայկական աշխարհ» ամսագրի խմբագիր Ս. Ստեփանեն (1840-1900) ձայնակցում է Հայկազունուն. «...Պրուսական կրթութեան մեծ պակասութիւններ չեն մի թէ՛ անմերձենալի լինել, մեծամտութիւն (որ կարճամտութեան նշան ևս է), միայն անձնական օգուտներ պտռել, զօրութիւն ստացածին պէս հարստահարել ստորադրվածներն և այլն...»<sup>22</sup>: «Մեզ համար կարևոր է մայրենի

<sup>18</sup> Հայկազունեան Պ. Դ., Մի քանի խօսք «Պտոյտ» յօդուածի դէմ, որը տպուած է Մեղու Հ-ի 21 համար, //ՄՀ, 1869, №27, յուլիսի 19, էջ 210.;

<sup>19</sup> Նկատի ունի 1870-1871թթ. ֆրանս-գերմանական պատերազմում գերմանացիների տարած հաղթանակը:

<sup>20</sup> Հայերեն և ռուսերեն:

<sup>21</sup> Դարբնեանց Ս., Նամակ Աղեքսանդրապօլից, //ՄՀ, 1872, №12, շաբաթ, 20 մայիսի, էջ 48: Հմմտ. Հայասէր, Մեր ներքին գործեր, //«Հայկական աշխարհ», 1871, № 4-5, էջ 97-98:

<sup>22</sup> Հայասէր, նույն տեղում, էջ 95:

լեզուն լաւ իմանալ, տէրութենական լեզուն էլ ոչ պակաս դորանից, բայց Գերմաններէնը մէջ ընկնելով կարծիք չը կայ, որ աշակերտի ոյժի մի մեծ մասը պէտք է խլի ի վնաս վերոյիշեալ լեզուաց...»,- մի ուրիշ տեղ ասել է Հայկազունին:<sup>23</sup>

Լրագրերում հնչած այդ քննադատություններին Ս. Բեկնազարյանի սքանչելի պատասխանը չի ուշացել: Հայտարարելով, որ ինքը գերմանամուլ չէ, Բեկնազարյանը գրել է. «...Չը խաբուենք մեր զգացումներէն, վասն զի նոքա տակաւին գրգռուած են վերջին պատերազմներու վայրագ ոճրագործութիւններով, ...ծանրագլխութեամբ կշռենք, որ Գերմանական ուսումն ու կրթութիւնը մեր երիտասարդաց շատ կարևոր են, վասն զի նոքա մէջ կենսական ոյժ կայ, վասն զի մարդկային բնութեան վերայ է հիմնուած, վասն զի պարզ տրամաբանական է...»<sup>24</sup>:

Ալեքսանդրապոլի Հոգևոր և Արդության դպրոցներում գերմաներենի դասավանդման վերաբերյալ Ալեքսանդրապոլի լուսավորչական շարժման գործիչ Պ. Հայկազունու և «ընկերակիցների» մտահոգությունները Թիֆլիսի առաջադեմ պահպանողական մամուլում հարազատ միջավայր գտան թերևս հետևյալ տրամաբանությամբ. «...մենք մեր փոխառնութիւնը օտարներից հասցնում ենք մոլութեան աստիճանին՝ արհամարհելով եւ ատելով այն ամենայն՝ որ ինչ ազգային է, եւ մանաւանդ լեզուն եւ կրօնը»<sup>25</sup>: Լուսավորչալ պահպանողականների գաղափարական աշխարհն ավելի մոռյվեց, երբ փոխարքայության պաշտոնաթերթ «Կովկաս»-ը հնչեցրեց, թե Վաղարշապատի 100 ընտանիքներ պատրաստվում են բողոքականություն ընդունել<sup>26</sup>:

Ալեքսանդրապոլի լուսավորչական շարժումն ընդլայնվում էր: Ջավախքից, Թիֆլիսից, Երևանից, Ս. Էջմիածնից, Կ.Պոլսից քաղաք ժամանած գիտական և հասարակական լավագույն ուժերը բռնկվում են շարժման գաղափարներով:

1871/1872 ուստարում Ախալցխայի Կարապետյան ուսումնարանից Ալեքսանդրապոլ է տեղափոխվում մանկավարժ, գրական-հասարակական գործիչ Ղազարոս Աղայանը (1840-1911): Իբրև ուսուցիչ և տեսուչ՝ նա աշխատանքի է անցնում նորաբաց Արդության դպրոցում: Քաղաքում նրա գործակիցներից էր գավառական բժիշկ, գրական-հասարակական գործիչ Գաբրիել Տեր-Հովհաննիսյանը (1837-1920): 1872/1873 ուստարում Թիֆլիսի Գայանյան դպրոցից Ալեքսանդրապոլ է տեղափոխվում և Հոգևոր դպրոցում «հայոց լեզու և բնական պատմութիւն» դասավանդում մանկավարժ, հոգևոր-հասարակական գործիչ, կառա-

<sup>23</sup> **Հուր-հեր**, Ալեքսանդրապոլ, //ՄՀ, 1874, №17, շաբաթ, 4 մայիսի, էջ 2:

<sup>24</sup> **Ն.Բ.Ս.**, Յարգոյապատիւ խմբագիր «Մեղու Հայաստանի», //ՄՀ, 1871, №32, օգոստոս 28, էջ 250:

<sup>25</sup> «Արարատ», թիւ Թ, 1877, սեպտեմբեր 30, էջ 337: Հմմտ. **Մեծատունեանց Ե.**, նշվ. աշխ., էջ 251:

<sup>26</sup> **Калантаровъ Эривань**, //«Кавказъ», 1871, №49, с. 2. Հմմտ. ՄՀ, 1871, №17, մայիս 8, էջ 127:

վարման հանրապետական ձևի կողմնակից Հայրապետ (Գարեգին) Ղուկասյանցը (1849-1916): 1873/1874 ուստարում Թիֆլիսից նրանց է միանում մանկավարժ, հրապարակախոս Մակար Տեր-Սարգսյանցը (Պարզյանց, 1855-1912), Ալեքսանդրապոլից՝ հրապարակախոս Սարիբեկ Տեր-Մելիքսեդեղեկյանցը (1850-1919): Այդ գիտնական-մանկավարժները Ալեքսանդրապոլում ստեղծում են իրենց հայոց լեզվի, ընթերցանության, գծագրության, երկրաչափության, ընդհանուր պատմության, վայելչագրության դասագրքերի, ինքնուրույն և թարգմանական երկերի մեծ մասը<sup>27</sup>: Կարճ ժամանակով Հոգևոր դպրոցում են աշխատել նաև բողոքական քարոզիչ, ընթերցանության դասագրքի հեղինակ շուշեցի Աբրահամ

<sup>27</sup> Երկու քոյր: Եղերական վեպ (գիւղական կեանքից): **Աշխատասիրություն Ղ.Աղայեանց**, Տիֆլիս, ի տպարանի Համբարցումայ Էֆիաճեանց և Ընկ., 1872, 108 էջ: Սկզբնական բացատրություն բնութեան երեւոյթների: **Թարգմանություն Ղազարու Աղայեանց**, ի Վաղարշապատ, ի տպարանի սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1873, 142 էջ: **Աղայեանց Ղ.**, Հայկական հնչիւնների մասին (լուծումն տարակուսութեանց, Տիֆլիս, ի տպարանի Հ.Էնֆիաճեանց և Ընկ., 1874, 50 էջ: Ուսումն մայրենի լեզուի: Ծնողաց և ուսուցչաց համար: **Աշխատասիրություն Ղազարու Աղայեանց**, Տիֆլիս, ВЪ Типографіи Амбарцума Энфіаджанцѣ и К°, 1875, 61 էջ: **Ղուկասեանց Հ.**, Համառօտ հայեացք մայրենի լեզուի ուսման վերայ, Տիֆլիս, ВЪ Типографіи Амбарцума Энфіаджанцѣ и К°, 1874, 34 էջ: **Նույնի**, Դասագիրք ընթերցանութեան հայոց դպրոցների համար, Թիֆլիզ, Հ.Էնֆիաճեանց և Ընկ., 1875, 199 էջ (2-րդ տպագրությունը՝ Թիֆլիս, 1876, 3-րդը՝ Թիֆլիս, 1878, 4-րդը՝ Թիֆլիս, 1880, 5-րդը՝ Թիֆլիս, 1883): Հիմնական դիդակտիքական կանոններ: Գործ Ա.Դիստերվեզի: **Թարգմ. Հ.Ղուկասեանց**, Ալեքսանդրապոլ, տպ. Գ.Սանոյեանցի, 1880, 65 էջ: Ընդհանուր պատմություն: Հայոց դպրոցների համար: **Աշխատասիրություն Հ.Ղուկասեանց**, Տիֆլիս, տպարան Ա.Միխէլսոնի, 1880 (2-րդ տպագրությունը՝ Թիֆլիս, 1884): Քերականություն գրաբար լեզուի հայոց: **Երկասիրություն Հ.Ղուկասեանց**, Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1884, 146 էջ (2-րդ տպագրությունը՝ Թիֆլիս, 1891): **Ղուկասեանց Հ.**, Բողոքականություն Կովկասու հայոց մէջ (Պատմական նիւթեր), Թիֆլիս, տպարան Մ. Ռօտինեանցի, 1886, 173 էջ: Համառօտ ձեռնարկ գծագրութեան (123 գծագրական ձեւերով) հայ ուսումնարանների համար: **Աշխատասիրեաց Մակար Տեր Սարգսեանց**, ի Վաղարշապատ, ի տպարանի սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1874, 126 էջ: **Տեր-Սարգսեանց Մ.**, Գեղագրութեան օրինակներ հայոց դպրոցների համար, Տիֆլիս: Մ.Պետերբուրգ, տպարան Յ.Մարտիրոսեանցի, 1880, 12 էջ: **Դիստերվեզ Ա.**, Սկզբունք երկրաչափութեան: Ազգային ուսումնարանաց համար (77 երկրաչափական ձեւերով): **Թարգմանություն Մակարայ Տեր Սարգսեանց**, Ալեքսանդրապոլ, ի տպարանի Գեորգայ Սանոյեանց, 1876, 136 էջ: Վերջին թարգմանական գրքի մասին հետևյալ ուշագրավ փաստը կա: 1875թ. վերջերին Մ. Տեր-Սարգսյանը, իմանալով, որ Մ.Պետերբուրգում սովորող հայ ուսանողները թարգմանել են գերմանացի մանկավարժ Ա.Դիստերվեզի (1790-1866) «երկրաչափութեան գրքոյը» և չեն կարողանում էժան գնով այն հրատարակել, առաջարկում է տպագրել Ալեքսանդրապոլի «բարևոքեալ» տպարանում: Նա գրքի 36 երկրաչափական պատկերները անվճար «փոխադրելու» հանձնարարություն է վերցնում և խնդրում հատուցել միայն փորագրության «շեմշատ» (Սարիղամիշի մայրի) փայտի գումարը: Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1875, №47, դեկտեմբերի 6, էջ 4:

Ամիրխանյանցը (1838-1913), ծնունդով ալեքպոլցի վարդապետ Հովսեփ (Ավետիք) Փինաչյանցը (1849-1889), Երևանի Գայանյան օրիորդաց դպրոցի ուսուցիչ Արտաշես Հակոբյանը և այլք:

Ալեքսանդրապոլի մշակութային-լուսավորչական շարժմանը մասնակցող գործիչները սկսում են բարեփոխել արևելահայ տարրական դպրոցը: Կրթության ու դաստիարակության դրվածքը տարրական դպրոցում նրանց կողմից Ալեքսանդրապոլի օրինակով անխնա հարվածներ է ստանում: Նրանք գիտակցում էին, որ ազգը կազմված չէ միայն մայրաքաղաքներում և քաղաքներում բնակվողներից, որոնք քչից-շատից ուսյալ են կամ ունեն ուսանելու հնարավորություն: Ազգը, նրանց պատկերացմամբ, այն 3.5 միլիոնից ավել բնակչությունն էր, որ «դարաւոր փորձերից յետոյ դեռ ևս ապրում և մշակում է այնպէս՝ որպէս թէ ամենին չէ անցել այդ դարերի փորձութեանց միջով, և ահա՛ այս օրս նոքա պիտի կրթուին, ուսանին և շարունակեն»<sup>28</sup>:

Ալեքսանդրապոլի ուսումնասեր հասարակությունն աջակցում էր բարեփոխումներին: Ազգի տղաների ու աղջիկների՝ հայոց լեզվով կրթություն ստանալու համար նա ոչինչ չէր խնայում: Բազմաթիվ վկայություններ ունենք այն մասին, որ 1870-ական թթ. սկզբին Ալեքսանդրապոլի պետական և ազգային դպրոցները լի էին աշակերտներով: Ընդունվել ցանկացողները շատ էին, տեղերը՝ սահմանափակ: Ընդհանրապես, Ռուսական կայսրության տարածքում ապրող առկա հայ բնակչության թվի հետ բաղդատած՝ հայկական դպրոցների և դրանցում սովորողների քանակը խիստ անբավարար էր: Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուի՝ Կովկասի փոխարքա Միխայիլ Նիկոլանիչին (1832-1909) ներկայացրած հաշվետվության համաձայն՝ 1870թ. փոխարքայության տարածքում գործում էին 142 եկեղեցական-ծխական և 5 հոգևոր դպրոցներ շուրջ 6000 սովորողներով<sup>29</sup>: 1873թ. վերաբերող տվյալներով՝ Կովկասի փոխարքայությունում կար 120 հայկական դպրոց 5000 սովորողներով<sup>30</sup>:

Ալեքսանդրապոլի կրթական կարիքներից ելնելով՝ անհրաժեշտ էր բացել առնվազն 4 արական և 2 իգական կանոնավոր ծխական դպրոց. «...աշխատեցէ՛ք, աշխատեցէ՛ք, հայրենակից եղբարք, նոր նոր երկսեռ դպրոցներ բանալ, հասկացող հոգաբարձուաց իշխանութեան ներքոյ»<sup>31</sup>: Գործը մեկնարկում է Ալեքսանդրապոլի հոգևոր վիճակի առաջնորդ Գ. վրդ. Աղափիրյանի մասնակցությամբ: 1872թ. հուլիսին նա ալեքպոլցիներին կոչ է անում բացելու մի ծխական դպրոց:

<sup>28</sup> \*\*\*, Ծխական դպրոցների վիճակը, // «Արարատ», 1872, թիւ Ա, յունուար, էջ 37:

<sup>29</sup> Циркуляръ по управленію Кавказскимъ учебнымъ округомъ. 1871 №№ 5 и 6. Отчетъ попечителя Кавказскаго учебнаго округа за 1870 годъ, с. 27.

<sup>30</sup> Ершцовъ А., նշվ. աշխ., с. 2

<sup>31</sup> Բաակեանց Ա., նշվ. աշխ., էջ 237:

Եկեղեցապատկան 1500ո. գումարից ստացվող տոկոսները դառնալու էին հաջողության գրավական<sup>32</sup>: Բայց նախաձեռնությունը կյանքի չի կոչվում քաղաքից վարդապետի՝ Նոր Նախիջևանի Սբ Խաչ վանք տեղափոխվելու պատճառով:

Կանոնավոր ծխական դպրոցներ և մանկավարժական որակյալ կադրեր ունենալու մտահոգությունն Ալեքսանդրապոլի հետ կիսում էին հայ և հայաշատ շատ քաղաքներ: 1867թ. հունիսի 14-ին Սբ Էջմիածնում այդ մտահոգությամբ ստեղծվում է ուսումնական հանձնաժողով (Անդրեաս արքեպիսկոպոս, Թադեոս վարդապետ, Կ. Վասսայան, Ն.Տեր-Չովսեփյան, Ս.Մարության):

1869թ. հոկտեմբերին ուսումնական հանձնաժողովի անդամ Ս.Մարությանն իբրև զբոսաշրջիկ այցելում է Ալեքսանդրապոլ: Սբ Էջմիածնի «Արարատ» հանդեսում իր շրջագայության արդյունքները ներկայացնելիս նա գրել է, որ քաղաքում «գեշ» էր մասնավոր դպրոցների բազմաքանակությունը: Առողջապահական և մանկավարժական վերահսկողության տեսանկյունից, ըստ Մարությանի, դրանց վիճակն անմխիթար էր<sup>33</sup>: Նա ըստ էության մարտահրավեր է նետում Ալեքսանդրապոլի երիտասարդներին, որոնք «ուսում կպոռան»: Վերջիններս, կատարելով 19-րդ դարի պահանջը, ջիլիթի են դուրս գալիս մասնավոր դպրոցներում գործադրվող ուսուցման և դաստիարակության մեթոդների դեմ.

«...Ի՞նչ է դորա պահանջը: -Լուսաւորութիւն:

Ինչո՞վ կլինի լուսաւորութիւն: -Գիտութեամբ:

Ինչո՞վ կլինի գիտութիւն: -Բարեկարգ Երկսեռ դպրոցներով...»<sup>34</sup>:

Ալեքսանդրապոլում մասնավոր (տարրական) դպրոցները՝ «ստորին կարգի ուսումնարանները»<sup>35</sup>, լրացնում էին ծխական դպրոցների պակասը: 1865թ. քաղաքում կար այդպիսի 17<sup>36</sup>, 1870թ.՝ 15<sup>37</sup>, 1872թ. փետրվարին՝ 20-ից ավելի<sup>38</sup>,

<sup>32</sup> ՄՀ, 1872, №21, 22 յուլիսի, էջ 84:

<sup>33</sup> Մարութեանց Ս., նշվ. աշխ., էջ 142:

<sup>34</sup> Իսակեանց Ա., նշվ. աշխ., էջ 236-237:

<sup>35</sup> Ալեքսանդրապոլում դրանք հայտնի էին նաև «մասնաւոր դպրոց», «նախակրթարան», «առտնին դպրոց», «ծխական ուսումնարան», «վարժատուն», «ուսումնարան», «մանր ծխական ուսումնարան», «վոքրիկ ուսումնարան», «վոքր դպրոց», «մանր մուկր հայտնի և անյայտ պուճախներ» անուններով:

<sup>36</sup> Քոչարեան Մ., Նամակ Ալեքսանդրապոլից//«Հայկական աշխարհի կռունկ», Թիֆլիս, 1865, №7-8, էջ 352:

<sup>37</sup> Статистическія свѣденія о частныхъ школахъ Эриванской губерніи. Кавказскій календарь на 1871 годъ. Тифлисъ, въ типографіи главнаго управленія наместника Кавказскаго, 1870, Отд. II. с.384.

<sup>38</sup> Հայկազունի Պ., Պարոն իմբազիր, խնդրեմ այս մի քանի տեղեկությունքը բարեհաճիք հրատարակելու ձեր լրագրի միջնորդութեամբ, //ՄՀ, 1872, №1, շաբաթ 4 մարտի, էջ 4:

1873թ. մարտին՝ 16<sup>39</sup>, օգոստոսին՝ 20<sup>40</sup>, 1874թ. ապրիլին՝ 13<sup>41</sup>, 1879թ. հունիսին՝ 11<sup>42</sup> արական և իգական դպրոց: Համեմատության համար կարելի է նշել, որ 1860-ական թթ. երկրորդ կեսին Երևանի նահանգի մյուս քաղաքներից, օրինակ, Նախիջևանում գործում էր 7, իսկ Երևանում՝ 2 հայկական մասնավոր դպրոց<sup>43</sup>:

Ալեքսանդրապոլի տարբեր թաղերում մասնավոր դպրոցներ բացում էին դպիրները (տիրացուներ)<sup>44</sup>, սարկավագները<sup>45</sup>, Գավառական և Հոգևոր դպրոցների շրջանավարտները, պաշտոնաթող ծառայողները, «կոյսերը» և վարպետ կոչվող կանայք: Մանկավարժական տեսակետից որևէ հետաքրքրություն չներկայացնող այդ հաստատությունները մի աստիճան ցածր էին ծխական դպրոցներից: Դրանցից շատերի գործունեությունը ժամանակավոր բնույթ էր կրում, մեծ էր սովորողների շարժունությունը: Այդ երևույթները կամայական ձևով է մեկնաբանել Ալեքսանդրապոլի «Կովկաս»-ի թղթակից Ի.Անանինը: Նրա կարծիքով, աշակերտների թիվն ամռանը նվազել է դասասենյակների փոքր լինելու պատճառաբանությամբ, իսկ ձմռանը, քանի որ նույն դասասենյակները ջեռուցելու խնդիր կար, կտրուկ ավելացել<sup>46</sup>: Իրողություն է, որ Ալեքսանդրապոլի գավառի գյուղերում ուսումնական գործընթացը կազմակերպվել է հիմնականում ձմեռվա ամիսներին:

«Դպրոցների պաշտպան» Գևորգ Դ Մեծագործ կաթողիկոսի կարգադրությամբ, Ալեքսանդրապոլի հոգևոր վիճակի առաջնորդ Սուքիաս վրդ. Պարզյանցը (1837-1914) 1873թ. սկզբին հաշվառել է մասնավոր դպրոցները: 1873թ. մարտի

<sup>39</sup> **Հ.Ղ.**, Ալեքսանդրապոլ, //ՄՀ, 1873, №47, շաբաթ 8 դեկտեմբերի, էջ 2:

<sup>40</sup> \*\*\*, Նամակ Ալեքսանդրապոլից, //«Մշակ», 1873, №40, հոկտեմբերի 18, էջ 3:

<sup>41</sup> **Վ.**, Նամակ Ալեքսանդրապոլից, //«Մշակ», 1874, №22, յունիսի 6, էջ 2:

<sup>42</sup> Ներկայացնում ենք ախալցխացի հոգևոր-հասարակական գործիչ Հովակիմ (Եղիշե) Գեղամյանցի (1844-1920) կազմած ցուցակը. Պետրոս քին. Մատնիշյանց (70 աշակերտ), Մանուկ Ամատունի (50 աշակերտ), Հոփսիմե Չլնկարյան (22 աշակերտ-աշակերտուհի), Գևորգ Նալբանդյանց (32 աշակերտ), Մկրտիչ Վարդանյանց (35 աշակերտ), Աղեքսանդր Մխիթարյանց (40 աշակերտ), Ավետիս Տեր-Ավագյան (20 աշակերտ), Վարոս Գիանճյանց (իմա՝ Գեոնջյանց), Մուշեղ Մամիկոնյանց և Մեղրակ Գրիգորյանց (60 աշակերտ), Պողոս Մալխասյանց (50 աշակերտ), մի վարպետ կին (35 աշակերտուհի), մի այլ կին (կաթոլիկ) (70 աշակերտուհի): Վ. Գեոնջյանցի, Մուշեղ Մամիկոնյանցի և Մեղրակ Գրիգորյանցի և մասամբ Ա.Մխիթարյանցի կողմից պահվող դպրոցները, ըստ Գեղամյանցի, կանոնավոր ծխական դպրոցներ էին: Բոլոր դպրոցներում ուսման վարձը տատանվում էր 40 կոպեկից մինչև 2ռ. սահմաններում (Տե՛ս **Գեղամեանց Յ.**, Ախալցխայից մինչև Անի, //«Փորձ», Տփլիս, 1880, ապրիլ № IV, էջ 69):

<sup>43</sup> Сборникъ статистическихъ свѣдѣній о Кавказѣ. Томъ I. Тифлисъ, 1869. Отдѣль I. III. Матеріалы для статистики Эриванской губерніи, сс. 35, 50.

<sup>44</sup> Այսպես է կոչվում Հայ Առաքելական սուրբ եկեղեցու նվիրապետության աստիճաններից առաջին 4-ը (դոնապան, ընթերցող, երդմնեցուցիչ, ջահրնկալ) ստացած անձը:

<sup>45</sup> Սարկավագը քահանայի անմիջական օգնականն է և ժողովրդի ու քահանայի միջնորդը:

<sup>46</sup> **Ананьинъ П.** Александрополь, //«Кавказъ», 1874, №16, с.2-3.

դրությամբ պարզվել է հետևյալ պատկերը: 16 արական դպրոցներում<sup>47</sup>, որոնք 5-36 ռուբլի վարձավճարով տեղավորված էին ոչ տիպային, մութ ու խոնավ շինություններում, սովորել են 437 աշակերտներ (35-ը՝ ձրի): Յուրաքանչյուր դպրոցում նրանց թիվը տատանվել է 5-54-ի, իսկ ուսման վարձը՝ 15 կոպեկից 2ռ. Սահմաններում: Դպրոցների ամսական եկամուտը կազմել է 5-60 ռ., բոլորինը միասին՝ 190ռ.: 3 դպրոցում են ուսուցիչները գործածել դասագրքեր, «մնացեալները տակալին ամուր բռնած են իրանց նարեկները, ժամագրքերն ու սաղմոսները»<sup>48</sup>: Դասավանդվել են կրոն, հայոց լեզու, ռուսաց լեզու, թվաբանություն, պատմություն, վայելչագրություն և երգ առարկաները: Շատ դպրոցների ուսուցիչներ սահմանափակվել են լոկ կարդալ և գրել ուսուցանելով: Մոտավոր հաշվարկներով Ալեքսանդրապոլի մասնավոր դպրոցներում 1870թ. սովորել են 481, 1872թ. սկզբին՝ մոտ 600, 1874թ.՝ 800-900 աշակերտ-աշակերտուհիներ:

1860-1870-ական թթ.՝ Ալեքսանդրապոլի մասնավոր դպրոցների գործունեության երկրորդ շրջանում<sup>49</sup>, հասարակական-կրթական կյանքը պահանջներ է առաջադրում լուսավորյալ բարեփոխիչներին: Խորանալով կրթության ու դաստիարակության ոլորտի արատավոր բարքերի պատճառների վերացման մեջ՝ նրանք բուռն գործունեություն են ծավալում՝ սկսելով ուսուցիչների որակավորման և աշխատավարձերի բարձրացումից: Հղում կատարելով անգլիացի պետական գործիչ լորդ Հ.Պ.Բրումին (1778-1868), գերմանացի բնագետ Ա.Հումբոլդին (1769-1859), ֆրանսիացի ֆիզիկոս Պ. Լապլասին (1749-1827) և ուրիշների, վկայակոչելով գերմանացի մանկավարժների Ռուդոլֆշտատի ժողովրդ (1848)՝ Հ.Ղուկասյանը, օրինակ, ժողովրդական ուսուցչին խորհուրդ էր տալիս զբաղվել ինքնակրթությամբ, աշակերտին ճանաչել բոլոր կողմերից, համագործակցել գործընկերների հետ, օրագիր պահել և գրառել թերությունները, կարդալ քիչ, բայց

<sup>47</sup> Սարկավազ Պետրոս Մատնիշյան (50 երեխա), դպիր Ավետիս Տեր-Ավագյան (20 երեխա), դպիր Պողոս Մալխասյանց (25 երեխա), դպիր Թադեոս Կարճիկյան (32 երեխա), դպիր Կարապետ Կիրիվյանց (35 երեխա), դպիր Մկրտիչ Վարդանյան (20 երեխա), դպիր Պողոս Տեր-Խաչատրյան (22 երեխա), դպիր Ալեքսանդր Մխիթարյան (35 երեխա), դպիր Հարություն Շարբայանց (20 երեխա), Մանուկ Ամատունի (45 երեխա), դպիր Արսեն Կրիտյանց (28 երեխա), աստիճանավոր Պողոս Մալխասյանց (30 երեխա), դպիր Ադամ Թովմասյան (16 երեխա), դպիր Կարապետ Քրիշչյանցի (14 երեխա), դպիր Աղաջան Տեր-Կարապետյան (10 երեխա) (Տե՛ս **Խուդոյան Ս.Կ.**, Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին. Ժամանակագրությունը՝ հավելյալ մանրամասներով, Եր., Լույս, 1987, էջ 24):

<sup>48</sup> **Հ.Ղ.**, Ալեքսանդրապոլ//ՄՀ, 1873, №47, շաբաթ 8 դեկտեմբերի, էջ 2:

<sup>49</sup> Առաջին շրջանը վերաբերում է 1840-ական թվականներին:

հիմնավոր, կարդալու ժամանակ նշումներ անել, բարեխիղճ պատրաստվել դասին, լավագույնս տիրապետել այն առարկային, որը դասավանդում է և այլն<sup>50</sup>:

Լուսավորյալ ուսուցչական հանրույթը առանձնակի ուշադրություն է դարձնում մայրենի լեզվով դպրոցական դասագրքերի ստեղծման գործին: Ռուսերենից միջնորդավորված՝ թարգմանվում են ռուս, գերմանացի, անգլիացի ու ֆրանսիացի մանկավարժների և բժիշկների հեղինակած բազմաթիվ երկեր: Կ.Պոլսում, Թիֆլիսում, Մոսկվայում, Վենետիկում, Փարիզում, Սանկտ Պետերբուրգում ստեղծված պատմության, մայրենի լեզվի, ընթերցանության, բնագիտության, տրամաբանության հայկական դասագրքերից բացի, Ալեքսանդրապոլի դպրոցներում գործածվում էին Վ.Եվտուշնսկու, Ա.Բգնատովիչի, Ա.Դիստերվեզի, Ա.Գրուբեի, Ի.Պաուլսոնի, Կ.Ուշինսկու, Դ.Սեմենովի, Ս.Սմայլսի, Վ.Ֆարմակովսկու, Գ.Վազների, Ի.Գլավինսկու, Ա.Սկինոյի, Դ.Իլովայսկու, Վ.Վոդովոզովի՝ տարբեր առարկաների դասագրքերն ու ուսուցչական ձեռնարկները<sup>51</sup>:

Բարեփոխիչների և հասարակության դաշինքը հանուն հայ մանուկների բարօրության այնքան է սերտանում, որ դպրոցներից մի քանիսում խմորվում են

<sup>50</sup> **Ղուկասեանց Հ.**, Ժողովրդական ուսուցչի ինքնակրթութիւնը, // «Արարատ», 1873, թիւ Է, յուլիս 31, էջ 260-267: թիւ Ը, օգոստոս 31, էջ 293-304:

<sup>51</sup> Сборникъ арифметическихъ задачъ **В.Евтушевскаго**. Ч.І. Целия числа. Изд. 6-е. 1874. Элементарное объяснение явлений природы **А.Игнатовича**. СПб., 1872. Элементарная геометрия для школ и вообще для начинающих. Пер. с послед. Изд. **Соч. Адольфа Дистервега**. 2-е изд. СПб., Черкесов, 1873, 106 с; **Грубе А. В.** Очерки из истории и народных сказаний. (Новая история). Пер. с нем. 3-е изд. Москва, бр. Салаевы, 1873, 422 с. Элементарная физика по Крюгеру. Руководство для низших учеб. заведений. 2-е изд., испр. СПб., И.И. Паульсон, 1874, IV, 200 с; Книга для чтения и практических упражнений в русском языке. Учеб. пособие для нар. уч-щ. **Сост. И. Паульсон**; Родное слово. Год первый. Азбука и первая после азбуки книга для чтения с прописями, образцами для первоначальной рисовки и картинками в тексте. Для детей мл. возраста. **Сост. К. Ушинский**. 15-е изд. СПб., тип. А.М. Котомина, 1871, IV, 100 с; Родное слово. Год второй. Вторая после азбуки книга для чтения. Для детей мл. возраста. **Сост. К. Ушинский**. 13-е изд. СПб., тип. А.М. Котомина, 1871, 164, IV с.120; Уроки географии. Год 3. Европа. **Сост. Д. Семенов**. 6-е изд., испр. по новейшим сведениям. СПб., тип. И.И. Глазунова, 1874, 116с; Самодеятельность. (Self-Help.) **Сочинение Самуила Смайльса**. Перевод с английского с дополнениями Н. Кутейникова. СПб., Издание Колесова и Михина, 1872, VI, 542 с; Школьная диэстетика. Учение о сбережении здоровья детей, посещающих школу изложил по доктору Герману Кленке **Вл. Фармаковский**. Рекомендовано родителям и воспитателям Министерством народн. просв. Изд. 4-е, доп. по исслед. русских ученых и педагогов. Вятка, Печатня А. Красовского, 1874, 160с; Из природы. Рассказы для детей по **Герману Вагнеру**. С нем. В 3-х ч. Изд. переводчиц Трубниковой и Стасовой. 2-е изд. СПб., тип. Н. Неклюдова, 1870, 380 с; Начало линейного черчения. Учеб. пособие для приход. и сел. уч-щ. **Сост. Ив. Главинский**. 3-е изд. СПб., тип. Мор. М-ва, 1870, 186 с; Тетрадь черчения практической геометрии, приспособленная к преподаванию предварительного изучения архитектурного, машинного и перспективного черчения. Сост. учитель рисования и черчения 1 Моск. гимназии **А.Скино**. 3-е изд. Москва, бр. Салаевы, 1874, 8 с., 8 л.; Руководство к русской истории: курс старшего возраста. **Сост. Д. Иловайский**. Изд. 4-е. Москва, Тип. Грачева и К°, 1870-1871. Книга для первоначального чтения в народных школах. **Составил В. Водовозов**. СПб., Тип. И. И. Глазунова, 1871. Ч. 1, 287, XI с.

ազատագրական տրամադրություններ: Օր.՝ Արսեն (Կրիստյանց) և Ալեքսան (Արաբաջյան) խալֆաների<sup>52</sup> վարժատներում աշակերտները երգում էին հայտնի գրող Մ. Նալբանդյանի (1829-1866) «Ազատություն» բանաստեղծությունը.

Ո՛հ, փշոտ է ճանապարհը, / Քեզ շատ փորձանք կսպասե.

Ազատութիւն սիրողին, / Այս աշխարհը խիստ նեղ է<sup>53</sup>:

*Եզրահանգում.* Ալեքսանդրապոլում լուսավորչական շարժումը թափ էր հավաքում Հոգևոր դպրոցի ճիշտ կառավարման, դպրոցի հոգաբարձության կազմում ժողովրդավարական արժեքների ներթափանցման, հասարակության քաջալերանքի հաշվին: Շարժման առաջնորդները քաղաքի նորակազմ «Բարենպատակ» ընկերության հիմնադիր անդամներն էին, Սանկտ Պետերբուրգի համալսարանի ակադեմիկոսները, դպրոցներում աշխատող գրողները, հրապարակախոսները և մանկավարժները:

Հայ պարբերական մամուլի էջերում նրանց ստեղծած բանավիճային հարթակում հայկական կրթական կյանքի դրական ձեռքբերումները, այդ ոլորտում ռուսական և եվրոպական զարգացած երկրների փորձն Ալեքսանդրապոլում տեղայնացնելու վերաբերյալ արդյունավետ քննարկումներ էին ընթանում: Լուսավորչալ անհատները զարկ էին տալիս ժողովրդական լայն զանգվածների համար տարրական կրթության հասանելիության գաղափարին: Նրանք հիմնովին փոխում էին մայրենի և օտար լեզուների դասավանդման դրվածքը, ստեղծում կրթական նոր չափորոշիչներ և մեթոդական փաթեթներ, օրինակելի առարկայական ծրագրեր, մշակում ուսուցչի վարքականոսներ: Լուսավորչական շարժումը անխնա հատում ու մի կողմ էր նետում Ալեքսանդրապոլի դպրոցներում անցյալից մնացած վերապրուկները:

## ИЗ ИСТОРИИ ШКОЛ АЛЕКСАНДРОПОЛЯ

*Айвазян Г. С.*

**Ключевые слова:** *частная школа, просветительство, ученик-ученица, немецкий язык, прогресс, попечительство, педагог, учебник, общественный деятель, воспитание.*

В 60-70-х годах XIX века Александрополь был творческим очагом для многих педагогов и культурных деятелей. После ясного познания целей и средств

<sup>52</sup> Հին դպրոցներում՝ ավագ աշակերտ, որ փոքրերին դաս էր տալիս: (արհամարհ.) Տգետ ուսուցիչ, վարժապետ: Տե՛ս Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան: Ա-Ձ, Եր., «Հայաստան» հրատ., 1976, էջ 555:

<sup>53</sup> Խ.Խ., Ընթերցարան կամ դպրոց մանկանց: Տետրակ Բ. Ի տպարանի Վ. Արծունւոյն ի Վան ի Վարազ, 1876, էջ 62:

образования и воспитательных методов учителей, они повысили требования по отношению руководства частных-начальных школ. Частные школы находились под управлением дьячков, выпускников уездных училищ и духовных семинарий. Умственной и нравственной силой общества, практическим воспитательным тактом специалистов-педагогов удалось совершенствовать их педагогические знания и образ мыслей, изменить их отношение к своему делу.

В рамках преобразовательных мероприятий попечители школ Александрополя позаботились о достаточном количестве средств и материала для предметных уроков, т. е. пособий. Создались немалые коллекции пособий. Знакомство с текущей педагогической литературой помогало учителям создать или переводить школьные учебники по разным предметам - грамматике, арифметике, географии, истории, физике и проч.

## FROM THE HISTORY OF THE SCHOOLS OF ALEXANDRAPOL

*Ayvazyan G. S.*

**Key words:** *private school, enlightenment, student-schoolgirl, German language, progress, guardianship, teacher, public figure, upbringing.*

In the 60-70s of the XIX century, Alexandropol was a creative center for many educators and cultural figures. After a clear knowledge of the goals and means of education and educational methods of teachers, they increased the requirements for the management of private-elementary schools. Private schools were run by clerks, graduates of county schools and theological seminaries. The mental and moral strength of society, the practical educational tact of specialist teachers managed to improve their pedagogical knowledge and way of thinking, change their attitude to their work.

As part of the transformative measures, the trustees of the schools of Alexandropol took care of a sufficient amount of funds and material for subject lessons, i.e., manuals. The considerable pedagogical knowledge helped teachers to create or translate school textbooks in various subjects - grammar, arithmetic, geography, history, physics and so on.

## References

1. **Aghayan E. B.** Ardi hayereni bacatrankan barraran: A-DZ, Yerevan, «Hayastan» hratarakchut'yun, 1976 (In Armenian).
2. **Ananin P.** Aleqsandropol//«Kavkaz», 1874, №16 (In Russian).
3. «Ararat», t'iv 10, 1877, september 30 (In Armenian).
4. **Darbneants' S.** Namak Agheqsandrapolic//«Meghu Hayastani», 1872, №12, shabat' 20 mayisi (In Armenian).
5. **Geghameants' Y.** Akhalekhyayic minchev Ani//«P'ordz», Tpkhis, 1880, april № IV (In Armenian).

6. **Ghukaseants' H.** Zhoghovrdakan usucichi ink'nakrt'ut'yun@ //«Ararat», 1873, t'iv 5, yulis 31, t'iw Y, ogostos 31 **(In Armenian)**.
7. **Hayaser** Mer nerqin gortser // «Haykakan ashkharh», 1871, № 4-5 **(In Armenian)**.
8. «Haykakan ashkharh», T'iflis, 1867, № 4-5, april-mayis **(In Armenian)**.
9. **Haykaznean P. D.** Mi qani khosq «Ptoyt» yoduatsi dem, vor@ tpuac e Meghu H-i 21 hamarum//«Meghu Hayastani», 1869, №27, yulisi 19 **(In Armenian)**.
10. **Haykazean P.** Khmbagrut'ean Ararat amsagroy//«Ararat», 1870, t'iw ZHB, april **(In Armenian)**.
11. **Haykazuni P.** Paron khmbagir, khndrem ays mi k'ani teghekut'iwnk'!@ barehachiq hratarakelu dzer Iragri mijnordut'eamb//Meghu Hayastani»,1872,№1,shabat' 4marti **(In Armenian)**.
12. **H.GH.** Aleqsandrapol//«Meghu Hayastani»,1873, № 47, shabat' 8 dektemberi **(In Armenian)**.
13. **Hur-her** Aleqsandrapol//«Meghu Hayastani», 1874, № 17, shabat' 4 mayisi **(In Armenian)**.
14. **Isakeanc A.** Alesandrapolu hiwandanots'y//«Meghu Hayastani», 1871 ogostos 7, №30 **(In Armenian)**.
15. **Kalantarov"** Erivan//«Kavkaz"», 1871, № 49 **(In Armenian)**.
16. **KH.KH.** Ynt'ercaran kam dproc mankanc: Tetrak B. I tparani V. Artsunyini Vani Varag, 1876 **(In Armenian)**.
17. **Khojaeants' Y.** Giwmri//«Ararat», Vagharshapat, 1871, t'iv 9, yunvar **(In Armenian)**.
18. **Khudoyan S. K.** Arevelahay dprocner@ 1830-1920 t'vakannerin (zhamanakagrut'yun havelyal manramasnerov), Yerevan, Luys, 1987 **(In Armenian)**.
19. **Qocharean M.** Namak Aleqsandropolite // «Haykakan ashkharhi krrunk», T'iflis, 1865, № 7-8 **(In Armenian)**.
20. «Meghu Hayastani», 1871, №17, mayis 8 **(In Armenian)**.
21. «Meghu Hayastani», 1872, №21, 22 yulisi **(In Armenian)**.
22. «Meghu Hayastani», 1872, №22, shabat' 29 yulisi **(In Armenian)**.
23. «Meghu Hayastani», 1873, №50, shabat' 29 dektemberi **(In Armenian)**.
24. «Meghu Hayastani», 1874, №3, shabat' 19 yunvari **(In Armenian)**.
25. «Meghu Hayastani», 1875, №47, dektemberi 6 **(In Armenian)**.
26. **Marut'eanc S.** Mek qani khosq Agheqsandrapoli veray//«Ararat», t'iv 6, 1869 **(In Armenian)**.
27. **Matineants' K.** Khmbagrut'ean Ararat amsagroy//«Ararat», 1870, t'iv 1, mayis **(In Armenian)**.
28. **Metsatuneanc Ye.** Hayotc Hogeovor Usumnaran Agheqsandrapoloy // «Ararat», 1871, t'iv 4, ogostos 31 **(In Armenian)**.
29. **Namak Aleqsandrapolic** //«Mshak», T'iflis, 1873, №31, ogostosi 16 **(In Armenian)**.
30. **N.B.S.** Yargoyapatiw khmbagir „Meghu Hayastanii“//«Meghu Hayastani»,1871, №32, ogostos 28 **(In Armenian)**.
31. **Sbornik" statisticheskikh" svedeniy o Kavkaze. Tom" I. Tiflis", 1869. Otdel I.III. Materialy dlya statistiki Erivanskoy gubernii** **(In Russian)**.

32. Statisticheskiye svedeniya o chastnykh shkolakh Erivanskoy gubernii. Kavkazskiy kalendar' na 1871 god". Tiflis, v tipografii glavnago upravleniya namestnika Kavkazskago, 1870, Otd. II **(In Russian)**.
33. Tsirkulyar" po upravleniyu Kavkazskim" uchebnym" okrugom". 1871 №№ 5 i 6. Otchet popechitelya Kavkazskago uchebnago okruga za 1870 god" **(In Russian)**.
34. **Vardanean P'**. Germanakan mankavarzhut'ean karevorutyun@//«Arevlyan mamul», Zmurnia, 1873, mayis **(In Armenian)**.
35. **V. Namak Aleqsandrapolic**//«Mshak», 1874, №22, yunisi 6 **(In Armenian)**.
36. Voyenno-statisticheskiy sbornik". Vipusk" IV. Rossia. SPb., Pechatano v Voyennoy Tipografii, 1871, Otdel II **(In Russian)**.
37. **Yeritsov A.** Ob" armyanskikh" shkolakh"//«Kavkaz"», Tiflis", 1873 №114 **(In Russian)**.
- 38.\*\*\*, Im chanaparhordakan tpavorut'yunner@//«Meghu Hayastani», 1874, №13, shabat' 30 marti **(In Armenian)**.
- 39.\*\*\*, Namak Aleqsandrapolic//«Mshak», 1873, № 40, hoktemberi 18 **(In Armenian)**.
- 40.\*\*\*, Tskhakan dprocneri vichak@ //«Ararat», 1872, t'iv 1, yunvar **(In Armenian)**.

*Ընդունվել է՝ 01.03.2020*

*Գրախոսվել է՝ 11. 09. 2020*

*Հանձնվել է տպ.՝ 20. 11. 2020*

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Գևորգ ԱՅՎԱԶՅԱՆ՝** պատմական գիտությունների թեկնածու,

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի

գիտաշխատող, էլ. հասցե՝ AyG.84@mail.ru

Ա Շ Խ Ա Ր Հ Ա Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
ВСЕМИРНАЯ ПОЛИТИКА  
WORLD POLITICS

ՀՏԴ՝ 94

ԱՄՆ-Ի ՀԵՏՄԱՌԸՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԵՐՉԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ

ՀԻՄՔԵՐԻ ՇՈՒՐՁ

*Աստղիկ Հայրապետյան*

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

**Բանալի բառեր՝** *Մերձավոր Արևելք, Բարայել, Պաղեստինի ազատագրման կազմակերպություն, ՄԱԿ, Անվտանգության խորհուրդ, ակտ, բանաձև, համաձայնություն, Բրաք, Բրան:*

Հոդվածում ներկայացվում է Սառը պատերազմի և հետսառըպատերազմյան առաջին տասնամյակում ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության իրականացման իրավապայմանագրային հիմքը, լուսաբանվում են առանցքային իրավական փաստաթղթերի առանձնահատկությունները, վերլուծվում վերջիններիս նշանակությունը ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության կազմակերպման տեսանկյունից: Այս համատեքստում փորձ է արվել զարգացնելու արևմտյան և ռուս քաղաքագետների նորագույն գործերում խնդրո առարկային վերաբերող որոշ դրույթներ՝ վերջիններիս առնչվող միջազգային և ներպետական իրավապայմանագրային հիմքի ուսումնասիրության համադրմամբ:

**Նախաբան.** Հետսառըպատերազմյան շրջանում Մերձավոր Արևելքում դիրքերի ամրապնդման և տարածաշրջանային քաղաքականության լեգիտիմացման տեսանկյունից ԱՄՆ-ին անհրաժեշտ էր իրավական և պայմանագրային ամուր հիմքերի ստեղծումը: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերը, իսրայելա-արաբական

խաղաղության գործընթացի շրջանակներում ձեռք բերված միջազգային համաձայնագրերը և ԱՄՆ-ի ներքին իրավական ակտերը ծառայեցին որպես տարածաշրջանում ընդլայնվելու ուղղակի և անուղղակի ազդեցության միջոցներ<sup>12</sup>:

**Խաղաղության գործընթացի շրջանակներում ընդունված ՄԱԿ-ի ԱԽ-ի բանաձևերը**

ԱՄՆ-ը իսրայելա-արաբական խաղաղության բանակցային գործընթացի սկզբից հանդես եկավ որպես միջնորդ, իսկ 20-րդ դարի 60-70-ականներին ԽՍՀՄ-ի գործուն մասնակցությամբ մշակեց արաբա-իսրայելյան հակամարտության խաղաղ կարգավորման հիմնարար սկզբունքները, որոնք ամրագրվեցին ՄԱԿ-ի ԱԽ-ի 242-րդ (1967թ.) և 338-րդ (1973թ.) բանաձևերում<sup>3</sup>՝ ձևավորելով խաղաղության գործընթացի հիմքը: Այս բանաձևերը կոչ էին անում Իսրայելին դուրս բերելու իր զինված ուժերը 1967թ. «օկուպացված տարածքներից»՝ փոխարենը ստանալով անվտանգության երաշխիքներ հարևաններից և սկսել բանակցություններ՝ կրակի դադարեցման նախապայմանով: Արաբական երկրների համար բանաձևի ընդունումը կնշանակեր Իսրայել պետության գոյության ճանաչումը: Նրանք նաև դժգոհ էին փախստականների վերադարձի մասին 194-րդ բանաձևին անհրաժեշտ հղման բացակայությունից, քանի որ 242-րդ բանաձևում խոսվում էր միայն բնակեցման մասին<sup>4</sup>: Ինչ վերաբերում էր Իսրայելի կողմից զինված ուժերի հետքաշմանը, ապա դրանցում առկա էր «գրավյալ տարածքներ» արտահայտության անգլերեն (*territories occupied*) և ֆրանսերեն (*des territoires*) տարբերակների սուբյեկտիվ մեկնաբանում՝ իսրայելական զինված ուժերը որոշ տարածքներից, թե բոլոր գրավյալ տարածքներից դուրս բերելու մասով:

Չնայած հակամարտության կողմերի շրջանում տիրող նման ոչ միանշանակ մոտեցմանը՝ 1988թ. Պաղեստինի ազատագրման կազմակերպությունը, առանց Իսրայելի փոխադարձության, ի դեմս Յասիր Արաֆատի ՄԱԿ-ի ԳԱ-ի նիստում հայտարարեց, որ հրաժարվում է ահաբեկչության բոլոր տեսակներից<sup>5</sup> և ՄԱԿ-ի ԱԽ-ի 242-րդ և 338-րդ բանաձևերը համարում է բանակցային գործընթացի հիմք ու ճանաչում «մերձավորարևելյան հակամարտության բոլոր կողմերի, ինչպես նաև Պաղեստին և

<sup>1</sup> Le Billon, P., El Khatib, F. (March 2004) "From free oil to 'freedom oil': terrorism, war and U.S. Geopolitics in the Persian Gulf", *Geopolitics*, Volume 9, Issue 1 p. 109.

<sup>2</sup> Review (Winter 1982): "State Power and Industry Influence: American Foreign Oil Policy in the 1940s", *International Organization* 36, no. 1 p. 168, Նախորդ դարասկիզբը նշանավորվում է ԱՄՆ-ի և Մերձավոր Արևելքի համագործակցության 1928թ. «Կարմիր գծի պայմանագրի» ստորագրմամբ, որով փորձ էր արվում սահմանափակել նավթի մատակարարումները և նավթի գնի վերահսկման հարցում ապահովել ամերիկյան ընկերությունների առաջնայնությունը համաշխարհային շուկայում:

<sup>3</sup> Сурков Н. Юр. Политика США в ближневосточном урегулировании в 70-е гг., стр. 4 XX в. - начале XXI в., стр. 4.

<sup>4</sup> *UN Resolutions 242 and 338, Te Reaut Institute, 11.11.04, <http://www.reut-institute.org/>.*

<sup>5</sup> Backchannel Message From Secretary of State Kissinger to the Egyptian Presidential Adviser for National Security Affairs (Ismail). Washington, October 24, 1973.//*Arab-Israeli Crisis and War, 1973*, p. 720—721, <https://history.state.gov/>.

Իսրայել պետությունների խաղաղ և անվտանգ համակեցությունը»<sup>6</sup>: Սա ողջունվեց ԱՄՆ-ի կողմից, և սկսած 1988թ.-ից, ԱՄՆ-ը արդեն միջնորդական հարաբերություններ էր հաստատել հակամարտության բոլոր կողմերի հետ<sup>7</sup>:

Դեռևս 1991-ի մարտի 6-ին, Ջորջ Բուշ Ավագը հստակեցրեց ԱՄՆ-ի դերը խաղաղության գործընթացում. «Այս տարածաշրջանի բոլոր խնդիրների համար չկա մեկ լուծում, չկա բացառապես ամերիկյան պատասխան: Ամերիկյան աշխատելու է անխոնջ՝ հանդես գալով որպես դրական փոփոխությունների կատալիզատոր»<sup>8</sup>: Սա վկայում էր, որ Վաշինգտոնը հակամարտության կողմերի նախաձեռնողականության պայմաններում մտադիր էր նույնիսկ Քուվեյթի ճգնաժամից առաջ շարունակել ակտիվ միջնորդությունը՝ երկխոսության խթանման և դյուրացման ճանապարհով<sup>9</sup>:

Ծոցի ճգնաժամից հետո տարածաշրջանում ԱՄՆ-ը կայունության և խաղաղության հասնելու մեծագույն խոչընդոտ սկսեց դիտարկել արմատական իսլամական ահաբեկչությունը: Եթե ի սկզբանե բանաձևերում տեղ գտած «անվտանգության երաշխիքներ» եզրույթը մեկնաբանվում էր որպես Իսրայելի հարևան պետությունների կողմից զենքի կիրառման նկատմամբ միջազգային վերահսկողության սահմանումով, ապա առաջնականացված գոտիների ստեղծումով, վաղ նախազգուշացման համակարգի և միջազգային խաղաղապահների առկայությամբ ազդեցիկացրած հրաժարումով, ապա սկսած 90-ականների վերջից ԱՄՆ-ը և Իսրայելը այն սկսեցին մեկնաբանել Իսրայելի յուրաքանչյուր քաղաքացու ֆիզիկական անվտանգության երաշխավորման լույսի ներքո, որի չափահավման պարագայում Իսրայելից չի պահանջվելու դուրս գալ «օկուպացված տարածքներից»<sup>10</sup>:

Հաճախ ԱՄՆ-ը, մասնակցելով բանաձևերի ընդունմանը, հետագայում չէր ցուցաբերում գործնական հետևողականություն դրանց իրականացման հարցում, հատկապես, երբ դրանք վերաբերում էին Իսրայելի քննադատությանը<sup>11</sup>: Մասնավորապես, ՄԱԿ-ի ԱԽ-ի 446-րդ (1979 թ.) և 465-րդ (1980 թ.) բանաձևերը, որ պահանջում էին Իսրայելից դուրս գալ Գազայի հատվածի, Արևելյան Երուսաղեմի և Հորդանան գետի արևմտյան ափի օկուպացված տարածքից, քանի որ դա միջազգային հումանիտար ի-

<sup>6</sup> **Сурков Н. Юр.**, նշվ. աշխ., էջ 69:

<sup>7</sup> Statement on Diplomatic Talks With the Palestine Liberation Organization, December 14, 1988, <http://www.reagan.utexas.edu>

<sup>8</sup> After The War: The President; Transcript of President Bush's Address on End of the Gulf War, March 7, 1991, The New York Times, [www.nytimes.com](http://www.nytimes.com) .

<sup>9</sup> **Сурков Н. Юр.**, նշվ. աշխ., էջ 88:

<sup>10</sup> **Ronny Modigs**, MAJ, Swedish Armed Forces, United States Foreign Policy in The Middle East After The Cold War, Kansas, 2003, p. 30.

<sup>11</sup> 1972-2000թթ. ԱՄՆ-ը մոտ 40 անգամ դեմ է հանդես եկել ՄԱԿ-ի ԱԽ-ի կողմից ընդունված նման բանաձևերի ընդունմանը (տե՛ս **Նույնը**):

րավունքից՝ Ժնևի 4-րդ կոնվենցիայի պահանջներից էր բխում (անօրինական է համարվում զինված ուժերի կողմից բռնազավթված հողերի վրա խաղաղ քաղաքացիական բնակչության բնակեցումը): Բանաձևն անօրինական էր ճանաչում Իսրայելի կողմից 1967թ. գրավումը և պնդում, որ այն խոչընդոտ է Մերձավոր Արևելքում խաղաղության հաստատմանը: Սակայն, 1997թ. ԱՄՆ պետքարտուղար Ուորրեն Բրիստոֆերի՝ Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուին ուղղած "Letter of Assurance"-ում, նշվում էր, որ ԱՄՆ-ը ձեռնպահ է մնում ՄԱԿ-ի ձևակերպումներից՝ «օկուպացված տարածքների» փոխարեն առաջարկելով «վիճելի տարածքներ» տարբերակը:

Հետսատր պատերազմյան շրջանում՝ մասնավորապես Օսլոյի մեկնարկին զուգահեռ (1993թ.), ակնհայտ դարձավ, որ ՄԱԿ-ը այլևս գլխավոր դերակատարը չէ խաղաղության գործընթացում, և Օսլոյի համաձայնությունները գերակայություն ունեն ՄԱԿ-ի բանաձևերի նկատմամբ<sup>12</sup>:

Այս համատեքստում հատկանշական է նաև ԱՄՆ-ի մասնակցությունը 2002թ.-ից ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հիմնասյուներից մեկին՝ ահաբեկչության դեմ պայքարին առնչվող ՄԱԿ-ի ԱԽ-ի բանաձևերի մշակմանը: Ի դեպ, ԱՄՆ-ի միջնորդությամբ ընդունված այդ բանաձևերը հաճախ դատապարտում էին հենց Իսրայելի գործողությունները՝ պահանջելով հետևել միջազգային հումանիտար իրավունքի նորմերին:

Դրանցից էր Իբրահիմ մզկիթում (Նախահայրերի քարանձավ) առանց քվեի ընդունված պաղեստինցի հավատացյալների կոտորածը դատապարտող ՄԱԿ-ի ԱԽ-ի 904-րդ (1994թ.) բանաձևը: Կոտորածը հարվածի տակ էր դնում Օսլոյի գործընթացը, ուստի ՄԱԿ-ը, վկայակոչելով պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին Ժնևի 4-րդ կոնվենցիան, պահանջեց Իսրայելից՝ օկուպացնող ուժից, շարունակել առգրավել հրեաների մոտ առկա զենքերը՝ կանխելու համար նման գործողությունները<sup>13</sup>:

Այս շարքից էր նաև ՄԱԿ-ի ԱԽ-ի 1322-րդ (2000թ.) բանաձևը, որը Երուսաղեմի Ալ-Հարամ Ալ-Շերիֆում տեղի ունեցած կոտորածի արձագանքն էր: Բանաձևը պա-

<sup>12</sup> **Ronny Modigs** MAJ, Swedish Armed Forces, United States Foreign Policy in The Middle East After The Cold War, Kansas, 2003, p.30, մասնավորապես այստեղ կարելի է մեջբերել Մադլեն Օլբրայթին, որ նշում էր, որ «վերջնական կարգավիճակ» առաջ քաշող բանաձևերի լեզուն և ձևակերպումները պետք է փոփոխվեն, քանի որ դրանք բանակցության առարկա են հակամարտության կողմերի միջև՝ ընդգրկելով ինքնիշխանության, Իսրայելի վերջնական կարգավիճակի, տարածքային, բնակավայրերի ու փախստականների հարցերը:

<sup>13</sup> Resolution 904 (1994) Adopted by the Security Council at its 3351st meeting, 18 March 1994, <http://unscr.com>.

հանջում էր անհապաղ դադարեցնել առճակատումը, անցկացնել ողբերգական դեպքերի օբյեկտիվ քննություն, ապահովել խաղաղությունը՝ սադրանք համարելով Արիել Շարոնի այցը<sup>14</sup>:

**Խաղաղության գործընթացում ձեռք բերված համաձայնությունները**

Օոցի ճգնաժամից հետո՝ սկսած 1991թ. փետրվարից, ԱՄՆ-ի նախագահ Ջ. Բուշ Ավագի կողմից նախաձեռնվեցին արաբա-իսրայելական խաղաղության գործընթացի բանակցությունների հրավիրման գործողություններ<sup>15</sup>: 1991թ. մարտին ԱՄՆ-ի պետքարտուղար Ջեյմս Բեյքերի մերձավորարևելյան շրջայցը ցույց տվեց, որ հակամարտող կողմերը գործնականում պատրաստ են ՄԱԿ-ի ԱԽ-ի 242-րդ և 338-րդ բանաձևերի հիման վրա իսրայելա-արաբական և իսրայելա-պաղեստինյան բանակցությունների վարմանը<sup>16</sup>:

Սակայն 1992թ. նոյեմբերին դեմոկրատ Բիլլ Քլինթոնի նախագահ ընտրվելուց հետո սկզբնական շրջանում խաղաղության գործընթացում ակտիվ դիվանագիտական նախաձեռնություններ տեղի չունեցան: Նոր պետքարտուղար Ու. Քրիստոֆերի դիրքորոշումն այս հարցում զգուշավոր էր, իսկ Բ. Քլինթոնը գտնում էր, որ ԱՄՆ-ը պետք է օգնի կողմերին խաղաղության հասնելու գործում՝ առանց բանակցային գործընթացում սեփական գործողություններով շրջադարձային և ժամանակավրեպ փոփոխություններ<sup>17</sup>: Բ. Քլինթոնը կարևորում էր նախևառաջ իսրայելա-սիրիական խնդրի լուծումը, ինչն օրինակ կհանդիսանար Հորդանանի և Լիբանանի համար՝ հնարավորություն տալով երկկողմանի փոխզիջումներ կորզել Իսրայելից և ՊԱԿ-ից<sup>18</sup>: Սակայն կողմերը

<sup>14</sup> Resolution 1322 (2000) Adopted by the Security Council at its 4205th meeting, 7 October 2000, <http://unscr.com>, Այն սադրանք համարեց Արիել Շարոնի այցը Տաճարի լեռ կամ ինչպես մուսուլմաններն են ասում՝ Հարամ աշ-Շարիֆ, որտեղ գտնվում է մահմեդականների 3-րդ սրբությունը՝ ալ-Աքսա մզկիթը: Այցը ուղեկցվում է պաղեստինցիների բողոքի ցույցերով, ինչին ի պատասխան սկսվում է բախում Շարոնին և Լիքուդ կուսակցության ներկայացուցիչներին ուղեկցող փողոցային անկարգությունները կանխարգելող ոստիկանների միջև: Սա կրում է մասսայական բնույթ, Արևելյան Երուսաղեմում և այլ վայրերում ուղեկցվում է ազգամիջյան բախումներով, որին զոհ է գնում մոտ 80 պաղեստինցի:

<sup>15</sup> G. H. W. Bush. Address Before a Joint Session of Congress on the End of the Gulf War, March 6, 1991, <https://millercenter.org/>, Կոնգրեսի երկու պալատների առջև ունեցած ելույթում Ջ. Բուշ Ավագը նշեց, որ Օոցում պատերազմի ավարտը պետք է լինի պատմության մեջ առաջին անգամ ընդհանուր ազդեցորի դեմ միավորված Իսրայելի և արաբական երկրների միջև խաղաղության հաստատման սկիզբ:

<sup>16</sup> Сурков Н. Юр., նշվ. աշխ., էջ 92: Մադրիդյան կոնֆերանսի ձեռքբերումը նախևառաջ այն էր, որ մասնակիցները համաձայնության եկան «խաղաղություն՝ տարածքների փոխարեն» սկզբունքի շուրջ, և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 242-րդ և 338-րդ բանաձևերի վկայակոչմամբ՝ արաբական երկրները, հետևելով Եզիպտոսին, փաստացիորեն ճանաչեցին Իսրայելը որպես իրավահավասար գործընկեր՝ համաձայնելով ուղիղ բանակցություններ վարել վերջինիս հետ:

<sup>17</sup> Ronny Modigs, նշվ. աշխ., էջ 26:

<sup>18</sup> Сурков Н. Юр., նշվ. աշխ., էջ 96:

համաձայնության չեկան իրադրության կայունացման, տարածքային հարցերի ու իսրայելական զինուժի դուրսբերման գործընթացի հերթականության շուրջ<sup>19</sup>:

Ստեղծված փակուղում իսրայելա-պաղեստինյան ուղղությանը շունչ հաղորդեցին Իսրայելի ու ՊԱԿ-ի միջև Նորվեգիայի միջնորդությամբ 1993թ. հունվար-օգոստոս ամիսներին կայացած գաղտնի բանակցությունները: Նորվեգական և իսրայելական կողմերի առաջարկով համաձայնությունը ստորագրելու էր Վաշինգտոնում՝ հաշվի առնելով դրա իրականացման համար անհրաժեշտ երաշխիքները և ԱՄՆ-ի քաղաքական ու ֆինանսական աջակցության կարիքը:

ԱՄՆ-ի պահանջով կողմերը նախքան համաձայնությունը ստորագրելը հայտարարեցին միմյանց փոխադարձաբար ճանաչելու մասին<sup>20</sup>:

1993թ. օգոստոսի 20-ին Իսրայելի և ՊԱԿ-ի միջև Օսլոյում ստորագրվեց խաղաղության համաձայնագիր, որով Հորդանան գետի արևմտյան ափին և Գազայի հատվածում ստեղծվեց Պաղեստինյան ազգային վարչություն (ՊԱՎ): Համաձայնագրով վերջ դրվեց առաջին ինտիֆադային: Օրեր անց՝ սեպտեմբերի 13-ին, Վաշինգտոնում Իսրայելի և ՊԱԿ-ի միջև ստորագրվեց Անցումային ինքնակառավարման համաձայնությունների մասին սկզբունքների հռչակագիրը, որը ներառում էր օգոստոսի համաձայնության հիմնական սկզբունքները<sup>21, 22</sup>:

Խաղաղության լրացուցիչ ազդակ էր Օսլո-2 համաձայնագիրը: Համաձայնությունն առաջին անգամ ստորագրվեց 1995թ. սեպտեմբերի 24-ին Թաբայում՝ Եգիպտոսում, և 4 օր անց՝ սեպտեմբերի 28-ին, Վաշինգտոնում Յ. Ռաբինի և Յ. Արաֆատի միջև: Օսլո 2-ը ենթադրում էր պաղեստինյան օրենսդրական խորհրդի ստեղծում<sup>23</sup>:

Այսպիսով, չնայած ԱՄՆ-ը չմասնակցեց Օսլոյին, այն կարևոր դեր խաղաց բանակցված համաձայնագրով սկիզբ առած հետագա գործընթացում: Հակամարտության բոլոր կողմերը ճանաչում էին ԱՄՆ-ի հեղինակությունը և դերը թե՛ որպես

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 100: Իցհակ Ռաբինի կողմից տարածքներից «ամբողջական դուրս գալուն» 1992թ. համաձայնելուց 2 տարի անց պարզվեց, որ սիրիական կողմն ընդհանրապես այլ կերպ է պատկերացնում այն (ի հակադրումն իսրայելական 5-ամյա անցումային շրջանին, ամերիկյան արագ արձագանքման ուժերի տեղակայման և կայունացման առաջարկին՝ սիրիացիները պահանջում էին ՄԱԿ-ի 242-րդ բանաձևի իրականացում և 1923թ. ենթամանդատային տարածքների սահմանի վերականգնում):

<sup>20</sup> Նույնը:

<sup>21</sup> **Ronny Modigs**, MAJ, Swedish Armed Forces, United States Foreign Policy in The Middle East After The Cold War, Kansas, 2003, p. 26.

<sup>22</sup> Declaration of Principles on Interim Self-Government Arrangements, September 13, 1993, <https://mfa.gov.il/>, ենթադրվում էր, որ անցումային միջանկյալ շրջանը չպետք է զերագանցեր 5 տարին՝ սկսվելով իսրայելական զինուժի դուրսբերմամբ՝ համաձայն Գազա-Երիքով համաձայնագրի (1994թ.), և շարունակվելով առավելագույնը մինչև 1999թ., իսկ վերջնական կարգավորումը պետք է հիմնված լիներ ՄԱԿ-ի ԱԽ-ի 242-րդ և 338-րդ բանաձևերի վրա՝ որպես խաղաղության գործընթացի հիմքի:

<sup>23</sup> Նույնը:

միջնորդ, թե՛ որպես երաշխավոր ու ֆինանսական դոնոր: Մա արտահայտվեց նաև 1994թ.-ին՝ Հորդանան-Իսրայել խաղաղության պայմանագրի նախապատրաստման և ստորագրման ժամանակ: Պայմանագիրը լուծում էր երկու երկրների միջև հարաբերությունները, ճշգրտում հողի և ջրի վեճերը և նախատեսում լայնածավալ համագործակցություն զբոսաշրջության և առևտրի ոլորտում: Ո՛չ Հորդանանը, ո՛չ էլ Իսրայելը չպետք է թույլ տային որևէ երրորդ կողմի օգտագործել իրենց տարածքը Հորդանանին կամ Իսրայելին հարված հասցնելու համար<sup>24</sup>:

1997 թ. ՄԱԿ-ի ԱԽ-ի մեծամասնությունը երիցս պահանջեց Իսրայելից դադարեցնել բնակավայրերի կառուցումը Երուսաղեմի Հար Հոնա արվարձանում: ԱՄՆ-ը վետո դրեց այդ բանաձևերի վրա, չնայած 1996թ. դեկտեմբերին նախագահ Քլինթոնը Իսրայելի բնակելի տարածքների կառուցման քաղաքականությունը անվանել էր «խաղաղության խոչընդոտ»: 1998-ի հոկտեմբերին ԱՄՆ-ի 9-օրյա միջնորդական գործողությունների արդյունքում Մերիլենդում ստորագրվեց Ուայ Ռիվերի հուշագիրը<sup>25</sup>: Այն նախատեսում էր Իսրայելի՝ Արևմտյան ափի 13 տոկոսից դուրս գալը, 750 պաղեստինցի բնակարկայների ազատ արձակումը և Գազայի օդանավակայանի բացումը: Դրա դիմաց պաղեստինցիները համաձայնեցին դուրս բերել 26 հակաիսրայելական կետեր ՊԱԿ-ի կանոնադրությունից, ձերբակալել Իսրայելի կողմից հետախուզվող կասկածյալների, հետախուզական տեղեկատվություն տրամադրել Իսրայելի անվտանգությանը և նվազեցնել ոստիկանների քանակը՝ ուժի սահմանափակումներին համապատասխանելու համար: Իսրայելը և ՊԱԿ-ը վավերացրին համաձայնագիրը: Հետևելով համաձայնագրի դրույթներին՝ Իսրայելը դուրս եկավ Արևմտյան ափի որոշ շրջաններից, իսկ ՊԱԿ-ի կողմից ՊԱԿ-ի կանոնադրությունից հանվեցին հակաիսրայելական 26 դրույթները:

1993-2000թթ. ԱՄՆ-ը միջնորդեց մի շարք համաձայնագրեր, որոնք հանգեցրին Իսրայելի գործերի դուրսբերմանը Գազայի հատվածի մեծ մասից և Արևմտյան ափի շրջաններից՝ պաղեստինցիներին 1-ին անգամ տալով ինքնավարության աստիճան: Սակայն այդ ընթացքում Իսրայելը սահմանափակեց պաղեստինցիների շարժունակությունը տվյալ տարածքների ներսում և Գազայի ու Արևմտյան ափի միջև<sup>26</sup>:

Խաղաղության բանակցությունները շարունակելու համար 2000թ. հուլիսի 5-ին ԱՄՆ-ի նախագահ Բ. Քլինթոնը վարչապետ Է. Բարակին և Յ. Արաֆատին հրավիրեց Քեմփ Դեյվիդ: Նոր բանակցություններում ամենաբարդը Երուսաղեմի կարգավիճակի և պաղեստինցի փախստականների վերադարձի հարցի շուրջ համաձայնության գալն

<sup>24</sup> Treaty of Peace Between the State of Israel and the Hashemite Kingdom of Jordan, <https://peacemaker.un.org/>.

<sup>25</sup> The Wye River Memorandum Archived 15 July 2001 at the Wayback Machine. Knesset website, 23 October 1998, <https://web.archive.org/>.

<sup>26</sup> **Ronny Modigs**, նշվ. աշխ., էջ 28:

էր: Քլինթոնն առաջարկում էր պաղեստինցիներին հանձնել Արևմտյան ափի նախ 73 տոկոսը, ապա հաջորդ 10-25 տարիների ընթացքում՝ 94 տոկոսը (առանց Արևելյան Երուսաղեմի): Այս տարածքների վրա պետք է հռչակվեր անկախ պաղեստինյան պետություն, 100.000 փախստականները վերադառնալու էին իրենց երկիր՝ Երուսաղեմի հարավային ու հյուսիսային պաղեստինցիներով բնակեցված շրջաններ: Բարայելը վերահսկելու էր Արևմտյան ափի ջրային ակունքների մեծ մասը և պաղեստինցիների մասնակցությամբ Հորդանանի ու Եգիպտոսի հետ արտաքին սահմանը: Բանակցությունները ձախողվեցին՝ ըստ ԱՄՆ-ի Յ. Արաֆաթի մեղքով<sup>27</sup>:

2000թ. դեկտեմբերի 24-ին Բ. Քլինթոնը հանդես եկավ նոր առաջարկությամբ (**Clinton parameters**)՝ Երուսաղեմը բաժանել 3 մասի (Բարայելին անցնող քրիստոնեական կամ հայկական, հրեական, և մուսուլմանական թաղամասեր), ՊԱԿ-ին զիջել արևմտյան ափի 90%-ը, եթե Երուսաղեմն ու Մեռյալ ծովը համարվեն արևմտյան ափի մաս, փախստականներից 100.000-ի՝ Բարայել, իսկ մնացածի՝ Գազա ու Արևմտյան ափ վերադարձ, Բարայելի կողմից Արևմտյան ափի 95%-ի զիջում՝ դրա դիմաց ստանալով հրեական բնակավայրերը: Առաջարկները մերժվում են<sup>28</sup>:

Կողմերին հաշտեցնելու Բ. Քլինթոնի վերջին փորձը Թաբայի բանակցություններն էին՝ 2000թ. հունվարի 21-ին: Մակայն, ԱՄՆ այս բանակցություններում գերակա դիրքերից չներկայացավ: Ընդհանուր հայտարարությունում ուղղակի նշվեց, որ կողմերը երբեք այդքան մոտ չէին եղել համաձայնության ձեռքբերմանը<sup>28</sup>:

2000թ. ԱՄՆ-ում և Բարայելում դեկավարների փոփոխությունը այլևս չէր ենթադրելու ձեռք բերված արդյունքների հետագա զարգացում<sup>29</sup>:

### **Իրաքի ուղղությամբ ՄԱԿ-ի ԱԽ-ի ընդունած բանաձևերը զսպման դոկտրինի համատեքստում**

Բ. Քլինթոնի օրոք զսպման դոկտրինի ուղղակի հասցեատերն արաբական Մերձավոր Արևելքում Իրաքն էր: Այն նախևառաջ արտահայտվեց ՄԱԿ-ի ԱԽ-ի բանաձևերով, ինչի համար հող հանդիսացավ Ծոցի ճգնաժամը: Դատապարտելով Իրաքի ներխուժումը Քուվեյթ, ՄԱԿ-ի ԱԽ-ի 660-րդ (1990թ.) բանաձևով իր աջակցությունը հայտնելով բոլոր և հատկապես Արաբական պետությունների լիգայի կողմից իրադրությունը կարգավորելու համար ձեռնարկված քայլերին, պահանջեց առանց նախապայմանների դուրս բերել զորքերը մինչև 1990 թ. օգոստոսի 2-ը գոյություն ունեցած դիրքեր ու անհապաղ բանակցություններ սկսել<sup>30</sup>:

<sup>27</sup> Ronny Modigs, նշվ. աշխ., էջ 30.

<sup>28</sup> Taba Summit - Joint Statement - English (2001), Economic Cooperation Foundation, [https://ecf.org.il/media\\_items/949](https://ecf.org.il/media_items/949).

<sup>29</sup> Barak to Bush: Sharon is not bound by negotiating ideas (Communicated by the Prime Minister's Media Adviser), Israel Ministry of Foreign Affairs. February 8, 2001, <https://web.archive.org>

<sup>30</sup> Resolution 660 (1990) of 2 August 1990 of the Security Council, <http://unscr.com>

Իրաքի կողմից ՄԱԿ-ի ԱԽ-ի 660-րդ բանաձևի պահանջների չկատարումը 1990թ. օգոստոսի 6-ին հանգեցրեց նոր՝ 661-րդ բանաձևի ընդունմանը: Հիմք ընդունելով առանց զենքի կիրառման հարկադրանքի միջոցների կիրարկմամբ Կանտոնադրության VII գլխի դրույթները, վկայակոչելով ՄԱԿ-ի Կանտոնադրության 51-րդ հոդվածով հավաքական կամ անհատական ինքնապաշտպանության անօտարելի իրավունքը, ՄԱԿ-ի ԱԽ-ն այս բանաձևով նախատեսեց **տնտեսական հարկադրանքի կիրառում** Իրաքի նկատմամբ: Արգելվեց ցանկացած ապրանքի ներկրում Իրաքից և Քուվեյթից, ինչպես նաև արտահանում դեպի այդ երկրներ: Բացառություն էին կազմում հումանիտար օգնության շրջանակներում, բացառապես բժշկական նպատակների համար և սննդամթերքի մատակարարումը: Զուգահեռ ՄԱԿ-ի ԱԽ-ին առընթեր ստեղծվեց Անվտանգության խորհրդի Հատուկ հանձնաժողով, որն ամենօրյա ռեժիմով պետք է հետևեր բանաձևի դրույթների կատարմանը: Միջազգային հանրությունը պարտավորվում էր չճանաչել Իրաքում ձևավորված օկուպացիոն ռեժիմը, իսկ վերոնշյալ ֆինանսական և տնտեսական հարկադրանքները չպետք է որևէ կերպ խոչընդոտեին միջազգային հանրության կողմից Քուվեյթի օրինական իշխանություններին աջակցելուն<sup>31</sup>:

660-րդ և 661-րդ բանաձևերի դրույթների չկատարմանը հետևեց 678-րդ (1990թ. նոյեմբերի 29) բանաձևի ընդունումը, որը Քուվեյթի օրինական իշխանությունների հետ համագործակցող պետություններին իրավունք էր տալիս Իրաքի կողմից 660-րդ բանաձևի պահանջները չկատարելու դեպքում ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ ընդհուպ մինչև ուժի կիրառում, 660-րդ և հաջորդած բանաձևերի իրականացման ուղղությամբ<sup>32</sup>: Այս բանաձևի հիմքերի վրա էլ ձևավորվեցին ԱՄՆ-ի գլխավորությամբ ՄԱԿ-ի հովանու ներքո գործող կոալիցիոն ուժերը<sup>33</sup>: Փաստորեն 678 բանաձևը օրինականացնում էր ուժի կիրառումը Իրաքի կողմից ագրեսիայի շարունակման դեպքում:

Հարկ է նշել, որ Քուվեյթի ճգնաժամը, Ծոցի պատերազմը և կոալիցիոն ուժերի գործելը դեռևս սառը պատերազմյան շրջանից եկած Քարտերի դոկտրինի գործնականում 2-րդ կիրառումն էր: Այդ դոկտրինը հրապարակ եկավ ԽՍՀՄ-ի՝ 1979թ. Աֆղանստան ներխուժումից հետո: Մասնավորապես նշվում էր, որ Պարսից ծոցի տարածաշրջանի նկատմամբ վերահսկողություն հաստատելու ցանկացած արտաքին ուժի

<sup>31</sup> Resolution 661 (1990) of 6 August 1990 of the Security Council, <http://unscr.com>. Սրան հաջորդում է ՄԱԿ-ի ԱԽ-ի 664-րդ բանաձևը (18 օգոստոս, 1990թ.), որով պահանջվում էր իրաքյան իշխանություններից՝ թույլ տալ երրորդ երկրների քաղաքացիներին անվտանգ դուրս գալ Իրաքից և Քուվեյթից:

<sup>32</sup> Resolution 678 (1990) of 29 November 1990 of the Security Council, <http://unscr.com>.

<sup>33</sup> Նույնը:

փորձ կհամարվի հարձակում ԱՄՆ-ի կենսական շահերի վրա, և այդպիսի հարձակումը կհակադարձվի ցանկացած անհրաժեշտ միջոցներով՝ ընդհուպ մինչև ռազմական ուժի կիրառումը<sup>34</sup>:

ՄԱԿ-ի ԱԽ-ի 687-րդ բանաձևը (1991 թ. ապրիլի 3) սահմանեց Ծոցի պատերազմում պարտվելուց հետո Իրաքի պարտավորությունները: Այն կոչ էր անում Իրաքին և Քուվեյթին հարգելու երկու երկրների միջև եղած սահմանը և գլխավոր քարտուղար Խավիեր Պերես դե Կուելային պարտավորեցնում ապակայունացված գոտու երկայնքով մեկ ամսվա ընթացքում ներկայացնել ՄԱԿ-ի Իրաք-Քուվեյթ դիտորդական առաքելության տեղակայման ծրագիրը: Իրաքը պետք է ոչնչացնէր քիմիական ու կենսաբանական զենքերը և 150 կմ-ից ավել հեռահարության բոլոր հրթիռները, հրաժարվէր միջուկային զենքի ստեղծման ծրագրերից, ներկայացնէր զենքերի ստեղծման վերաբերյալ համապատասխան հայտարարագրեր և համաձայնվէր տեղում ստուգումների իրականացմանը:

**Ժողովրդավարության հիմնարար սկզբունքների հիման վրա զսպման քաղաքականության իրականացման օրինակ էր ՄԱԿ-ի ԱԽ-ի 688-րդ բանաձևը (1991թ. ապրիլի 5) Իրաքի՝ մասնավորապես քրդաբնակ տարածքներում մարդու իրավունքների ապահովման վերաբերյալ:** Այն պարտավորեցնում է Իրաքին հարգել փոքրամասնությունների մարդկային և քաղաքական իրավունքները, հնարավորություն ընձեռել միջազգային մարդասիրական կազմակերպություններին օգնություն ցուցաբերելու Իրաքի բոլոր շրջաններում և մատչելի դարձնել անհրաժեշտ միջոցները համապատասխան գործողությունների կատարման համար:

**Զանգվածային ոչնչացման զենքի դեմ պայքարի տեսանկյունից**, որը Բուշ Կրտսերի 2002թ. Ազգային անվտանգության ռազմավարության հիմնասյուներից էր, ՄԱԿ-ի ԱԽ-ի 715-րդ բանաձևը՝ միաձայն ընդունված 1991 թ. հոկտեմբերի 11-ին, հաստատեց Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱՏԵՄԻԳ) ծրագրերը և հորդորեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, կապված Իրաքի ԶՈԶ ծրագրերի երկարաժամկետ մոնիտորինգի հետ, ապահովել Իրաքի կրկնակի օգտագործման օբյեկտների «շարունակական մոնիտորինգ և ստուգում»<sup>35</sup>: ԱԽ-ը նաև որոշում կայացրեց, որ ՄԱԿ-ի Հատուկ հանձնաժողովը՝ որպես ԱԽ-ի դուստր նախաձեռնություն, կշարունակի իրավունք ունենալ ստուգելու և համագործակցելու ԱՏԵՄԻԳ-ի հետ և կատարելու այլ գործառնություններ, որպեսզի թույլ տա լիարժեք իրականացնել ընթացիկ բանաձևը: Այն նաև պահանջեց, որ Իրաքը անվերապահորեն կատարի իր ստանձնած պարտավորությունները՝ համագործակցելով ԱՏԵՄԻԳ -ի և Հատուկ հանձնաժողովի հետ ստուգման

<sup>34</sup> President James E. Carter Jr. State of the Union Address The Capitol, Washington, D.C. January 23, 1980, p.4, www.airforcemag.com

<sup>35</sup> Whitby, Simon M. (2002). Biological warfare against crops. Palgrave Macmillan. p. 13. ISBN 978-0-333-92085-5.

ողջ ընթացքում: Իրաքը, որը նախկինում մերժել էր նման բանաձևերը կամ համաձայնել էր միայն սկզբունքորեն, լիովին ընդունեց 715-րդ բանաձևի դրույթները<sup>36</sup>:

ՄԱԿ-ի ԱԽ-ի 986-րդ բանաձևը վերաբերում էր Իրաքում արտադրվող նավթի և նավթամթերքների ներմուծման թույլտվությանը՝ որպես միջոց Իրաքի ժողովրդի հումանիտար կարիքները հոգալու համար: Հենց այս բանաձևի հիման վրա ձևավորվեց ԱՄՆ նախագահ Բ. Քլինթոնի կողմից ներկայացված և 1995թ. ՄԱԿ-ի կողմից հավանության արժանացած «Oil-for-Food Programme (OIP)»՝ «Նավթ պարենի դիմաց»<sup>37</sup> ծրագիրը՝ գոյություն ունենալով մինչև 2003թ. ավարտը:

ՄԱԿ-ի ԱԽ-ի 1060-րդ (1996թ.) բանաձևը հետևեց Իրաքի կողմից ստուգման օբյեկտներ ՄԱԿ-ի տեսուչների մուտքի արգելանքին՝ կոչ անելով Իրաքին Հանձնաժողովի տեսչական խմբերին թույլ տալու անհապաղ, անվերապահ և անսահմանափակ մուտք գործել ցանկացած շրջան, օբյեկտ, տրամադրել նրանց անհրաժեշտ փաստաթղթերը և տրանսպորտային միջոցներ<sup>38</sup>:

ՄԱԿ ԱԽ-ը 1999թ. դեկտեմբերի 17-ին ընդունված տարվա վերջին՝ 1284-րդ բանաձևով ստեղծեց ՄԱԿ մոնիտորինգի, ստուգման և վերահսկման հանձնաժողով (UNMOVIC), որը եկավ փոխարինելու ՄԱԿ-ի հատուկ հանձնաժողովին (UNSCOM)<sup>39</sup>: Իրաքը մերժեց բանաձևը, մասնավորապես, քանի որ այն չէր բավարարում պատժամիջոցների վերացման իր պահանջը<sup>40</sup>: Սակայն, սա չհանգեցրեց ՄԱԿ-ի տեսուչների վերադարձին կամ մարդասիրական ծրագրի փոփոխություններին:

#### **Զսպման դոկտրինի շրջանակներում ընդունված ներքին իրավական ակտերը Իրանի ուղղությամբ**

Զսպման դոկտրինի շրջանակներում ընդունված ակտերը, բացի Իրաքից, նաև ուղղված էին Իրանի դեմ: Մասնավորապես, 1995 թ.-ին, ի պատասխան Իրանի միջուկային ծրագրի և ԱՄՆ-ի կողմից ահաբեկչական կազմակերպություններ համարվող իրանական Հեզբոլլահին, Համասին և Պաղեստինի իսլամական ջիհադին իրանական աջակցությանը, նախագահ Բ. Քլինթոնը մի շարք հրամաններ ստորագրեց, որոնցից կարելի է առանձնացնել 1995 թ. մարտի 15-ին և մայիսի 6-ին ընդունված իրավական ակտերը համապատասխանաբար՝ Իրանի էներգետիկ ոլորտում ԱՄՆ-ի ներդրումների և ԱՄՆ-ի կողմից Իրանում առևտուրն ու ներդրումները արգելելու մասին:

<sup>36</sup> Hiro, Dilip (2001). Neighbors, not friends: Iraq and Iran after the Gulf wars. Routledge. p. 72. ISBN 978-0-415-25412-0.

<sup>37</sup> Բառացալակ. ՄԱԿ-ը Հայաստանում <https://www.un.am/hy/glossary/%D5%86>.

<sup>38</sup> Resolution 1060 (1996) Adopted by the Security Council at its 3672nd meeting on 12 June 1996, <http://unscr.com>

<sup>39</sup> "Security Council establishes new monitoring commission for Iraq". United Nations. 17 December 1999.

<sup>40</sup> "Iraq rejects UN resolution on easing sanctions". RTÉ. 18 December 1999.

Հաջորդ քայլը Կոնգրեսի կողմից 1996թ. ընդունված Իրանի և Լիբիայի պատժամիջոցների մասին օրենքն էր (ILSA), որը նախատեսում էր տնտեսական պատժամիջոցների սահմանում Իրանի և Լիբիայի հետ բիզնեսով զբաղվող ձեռնարկությունների նկատմամբ<sup>41, 42</sup>:

Այս ակտերի էությունը լավագույնս բացահայտելու համար հարկ է ներկայացնել սենատոր Ալֆոնս Դ'Ամատոյի կողմից 1995թ. սեպտեմբերին Սենատին ներկայացված «Իրանի և Լիբիայի պատժամիջոցների մասին ակտը», որն ընդունվեց 1996թ.:

Այս փաստաթուղթն ԱՄՆ-ին թույլ էր տալիս պատժամիջոցներ կիրառել Իրանում կամ Լիբիայում գիտակցաբար ներդրումներ կատարած անձանց, ձեռնարկությունների կամ կորպորացիաների նկատմամբ<sup>43</sup>: Սակայն ակտի և միջազգային իրավունքի միջև կային մի շարք հակասություններ, որոնք հնարավորություն էր տալիս որոշ երկրների մանրերելու<sup>44</sup>:

ԱՄՆ-ի այս քաղաքականությունը հիմք հանդիսացավ Բաքու-Ջեյհան այլընտրանքային նավթամուղի ստեղծմանը, որը գործարկեց 2005թ.-ից:

**Եզրահանգում.** Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հետսառըպատերազմյան շրջանում ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության լեգիտիմ իրականացման համար անհրաժեշտ գործիք հանդիսացան և իրավապայմանագրային հիմքը կազմեցին ՄԱԿ-ի ԱԽ բանաձևերը, Խաղաղության գործընթացի շրջանակներում ձեռք բերված համաձայնությունները, ինչպես նաև նոր աշխարհակարգի պայմաններում զսպման դոկտրինի իրականացման նպատակով ընդունված ԱՄՆ-ի ներպետական իրավական ակտերը:

Տարածաշրջանային քաղաքականության վերոգրյալ իրավապայմանագրային հիմքը լիովին արտահայտում էր նոր աշխարհակարգում ԱՄՆ-ի գերակայության ձգտումները և առկա մարտահրավերները: Մասնավորապես կարելի է տարբերակել ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի տարածման դեմ պայքարին, ինչպես նաև ժովրդավարության խթանմանն առնչվող իրավական փաստաթղթերը, որոնք հետագայում ուղղակիորեն կազմեցին Ջ. Բուշ Կրտսերի նախագահության տարիներին ազգային անվտանգության ռազմավարության և տարածաշրջանային քաղաքականության իրականացման հիմքը:

<sup>41</sup> "HR.3107-Iran and Libya Sanctions Act of 1996".07/16/1996. <https://www.congress.gov/bill/104th-congress/house-bill/3107>.

<sup>42</sup> Zengerle, Patricia, "Extension of Iran Sanctions Act passes U.S. Congress". Reuters., 2 December 2016. <https://www.reuters.com/article/us-iran-nuclear-usa-sanctions-idUSKBN13Q5JW>

<sup>43</sup> Jonathan Sutherland, Diane Carwell, Key Concepts in International Business, D'Amato Act, p. 47. [https://link.springer.com/chapter/10.1007%2F978-0-230-20466-9\\_4](https://link.springer.com/chapter/10.1007%2F978-0-230-20466-9_4)

<sup>44</sup> Kenneth Katzman. The Iran Sanctions Act (ISA), SRC Report for Congress, October 12, 2007, [www.fas.org/sgp/crs/row/RS20871.pdf](http://www.fas.org/sgp/crs/row/RS20871.pdf)

Միևնույն ժամանակ կարելի է նկատել, որ հետսառըպատերազմյան շրջանում ԱՄՆ-ՄԱԿ հարաբերություններում դրսևորում էր երկակիություն. եթե խաղաղության գործընթացում ԱՄՆ-ի միջնորդությամբ իրականացվող բանակցությունները և ստորագրված համաձայնությունները ունեին փաստացի գերակայություն ՄԱԿ-ի ԱԽ-ի բանաձևերի նկատմամբ, իսկ ԱՄՆ-ի թվացյալ անաչառության պայմաններում քաղաքական ու դիվանագիտական աջակցությունն ուղղված էր Իսրայելին, ապա Իրաքի պարագայում 90-ականներին ԱՄՆ-ը խուսափում էր հանդես գալ որպես միանձնյա առաջնորդ և գործողությունները Ծոցի ճգնաժամի ընթացքում իրականացնում էր որպես ձևավորված կռալիցիայի առաջնորդ՝ համաձայն ՄԱԿ-ի ԱԽ-ի մանդատի, ինչը պայմանավորված էր նոր աշխարհակարգային որակական փոփոխություններով, Ծոցում իրականացվող քաղաքականության վերախմաստավորմամբ, ինչպես նաև տեղի արաբ առաջնորդների հետ հարաբերությունները չվատթարացնելու միտումով: Կարևոր է այն, որ սույն բանաձևերն իրավապայմանագրային հող հանդիսացան Իրաքի վրա անմիջական, ուղղակի ազդեցությունը խորացնելու, ցանկացած տնտեսական կամ ռազմական պատժամիջոց կիրառելու անհրաժեշտությունը հիմնավորելու համար: Ջորջ Բուշ Կրտսերի վարչակազմը, կտրուկ փոխելով արտաքին քաղաքականության մերձավորարևելյան շեշտադրումները, փաստացիորեն հավատարիմ մնաց նախորդ նախագահների օրոք որդեգրած արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքներին: Նպատակը մնում է նույնը՝ շարունակաբար ընդլայնել ԱՄՆ-ի ազդեցությունը Մերձավոր Արևելքում, անկախ այն բանից՝ փափուկ թե կոշտ ուժ է կիրառվում:

Ինչ վերաբերում է զսպան դոկտրինի շրջանակներում ընդունված ներպետական ակտերին, ապա դրանք հիմնականում ուղղված էին Իրանի և Լիբիայի դեմ, որոնք, ԱՄՆ-ի կարծիքով, ահաբեկչությանն աջակցող պետություններ էին, որոնց հետ սեփական և այլ պետությունների քաղաքացիների ու ընկերությունների առևտուրը և ներդրումները՝ մասնավորապես նավթարդյունաբերության և ենթակառուցվածքների ոլորտում, համարվում էին աջակցություն ահաբեկչությանը: Ուստի, ԱՄՆ-ը, օգտագործելով «միակողմանիության պահը» և առկա ուժային վակուումը, փորձեց ներպետական ակտերը վերածել համաշխարհային քաղաքականության իրականացման կանոնակարգերի՝ քաղաքականություն, ինչը սկիզբ առավ Առաջին աշխարհամարտի ավարտի հետ՝ որպես վիլսոնականության արտահայտում, և շարունակվում է մինչ օրս կոնկրետ երկրների, անհատների ինչպես նաև գործողության տեսակների դեմ՝ սահմանափակելով կամ զգալիորեն վտանգելով նաև երրորդ երկրների շահերը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք ասել, որ չնայած 2001-2009թթ. ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության շեշտադրումները կրեցին նեոկոնսերվա-

տորների ազդեցությունը, սակայն տարածաշրջանային քաղաքականության նորագույն փուլի տեսանկյունից բուն էությունը մնաց անփոփոխ՝ համապատասխանելով ամերիկյան PAX-ի հիմնադրույթներին:

## О ЮРИДИЧЕСКОДОГОВОРНЫХ ОСНОВАХ БЛИЖНЕВОСТОЧНОЙ ПОЛИТИКИ США В ПЕРИОД ПОСЛЕ ХОЛОДНОЙ ВОЙНЫ

*Այրապետյան Ա. Տ.*

**Ключевые слова:** *Ближний Восток, Израиль, Организация освобождения Палестины, ООН, Совет Безопасности, акт, резолюция, соглашение, Ирак, Иран.*

Начиная с 2001-го года в Ближневосточной политике США произошли перестановки стратегических акцентов, которые в основном представлены переосмыслением целей внешней политики и национальной безопасности под влиянием политико-идеологических кругов. Тем не менее, несмотря на влияние неоконсерватистов и сторонников примыкающих к ним политического реализма, региональная политика США продолжила сохранение своей традиционной линии, а именно реализовывалась в международных и внутригосударственных юридических актах во время и после холодной войны. Изучением основ указанных юридических договоров становится ясно, что основные ориентиры региональной политики Джорджа Буша младшего вырисовываются в подписанных им документах еще до его президентства в борьбе против терроризма, оружия массового поражения и развития демократии.

## ON THE LEGAL-CONTRACTUAL BASIS OF THE US POST-COLD WAR MIDDLE EAST POLICY

*Hayrapetyan A. S.*

**Key words:** *Middle East, Israel, Palestine liberation organization, UN, Security Council, act, resolution, agreement, Iraq, Iran.*

Since 2001, there has been a major shift in the US Middle East policy strategic highlights, mainly through rethinking of foreign policy and national security targets under the influence of political and ideological circles. Nevertheless, despite the impact of neoconservatives and the proponents of neoconservatism views in the face of hard line political realists, US regional policy continued to maintain its traditional thrust, being implemented based on the international and domestic contractual and legal acts during the Cold War and post-Cold War. Examining the

above-mentioned legal-contractual basis, it becomes clear that the main directions of George Bush Jr.'s regional policy, in the form of the war on terror, fight against the proliferation of WMD and democracy promotion were quite well identified in the documents signed before his presidency.

## R e f e r e n c e s

1. **Surkov N.** Politika SSHA v bližnevostochnom uregulirovanii v 70-ie gg. 20-ogo i v nachale 21-ogo v. MGU, Moskva, 2007 **(In Russian)**.
2. Baracank. MAK-@ Hayastanum, [www.un.am](http://www.un.am) **(In Armenian)**.

*Ընդունվել է՝ 12. 10. 2020*

*Գրախոսվել է՝ 19. 10. 2020*

*Հանձնվել է տպ.՝ 20. 11. 2020*

### **Տեղեկություններ հեղինակի մասին**

Աստղիկ ՀԱՅՐԱՍՊԵՏՅԱՆ՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի  
վիճազգային հարաբերությունների բաժնի ասպիրանտ,  
էլ. հասցե՝ [astghayrapetyan@gmail.com](mailto:astghayrapetyan@gmail.com)

Ժ Ո Ղ Ո Վ Դ Դ Ա Գ Դ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
Д Е М О Г Р А Ф И Я  
D E M O G R A P H Y

ՀՏԴ՝ 908

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

XXII. ՎԵՐՁԻՆ ԵՎ XXIII. ՄԿՁԲԻՆ

*Արտաշես Բոյաջյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական ուսումնասիրությունների կենտրոն

*Բանալի բառեր՝ աշխատանքային ռեսուրսներ, մինչաշխատունակ տարիք, աշխատունակ տարիք, գործազրկություն, աշխատաշուկա, աշխատատեղ, աշխատանքային միգրացիա, զբաղվածության գործակից, աշխատավարձ:*

Հետազոտության հեղինակի նպատակն է՝ զբաղվածության հիմնախնդիրների վերլուծությամբ ներկայացնել Շիրակի մարզի բնակչության աշխատուժի շարժընթացը: Հոդվածում տրվել է մարզի բնակչության զբաղվածության և գործազրկության մակարդակների փոփոխությունը, բացահայտվել են աշխատանքային ռեսուրսների, բնակչության զբաղվածության շարժընթացի, աշխատաշուկայի առանձնահատկությունները և օրինաչափությունները: Հետազոտվել է բնակչության զբաղվածության շարժընթացն ըստ տնտեսության ոլորտների:

*Նախաբան.* Զբաղվածությունը մարդկանց աշխատատեղերով ապահովելու և հանրօգուտ աշխատանքային գործունեության մեջ մասնակցություն ունենալու համար նրանց միջև ստեղծված հարաբերությունների համակարգն է: Երկրի կամ նրա որևէ վարչական շրջանի սոցիալական և տնտեսական իրադրությունը բնութագրող բազմաթիվ ցուցանիշների շարքում կարեւորվում է նաեւ աշխատունակ տարիքի բնակչության զբաղվածության մակարդակի գնահատումը, որի ուսումնասիրությունն ունի գիտակիրառական և ճանաչողական կարևոր

նշանակություն<sup>1</sup>: Բնակչության զբաղվածության, աշխատանքային ռեսուրսների, աշխատունակ բնակչության շարժընթացի գնահատումը պահանջում են ժողովրդագրական և վիճակագրական, սոցիալ-տնտեսական և այլ ցուցանիշների համադրություն:

Շիրակի բնակչության զբաղվածության խնդիրները XXդ. վերջին և XXIդ. սկզբին գիտականորեն գրեթե չեն ուսումնասիրվել: Մինչդեռ նման ուսումնասիրությունները օգտակար են ՀՀ բնակչության զբաղվածության տարածքային հիմնախնդիրների պատճառահետևանքային կապերի բացահայտման առումով: Մարզի բնակչության զբաղվածության գործընթացներն ուսումնասիրելիս օգտվել ենք հիմնականում պաշտոնական վիճակագրության տվյալներից և դաշտային ազգագրական նյութերից:

Հայտնի է, որ բնակչության զբաղվածությունը բնութագրող ելակետային ցուցանիշ է աշխատանքային ռեսուրսը<sup>2</sup>: Խորհրդային Միությունում 1928թ. աշխատունակ տարիք է սահմանվել 16-59-ը տղամարդկանց եւ 16-54-ը՝ կանանց համար<sup>3</sup>, իսկ նորանկախ Հայաստանի տարիներին՝ 16-63 տարեկան տղամարդիկ և 16-58 տարեկան կանայք<sup>4</sup>, XXIդ. սկզբին՝ 16-73 տարեկանը<sup>5</sup>: Աշխատանքային տարիքի սանդղակի բարձրացումը մասնագետները բացատրում են կյանքի սպասվելիք բարձր տևողությամբ<sup>6</sup>:

Աշխատանքային ռեսուրսների քանակական մեծությունը փոխվում է հիմնականում ժողովրդագրական գործոնի, իսկ որակականը՝ մասնագիտական որակավորման մակարդակի ազդեցությամբ: Աշխատանքային ռեսուրսների և զբաղվածության կարևոր բնութագրիչներից է բնակչության տարիքային կառուցվածքի վերլուծությունը: Աղյուսակ 1-ի թվային ցուցանիշների վերլուծությունից պարզվում է, որ ներկայացվող ժամանակահատվածում մարզի բնակչության

<sup>1</sup> Валентей Д. Основы теории народонаселения, М. 1977г., стр. 215, изд. Статистика, 367 стр.

<sup>2</sup> Ըստ ԱՄԿ-ի (Աշխատանքի միջազգային կոմիտե) աշխատանքային ռեսուրսների թվաքանակը 15-75 տարեկան տնտեսապես ակտիվ բնակչության և ոչ ակտիվ բնակչության հանրագումարն է:

<sup>3</sup> Բոյաջյան Ա., Լենինականի բնակչության զբաղվածությունը 1970-1987թթ.//ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.7, «Գիտություն» հրատ., Գյումրի, 2004, էջ 158:

<sup>4</sup> Մարգարյան Հ., Բոյաջյան Ա., Աշխատանքային ռեսուրսների և բնակչության զբաղվածության վերլուծման փորձ (1990-2000թթ.//ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.3 «Գիտություն» հրատ., Գյումրի, 2004, էջ 155:

<sup>5</sup> Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX- XX դարերում և XXIդ. շեմին, Եր. 2001, «Գիտություն» հրատ., էջ 345, 480 էջ:

<sup>6</sup> Կյանքի սպասվելիք տևողությունը տարիների այն թիվն է, որ ծնվող սերունդը, միջին հաշվով, պետք է ապրի՝ պայմանով, որ այդ սերնդի ողջ կյանքի ընթացքում՝ մի տարիքից հաջորդին անցնելիս, մահացությունը յուրաքանչյուր տարիքում հավասար կլինի բնակչության մահացության տվյալ ժամանակահատվածի մակարդակին:

բացարձակ թիվը պակասել է 84,2 հազարով կամ 26,3%-ով, այդ թվում քաղաքայինը՝ 75,4 հազարով կամ 35,3%-ով: Գյուղական բնակչության թվի նվազումը եղել է աննշան: Սակայն 1988թ. համեմատ՝ բնակչության թիվը պակասել է 125,8 հազարով կամ 34,8%-ով, այդ թվում՝ քաղաքայինը՝ 123,6 հազարով կամ 47,3%-ով: Հատկանշական է, որ ներկայացվող ժամանակահատվածում մինչաշխատունակ և աշխատունակ տարիքի բնակչության թիվը նվազել է, իսկ հետաշխատունակը՝ ավելացել: Այսպես, մինչաշխատունակ տարիք ունեցողների թիվը նվազել է 40,5 հազ. կամ 43,7%-ով, աշխատունակ բնակչությանը՝ 58,6 հազ. կամ 27,6%-ով, իսկ աշխատունակ տարիքից բարձր բնակչության թիվն ավելացել է 14,9 հազարով կամ մոտ երկու անգամ: Մինչաշխատունակ տարիքի բնակչության թվի շեշտակի նվազումը պայմանավորված է բնակչության ծնելիության անկումով, աշխատունակ տարիքինը՝ զանգվածային արտագաղթով, իսկ հետաշխատունակ բնակչության աճը՝ Երկրորդ աշխարհամարտից հետո մինչև 1950-ական թվականների վերջերը ծնվածների թվի շեշտակի աճով: Աշխատունակ տարիքի բնակչության նվազման հիմնական մասը բաժին է ընկնում քաղաքային բնակավայրերին, մասնավորապես Գյումրի քաղաքին:

Աղյուսակ 1

**Շիրակի մարզի բնակչության տարիքային կազմի շարժընթացը (մարդ)**

|        | Բնակչության թիվը | Մինչև 14 տարեկան | 15-64 տարեկան | 65 և բարձր | Բնակչության տնտեսական ակտիվության մակարդակը <sup>7</sup> | Բնակչության տնտեսապես ոչ ակտիվության մակարդակը <sup>8</sup> |
|--------|------------------|------------------|---------------|------------|--|---|
| 1989թ. | 319623           | 92695            | 211859        | 15069      | 57,7   | 22,5  |
| 1996թ. | 358300           | 107847           | 221073        | 29380      | 55,2   | 29,1  |
| 2001թ. | 283389           | 75563            | 181489        | 26337      | 56,5   | 43,5  |
| 2006թ. | 281400           | 58531            | 189946        | 32923      | 49,7   | 50,3  |
| 2011թ. | 251941           | 47056            | 179633        | 25252      | 50,9   | 49,0  |
| 2016թ. | 243152           | 48637            | 218634        | 24518      | 58,5   | 41,5  |
| 2017թ. | 239278           | 49251            | 165262        | 24765      | 57,4   | 42,5  |
| 2018թ. | 235400           | 52167            | 153244        | 29969      | 54,8   | 41,9  |

<sup>7</sup> Տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը %-ով աշխատանքային ռեսուրսների նկատմամբ:

<sup>8</sup> Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության մեջ ներառվում են անձինք, ովքեր հետազոտվող ժամանակաշրջանում չեն աշխատել և աշխատանք չեն փնտրել, չեն եղել զբաղված կամ գործազուրկ: Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության կազմի մեջ են մտնում առկա ուսուցմամբ սովորողները, ուսանողները, տնային տնտեսությամբ զբաղվածները, կենսաթոշակառուները և հաշմանդամություն ունեցող անձինք, երեխաներին, հիվանդ հարազատներին խնամողները, զանազան պատճառներով չաշխատող և աշխատանք չփնտրող այլ անձինք (սեփականության օգտագործումից եկամուտ ստացողներ, պարտադիր ժամկետային զինծառայողներ և այլն):

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են՝ Մ.Մանասյան, Ա. Գրիգորյան, Ա. Պոտոսյան, Շիրակի մարզ (բնությունը, բնակչությունը, տնտեսությունը), «Նահապետ» հրատ. Եր. 2002թ., էջ 61: armstat.am, 14.05.2020թ.

Բնականաբար, տարիքային կազմի փոփոխությունն իր գործուն ազդեցությունն էր թողնելու մարզի բնակչության տնտեսական ակտիվության և զբաղվածության մակարդակի վրա: Աղյուսակ 2-ի թվային տվյալների վերլուծությունից պարզվում է, որ մարզի աշխատանքային ռեսուրսների թիվը 1989-2018թթ. պակասել է 32,3 հազ. կամ 15,3%-ով: Տնտեսապես ակտիվ բնակչության և զբաղվածությունն ունեցող բնակչության թիվը նվազել է երկու անգամ, իսկ տնտեսապես ոչ ակտիվ բնակչության թիվն ավելացել է 48,7%-ով: Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության թվի շեշտակի աճը պայմանավորված է տնտեսության կառուցվածքային գործազրկությամբ: Տնտեսապես ակտիվ բնակչության թվի շեշտակի նվազումը բացատրվում է 1990-ական թվականներին զանգվածային արտագաղթով: Ներկայացվող ժամանակահատվածում տնտեսապես ակտիվ և տնտեսապես ոչ ակտիվ բնակչության թվի հարաբերակցությունը փոխվել է հոգուտ վերջինիս: Այսպես, եթե 1997թ. տնտեսապես ակտիվ բնակչության թիվը կազմել է 144,4 հազ. մարդ, իսկ տնտեսապես ոչ ակտիվ բնակչությանը՝ 60,1 հազ. մարդ, ապա 2018թ. նույն ցուցանիշը համապատասխանաբար կազմել է 90,1 հազ. և 89,4 հազ. մարդ: Այսպես, Շիրակի մարզում 2015թ. տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունը կազմել է 83700 մարդ, որից 14300-ը ուսանողներ են, 29500-ը՝ տնային տնտեսություն վարողներ, 16500-ը՝ կենսաթոշակառուներ և հաշմանդամներ, 23400-ը՝ աշխատանք չունեցող այլ անձիք<sup>9</sup>: Նման իրավիճակն առաջին հերթին պայմանավորված է այդ տարիներին իշխանությունների կողմից վարվող զբաղվածության քաղաքականությամբ, այսպես կոչված, պետական տնտեսության տարբեր ոլորտների օպտիմալացումով, այսինքն՝ աշխատատեղերի կրճատումով: Օրինակ՝ կրթության ոլորտի օպտիմալացումը կամ ուսուցիչներին աշխատանքից ազատելը կապում էին հիմնականում աշակերտների թվի նվազման հետ: Զբաղվածության գործակցի ամենամեծ անկում գրանցվել է 1997-2010թթ.: Ի դեպ, այդ տարիներին լայն թափով իրականացվեց հանրապետության, այդ թվում, մարզի խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհման գործընթացը, որի արդյունքում տասնյակ հազարավոր բանվորներ և ինժեներներ համալրեցին գործազուրկների շարքերը: Այսինքն՝ տնտեսապես ոչ ակտիվ բնակչության կեսից ավելին տնային տնտեսություն վարողները

<sup>9</sup> Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական ծրագիրը 2017-2025թթ. էջ 25, <http://mtad.am/hv/marzerirazmavarutvun/>

և գործազուրկներն են, որոնց եկամուտը պետությունից ստացած դրամական օժանդակությունն է: Կարելի է արձանագրել, որ նման իրավիճակը խոչընդոտում է Շիրակի մարզի տնտեսության առաջընթացը: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2005թ. Շիրակում աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն է ստացել 28140 ընտանիք, ինչը կազմել է մարզի ընտանիքների թվի 40%-ը: Իսկ 2010թ. նույն ցուցանիշը համապատասխանաբար կազմել է 17829 ընտանիք և 25,3%: Շիրակում 1996թ. աղքատության մակարդակը կազմել է 63,1% (ՀՀ-ում՝ 54,7%)<sup>10</sup>, 2005թ.՝ 42,5% (ՀՀ-ում՝ 34,6%)<sup>11</sup>, 2016թ.՝ 45,5% (ՀՀ-ում՝ 29,4%)<sup>12</sup>: Մարզում գործազրկության մակարդակն 1990-ական թվականներին կազմել է 22-24%: Շիրակի բնակչության (1991-1997թթ.) շատ բարձր արտագաղթի պայմաններում թվում էր, թե այն պետք է նվազի, սակայն ավելացել է: Գործազուրկների թվի աճը հիմնականում բաժին է ընկել Գյումրի քաղաքին: Այդ տարիներին քաղաքում գործազուրկների թիվը ինը հազարից հասել է 24 հազարի<sup>13</sup>:

Եթե կառուցվածքային առումով փորձենք բնորոշել մարզի հասարակության հետխորհրդային զարգացումը, ապա պետք է հաստատել, որ այն ինդուստրիալ հասարակությունից անցում կատարեց ագրարայինի: Շիրակում 1988թ. զբաղված բնակչության թիվը կազմել է 139,3 հազար մարդ, որից 109,3 հազարը զբաղվել է ոչ գյուղատնտեսական աշխատանքներով, 30,0 հազարը՝ գյուղատնտեսական, 2001թ. համապատասխանաբար 79,5 հազար (51,2 հազարը՝ ոչ գյուղատնտեսական, 28,3 հազարը՝ գյուղատնտեսական)<sup>14</sup> և 2015թ. 86,6 հազար (34,5 հազարը՝ ոչ գյուղատնտեսական, 52,1 հազարը՝ գյուղատնտեսական աշխատանքներով)<sup>15</sup>:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում Շիրակի մարզի բնակչության գործազրկության շարժը պայմանականորեն կարելի է բաժանել չորս փուլի.

**Առաջին փուլ (1989-1991թթ.)** 1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժի հերևանքով Գյումրի քաղաքի 13 արդյունաբերական ձեռնարկություններ

<sup>10</sup> Աղքատությունը Հայաստանում 1996թ., [https://www.armstat.am/file/article/bednost\\_3.pdf](https://www.armstat.am/file/article/bednost_3.pdf) 12.05.2020թ.

<sup>11</sup> Աղքատությունը Հայաստանում 2005թ., [https://www.armstat.am/file/article/pov\\_2006\\_1.pdf](https://www.armstat.am/file/article/pov_2006_1.pdf) 12.05.2020թ.

<sup>12</sup> Աղքատության ցուցանիշներն ու միտումները [https://www.armstat.am/file/article/poverty2017a\\_2.pdf](https://www.armstat.am/file/article/poverty2017a_2.pdf) 14.05.2020թ.

<sup>13</sup> Մարգարյան Հ., Բոյաջյան Ա., Գյումրու աշխատանքային ռեսուրսների և բնակչության զբաղվածության վերլուծման փորձ (1990-2000թթ.//ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.3 «Գիտություն» հրատ., Գյումրի, 2004, էջ 15:

<sup>14</sup> Բոյաջյան Ա., Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մի քանի հարցեր (մասն II)//ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 9, «Գիտություն» հրատ., Գյումրի, 2006, էջ 122:

<sup>15</sup> Շիրակի մարզի 2017-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը, Գյումրի 2017թ., էջ 23:

ամբողջությամբ ոչնչացվեցին: Տասնյակ հազարավոր մարդիկ զրկվեցին աշխատանքից: Բացի երկրաշարժից, գործազրկության աճին նպաստեց հանրապետության սոցիալ-քաղաքական լարվածությունը, որը ուղեկցվեց գործադուլներով, ազգամիջյան հակամարտություններով, Մոսկվայի և հանրապետությունների միջև խորացող լարվածությունը հանգեցրեց սոցիալ-տնտեսական կապերի թուլացմանն ու ԽՍՀՄ-ի փլուզմանը:

Աղյուսակ 2

**Շիրակի մարզի բնակչության աշխատանքային ռեսուրսների և զբաղվածության շարժընթացը**

|         | Ընդամենը բնակչության թիվը | Աշխատանքային ռեսուրսներ <sup>16</sup> | Տնտեսապես ակտիվ բնակչություն | Զբաղվածներ <sup>17</sup> | Գործազուրկներ <sup>18</sup> | Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն <sup>19</sup> | Զբաղվածության գործակիցը <sup>20</sup> |
|---------|---------------------------|---------------------------------------|------------------------------|--------------------------|-----------------------------|---|---------------------------------------|
| 1989թ.  | 319,6                     | 211,8                                 | 184,4                        | 139,4                    | -                           | -   | -                                     |
| 1997թ.  | 359,4                     | 204,5                                 | 144,4                        | 108,6                    | 35,8                        | 60,1  | 0,5                                   |
| 2001 թ. | 283,3                     | 226,2                                 | 128,2                        | 98,8                     | 29,2                        | 98,6  | 1,0                                   |
| 2005 թ. | 281,7                     | 208,9                                 | 103,6                        | 86,7                     | 17,1                        | 105,1   | 1,2                                   |
| 2010 թ. | 281,5                     | 224,0                                 | 94,9                         | 85,3                     | 9,6                         | 129,1   | 1,5                                   |
| 2015 թ. | 246,4                     | 190,6                                 | 107,0                        | 86,6                     | 20,3                        | 83,7  | 1,0                                   |

<sup>16</sup> Աշխատանքային ռեսուրսները տնտեսապես ակտիվ (զբաղված և գործազուրկ) և ոչ ակտիվ (աշխատանք չունեցող և աշխատանք չփնտրող) բնակչության հանրագումարն են:

<sup>17</sup> Զբաղված համարվել է 15-75 տարեկան անձը, ով հետազոտվող շաբաթում ունեցել է վարձու կամ ոչ վարձու աշխատանք՝ անկախ այն հանգամանքից՝ աշխատանքը եղել է մշտական, ժամանակավոր կամ սեզոնային, միանգամյա կամ պատահական, նույնիսկ եթե այդ աշխատանքը հետազոտվող շաբաթվա ընթացքում կազմել է ընդամենը 1 ժամ:

<sup>18</sup> Գործազուրկ համարվել է 15-75 տարեկան անձը, ով հետազոտությանը նախորդող վերջին 4 շաբաթվա ընթացքում (ներառյալ հետազոտվող շաբաթը) միաժամանակ բավարարել է հետևյալ երեք պայմանները. չի ունեցել աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք, ակտիվորեն փնտրել է աշխատանք՝ օգտագործելով ցանկացած միջոց, այսինքն՝ դիմել է զբաղվածության պետական և (կամ) մասնավոր ծառայություն, աշխատանք է փնտրել ծանոթների, բարեկամների, հայտարարությունների միջոցով կամ ցանկացած այլ եղանակով, պատրաստ է եղել անմիջապես (այսինքն՝ առաջիկա երկու շաբաթվա ընթացքում) անցնելու աշխատանքի:

<sup>19</sup> Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն-ուսանողներ, տնային տնտեսություն վարողներ, կենսաթոշակառուներ, հաշմանդամներ, աշխատանք չունեցող քաղաքացիներ:

<sup>20</sup> Զբաղվածությունը բնութագրվում է զբաղվածության գործակցով, որը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով՝ K-զբաղվածության գործակից, N-չզբաղվածների թիվը, D-զբաղվածների

$$\text{թիվը } \frac{N}{K+D}$$

|         |       |       |       |      |      |      |     |
|---------|-------|-------|-------|------|------|------|-----|
| 2016 թ. | 243,2 | 180,9 | 105,8 | 83,6 | 22,2 | 75,1 | 0,9 |
| 2017 թ. | 239,3 | 172,8 | 99,2  | 75,1 | 24,1 | 73,5 | 1,0 |
| 2018թ.  | 235,4 | 179,5 | 90,1  | 69,5 | 20,6 | 89,4 | 1,3 |

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են ՀՀ ԱԿԿ-ի տվյալները:

[https://www.armstat.am/11\\_4.pdf](https://www.armstat.am/11_4.pdf)

**Երկրորդ փուլ (1992-1996թթ.).** Աշխատունակ բնակչության թվի նվազմանը զուգընթաց՝ շեշտակի ավելանում է գործազուրկների թիվը: Միայն 1995-1997թթ. Գյումրի քաղաքում գործազուրկների թիվն ավելացել է 24 հազարով<sup>21</sup>: Այդպիսի իրավիճակը պայմանավորված է եղել հիմնականում հանրապետության էներգետիկ ճգնաժամով, արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհման գործընթացով: Այս փուլում Հայաստանի Հանրապետությունում, այդ թվում՝ Շիրակի մարզում, մասնավորապես քաղաքային բնակավայրերում լայն տարածում ստացան ֆրիկցիոն<sup>22</sup>, կառուցվածքային<sup>23</sup> և թաքուն<sup>24</sup> գործազրկության տեսակները:

**Երրորդ փուլ (1997-2010թթ.).** Այս փուլում գրանցվել է գործազուրկների, զբաղվածների եւ աշխատունակ բնակչության թվի նվազում (տե՛ս աղյուսակ 2): Աշխատունակ բնակչության թիվը պակասել է 49,5 հազարով կամ 34,3%-ով, զբաղվածների թիվը՝ համապատասխանաբար 23,3 հազարով կամ 21,4%-ով, իսկ գործազուրկներինը՝ 26,2 հազարով կամ 73,2%-ով: Այս փուլում կառուցվածքային գործազրկությունը գրեթե ավարտվել է, իսկ ֆրիկցիոն և թաքուն գործազրկության տեսակները պահպանվել են:

**Չորրորդ փուլ (2011-2018թթ.).** Ներկայացվող ժամանակահատվածում տնտեսապես ակտիվ բնակչության թիվը նվազել է 4,8 հազար մարդով կամ 5,1%-ով, զբաղվածների թիվը՝ 15,8 հազարով կամ 18,5%-ով, և գործազուրկների թիվը ավելացել է 11 հազարով կամ 2,1 անգամ: Գործազուրկների թվի աճին զուգընթաց՝ նվազել է զբաղվածների թիվը: Բնորոշ են կառուցվածքային և թաքուն գործազրկության տեսակները: Տնտեսության, մասնավորապես պետական

<sup>21</sup> Մարգարյան Հ., Բոյաջյան Ա., Գյումրու աշխատանքային ռեսուրսների և բնակչության զբաղվածության վերլուծման փորձ, (1990-2000թթ.//ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 3, «Գիտություն» հրատ., Գյումրի, 2004, էջ 157:

<sup>22</sup> Գործազրկության հիմքում ընկած է աշխատուժի ցածր արժեքը:

<sup>23</sup> Արտադրության համատարած անկման պայմաններում է առաջանում կառուցվածքային գործազրկությունը:

<sup>24</sup> Թաքուն կամ ստվերային գործազրկությունը, որը հանդես է գալիս տնտեսության, մասնավորապես ոչ պետական ձեռնարկություններում համապատասխան ճյուղերում աշխատողների պահանջող թվաքանակից ավելի շատ աշխատողներ պահելու ձևով:

հատվածի ոչ արտադրական ոլորտի (կրթություն, առողջապահություն, գիտություն և մշակույթ) օպտիմալացման հետևանքով հազարավոր մարդիկ համալրեցին գործազուրկների շարքերը: Գործազրկության ճնշող մեծամասնությունը բաժին է ընկել քաղաքային բնակավայրերին, հատկապես Գյումրուն:

Տնտեսության տարբեր ոլորտներում զբաղվածների տեղաշարժերի ուսումնասիրությունը աշխատանքային ռեսուրսների ներուժի գնահատման կարևոր օղակներից է: Հայտնի է, որ տնտեսությունը պայմանականորեն բաժանվում է երեք հատվածների՝ առաջնային (գյուղատնտեսություն, ձկնաբուծություն, ձկնորսություն, հանքարդյունաբերություն), երկրորդային (վերամշակող արդյունաբերություն, էներգետիկա, շինարարություն) և երրորդային (առևտուր, հյուրանոց, տրանսպորտ, սպասարկում, ֆինանսներ, անշարժ գույք, կրթություն, առողջապահություն, կոմունալ): Վերջին երեսուն տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության, այդ թվում՝ Շիրակի մարզի տնտեսության երեք հատվածներում տեղի են ունեցել արմատական փոփոխություններ: Աղյուսակ 3-ի թվային ցուցանիշների վերլուծությունից պարզվում է, որ զբաղվածության մակարդակի շեշտակի անկում է գրանցվել, ինչը պայմանավորված է հիմնականում աշխատատեղերի, մասնավորապես արդյունաբերության ոլորտի և աշխատունակ տարիքի բնակչության թվի նվազումով: Ներկայացվող ժամանակահատվածում զբաղվածների թիվը տնտեսության առաջնային հատվածում նվազել է 21,7%-ով, երկրորդային հատվածում՝ մոտ 10 անգամ, իսկ երրորդային հատվածում ավելացել է 5,1 %-ով: Աղյուսակ 3-ից երևում է, որ մարզում 1989թ. զբաղվածություն ունեցող բնակչության 21,5 %-ը բաժին է ընկել տնտեսության առաջնային հատվածին, 40,0%-ը՝ երկրորդային, և 38,5%-ը՝ երրորդային հատվածին: Նույն ցուցանիշը 2018թ. կազմել է 33,8%, 8,1% և 58,1%: Ի դեպ, 2012թ. ՀՀ առաջնային հատվածին բաժին է ընկնել 22%, երկրորդայինին՝ 26,6%, իսկ երրորդայինին՝ 39,9%<sup>25</sup>: Ինչպես տեսնում ենք, Շիրակի մարզի և հանրապետության ցուցանիշների միջև առկա է էական տարբերություն: Շիրակի տնտեսության առաջնային հատվածում տարբեր ժամանակահատվածներում գրանցվել են զբաղվածների թվի աճ և անկում: Այսպես, պաշտոնական վիճակագրական տվյալներով՝ 1989-2016թթ. ոլորտում զբաղվածների թիվն ավելացել է 9,9 հազարով կամ 33%-ով, իսկ 2016-2018թթ. գրանցվել է շեշտակի անկում: Կարծում ենք՝ տնտեսության առաջնային հատվածում զբաղվածության թվի էական փոփոխություն չի գրանցվել, այլ ՀՀ ԱՎԿ-ի մեթոդաբանական հաշվարկում է

<sup>25</sup> Զբաղվածությունն ըստ տնտեսական ոլորտների, [www.arm.stat.](http://www.arm.stat.), 06.06.2020թ.

փոփոխություն գրանցվել<sup>26</sup>: Ի դեպ, Շիրակի մարզի բնակավայրերից, այդ թվում՝ գյուղական բնակավայրերից, 1990-ական թվականներից սկսած, շեշտակի ավելանում է սեզոնային արտագնա աշխատանքի մեկնողների թիվը: Տարեկան միջինը մարզից սեզոնային արտագնա աշխատանքի մեկնողների թիվը կազմում է 40-45 հազ. մարդ, որոնց կեսից ավելին բաժին է ընկնում գյուղական բնակչությանը: Սեզոնային արտագնա աշխատողների մեծ մասը մեկնում է Ռուսաստանի Դաշնություն<sup>27</sup>: Սեզոնային արտագնա աշխատանքը մարզի տնտեսության զարգացման վրա երկակի է գնահատվում՝ դրական և բացասական: Դրական ազդեցությունն այն է, որ նպաստում է բնակչության կենսամակարդակի բարձրացմանը՝ եկամտի լրացուցիչ աղբյուր է հանդիսանում, իսկ բացասականը ունենում է ժողովրդագրական վատ հետևանքներ: Արտագնա աշխատանքի մեկնողները տարեկան միջինը վաստակել են մոտ 200 մլն ԱՄՆ դոլար<sup>28</sup>:

Մեր փորձագիտական հարցումներից պարզել ենք, որ միգրացիոն հոսքերի ձևավորմանը նպաստում են ոչ միայն գոյատևման համար նվազագույն պայմանների և աշխատատեղերի պահովման դժվարությունները, այլև բազմաթիվ աշխատանքային միգրանտներ՝ հատկապես երիտասարդները, չեն ցանկանում զբաղվել գյուղատնտեսական աշխատանքներով, իսկ քաղաքային բնակավայրերում՝ ներգրավվել շինարարական և արդյունաբերական աշխատանքներում<sup>29</sup>: Աղյուսակ 3-ում բերված թվերից երևում է, որ զբաղվածություն ունեցող բնակչության թվի էական անկում գրանցվել է տնտեսության երկրորդային հատվածում, հատկապես արդյունաբերության ոլորտում: Սեփականաշնորհվող արդյունաբերական ձեռնարկությունների վրա պետական վերահսկողության բարձիթողի վիճակը հանգեցրեց նրան, որ նոր սեփականատերերի մեծ մասի կողմից արտադրական միջոցները գրեթե փոշիացան: Իշխանությունները նոր սեփականատերերի առջև չդրեցին պարտավորվածություն արդյունաբերական ձեռնարկությունները շահագործելու: Շիրակի մարզում 1990-1997թթ. արդյունաբերական ձեռնարկություններում զբաղվածների թիվը նվազել է 2,5 ան-

<sup>26</sup> Զբաղվածների թվաքանակի մեջ ներառվում են նաև զինված ուժերում զբաղվածները, բացառությամբ պարտադիր ժամկետային զինծառայողների: Զբաղվածության ցուցանիշի քաղաք / գյուղ խմբավորումը սովորաբար բնորոշում է զբաղվածների բնակչության, այլ ոչ թե աշխատանքային գործունեության իրականացման վայրը, որոնք կարող են համընկնել կամ տարբերվել: Զբաղվածներն ըստ զբաղվածության կարգավիճակի դասակարգվում են վարձու և ոչ վարձու աշխատողների՝ համաձայն Զբաղվածության կարգավիճակի միջազգային դասակարգչի (ICSE - 93):

<sup>27</sup> **Բոյաջյան Ա.**, Շիրակի մարզի աշխատանքային արտագնացությունը, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 1-5, 2017թ.:

<sup>28</sup> Նույնը:

<sup>29</sup> **Բոյաջյան Ա.**, Շիրակի մարզի բնակչության զբաղվածությունը, ԴԱՆ, տետր 1, 2019թ.:

զամ՝ 31,7 հազարից հասնելով 12,9 հազարի: Արժե հիշատակել, որ 1983թ. Գյումրիում գործող 53 արդյունաբերական ձեռնարկությունում (այդ թվում՝ ձեռնարկություններից 12-ը խոշոր էին՝ 501-1000 աշխատողով, իսկ 13-ը՝ խոշորագույն՝ 1001 և ավելի աշխատողով) զբաղվածների թիվը 48,9 հազար մարդ էր: Խոշորագույն ձեռնարկություններին բաժին էր ընկնում մարզի արդյունաբերության մեջ զբաղվածների ամբողջ թվի 73,2%-ը<sup>30</sup>: Այժմ մարզի արդյունաբերության ոլորտում զբաղվածություն ունեցող հիմնական մասը բաժին է ընկնում սննդի և թեթև արդյունաբերությանը:

Աղյուսակ 3

**Շիրակի մարզի զբաղվածության շարժընթացն ըստ տնտեսական հատվածների**

/հազար մարդ/

|         | Զբաղվածների թիվը | Տնտեսության առաջնային հատված |                    |                | Տնտեսության երրորդային հատված |               |            |                  | Այլ ոլորտներ <sup>31</sup> | Զբաղվածության մակարդակը % <sup>32</sup> |
|---------|------------------|------------------------------|--------------------|----------------|-------------------------------|---------------|------------|------------------|----------------------------|---|
|         |                  | Գյուղատնտեսություն           | Արդյունաբերություն | Շինարարություն | Շառայություններ <sup>33</sup> | Տրանսպ. և կապ | Կրթություն | Առողջապահություն |                            |   |
| 1989թ.  | 139,4            | 30,0                         | 50,2               | 5,5            | 12,0                          | 9,3           | 11,4       | 4,4              | 16,6                       | 65,8                                    |
| 1997թ.  | 108,6            | 32,3                         | 12,9               | 4,5            | 22,5                          | 5,7           | 8,7        | 3,2              | 18,8                       | 53,1                                    |
| 2001 թ. | 98,8             | 35,4                         | 3,5                | 2,3            | 30,8                          | 2,1           | 8,9        | 3,2              | 12,6                       | 43,6                                    |
| 2005 թ. | 87,6             | 33,4                         | 5,6                | 2,3            | 30,2                          | 3,5           | 6,5        | 2,3              | 3,8                        | 41,5                                    |
| 2010 թ. | 85,3             | 34,6                         | 3,5                | 2,8            | 26,6                          | 2,8           | 8,6        | 3,3              | 3,1                        | 38,1                                    |
| 2015 թ. | 86,6             | 38,5                         | 2,7                | 4,2            | 29,6                          | 3,4           | 5,1        | 2,0              | 1,1                        | 45,5                                    |
| 2016 թ. | 83,6             | 39,9                         | 3,2                | 2,5            | 27,3                          | 2,9           | 4,7        | 1,9              | 1,2                        | 46,2                                    |
| 2017 թ. | 75,1             | 34,1                         | 3,4                | 2,9            | 24,3                          | 2,7           | 4,6        | 1,8              | 1,3                        | 43,5                                    |
| 2018թ.  | 69,5             | 23,5                         | 3,1                | 2,5            | 30,6                          | 2,6           | 4,1        | 1,7              | 1,4                        | 38,7                                    |

Աղյուսակը կազմելիս օգտագործվել է՝ **Բոյաջյան Ա.**, Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մի քանի հարցեր (մասն II)//ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», հ. 9, «Գիտություն» հրատ., Գյումրի, 2006թ., էջ 122: <https://www.armstat.am/7.pdf>, 20.05.2020թ., [www.armstat.am/file/article/marz\\_99\\_15.pdf](http://www.armstat.am/file/article/marz_99_15.pdf), [https://www.armstat.am/file/article/9.trud\\_2016\\_4.1.pdf](https://www.armstat.am/file/article/9.trud_2016_4.1.pdf):

<sup>30</sup> **Բոյաջյան Ա.** Լենինականի բնակչության զբաղվածությունը 1970-1987թթ.// ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», «Գիտություն» հրատ, հ. 7, Եր., 2004, էջ 157-165:

<sup>31</sup> Վարսավիրանցներ, գործատուներ, ֆինանսաբանկային համակարգ, պետական կառավարում և այլն:

<sup>32</sup> Զբաղված և աշխատունակ տարիքի բնակչության թվի հարաբերակցությունն է:

<sup>33</sup> Առևտուր և հասարակական սնունդ:

Մարզի տնտեսության երրորդային հատվածում զբաղվածների թվի աճ գրանցվել է ծառայությունների ոլորտում՝ 2,5 անգամ: Այդ ոլորտում աշխատողների թվի աճը պայմանավորված է նրանով, որ համեմատաբար քիչ ներդրումներ կատարելով՝ ապահովում է կայուն եկամուտ: Հիմնականում դրանք մասնավոր ձեռնարկություններն են՝ վարսավիրանոցները, հասարակական սննդի օբյեկտները, ռեստորանները, հյուրանոցները և այլն: Տնտեսության երրորդային հատվածում շեշտակի անկում է գրանցվել տրանսպորտի՝ 3,6 անգամ, կրթության՝ 2,9 անգամ և առողջապահության՝ 2,6 անգամ ոլորտներում: Հիշատակենք, որ առողջապահական և կրթության հաստատությունների ճնշող մեծամասնությունը պետական սեփականություն է: Ի դեպ, այդ ոլորտներում զբաղվածների աշխատավարձը բարձրացվել է նաև աշխատողների թվի նվազման հաշվին:

**Եզրահանգում.** Շիրակի մարզի բնակչության զբաղվածության վերաբերյալ շարադրվածը թույլ է տալիս անել հետևյալ եզրահանգումներն ու առաջարկությունները.

- Շիրակի բնակչության զբաղվածության, հատկապես տնտեսության երկրորդային հատվածի զբաղվածության հիմնախնդիրների լուծումը և աշխատանքի շուկայի կարգավորումը մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման և արտագաղթը մեղմելու գերակա խնդիր է:

- Գնալով ավելի մեծ թիվ են կազմում գյուղից հեռացող բարձրագույն կրթությամբ մասնագետ կադրերը, որոնց համար գյուղում աշխատանք չկա, մի մասն էլ ցանկություն չունի զբաղվելու գյուղատնտեսական աշխատանքներով:

- Շիրակի մարզի բնակչության զբաղվածության թվի ավելացման և սոցիալական իրավիճակի բարելավման ուղիները համարում ենք՝

- Մարզի աշխատանքի շուկայում աշխատանքային ռեսուրսների օգտագործման հնարավորինս ճշգրիտ պատկերի որոշումը, ինչը կարող է հիմք հանդիսանալ՝ լուծելու տնտեսության մեջ աշխատուժի առավելագույն զբաղվածության խնդիրը:

- Անհրաժեշտ է իրականացնել տնտեսության աշխատատար ճյուղերի զարգացմանը նպաստող քաղաքականություն:

- Կատարելագործել և արդիականացնել արդյունաբերական ենթակառուցվածքները:

- Ստեղծել աշխատաշուկայի բորսա:

**ЗАНЯТОСТЬ НАСЕЛЕНИЯ ШИРАКСКОЙ ОБЛАСТИ  
КОНЦА XX НАЧАЛА XXI вв.**

*Бояджян А. Г.*

**Ключевые слова:** *трудовые ресурсы, до трудоспособный возраст, трудоспособный возраст, безработица, рынок труда, рабочее место, трудовая миграция, коэффициент занятости, заработная плата.*

В настоящей статье даны изменения уровня занятости и безработицы среди населения Ширакской области, выявлены особенности и закономерности трудовых ресурсов области, динамика занятости населения на рынке труда.

С 1989-2018г. численность трудовых ресурсов Ширакской области сократилась на 32,3 тыс. человек, то есть, в сокращении общего числа населения трудовые ресурсы составляют 38,3%, число экономически активного и занятого населения сократилось вдвое, а число экономически пассивного населения увеличилось на 48,7%, что обусловлено структурной безработицей в экономике, а спад уровня безработицы в 2000-х годах обусловлен эмиграцией и сезонной трудовой миграцией. Большую часть экономически пассивного населения и безработных составляют женщины.

В Шираке, начиная с 1991г. по настоящее время резкий спад числа занятости среди населения зафиксирован во всех сферах экономики, кроме сферы услуг, что представляет реальную угрозу безопасности не только для области, но и для всей республики.

**EMPLOYMENT OF THE POPULATION OF THE SHIRAK REGION  
IN THE LATE TWENTIETH CENTURY - EARLY XXI.**

*Boyajyan A. G.*

**Kew words:** *labor resources, pre-working age, working age, unemployment, labor market, workplace, labmigration, employment rate, wages.*

This article describes the changes in the level of employment and unemployment of the population of the Shirak region, identifies the features and patterns of labor resources of the region, the dynamics of employment, the labor market.

From 1989 to 2018 the number of labor resources in the Shirak region decreased by 32.3 thousand people, i.e., in reducing the total population, the labor force is 38.3%, the number of the economically active population and the employed population has halved, and the number of the economically inactive population has increased by 48.7%. The rapid growth of the number of economically inactive population is due to structural unemployment in the economy, and the reduction of unemployment in the 2000s: emigration and

seasonal labor migration. Women predominate among the economically inactive population and the unemployed.

In the study period in the region, in 1989, 21.5% of the employed population is in the primary sector of the economy, 40.0%- in the secondary and 38.5% - in the tertiary, and the same indicator in 2018 respectively, it was 33.8%, 8.1% and 58.1%. In Shirak in 1991.to this day, in all areas of the economy, with the exception of services, there has been a sharp decline in the number of employed people, which threatens the security of not only the region, but also our Republic.

## References

1. **Valantey D.** Osnovi teorii narodonaseleniya, M., 1977 **(In Russian)**.
2. **Boyajyan A.** Leninakani bnakshutyan zbaghvatsuthun@,Gyumri, 2004 **(In Armenian)**.
3. **Boyajyan A.** Shiraki marzi social-tntesakan zargacman mi qani harcer, Yerevan, 2006 **(In Armenian)**.
4. **Sargsyan H., Boyajyan A.** Ashxatanqayin resursner@ yev bnakshuthyan zbaghvatsuthyan verlutsman porc(1990-2000), Gyumri, 2004 **(In Armenian)**.
5. **Xodjabekyan V.** Hayastani bnakshuthyan verartadruthun@ yev texasharjer@ XIX-XX darerum yev XXI dari shemin, Yerevan, 2001 **(In Armenian)**.
6. **Xodjabekyan V.** Zbaghvatsuthyan himnaxndirner@ Hayastanum ancman shrjanum, Yerevan, 1998 **(In Armenian)**.
7. **Avetisyan X.** Sovetakan Hayastani bnakshuthyun@ yev bnakavayreri ashxarhagruthyun@, Yerevan, 1987 **(In Armenian)**.

*Ընդունվել է՝ 24. 07. 2020*

*Գրախոսվել է՝ 11. 08. 2020*

*Հանձնվել է տպ.՝ 20.11.2020*

### Տեղեկություններ հեղինակի մասին

Արտաշես ԲՈՅԱՋՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի  
ավագ գիտաշխատող, էլ. հասցե՝ a.boyajyan@mail.ru

ՀՏԴ՝ 908

Ա Ջ Գ Ա Գ Ր Ա Վ Ա Ն ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ  
ՑՈՒՑԱՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ  
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

*Լիաննա Գևորգյան*

ՀՀ ԿԳՄՍՆ պատմամշակութային արժեքների պահպանման և  
պատմական միջավայրի պահպանության ծառայություն

Բանալի բառեր՝ *թանգարան, ցուցադրություն, ինքնություն, ազգագրություն, հիշողություն, ժառանգություն, հավաքածու, հաղորդակցական միջավայր, թանգարանային առարկա, ոչ նյութական մշակույթի տարր:*

Հոդվածում քննարկվել են սոցիալական հիշողության պահպանման ինստիտուտներից մեկի՝ թանգարանի, մասնավորապես, ազգագրական հավաքածուներ պահող և հանրահոջակող թանգարանների տեղն ու դերը ինքնության, մասնավորապես ազգային ինքնության ձևավորման, պահպանման կամ ակտիվացման գործում:

Հոդվածում ներկայացված խնդիրը հատկապես արդիական է այսօր, երբ հասարակության մեջ ավելի հաճախ է նկատվում հետաքրքրության աճ իր արմատների ու ինքնության նկատմամբ: Թանգարանը դիտարկվում է որպես մշակույթի հիշողության պահպանման յուրատեսակ վայր, որտեղ ներկայացված ցուցադրության, իրականացված կրթամշակութային գործունեության միջոցով այն փոխանցվում է սերնդեսերունդ և ներազդում անձի մտահորիզոնի ընդլայնման, զգացողությունների ակտիվացման, արժեհամակարգի, բարոյական նորմերի, գեղագիտական ճաշակի, ինքնության, այդ թվում՝ ազգային ինքնության ձևավորման վրա:

*Նախաբան.* Մարդու արժեքային համակարգը ձևավորվում է որոշակի պատկերացումների ու տեղեկատվության հիման վրա, որոնք տրամադրվում են հասարակության՝ ընտանիքի, հարազատների և ընկերների, դպրոցների, լրատվամիջոցների և վերջապես թանգարանների կողմից<sup>1</sup>: Մի շարք հետազոտողներ արվեստի և կրթական համակարգի, այդ թվում՝ թանգարանի<sup>2</sup>, արխիվի, գրադարանի սոցիալական ժառանգության մեխանիզմ ու գործառույթներից մեկն են համարում մշակույթի փորձի ոչ գենետիկական պահպանումն ու փոխանցումը: Թանգարանային հավաքածուների հիմք հանդիսացող ազգագրական արտեֆակտների ուսումնասիրությունն ազգաբանության և թանգարանագիտության տեսանկյունից՝ մշակույթը կրողից անբաժան և իր կենցաղավարման միջավայրում, փաստում է այն հսկայական տեղեկատվական դաշտի առկայությունը, որն իր մեջ կրում է թանգարանային առարկան: Ուսումնասիրվելուց և ողջ տեղեկատվության բացահայտումից հետո թանգարանային առարկաներն ու ոչ նյութական մշակույթի տարրերը դառնում են հավաքածուների հիմք, իսկ դրանցից առավել արտահայտիչները՝ ժամանակի ընթացքում նաև ազգային ինքնության խորհրդանիշներ:

Թանգարանային միջավայրի յուրահատկությունն է, որ այն հնարավորություն է ընձեռում միավորելու հաղորդակցման երկու՝ արտաքին (մշակութային երկխոսություն) և ներքին (իմ վերաբերմունքն անցյալի նկատմամբ) ձևերը: Հենց այս համատեքստում էլ թանգարանը դիտարկվում է որպես ազգային մտահայեցողության և ինքնության ձևավորման միջավայր: Առաջին հերթին խոսքը վերաբերում է մասնագիտացված ազգագրության թանգարաններին և ազգագրական հավաքածուներ ու ցուցադրություններ ունեցող թանգարաններին, որոնք ավելի քիչ են ուսումնասիրված, քան գեղարվեստական, պատմության և այլ տիպի թանգարանները:

Ազգագրության արդի նվաճումների ու թանգարանային աշխատանքի երկարամյա փորձի համադրումը հնարավորություն են ընձեռում եզրակացնելու,

<sup>1</sup> Шнирельман В. А. Введение в дискуссию. Историко-этнографический музей: Презентация традиции или репрезентация конструкции? // ЭО, 2010, № 4, с. 6.

<sup>2</sup> Равикович Д. А. Социальные функции и типология музеев // Музееведение. Вопросы теории и методики, М., 1987, с. 11.

որ ազգագրական թանգարանը, հենվելով պատմական<sup>3</sup>, հնագիտական<sup>4</sup> և հասարակագիտական<sup>5</sup> սկզբնաղբյուրների կամ այլ կերպ ասած՝ արտեֆակտային տեղեկատվության վրա, ի գործու է խմբավորելու և ուսումնասիրելու ինչպես անցյալի, այնպես էլ արդի մշակույթը<sup>6</sup>, առկա իրականությունը հասարակության «հիշողության համակարգում»<sup>7</sup> ներառելու, ապա և պահպանելու համար: Մա իր հերթին, ժամանակի ընթացքում, հնարավորություն կտա ընդհանրացումներ անելու մշակույթի հնագույն արմատների ու արդի զարգացումների փոխկապակցվածության մասին և կնպաստի ներկայացնելու վերջիններիս դերն ազգային ինքնագիտակցության ու աշխարհայացքի հարափոփոխ գործընթացի համատեքստում:

Թանգարանային սկզբնաղբյուրը իր վերջնական արտահայտությունը ստանում է ցուցադրություններում և հրատարակությունների մեջ հավաքածուի ներկայացված օրինակներով: Ազգագրական գիտության նվաճումների և առկա փաստական նյութի հիման վրա ազգագրագետ-հետազոտողի և թանգարանային աշխատողի կողմից մեկնաբանված թանգարանային առարկայի տեղեկատվական ներուժը դառնում է հավաքածուի ժամանակավոր ներկայացվող հատվածի՝ թանգարանային ցուցադրության գիտական և գեղարվեստական նախագծի հիմքը: Մեկ թեմայի գաղափարի շուրջ միավորված ու մեկնաբանված և մեկ տարածքում ցուցադրված բնօրինակ թանգարանային առարկաները վերածվում են պահպանված հիշողության առարկայացված վկայությունների՝ ձևավորելով այն հաղորդակցական նշանային միջավայրը, որ ներազդում է այցելուի ազգային ինքնության ձևավորման ու ակտիվացման վրա:

Տրանսիացի պատմաբան, «հիշողության վայրեր» հասկացության հեղինակ Պիեռ Նորան թանգարաններն անվանում է «հիշողության սիմվոլիկ օբյեկտներ»,

<sup>3</sup> Նահապետյան Ռ., Հույն աշխարհագիր Ստրաբոնի ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին // ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդես» (հետայսու՝ ՊԲՀ), 2015, № 1, էջ 208-230:

<sup>4</sup> Նահապետյան Ռ. Հայ ազգաբանական մտքի սկզբնավորումը // ՊԲՀ, 2011, N 3, էջ 132-148:

<sup>5</sup> Каган М. С. Философия культуры, СПб., 1996, с. 206.

<sup>6</sup> Баранова И. И. Этнография и музей // Museum, М., 1983, № 139, с. 48; Галкина Е. Л. Этнографические источники в музее: проблемы интерпретации, М., 1998, Бромлей Ю. В. Современные проблемы этнографии (очерки теории и истории), М., 1981, с. 355-356.

<sup>7</sup> Мастеница Е. Н. Информационный потенциал музейного предмета: этнокультурный аспект // Музей. Традиции. Этничность, XX-XXI вв., Материалы международной научной конференции, посвящ. 100-летию Российского Этнографического музея, СПб., Кишинёв: Nestor-Historia, 2002, с. 328-330.

«հավերժության պատրանք», «հիշատակի նյութականացում»<sup>8</sup>: Հիշողության տեսակների մեջ փորձի և անցյալի մասին տեղեկությունների փոխանցումն իրականացնում են պատմական և վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող մշակութային հիշողությունները<sup>9</sup>:

Հիշողությունից պատմություն տանող թանգարանային ցուցադրությունում յուրաքանչյուր սոցիալական խումբ ինքնաբերաբար վերաիմաստավորում է սեփական պատմությունը, ինչն արդյունքում ևս հանգեցնում է ինքնության ձևավորման<sup>10</sup>: Թանգարանային առարկաների միջոցով պատմության, պատմական և մշակութային հիշողության սերնդեսերունդ փոխանցումը միշտ եղել է և կմնա յուրաքանչյուր, այդ թվում՝ ազգագրական հավաքածուներ ունեցող թանգարանի գործունեության հիմնաքարը: Այդ իսկ պատճառով թանգարանագիտական գրականության մեջ անհրաժեշտ է, որ դիտարկվեն այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են պատմական ինքնագիտակցությունը և դրա հետ անմիջականորեն կապված՝ պատմական և սոցիալական (կոլեկտիվ) հիշողությունները<sup>11</sup>:

Ուստի, եթե պատմության թանգարանները ժամանակների հաջորդական փոխկապակցվածությունը ներկայացնում են պատմական իրադարձությունների վերլուծությամբ, ապա ազգագրության թանգարանները, փաստերի հիման վրա բացահայտելով առանձին երևույթների արմատները, նույն իրականացնում են՝ ավանդական անցյալը ժամանակակից մշակույթի հետ կապելով: Այսպիսով, ազգագրության թանգարանի խնդիրն է ապահովել «մշակութային ժառանգականությունը»<sup>12</sup> և անցյալի ավանդույթները, երբեմն վերափոխված ձևով փոխանցել ներկա և ապագա սերունդներին: Ըստ այդմ, կարելի է եզրակացնել, որ թանգարանը, ազգագրական հավաքածուի և դրա միջոցով կազմակերպված ցուցադրության շնորհիվ, սերնդեսերունդ փոխանցվող պատմական հիշողությունը փոխակերպում է կոլեկտիվ (սոցիալական) հիշողության:

Որոշ հետազոտողներ ազգագրության թանգարանի ցուցանմուշները (որոնց նմանակները տեսել ենք տատիկի տանը) կամ մանկության սիրված գիրքը կապում են հիշողության սոցիալական շրջանակների<sup>13</sup>, հիշողությունների աշխուժացման, հիշողությունների արթնացան (անցյալին դիմելը<sup>14</sup>, որպես յուրօրինակ

<sup>8</sup> Нора П., Озуф М. и другие Франция – память, СПб., 1999, с. 20-30.

<sup>9</sup> Մարության Հ. Տ., Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում, Եր., 2006, էջ 24:

<sup>10</sup> Нора П., Озуф М. и другие, նույն տեղում, էջ 32:

<sup>11</sup> Ассман Ян Культурная память. Письмо, память о прошлом и политическая идентичность в высоких культурах древности (пер. с немецкого М. М. Сокольской), М., 2004, с. 50-59.

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 15.

<sup>13</sup> Хальбвакс М Социальные рамки памяти, М., 2007, с. 119.

<sup>14</sup> Ассман Ян նշվ. աշխ., էջ 15:

ներքին երիտասարդացման գործընթաց<sup>15</sup>), ինչպես նաև հիշողության էթնոհոգեբանական առանձնահատկությունների հետ<sup>16</sup>, որոնցով բացահայտվում են յուրաքանչյուր ազգին բնորոշ հատկանիշները՝ արտացոլված սովորությունների, ավանդույթների, ապրելակերպի, ժողովրդական բանահյուսության մեջ: Այս ամենն ամրագրվում է թանգարանի համապատասխան բաժինների աշխատողների կողմից և հանրահռչակվում ազգագրական ցուցադրությունների միջոցով:

Թանգարանի գործունեության հետ անուղղակիորեն կապված է հաղորդակցական հիշողությունը<sup>17</sup>, որը հիմնված է հասարակության կողմից ստեղծված որոշակի պատկերացումների վրա<sup>18</sup>: Իր անցյալի վերականգնման համար անձը հաճախ ստիպված է անդրադառնալ «օտար, հարակից» հիշողությունների (բանավոր ավանդված պատմությունների, իրադարձության անմիջական մասնակիցների «կենդանի հիշողությանը», ականատեսների անմիջական փորձի փոխանակմանը, միջանձնային հարաբերություններին): Դրանք փոխանցվում են կա՛մ սերնդեսերունդ, կա՛մ հասարակության որոշակի զանգվածի ներսում<sup>19</sup>, այսինքն՝ դա ոչ նյութական ժառանգության այն հատվածն է, որ ամրագրվում է թանգարանի աշխատողների կողմից և ցուցադրվում է ազգագրական բնույթի ցուցադրություններում:

Այսպիսով, նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության հիման վրա ստեղծված թանգարանային ազգագրական հավաքածուների ցուցադրությունները յուրահատուկ գիտազեղարվեստական հաղորդակցական միջավայր են, որտեղ վերականգնվում է առարկայացված հիշողությունը:

Վերջին տարիներին թանգարանին՝ որպես սոցիալական հիշողության ինստիտուտի, առանձնահատուկ տեղ է հատկացվում՝ կապված հասարակության՝ իր արմատների ու ինքնության նկատմամբ աճող հետաքրքրության հետ: Այս դեպքում թանգարանը կարելի է բնորոշել որպես մշակույթի հիշողության

<sup>15</sup> Хальбвакс М., նշվ. աշխ., էջ 119:

<sup>16</sup> Le Vine R. A. Properties of culture: An ethnographic view, in “R. A. Shweder & R. A. Le Vine (Eds.), Culture theory: Essays on mind, self, and emotion”, Cambridge 1984, pp. 67-87 (Cambridge University Press); D’Andrade R. A folk model of the mind, in “D. Holland & N. Quinn (Eds.), Cultural models in language and thought”, Cambridge 1987, pp. 112- 148 (Cambridge University Press); Lillard A. Ethnopsychologies: Cultural Variations in Theories of Mind, ”Psychological Bulletin”, 1998, vol. 123, № 1, pp. 3-32; Налчаджян А.А. Основы этнопсихологии, Ер., 2003, с. 13-14; Соколов А.В. Общая теория социальной коммуникации. Социальная память. Виды памяти и мнемические действия, СПб., 2002.

<sup>17</sup> Ассман Ян նշվ. աշխ., էջ 20:

<sup>18</sup> Хальбвакс М. Коллективная и историческая память//Неприкосновенный запас, 2005, № 2-3 (40-41) «ebook» <http://magazines.russ.ru/nz/2005/2/ha2.html>

<sup>19</sup> Репина Л. П. Культурная память и проблемы историкоописания (историографические заметки), М., 2003, с. 11.

պահպանման վայր, որտեղ ցուցադրության, կրթամշակութային գործունեության միջոցով այն փոխանցում է սերնդեսերունդ և ներագրում անձի մտահորիզոնի ընդլայնման, զգացողությունների ակտիվացման, արժեհամակարգի, բարոյական նորմերի, գեղագիտական ճաշակի, ինքնության, այդ թվում՝ ազգայինի ձևավորման վրա:

Ազգային ինքնությունը, ինչպես և ինքնության բոլոր դրսևորումները, ձևավորվում են անհատի կայացման ու սոցիալականացման ընթացքում<sup>20</sup>, ինչը հնարավորություն է ընձեռում ներագրելու այդ գործընթացի վրա ազգագրական հավաքածուների հիման վրա իրականացվող թանգարանային (մշակութային, կրթական, գիտական և ցուցահանդեսային) աշխատանքների միջոցով: Ազգագրական հավաքածուներում ներկայացված են արժեքներ, որոնք բնութագրական են տարբեր պատմական ժամանակներում տարբեր ժողովուրդների կենցաղի ու մշակույթի համար: Դա հանգեցնում է ազգային ինքնության խնդրի հստակեցմանը, և «սեփական-օտար» տրամաբանական դիրքորոշումը միայն նպաստում է հայ ինքնության լիարժեք ձևավորմանը:

Այսպիսով, հիշողությունը՝ որպես ազգային ինքնության ձևավորման բաղադրիչ, կապող օղակն է ազգագրության թանգարանի՝ որպես հիշողության պահպանության ինստիտուտի և ազգային ինքնության ձևավորման գործընթացի միջև: Ավելին, ազգագրական թանգարանները և ազգագրական ցուցադրություններ ու հավաքածուներ ունեցող այլ բնույթի թանգարանները արդեն իսկ պահված հիշողության ակտիվացմամբ և հանրահռչակմամբ ավելի ու ավելի շատ տեղեկատվություն են փոխանցում և գիտակցության միջոցով ներագրում ազգային ինքնության ձևավորման և/կամ ակտիվացման գործընթացին:

Հայ ինքնության ձևավորման և ակտիվացման գործում ազգագրության, ինչպես նաև ազգագրական իրերի հավաքածուներ և ցուցադրություններ ունեցող թանգարանների արդի դերը պայմանավորված է մի քանի հանգամանքներով.

- Թանգարանը՝ որպես սոցիոմշակութային ինստիտուտ, կոչված է պատմամշակութային ժառանգության պահպանմանը, ուսումնասիրմանն ու փոխանցմանը և իր կայացման ընթացքում միշտ համարվել է ինքնության ձևավորման բաղադրիչներից մեկի՝ սոցիալական հիշողության պահպանման ու վերականգնման վայր:

Հայաստանի թանգարանների ազգագրական ուղղվածությունն ունեցող ցուցադրությունները, որոնք ստեղծված են հիմնականում XXդ. երկրորդ կեսին, ըստ

<sup>20</sup> Эрикссон Э. Идентичность: юность и кризис, М., 2006. «ebook» <http://www.myword.ru>

հայեցակարգի չէին կարող ներառել ինտերակտիվության տարրեր և նախատեսված էին պասիվ դիտող-այցելուի համար: Ուստի, XXIդ. սկզբին անհրաժեշտություն առաջացավ արմատապես փոխել Հայաստանի թանգարանների և, մասնավորապես, ազգագրական բնույթի ցուցադրություններ ունեցող թանգարանների գործունեության մարտավարությունն ու ռազմավարությունը:

- XX դ. վերջի - XXI դ. սկզբի հասարակական կյանքի տնտեսական ու քաղաքական բարեփոխումների հետևանքով պատմաազգագրական թանգարանները զգալի փոփոխություններ կրեցին: Հայաստանում հասարակության դեմոկրատացման և գլոբալացման գործընթացների արդյունքում տեղի ունեցող սոցիալ-մշակութային փոփոխություններն իրենց հերթին մասամբ հանգեցրին հայ ինքնության «աղավաղմանը, աղճատմանը»: Սրանով պայմանավորված՝ խնդիր է առաջանում որոշակի շտկում մտցնել ժամանակակից աշխարհում թանգարանի առաքելության և նրա գիտական, կրթամշակութային, գիտացուցադրական գործունեության մեջ: Դա կնպաստի այնպիսի գիտելիքների ու հմտությունների ձեռքբերմանը, որոնք անհրաժեշտ են ազգային ինքնության մաս կազմող ներկայի ու անցյալի էթնոմշակութային ընկալումները զուգորդելու և զարգացնելու համար:

Սակայն ձևական նորարարությամբ կամ ցուցադրական պահանջվածությամբ հրապուրվելը կարող է հանգեցնել անցանկալի հետևանքների, եթե չպահպանվի ողջամիտ և հիմնավոր հավասարակշռությունը մշակույթի ու գործարարության, տեղեկատվության, գիտելիքի և հաճույքի, ժամանցի և անցողիկ շոուի կազմակերպման միջև: Պետք է մշտապես հաշվի առնել, որ ժամանակակից կյանքում ազգագրական արտեֆակտերն օգտագործվում են ոչ միայն թանգարաններում: «Հայկականության» բազմաթիվ խորհրդանիշներ թանգարանային սրահներից տեղափոխվել են բիզնես տարածք, ստեղծել ոչ գիտական «կենդանի» ցուցադրություն՝ հետաքրքրություն առաջ բերելով այցելուների շրջանում:

Որոշ դեպքերում վերականգնված կենցաղավարման միջավայրի գնահատականը, պատմաազգագրական նշանակությունը և ժամանակակից տարբեր հարթակներում թանգարանում պահվող ազգագրական իրերի նմանօրինակների, իսկ երբեմն էլ հենց մշակութային արժեքների լայն կիրառությունը հիմնված են ոչ այնքան առարկայի կամ իրադարձության գիտական արժեքը ճիշտ գնահատելու, որքան այցելուի հետաքրքրությունն ու երևակայությունը շարժելու համար կիրառված տարաբնույթ դիզայնի արվեստի լուծումների վրա: Դա հանգեցրել է ինչպես ազգային երանգավորում ստացած երևույթների շրջանառությանը, այնպես էլ կվազի (կեղծ) և պարաթանգարանների ու փորձարարական կառույցների (էքսպերիմենտալիզմ) առաջացմանը:

Անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ թանգարանային ցուցադրությունների յուրահատկությունն ու արժեքը ներկայացվող բնօրինակ առարկաների հավաքածուներն են: Նման ցուցադրություններն այն հաղորդակցական միջավայրերն են, որտեղ, հաշվի առնելով նյութական և ոչ նյութական մշակույթի զարգացումն ու վերափոխումը ժամանակի ու տարածության մեջ, մի սերնդից մյուսին փոխանցվում է իրական տեղեկություն: Վերջինիս տարրերն են, որ հետագայում երբեմն վերածվում են հայ ինքնության խորհրդանիշների:

Ուստի, մշտապես պետք է նկատի ունենալ, որ ազգագրական բնույթի թանգարանային ցուցադրությունն այն միջավայրն է, որ թանգարանի կայացման ու գործունեության ողջ ընթացքում հիմք է հանդիսանում թանգարանի գիտականորեն հիմնավորված զանգվածային մշակութային, էթնոմանկավարժական գործունեության համար: Այն միշտ եղել է յուրահատուկ դաստիարակչական կրթօջախ, որը, իրականացնելով տարաբնույթ կրթամշակութային ծրագրեր (թեմատիկ էքսկուրսիաներ, դասախոսություններ, խմբակների պարապմունքներ, զանգվածային միջոցառումներ), մեծապես նպաստել է նյութական և ոչ նյութական մշակույթի տարրերի հանրահռչակմանը, սերնդեսերունդ փոխանցմանը՝ առանձնահատուկ նշանակություն ունենալով ազգային ինքնության ձևավորման գործընթացում:

Հայաստանի թե՛ ազգագրության և թե՛ ոչ մասնագիտացված թանգարաններն իրենց հաղորդակցական միջավայրն ակտիվորեն օգտագործում են գիտելիքներ, հմտություններ փոխանցելու, ազգային ավանդույթների նկատմամբ հարգալից վերաբերմունք սերմանելու, անհատի ստեղծագործական ունակությունները բացահայտելու և զարգացնելու, ազգային և սոցիալական ճիշտ ուղղվածություն ունեցող և ստեղծագործական մտածողությամբ անձ ձևավորելու, գիտակցության և ենթագիտակցության վրա ներազդող հուզական աշխարհ և արժեհամակարգ ստեղծելու համար, որի արդյունքում ձևավորվում է անհատի բարոյական, գեղագիտական և մշակութային-արժեքային կողմնորոշված ներաշխարհն ու ըստ այդմ՝ նաև ազգային ինքնությունը:

Պետք է արձանագրել նաև, որ Հայաստանի թանգարանները կրթամշակութային գործունեության հնարավորությունների միայն մի մասն են օգտագործում: Թանգարանային ժամանցը կարող է ներառել փորձարարական տարրեր, թանգարանային թատրոն, համերգներ, ավանդական և ոչ ավանդական տոնակատարություններ, խաղեր, հեռուստահաղորդումներ, հեռուստախաղեր, վիկտորինաներ և այլն: Կրթամշակութային գործունեության ակտիվացումը, այցելու-թանգարան հարաբերությունների վերանայումը, նոր ծրագրերի իրականացումը թանգարանը կդարձնի հաղորդակցական նոր և մեծ միջավայր՝ նպաստելով այցելուների թվի աճին, տարբեր տարիքային խմբերից բաղկացած լսարանի

ձևավորմանը, իսկ թանգարանների աշխատողները կարող են միջնորդ դառնալ գիտելիքների և հմտությունների սերնդեսերունդ փոխանցմանը՝ դրանով իսկ ներազդելով ոչ միայն մշակութային ժառանգության պահպանման, այլև ազգային ինքնության ձևավորման ու ակտիվացման վրա:

Վերջին տարիներին հայ ազգային ինքնության ակտիվացման արդյունավետ միջոց են դառնում թանգարանային և ոչ թանգարանային հարթակներում կազմակերպվող զանգվածային մշակութային միջոցառումները, որոնք ընդլայնել են Հայաստանի թանգարանների և պետական, հասարակական, մասնավոր կառույցների համագործակցությունը: Ազգային մշակութային տարրերի հանրահռչակումը ոչ թանգարանային հարթակներում չպարտադրող հանգստի կազմակերպման ձևով լուծում է կրկնակի խնդիր.

1. մշակույթը կրողների միջոցով գիտելիքների ու հմտությունների փոխանցում մի սերնդից մյուսին,

2. ազգային ինքնության ձևավորում, ակտիվացում:

Նոր, ժողովրդական փառատոնային ցուցադրության տարրերակր շարժուն է և փոփոխվող: Այն իրականացվում է ցուցանմուշների և ցուցադրման ձևերի ազատ ստեղծագործական ընտրությամբ՝ ազգաբանություն ուսումնասիրողներին տրամադրելով հարուստ հետազոտական նյութ և ներկայացնելով ազգագրական արտեֆակտերի «վերակերպավորումը» սոցիալական փոփոխությունների և մշակույթների փոխազդեցության ներքո: Ազգային ինքնության տարրերն այդտեղ ներկայացվում են մշակութային կրողների կողմից, փոխհարստացվում հենց տեղում՝ միջոցառման ժամանակ՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով բնակչության թանգարանային հավաքածուների հետ հետագա հաղորդակցության համար: Այդպիսի ոչ ֆորմալ կրթությունը նպաստում է թանգարանից դուրս թանգարանային առարկաների միջոցով ազգային ինքնության ակտիվացմանը:

**Եզրահանգում.** Այսպիսով, ազգագրական հավաքածուներում, ցուցադրություններում, արտեֆակտերում և ոչ նյութական մշակութային տարրերում թաքնված տեղեկատվության բացահայտումը, համակարգումը, տիպաբանումը, ուսումնասիրումը, ցուցադրումը, հրատարակումը, օգտագործումը թանգարանային և ոչ թանգարանային զանգվածային կրթամշակութային միջոցառումների ժամանակ որոշակիորեն ազդում են արդի հայոց ինքնության ձևավորման և/կամ ակտիվացման գործընթացի վրա: Ազգագրության թանգարանները կարելի է համարել ազգային ինքնության ձևավորման ու ակտիվացման գործիքներից մեկը:

Այս առումով, թանգարանների աշխատակիցներն արդյոք գիտակցո՞ւմ են իրենց դերն արդի հայ ինքնության ձևավորման գործում: Ի՞նչ միջոցներ, գործունեության ոլորտներ, նոր մեխանիզմներ կան դրա իրականացման համար:

Արդյոք թանգարանները պատրաստ են ստանձնել այդ դերը՝ հաշվի առնելով XXI դ. նոր միտումները, պահանջներն ու մարտահրավերները:

## ЭКСПОЗИЦИИ ЭТНОГРАФИЧЕСКОГО ПРОФИЛЯ В КОНТЕКСТЕ ФОРМИРОВАНИЯ СОВРЕМЕННОЙ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ АРМЯН

*Геворгян Л.П.*

**Ключевые слова:** музей, этнография, память, наследие, коллекция, коммуникационная среда, музейный предмет, элемент нематериального наследия.

Национальная идентичность, как и все проявления идентичности, формируется в процессе развития и социализации индивидуума, что позволяет влиять на этот процесс через музейные (культурные, образовательные, научные и выставочные) проекты, реализуемые на основе этнографических коллекций. Музейные этнографические экспозиции, созданные на основе презентации подлинного материального и нематериального культурного наследия, представляют собой уникальную научно-художественную коммуникационную среду, в которой восстанавливается опредмеченная память. Оригинальные музейные предметы, объединенные единой темой и выставленные в едином пространстве, превращаются в опредмеченных свидетелей памяти, формируя символическую коммуникативную среду, которая влияет на формирование и активацию национальной идентичности посетителя.

Таким образом, изучение, систематизация, экспонирование, публикация, привлечение скрытой в этнографических коллекциях, экспозиции, артефактах и элементах нематериальной культуры информации, и презентация ее во время культурно-массовых мероприятий, определенно влияет на процесс формирования и / или активизации современной национальной идентичности армян, а музеи этнографии можно рассматривать как один из инструментов формирования и активизации национальной идентичности.

## EXPOSITIONS OF ETHNOGRAPHIC PROFILE IN THE CONTEXT OF FORMATION OF MODERN NATIONAL IDENTITY OF ARMENIANS

*Gevorkyan L. P.*

**Key words:** museum, ethnography, memory, heritage, collection, communication environment, museum object, element of intangible culture.

National identity, as well as all manifestations of identity, are formed during the procedure of individual development and socialization, which allows influencing this

process through the museum (cultural, educational, scientific, and exhibition organizational) works based on ethnographic collections. Exhibitions of museum ethnographic collections of tangible and intangible cultural heritage are unique scientific-artistic environment in which object memory is restored. Originally combined and interpreted around a single idea, as well as exhibited in one area, the master objects turn into objective evidence of memory preservation, forming a communicative signalling environment that influences the formation and activation of national identity. Thus, the disclosure, systematization, study, display, publication, utilization of information hidden in ethnographic collections, exhibits, artifacts, and elements of intangible culture and its usage in museum or non-museum mass educational and cultural events, to a certain extent, affect the formation and activation of contemporary Armenian identity. Ethnographic museums can be considered as one of the tools that shape and activate national identity.

## References

1. **Assman Yan** Kul'turnaya pamyat'. Pis'mo, pamyat' o proshlom i politicheskaya identichnost' v visokikh kul'turakh drevnosti (per. s nemetskogo M. M. Sokol'skoy), M., 2004 (In Russian).
2. **Baranova I. I.** Ethnografiya i muzey//Ethnograficheskie muzei: problemi i principii, Museum, № 139, 1983 (In Russian).
3. **Bromley Yu. V.** Sovremenniye problemi ethnografii (oчерki teorii i istorii), M., 1981 (In Russian).
4. **Erikson E.** Identichnost': yunost' i krizis, M., 2006. <http://www.myword.ru> «ebook» (In Russian)
5. **Galkina E. L.** Ethnograficheskiye istochniki v muzeye: problemi interpretacii, M., 1998. (In Russian).
6. **Kagan M. S.** Filosofiya kul'turi. SPb., 1966 (In Russian).
7. **Khal'bvaks M.** Sotsial'niye ramki pamyati, M., 2007 (In Russian).
8. **Khal'bvaks M.** Kollektivnaya i istoricheskaya pamyat'//Neprikosnovenniy zapas (In Russian). <http://magazines.russ.ru/nz/2005/2/ha2.html>
9. **Marut'yan H. T.** Hishoghut'yan dem azgayin inqnut'yan karruts'vatsqum, Yerevan, 2006 (In Armenian).
10. **Mastenica E. N.** Informacionniy potencial muzeynogo predmeta: ethnokul'turniy aspekt // Muzey. Tradicii. Ethnichnost', XX – XXI vv., Materialy mezhdunarodnoy nauchnoy konferencii, posvyashch. 100-letiyu Rossiyskogo Ethnograficheskogo muzeya, SPb., Kishinyov, Nestor-Historia, 2002 (In Russian).
11. **Nalchadzhyan A. A.** Osnovy ethnopsikhologii, Yerevan, 2003 (In Russian).
12. **Nahapetyan R. R.** Huyn ashkharhagir Straboni azgagrakan teghecut'yunner@ Hayastani yev hayeri masin//PBH, 2015, № 1 (In Armenian).

13. **Nahapetyan R. R.** Azgagrakan teghekut'yunner P'avstos Buzandi «Hayoc patmut'yun» yerikum // PBH, 2013, № 1 **(In Armenian)**.
14. **Nahapetyan R. R.** Hay azgabanakan mtk'i skzbnavorum@//PBH,2011, N 3. **(In Armenian)**.
15. **Nahapetyan R. R.** Hay azgabanakan mtk'i skzbnavorum@//PBH, 2011, N 3 **(In Armenian)**.
16. **Nora P., Ozuf M.** de Pûimež Ž., Vinok M., Franciâ – pamât', SPb., 1999 **(In Russian)**.
17. **Ravikovich D. A.** Social'niye funkcii i tipologiya muzeyev//Muzeyevedeniye. Voprosy teorii i metodiki, M., 1987 **(In Russian)**.
18. **Repina L. P.** Kul'turnaya pamyat' i problemi istoriopisaniya (istoriograficheskiye zametki), M., 2003 **(In Russian)**.
19. **Sokolov A. V.** Obschaya teoriya social'noy kommunikacii. Social'naya pamyat'. Vidi pamyati i mnemicheskiye deystviya, SPb., 2002 **(In Russian)**.
20. **Shinirel'man V. A.** Vvedeniye v diskussiyu. Istoriko-ethnograficheskiy muzey: Prezentacionniye traditsii ili predstavitel'skiye konstrucsii?//JO, 2010, № 4 **(In Russian)**.

*Ընդունվել է՝ 29. 01.2020*  
*Գրախոսվել է՝ 06. 02. 2020*  
*Հանձնվել է տպ.՝ 20. 11. 2020*

#### **Տեղեկություններ հեղինակի մասին**

**Լիաննա ԳԵՎՈՐԳՅԱՆ՝** պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԿԳՄՄՆ պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայության գլխավոր ֆոնդապահ, ՀՊՄՀ-ի թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի դոցենտ, էլ. հասցե՝ glp61@mail.ru

ՀՏԴ՝ 355.01

ՀԵՏԵՆՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ԻՆՔՆԱՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՍՈՑԻՈ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴԻՏԱԿԿՄԱՆ ՓՈՐՁ

*Թորգոմ Աղանյան*

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

*Բանալի բառեր՝ ինքնասպանություն, կրոն, քրիստոնեություն, ավանդույթ, մշակույթ:*

Ինքնասպանությունը 21-րդ դարում բավականին տարածված երևույթ է, ավելի ճիշտ, 21-րդ դարի հիվանդությունը: Ինքնասպանության մասին գրել են 19-րդ դարի մի շարք դասական հեղինակներ, ուստի երևույթն ու դրա ուսումնասիրությունը գիտության մեջ նոր չեն: Դրա դեմ պայքարել են դեռ հնուց, հատկապես քրիստոնեության տարածման շրջանում, երբ անտիկ շրջանի անտարբեր-սառը վերաբերմունքը ամբողջովին փոխվեց բացասականի, ու ինքնասպանությունը քրիստոնեական դոգմայի շրջանակներում համարվեց ծանրագույն մեղքերից մեկը:<sup>1</sup>

**Նախաբան.** Ի տարբերություն Արևելքի, որտեղ գոյություն ունի, այսպես կոչված, «պատվավոր ինքնասպանություն» հասկացությունը (սեպուկկուն (հարակիրին)՝ ճապոնիայում, սասին՝ Հնդկաստանում), Արևմուտքում քրիստոնեության տարածումից հետո դա խարազանվել է: Նույնը կարելի է ասել նաև իսլամ դավանող երկրների մասին, որոնցում ինքնասպանությունը կամ էլ դրա փորձը ծանր հանցագործությունների շարքին է դասված:<sup>2</sup>

<sup>1</sup> Дюркгейм Э. Самоубийство: Социологический этюд/Пер, с фр. с сокр.; Под ред. В. А. Базарова. М.: Мысль, 1994. 399 с., с. 169., <http://www.psychiatry.ru/siteconst/userfiles/file/PDF/1706/4.pdf>

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 170:

Հայկական եկեղեցին էլ բացառություն չի կազմում և նույնպես խարազանում է այդ երևույթը, լինի դա անձնական, եսասիրական նպատակներից կատարված արարք, թե ծիսական: Մասնավորապես, քրիստոնեական շրջանում եկեղեցու կողմից արգելվեց արքայի մահից հետո ծիսական ինքնասպանությունը, ինչը երևում է Արտավազդի մենախոսության մեջ. «Դու որ գնացիր ու բոլորին քեզ հետ տարար, ես ու՞մ կառավարեմ»:՝<sup>3</sup> Սա արձագանք է մինչքրիստոնեական այն ծիսակարգի, երբ թագավորի մահից հետո, հատկապես հայտնի ու սիրված արքայի, շատերը վերջ էին տալիս իրենց կյանքին՝ նրան հետևելու համար:

Ինքնասպանության նկատմամբ բավականին հանդուրժողական է եղել վերաբերմունքը նաև անտիկ դարաշրջանի հելլենիստական երկրներում՝ մասնավորապես հունական պոլիսներում, ապա նաև Հռոմեական կայսրությունում, մինչ քրիստոնեության ընդունումը:<sup>4</sup> Դա նույնիսկ սահմանված է եղել օրենսդրությամբ, երբ քաղաքացին, որը ցանկացել է ինքնասպանություն գործել, դիմել է տեղական պետական հիմնարկներին՝ այդ քայլի համար թույլտվություն ստանալու նկատառումով: Այդուհանդերձ, քրիստոնեության տարածումն ի չիք դարձրեց մշակույթի այդ առանձնահատկությունը՝ ինքնասպանությունը դարձնելով լիովին պարսավելի երևույթ՝ անկախ նրանից, թե ինչ նկատառումներով է դա իրականացվել: Սակայն սա չէր վերաբերում «հերոսական» ինքնասպանության ձևին, երբ քրիստոնեական առաքյալները (քրիստոնեության դոգմայի շրջանակում), գիտակցելով հավանական մահը, գնում էին դեպի այն՝ ելնելով իրենց հավատքի դրույթներից: Դա վերաբերում է նաև «հանուն դիմացինի» կատարած ինքնասպանություններին, այսինքն՝ այն դեպքերին, երբ մարդիկ գնում էին իրենց կյանքը վտանգոտ արարքների՝ գիտակցելով հավանական մահը ուրիշին փրկելու համար:

Ինքնասպանության խնդրին ուշադրություն են դարձրել մի շարք եվրոպացի գիտնականներ թե՛ 19-րդ և թե՛ 20-րդ դարերում: Մրանցից ուշագրավ է Պ.Սորոկինի «Ինքնասպանությունը՝ որպես հասարակական երևույթ» աշխատանքը, որն առաջիններից մեկն էր ռուսական իրականությունում, որ այս խնդիրը բարձրացրեց ու փորձեց գտնել դրա պատճառները: Իր աշխատանքում հեղինակը երևույթի հիմնական պատճառը համարում է մարդու միայնակությունը, որն, ըստ իրեն, հետևանք է քաղաքային կյանքի, իսկ ավելի կոնկրետ խոշոր քաղաքների (մասնավորապես՝ Պետերբուրգի) զերբեռնվածությանը:<sup>5</sup> Իհարկե, նա

<sup>3</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Գիրք Բ, գլուխ ԿԱ:

<sup>4</sup> Дюркгейм Э. Самоубийство, с. 171.

<sup>5</sup> Сорокин П., Самоубийство, как общественное явление, Петербург, 1913, с. 15.

հետաքրքիր լուծում է առաջարկում, բայց դրա հետ մեկտեղ բաց է թողնում խնդրի առաջացման պատճառը, որով լուծումը, ի դեմս հասարակության ավելի մարդակենտրոն փոփոխության, դառնում է ոչ լիարժեք:

Այդուհանդերձ իր ժամանակի համար այս աշխատանքը առաջատար բնույթ ուներ, քանի որ խնդրին նայում էր գիտական հայեցակետից՝ փորձելով գտնել ճիշտ պատասխաններ ու առաջարկել լուծումներ, ոչ թե արհամարհել, կամ էլ փորձել խնդիրը վերագրել ինչ-որ հոգեբանական շեղման, ինչը այդ ժամանակներում՝ դեռևս Դյուրկհեյմից առաջ, համարվում էր ինքնասպանության հիմնական պատճառը:

Մշակութային առումով՝ ինքնասպանության երևույթի վերաբերյալ ուշագրավ մտքեր է առաջ քաշել նաև 19-րդ դարի ֆրանսիացի հայտնի սոցիոլոգ և մարդաբան Է. Դյուրկհեյմը: Վերջինս իր «Ինքնասպանություն» կոթողային աշխատության մեջ փորձել է վերլուծել, հասկանալ ու բացատրել ինքնասպանությունը՝ լինելով առաջիններից մեկը, ով կտրականապես մերժել է այդ արարքի նկատմամբ պարսավական վերաբերմունքը և սին (մասնավորապես կլիմայի ազդեցության ու ինքնասպանության՝ որպես հոգեբանական հիվանդության մասին) դոգմաները:<sup>6</sup>

Ֆրանսիացի մեծ գիտնականն իր այս գործով լուրջ ներդրում է կատարել ինքնասպանության երևույթի ուսումնասիրման ու բացահայտման առումով: Ճիշտ նկատելով խնդրի առաջացման պատճառները՝ ի դեմս սոցիումի մեջ ընթացող փոփոխությունների, որոնք նա ցույց է տալիս տարբեր կրոնական համակարգերին պատկանող եվրոպական երկրներում ինքնասպանության մակարդակի տարբերություններով, այդուհանդերձ նրա տված լուծումն իր բնույթով վերացական էր ու, կարելի է նույնիսկ ասել, ուտոպիստական:

Մեր ժամանակակիցների մեջ այս առումով հետաքրքրական է Իրինա Կրասնենկովայի մոտեցումը հարցին, որն ավելի հարում է երևույթի հոգևոր կողմին: Մասնավորապես նա, ինչպես և վերը նշված գիտնականները, խնդիրը տեսնում են մարդու հոգևոր միայնակության մեջ, ինչը համարվում է 20-րդ դարի հիվանդություն: Այդուհանդերձ, նա կարծում է՝ հարցի լուծումը պարզ է և միշտ եղել է մեր աչքի առաջ: Այդ լուծումը նա տեսնում է քրիստոնեության մեջ ու հիմնավորում է իր մի շարք հոդվածներում:<sup>7</sup>

<sup>6</sup> Дюркгейм Э. Самоубийство.

<sup>7</sup> Красненкова И.П., Качество веры как решающий аргумент в решении проблемы преодоления сознательного суицида, [http://yakov.works/lib\\_sec/1\\_k/ra/snenk.html](http://yakov.works/lib_sec/1_k/ra/snenk.html), Նույնի՝ Философский анализ суицида под углом зрения взаимоотношения человека с искусственной средой, <http://www.irinark.ru/suicide/analiz.html>

Ինչպես Կրասնենկովան, այնպես էլ Դյուրկհեյմն ու Սորոկինը ճիշտ են այն հարցում, որ այս խնդիրը հասարակական-սոցիալական բնույթ է կրում, ուստի լուծումը պետք է գտնել հենց սոցիումի ու մարդկանց առօրյա կենցաղի մեջ: Վիճակագրությունը հենց դա է ցույց տալիս:

Դժբախտաբար Հայաստանում, մասնավորապես ՍՍՀՄ տիրապետության ժամանակ, ինքնասպանությունների վիճակագրություն չի իրականացվել, հավանաբար, գաղափարախոսական հիմունքներից դրդված: Այդուհանդերձ ինքնասպանությունների քանակը բարձր չի եղել, եթե ընդհանրապես չի եղել զրոյական, քանի որ այդ ժամանակվա քարոզչական բնույթ ունեցող մամուլում դրան նույնիսկ չեն անդրադարձել:

Այսինքն, ի տարբերություն այսօրվա մամուլի, որն այս դաժան երևույթը, ավելի ճիշտ, երևույթի նկարագրությունն ու դրա մասին հաղորդումները ներկայացնում է որպես առօրեական դեպք, ինչպես կներկայացնեք եղանակի տեսությունը, իսկ հասարակության կողմից դա դիտվում է որպես կյանքի մի մաս, ապա այն ժամանակ, նույնիսկ հաշվի առնելով ժամանակի թերթերի ոչ օրյեկտիվությունը, այդ երևույթը ընդգրկուն բնույթ չի ունեցել ու մեր միջավայրում դիտվել է որպես ինչ-որ տարօրինակ ու անհասկանալի, անընդունելի արարք:

Ինքնասպանությունների հաշվառումը ՀՀ-ում սկսվել է իրականացվել 1995թ.-ից, ընդ որում, պետք է նշել, որ մինչև 2004-2005 թթ. այն իրականացվել է բժշկական ավտոպսիաների (հետմահու գրություններ) միջոցով ու միայն հետագայում՝ դատախազության ու ոստիկանության կողմից:

Ըստ այդ տվյալների՝ 1995թ. ինքնասպանությունից մահացել է 130 մարդ, որը կազմում է 4.0 մարդ 100000-ից, 1996-ին և 1997-ին՝ համապատասխանաբար 87 (2.6) ու 77 (2.3):<sup>8</sup> Մակայն պետք է նշել, որ հետագա՝ մասնավորապես 1998-ից մինչև 2004-2005թթ. ընկած շրջանը այս թվերը կասկածելի են ու արհեստականորեն իջեցված, ինչի մասին գրել է Ա.Գալոյանը՝ «168 ժամ» թերթում հրապարակած հոդվածում. «2005 թվից պաշտոնական տվյալների հրապարակումն ընդհատվեց: Ակնհայտ էր, որ այն հավաստի չէ: Վիճառայությունը մի քանի տարի հետո տվյալների հետահայաց ճշգրտում մտցրեց: 2007թ. փոխվել էր ինքնասպանությունների հաշվարկի «մեթոդաբանությունը»: Հայտարարվեց, որ հիմք են ընդունվել ՀՀ գլխավոր դատախազության տվյալները»:<sup>9</sup>

Ուստի ներկայացնում ենք այն տվյալները, որոնք հրապարակվել են պաշտոնապես՝ կառավարության կողմից: 1998թ. եղել է 66 դեպք, 1999թ.՝ 67, 2000թ.

<sup>8</sup> Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 1940-2000, Մահացությունն ըստ հիմնական պատճառների, <https://armstat.am/file/article/demograf-40-00-arm.iii.33.pdf>

<sup>9</sup> Գալոյան Ա., Ինքնասպանությունները Հայաստանում, <https://168.am/2013/09/05/271649.htm>

61, 2001թ.՝ 60, 2002թ.՝ 74, 2003թ.՝ 59, 2004թ.՝ 57, 2005թ.՝ 66, սակայն այս տվյալները չեն համապատասխանում իրականությանը: Մասնավորապես 2002թ. 74-ի փոխարեն եղել է 212 դեպք՝ կազմելով 6.6 մարդ 100000 բնակչից, 2003թ. 59-ի փոխարեն 188-ը՝ կազմելով 5.8 մարդ, 2004թ. 57-ի փոխարեն 184 (5.7), 2005թ.-ի 66 ներկայացված դեպքի փոխարեն եղել է իրականում 199 (6.1): Սա սարսափելի է մի շարք առումներով, թե՛ քանակական և թե՛ հենց երևութային, երբ պետական մարմինների կողմից տարբեր պատճառներով նվազեցվում է ինքնասպանությունների իրական թիվը:<sup>10</sup>

2006թ. ներկայացած տվյալները՝ 244 դեպք, գրեթե վերջինն են 2000-ական թվականների համար, քանի որ 2007թ. ու հատկապես 2008թ. տվյալները բացակայում են: 2009թ. գրանցվել է 197 (6.4) դեպք, 2010թ.՝ 225 (7.3) մարդ, որից հետո վիճակագրությունն ավելի է ընդլայնվում, քանի որ արդեն նշվում են նաև սեռատարիքային տարբերությունները, և կատարված ինքնասպանությունները բաժանվում են ըստ սեռային ու տարիքային պոնակների:

Այսպես՝ 2011թ. եղել է 195 (6.4) ինքնասպանություն, որից 149-ը կատարվել է տղամարդկանց կողմից, իսկ 46-ը՝ կանանց, ինչն, ի դեպ, բնականոն բնույթ է կրում, քանի որ բացի ՌԴ-ից, եվրոպական մնացած երկրներում կանանց ինքնասպանությունների քանակը միշտ նվազ է տղամարդկանցից: 2012թ. գրանցվել է 214 (7.0) դեպք, որից 157-ը տղամարդիկ են, իսկ 57-ը՝ կանայք, հաջորդ տարի՝ 2013թ. արդեն գրանցվել է 206 (6.8) դեպք, ընդ որում, տղամարդկանց մասնաբաժինը կազմում է 137 դեպք, իսկ կանանցը՝ 69: 2014թ. դրությունը այսպիսին է եղել. գրանցվել է 168 (5.5) ինքնասպանություն, որից 120-ը՝ արական, իսկ 48-ը՝ իգական, հաջորդ տարիներին սանդղակը կրկին բարձրանում է, 2015թ. գրանցվում է 208 (6.9) մահացության դեպք, որից 161-ը արական սեռի են, իսկ 47-ը՝ իգական: Դրությունը չի փոխվում նաև հաջորդ տարում, մասնավորապես 2016թ. գրանցվում է 195 (6.5) ինքնասպանության դեպք, որից 195-ը արական սեռի են պատկանում, իսկ 42-ը՝ իգական սեռի: Ցավոք, 2017-2019թթ. տվյալները դեռևս չեն հրատարակվել, որի պատճառով պատկերը չի կարող ամբողջական լինել, այդուհանդերձ, կարելի է ընդհանրական ինչ-որ պատկեր ստանալ՝ ելնելով արդեն իսկ հրապարակած տվյալներից:

Այս տվյալները կարելի է համեմատել եվրոպական՝ նույն 1995-2016թթ. ընկած ժամանակաշրջանի հետ, որտեղ կարելի է տեսնել, որ մենք գտնվում ենք

<sup>10</sup> Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 1940-2000, Մահացությունն ըստ հիմնական պատճառների, <https://armstat.am/file/article/demograf-40-00-arm.iii.33.pdf>

նույն մակարդակի վրա, ինչ Իտալիան, որտեղ ինքնասպանությունից միջին մահացության տոկոսը 100000 մարդու մեջ կազմում է 6.0 –ից մինչև 6.5-7.0:<sup>11</sup> Գրեթե նույն մակարդակի վրա են գտնվում Իսպանիան ու Միացյալ Թագավորությունը: Ի դեպ, Դյուրկհեյմը իր աշխատության մեջ հենց կաթոլիկ երկրներն էր նշում որպես ավելի ամուր հիմք ունեցող, որոնք ավելի քիչ են ախտավորված ինքնասպանության վարակով<sup>12</sup>:

Սա բացատրվում է նրանով, որ խնդիրը ոչ այնքան կրոնական է, որքան կենցաղ-մշակութային: Կրոնը միայն կոնսերվանտի դեր է կատարում՝ դատավորի, որն արդեն եղած օրենքները կիրառում է կամ էլ *դե ֆակտո* օգտագործվող հասարակական օրենքները դարձնում *դե յուրե*: Պատճառը մենք տեսնում ենք սոցիալիստական գաղափարախոսության ու համապատասխան քաղաքականության մեջ, որը մեկ հարվածով ավերեց գոյություն ունեցող հայրիշխանական համակարգը՝ ի տարբերություն արևմտաեվրոպական երկրների, որտեղ այդ գործընթացը տեղի էր ունեցել քայլ առ քայլ, հատկապես ֆրանսիական մեծ հեղափոխությունից հետո սկսված լուսավորության գաղափարների տարածումով: Հենց այդ շրջանից է, որ Եվրոպայում՝ մասնավորապես ռեֆորմիստական եկեղեցիներին պատկանող պետություններում, ինքնասպանության ֆենոմենը սկսեց ի հայտ գալ, որը սկզբում մեկնաբանվեց բնակչության խտությամբ ու արդյունաբերականացմամբ:

Այսպիսով՝ խնդիրը արժեհամակարգի փոփոխությունների մեջ էր, իսկ կրոնը և հատկապես կոնսերվատիվ բնույթ ունեցող առաքելական եկեղեցիները միայն ժամանակին գոյություն ունեցող համակարգի օրենքներն օրինականացնող կառույցներ են: Լեհաստանը, որը 19-րդ դարի կեսերին ուներ Եվրոպայում ամենացածր ցուցանիշը ինքնասպանությունների առումով (2.5), այդ փորձից հետո ցուցանիշը վեցապատկեց՝ հասնելով ամենաբարձր մակարդակին՝ մասնավորապես 2009 թվականին հասնելով 16.30-ի:<sup>13</sup>

Սակայն այդ ցուցանիշը ավելի սարսափելի է ռեֆորմիստական եկեղեցիներին պատկանող երկրներում, որտեղ մինչ ՄՍՀՄ կամ ՎՊԵ մաս դառնալը, քայքայման գործընթացն ավելի արագ էր ընթանում, ինչպես մերձբալթյան երկրներում կամ Հունգարիայում: Ադապտացման առաջին տարիներին Էստոնիայի, Լիտվայի ու Լատվիայի ցուցանիշները հավասար էին՝ տատանվելով 29.50 մինչև 33.20, բայց ժամանակի ընթացքում այդ ցուցանիշները բարձրացան

<sup>11</sup> Suicide rates Total, Per 100 000 persons, 2018 or latest available, <https://data.oecd.org/healthstat/suicide-rates.htm>

<sup>12</sup> Дюркгейм Э., Самоубийство, с. 21.

<sup>13</sup> Suicide rates Total, Per 100 000 persons, 2018 or latest available.

կայծակնային արագությամբ՝ Լատվիայում 1993թ. հասնելով 44.20-ի, Էստոնիայում՝ 1994թ. - 43.60-ի, իսկ Լիտվայում՝ 1996թ. սարսափազդու 51.00-ի:<sup>14</sup> Հունգարիայում տոկոսային առումով ամենաբարձր թվերը գրանցվել են 1991թ.-ին՝ 40.60, իսկ Ռուսաստանում՝ 1994թ.-ին՝ 44.40:<sup>15</sup> Սոցիալիստական փորձարկման սարսափելի կողմն այն էր, որ հարված հասցրեց գյուղին ու իգական սեռի բնակչությանը. այս երկու կոմպոնենտները միակն էին Եվրոպայում, որ դիմադրողականություն ունեին ինքնասպանության նկատմամբ. գյուղը՝ լինելով պահպանողական համայնական համակարգ, իսկ կանայք՝ ավելի հեշտ սոցիալականացվող ու, ըստ այդմ, պաշտպանված:

Ինչ վերաբերում է արևմտաեվրոպական երկրներին, որտեղ այդ քանակը տարեցտարի իջնում է, դա բացատրվում է դեպի այդ երկրներ ասիական-աֆրիկյան/իսլամական երկրներից բնակչության գաղթով: Ժամանակի ընթացքում, դառնալով տեղական բնակչության հետ համեմատած մեծաքանակ «փոքրամասնություն», թե՛ ժողովրդագրական և թե՛ ինքնասպանությունների մակարդակի իջեցման առումով (վերջիններս պատկանում էին միանգամայն այլ կրոնամշակութային արժեքային համակարգի) լիովին փոխվեց այդ երկրների լանդշաֆտը: Օրինակ՝ Ֆրանսիայում 1980-ականների ինքնասպանությունների աճից հետո 1991թ. այդ թիվը հասնում էր 20.70-ի, իսկ 2015թ.՝ 13.10-ի:<sup>16</sup> Մյուս երկրներում, որտեղ այսպիսի ժողովրդագրական փոփոխություններ տեղի չեն ունեցել, ու բնակչությունը միատարր է բնույթով (օրինակ՝ Իռլանդիան), այս տոկոսային աճը տարեցտարի ավելանում է:

Հայաստանի պարագայում այս երևույթը սկսեց աճել ու տարեցտարի զարգանալ միայն անկախությունից հետո: Մեր ֆենոմենն այն է, որ չնայած 20-րդ դարի սկզբի ցնցումներին՝ մեր ազգը կարողացավ իր մշակութային մատրիցան հարմարեցնել սոցիալիստական տոտալիտար ռեժիմի՝ իր վզին փաթաթած հասարակարգի թելադրած կանոններին, այն թույլ տվեց շարունակել վերջին 1700 տարիների գոյություն ունեցող կենցաղ-մշակութային համակարգն ու ապրելակերպի պարադիգմը՝ միայն փոփոխելով անվանումներն ու տեղայնացնելով դրանք այնպես, որ վերջիններս, շատ չկորցնելով իրենց բնույթը, կարողանան հարմարվել իրենց նոր դերերում: Ելնելով վերոնշյալից՝ մեր դեպքը յուրահատուկ է ամբողջ ՄԱԿ-ում տարածքում ու նույնիսկ ՎՊԵ տարածքի երկրների համար: Այդուհանդերձ այն ուներ բացասական կողմեր ևս, մասնավորապես սովետական իրականության ու սովետական շրջանի մշակույթի հետ խորը սերտաճման հետևանքով, անկախությունից հետո ինքնասպանությունները թռիչքային

<sup>14</sup> Suicide rates Total, Per 100 000 persons, 2018 or latest available.

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> Նույն տեղում:

աճ գրանցեցին այն պարագայում, երբ նույնիսկ ՀԽՍՀ ամենաճանր տարիներին այս երևույթը բացակայում էր, իսկ ինչ դեպքեր էլ որ կային, հիմնականում հետևանք էին չստացված սիրո կամ էլ կոտրված սրտի: Մա չես համեմատի 1990-ականներին ու 2000-ականներին սկսված ինքնասպանության համաճարակով, որը տարեցտարի աճում էր՝ 100000 մարդու հաշվարկով 4.0-ից աճելով գրեթե կրկնակի՝ մինչև 7.3:<sup>17</sup>

Վերջին 20-25 տարիներին ինքնասպանությունների անընդհատ աճը պայմանավորված է հենց պատմական, սահուն գործող կենցաղ-մշակութային մատրիցայի անկումով, որը նույնատիպ ճգնաժամի մեջ ընկավ, ինչպես և տնտեսական համակարգը: ՍՍՀՄ անկումից հետո, սակայն, ի տարբերություն տնտեսական համակարգի, որն արդեն լիովին անցել էր կապիտալիստական-առևտրատնտեսական ռելսերի, մշակույթն ու կենցաղավարային-սոցիալական համակարգը ոչ լիովին հաղթահարեցին անցումային փուլը, ինչը հանգեցրեց լուրջ ճգնաժամի: Բացառություն են կազմում միայն ժողովրդական պոռթկումների տարիները, երբ դա համատարած բնույթ է կրում (որպես օրինակ կարելի է բերել Ռուսաստանը):

*Եզրահանգում.* Լուծումը գտնելու և ապագան տեսնելու համար անհրաժեշտ է դիտարկել անցյալը: Այսինքն՝ անցյալում արդեն իսկ տրված են եղել հարցի լուծման պատասխանները հենց հին հասարակություններում, ինչը, սակայն, ժամանակին մոռացվել է: Սրա վերաբերյալ հետաքրքիր են Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Միքայել Չենդլերի ու Վիկտորիայի համալսարանի պրոֆեսոր Քրիստոֆեր Լալոնդեի ուսումնասիրությունները, որտեղ նրանք քննարկում են Հյուսիսային Ամերիկայի տեղաբնիկ ցեղերում ինքնասպանությունների, հատկապես երիտասարդների ինքնասպանությունների կտրուկ աճի խնդիրը և գալիս այն եզրակացության, որ դրա պատճառներն ընկած են տեղաբնիկների ձուլման գործընթացների մեջ ու հետևանք են իրենց նախնիների ավանդույթներից կտրուկ հեռանալու ու կտրվելու:<sup>18</sup> Նրանք նկատել են նաև, որ այն ցեղերում, ուր կապը կտրված չէր, այլ ընդհակառակը՝ շատ ավելի խորն ու համապարփակ էր, ինքնասպանությունները, հատկապես երիտասարդների, լիովին բացակայում էին: Հաշվի առնելով սա՝ կարելի է ենթադրել, որ նույնը վերաբերում է թե՛

<sup>17</sup> Богоявленский Д.Д., Российские самоубийства и российские реформы, Ежемесячный научный и общественно-политический журнал российской академии наук, 2002, <http://ecsocman.hse.ru/data/058/900/1216/006.BOGOYAVLENSKI.pdf>

<sup>18</sup> Chandler, M. J. & Lalonde, C. E. (2008). Cultural Continuity as a Protective Factor against Suicide in First Nations Youth», The University of British Columbia, 2008., [http://reviewboard.ca/upload/project/document/Chandler\\_and\\_Lalonde\\_1998\\_Paper\\_1265041839.PDF](http://reviewboard.ca/upload/project/document/Chandler_and_Lalonde_1998_Paper_1265041839.PDF)

մեզ, թե՛ այն երկրներին, որտեղ խնդիրը ավելի լուրջ է և ունի հիմնարար, վերջնական լուծման կարիք:

Այդուհանդերձ, խնդրի լուծման նպատակով պետք է կատարել նոր հետազոտություններ, որպեսզի ավելի կոնկրետ ու համապարփակ պատասխաններ տրվեն: Այս փորձերը արդեն պետք է կիրառվեն մարդկային խմբերի նկատմամբ, որ առաջին ձեռքից գրանցվեն ու ստուգվեն բոլոր անհրաժեշտ սվյալները՝ լուծման եղանակի մեթոդները բարելավելու ու ավելի արդյունավետ դարձնելու նպատակով:

## ПОПЫТКА СОЦИОКУЛЬТУРНОГО ИССЛЕДОВАНИЯ САМОУБИЙСТВ В ПОСТСОВЕТСКОЙ АРМЕНИИ

*Аганян Т. Г.*

**Ключевые слова:** *суицид, христианство, традиция, культура.*

Самоубийство — это культурно-социальный феномен, который не был достойно оценен ни наукой, ни социумом, особенно в СССР и в постсоветском пространстве. В СССР это было обусловлено государственной цензурой и всеобщим замалчиванием, а в постсоветской среде, в странах СНГ, в частности, в Армении — полным безразличием. В Армении первые публикации на эту тему, в основном, были в прессе, а позже, во втором десятилетии XXI в., после провозглашения независимости, тема начала обсуждаться также и в научных кругах. Однако, предмет обсуждения всё еще недостаточно изучен. В работе сделана попытка поставленную задачу проанализировать с точки зрения этносоциологии, при этом, приглашая исследователей к более широкому обсуждению, дискуссии.

## SOCIO-CULTURAL RESEARCH ABOUT THE SUICIDE IN POST-SOVIET ARMENIA

*Aghanyan T.G.*

**Key words:** *suicide, religion, Christianity, tradition, culture.*

Suicide is a socio-cultural phenomenon, which has not been evaluated by the society nor by the science, especially in the USSR and post-Soviet space. In the USSR it resulted from the State censorship and public silence, but in the post-Soviet environment and particularly in Armenia it resulted from the total indifference to the

topic by the society and the science. In Armenia the topic under our discussion was first discussed and published in the press. Only in the second decade of the 21st century the topic has been discussed by the scholars. Nonetheless, the subject matter is not well studied. This paper tries to analyze the problem as an ethno - sociological phenomenon and thus to attract the attention of the scholars for more broad discussions.

## References

1. **Galoyan A.** Ink' naspanut'yunnery Hayastanum, <https://168.am/2013/09/05/271649.html> (in Armenian).
2. Hayastani zhoghovrdagrakan zhoghovatsu, 1940-2000, Mahats'ut'yunn yst himnakan patcharneri, <https://armstat.am/file/article/demograf-40-00-arm.iii.33.pdf> (in Armenian).
3. **Movses Khorenaci,** Hayoc' patmut'yun, Yerevani hamalsarani hratarakut'yun, Yerevan, 1981 (in Armenian).
4. **Bogoyavlenskiy D.D.** Rossiyskiye samoubiystva i rossiyskiye reformy, Yezhemesyachnyy nauchnyy i obshchestvenno-politicheskiy zhurnal rossiyskoy akademii nauk, 2002 (in Russian). <http://ecsocman.hse.ru/data/058/900/1216/006.BOGOYAVLENSKI.pdf>
5. **Dyurkgeym E.** Samoubiystvo: Sotsiologicheskiy etyud/Per, s fr. s sokr.; Pod red. V. A. Bazarova.—M.: Mysl', 1994<http://www.psychiatry.ru/siteconst/userfiles/file/PDF/1706/4.pdf>. (in Russian).
6. **Krasnenkova I.P.,** Sotsial'no-filosofskiye i politiko-pravovyye aspekty fenomena suitsida, <http://www.uic.unn.ru/riana/library/psycho/suicide/aspects.htm> (in Russian).
7. **Krasnenkova I.P.** Filosofskiy analiz suitsida pod uglom zreniya vzaimootnosheniya cheloveka s iskusstvennoy sredoy, <http://www.irinapk.ru/suicide/analiz.html> (in Russian).
8. **Sorokin P.A,** Samoubiystvo, kak obshchestvennoye yavleniye, <http://www.demoscope.ru/weekly/knigi/stati/stati03.html> (in Russian).

*Ընդունվել է՝ 24. 10. 2020*

*Գրախոսվել է՝ 10. 11. 2020*

*Հանձնվել է տպ.՝ 20. 11. 2020*

### Տեղեկություններ հեղինակի մասին

**Թորգոմ ԱՂԱՆՅԱՆ՝** պատմական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի  
գիտաշխատող, էլ. հասցե՝ [torgom.aghanyan@gmail.com](mailto:torgom.aghanyan@gmail.com)

ՀՏԴ՝ 392

ԴԻՎԱԶԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԻՎԱԶԱԼԱԾՈՒԹՅՈՒՆ.

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՈՒԺՈՒՄ

(ըստ ժողովրդական զրույցների և միջնադարյան ձեռագրերի)

*Հասմիկ Գալստյան*

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

*Բանալի բառեր՝ չար ոգի, դև, սատանա, զրույց, հավատալիք, ժողովրդական պատկերացումներ, ավանդություն, հեթանոսական կրոն, սնահավատություն:*

Աշխատանքում ներկայացվում են հիվանդության (դիվահարության) և բուժման (դիվահալածության) դրսևորումները ժողովրդական զրույցների ու հավատալիքների համատեքստում: Քննվում են դևերի ներգործությունից առաջացած հիվանդությունների տեսակներն ու առանձնահատկությունները և դրանցից ազատվելու միջոցներն ու եղանակները:

*Նախաբան.* Դերը ինչպես հայկական, այնպես էլ հարևան այլ ժողովուրդների առասպելաբանության մեջ բոլոր տեսակի չար ոգիներին ու գերբնական ուժերին տրվող ընդհանուր, պայմանական անուն է: Ժողովրդական պատկերացումների և Աստվածաշնչի վրա հիմնված ավանդության համաձայն՝ դևերը

Աստծո ընկած հրեշտակի<sup>1</sup>՝ սատանայի<sup>2</sup> գորքն են: Ղ. Ալիշանի հաղորդմամբ՝ «սատանան կոչվում է դևերի իշխան»<sup>3</sup>: Կեսարիայի հայերի կարծիքով, «դևերը սատանայի գործակալներն են»<sup>4</sup>, «Սատանան դևերու ջոջն է»<sup>5</sup> և այլն<sup>6</sup>: Ըստ Բենսեի՝ «հաճախ դևն ու սատանան նույնացվում են և միևնույն դերը կատարել տալիս: Դևերն են, որ մտնում են մարդկանց մեջ և նրանց դիվահար կամ ընկնավոր անում»<sup>7</sup>:

Հայ ժողովրդական գրույցների և հավատալիքների համատեքստում քննվող դևը իր գուգահեռներն ունի աշխարհի տարբեր ժողովուրդների կրոնաառասպելաբանական պատկերացումներում ու հավատալիքներում:

**Դիվահարություն.** Ժողովրդական գրույցներում ու հավատալիքներում մարդուն պատուհասած գրեթե բոլոր ցավերն ու հիվանդությունները համարվում են դևերի ներգործման արդյունք: Դիվահարությունը դևերից «զարկված» լինելը, դևերի ազդեցությունը կրելն է: Հայերենում, որպես այս երևույթի հոմանիշներ, օգտագործվում են շուրջ երկու տասնյակի հասնող բառեր ու արտահայտություններ՝ ընկնավորություն, այսահարություն, դիվաբախություն, այստություն, վերնոտություն, թեփոտություն, դիվոտություն, քաջքոտել, ջնոտել, թեփոտել, դևերը գալ, քաջքերը գալ, դիվոտ, զարկուկ<sup>8</sup>, նաև հանդիպսի գալ, չարոց ընկնել, ցավաքյար լինել, չարոց քամի կպնել և այլն: Ազգագրագետ Ժ. Խաչատրյանը վկայում է, որ «հնագույն ժամանակներից բազմաթիվ տեղեկություններ կան հիվանդություններ հարուցող ոգիների, նրանցով բռնվածության, այսինքն՝ դիվահարության մասին: Առաջին տեղեկությունները պատկանում են ասորա-

<sup>1</sup> «Հրեշտակ» բառը, ըստ լեզվաբանների, ծագում է ավեստայի լեզվի՝ զենդերենի «fraēšta» կամ պահլավերեն «frēštak» բառերից, որոնք երկու դեպքերում էլ բուն իմաստով թարգմանվում են որպես պատգամավոր, սուրհանդակ, լրաբեր, թղթատար: Նույն թարգմանությամբ են հանդես գալիս նաև հունարեն «angelos» (որտեղից էլ լատիներեն՝ angelus, անգլերեն՝ angel, ռուսերեն՝ ангел ձևերը) և եբրայերեն ու արաբերեն «malāck» բառերը: //https://hy.wikipedia.org.

<sup>2</sup> Հին Կտակարանում սատանային դևերի արքայազն էին համարում, նաև Բելիար և Բեհեզդեբուդ էին անվանում:// Աստվածաշնչի հանրագիտարան, Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, 1999, էջ 133:

<sup>3</sup> Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Եր., 2002, էջ 111:

<sup>4</sup> Ալպոյաճեան Ա., Պատմություն հայ Կեսարիոյ, Բ. հատոր, Գահիրե, Կեսարիոյ եւ շրջակայից հայրենակցական միության Գահիրեի վարչության հրատարակություն, 1937, էջ 1774:

<sup>5</sup> Թովմա-Կոպո, Դեւեր // Բիւրակն, 1898, թիւ 24, էջ 462:

<sup>6</sup> «Դև» բառի ստուգաբանության, վերջիններիս ծագման, քանակի, բնակության վայրերի, գործառությանի դրսևորումների և այլնի մասին տե՛ս Գալստյան Հ., Դևը հայ ժողովրդական սնահավատական գրույցներում//Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Եր., 2019, էջ 180-188:

<sup>7</sup> Բենսե, Հարք (Մշո Բուլանըի)//Հայ ազգագրություն և բանահյուսություն, կյութեր և ուսումնասիրություններ, հ. 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 58:

<sup>8</sup> Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Եր., ԵՊՀ հրատ., 2009, էջ 247:

բարեկական նշանագրերին: Հոմերոսը վկայում է, որ Հին Հունաստանում գոյություն են ունեցել դիվահարությունից առաջացած հիվանդություններ, որոնք ընդհանուր անունով կոչվել են էպիլեպսիա: Մոկրատեսը դևերի ժխտումը հենց դիտել է իբրև դիվահարություն, իսկ հռոմեացիք խելագարներին համարել են դևերով լցվածներ»<sup>9</sup>:

Դիվահարությունն իբրև հիվանդություն ներկայացնող գրույցները մեզ հայտնի են Աստվածաշնչից, Խորենացու, Ագաթանգեղոսի, Բուզանդի, Կողբացու և այլոց գործերից: Բուզանդը, խոսելով Պապ թագավորի մասին, փաստում է վերջինիս դիվահար լինելը. «Որովհետև նա միշտ դևերի կամքն էր կատարում, ուստի և չէր ուզում բժշկվել: ...Երբ մարդիկ ամեն օր գալիս էին թագավորին բարի լույս ողջունելու՝ տեսնում էին, որ դևերը օձերի կերպարանքով դուրս էին գալիս Պապ թագավորի ծոցից և փաթաթվում էին նրա ուսերին: ...Ասում էր, թե «Մի՛ վախենաք, սրանք իմն են»<sup>10</sup>:

Դիվահարությունը՝ որպես հիվանդություն, առավելապես արտացոլված է հայ միջնադարյան ախտարական գրականության մեջ: «Գիր Սողոմոնի» կամ «Սողոմոնի» կոչվող գրքերը միջնադարյան ախտարական գրականության մեջ տարբեր խմբագրություններով հայտնի են «Հարցմունք Սողոմոնի թագավորին յոթանասուններկու դևերաց» կամ «Եօթանասուն և երկու հարցմունք Սողոմոնի» և այլ խորագրերով: Ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի №№ 6677, 6678, 8423, 8428 ձեռագրերի՝ Սողոմոնն անուն առ անուն<sup>11</sup> (Թուրեան, Ղամաղ, Լալանու, Խարե, Մարոս, Շիքար, Դծուխ, Մաղուշ, Մաղուր, Մահուվար, Գարջալ, Կապուր և այլն) կանչում է յոթանասուններկու դևերին<sup>12</sup> և երդվեցնում նրանց: Խոստովանության արդյունքում բացահայտվում են նրանց բնակության վայրը (գետնի տակ, գետնի վրա, ջրի մեջ, քարայրներում, ձորերում, ջրաղացներում, լքված շեներում, բաղնիքներում և այլն), ներգործության ոլորտը, մարդկանց պատճառած վնասները, հարուցած հիվանդությունները, դրանց բուժման միջոցներն ու եղանակները: Ըստ ձեռագրի՝ դևերի հարուցած հիվանդություններն ու դրանց

<sup>9</sup> **Խաչատրյան Ճ.**, Ծիսական պարը հայոց հավատալիքների համատեքստում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 98:

<sup>10</sup> **Բուզանդ Փ.**, Հայոց պատմություն, գրվի ԻԲ, Եր., ԵՊՀ հրատ., 1987, էջ 329:

<sup>11</sup> Քանի որ դևերին հատուկ է զանազան կերպարանքներ ցույց տալ, ուստի մարդիկ ըստ այդ կերպարանքների անուններ են դնում:// **Կողբացի Ե.**, Եղծ աղանդոց, Եր., 1994, էջ 81:

<sup>12</sup> Ձեռագրում հստակորեն նկարագրվում է դևերի արտաքինը՝ կեսմարդակերպ-կեսկենդանակերպ, Ղամաղ դևը՝ խոզի գլխով, մարդու ձեռքերով, կովի ոտքերով, մյուսը՝ մարդու կերպարանքով, կովի գլխով, դուշի ոտքերով, Մարոսը՝ շան կերպարանքով, Մասիլուս դևը՝ մարդու գլխով, օձի լաշով և այլն: Կնոջ կերպարանք ունեցող դևերը նկարագրվում են օձերի առկայությամբ՝ բերանի մեջ, ձեռքում բռնած, օձերով փաթաթված և այլն: //Մատենադարան, ձեռագիր 6677, թերթ 65-180:

ախտանիշներն են վախը, ամլությունը, ջրերությունը, երեխայի դեղնությունը, դալկությունը, քթից ու բերանից արնահոսությունը, մարմնական ու մկանային ցավերը, գլխացավը, շնչարգելությունը, շնչահեղձությունը, ուշաթափությունը, փորացավը, սկարությունը, անկարողությունը, պապանձվելը, խելագարությունը, աչքացավը, շլությունը, այրոցները, լեզվի ծանրանալը, թուլությունը, մազաթափությունը, մազոտվածությունը, ջրի մեջ մկանների բռնվելը, չափազանց նիհարությունը և այլն:

Հիվանդություններից բացի՝ դներին է վերագրվում նաև կանանց բախտի կապվելը, տան բարաքյաթի գնալը, ամուսինների կոիվներն ու անհաշտությունը, կնոջ դավաճանությունը, շատախոսությունը, մարդու հպարտությունը, որը, ըստ Աստվածաշնչի, մարդու մեղքերից գլխավորն է, և այլն: «Դեն եկաւ առ Սողոմոն. անունն Ղամաղ, գլուխն խոզի, ձեռներն մարդի, ոտներն կովի: Ասէ Սողոմոն, քո ամալն ինչ է: Ասէ դեն. տներում լինիմ, կրակի քշտին և շատ կանաց մօտ, որ յղի լինի, յերեք օր երեխէն լինի իմ բերանես, նը փչեմ, որ էլ յղանայ ոչ: Ասաց Սողոմոն, ով անիծած, ետուր դեղն ինչ է, ասաց դեն, այս անունն գրէն մօման վրա դնին, ջուրն տան խմէ, մի փոքր էլ գայլի լեղին ամբրաւի հետո ուտե անոթից, յղանա»<sup>13</sup>: Դեր տալիս է իր ասած բառերն ու թիսմը:

Ս. Հարությունյանի դիտարկմամբ՝ «Սողոմոնի հարցում-երդվեցումներն իրենց հորինվածքով գրեթե նույնանում են բարի և չար ոգիների երկխոսության վրա կառուցված գրավոր ու բանավոր հմայական բուժաղոթքներին, որոնք բոլորն էլ ունեն երդմնեցուցական բնույթ: Այնպես որ երդմնեցուցական բանաձևերն իրենց հիմքով կարող են սերած լինել Սողոմոնի հարցումներից կամ նմանատիպ հարցումների առավել վաղ ձևերից»<sup>14</sup>: Ուրբաթագրքում խոսվում է վեց հարյուր դների մասին, որոնք հալածվելու են Արաւօթ, Սաբաւօթ, Սեդրակ, Միսաք, Եղկիոս, Սինայել, Ուրիել հրեշտակների անունները հիշելիս<sup>15</sup>:

Հայաստանի ազգագրական գրեթե բոլոր շրջաններից գրառված գրույցներից մեզ հայտնի են մարդկանց ու ընտանի կենդանիներին պատուհասող տարատեսակ հիվանդություններ, որոնց հարուցողները դներն են կամ չար ոգիները:

Ունենալով մարդկության շարունակականությունն ապահովող կարևորագույն գործառույթ՝ կանայք առավել խոցելի խումբ են համարվում դների ու չար ոգիների ներգործության համար: Հարսնության առաջին օրերից մինչև ծննդաբերություն՝ նրանք դների դիտակետում են և վերջիններիս հարձակման

<sup>13</sup> Մատենադարան, ձեռագիր N 6677, Հարցմունք Սողոմոնի թագաւորին, էջ 29ա-29բ:

<sup>14</sup> Հարությունյան Ս., Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Եր ԵՃ հրատ., 2006, էջ 216:

<sup>15</sup> Ուրբաթագիրք, Եր., «Զանգակ» հրատ., 2012, էջ 30-31:

վտանգի տակ: Ժողովրդական գրույցներում, հավատալիքային պատկերացումներում, ինչպես նաև հմայական աղոթքներում նորահարսին կամ ծննդկանին պատուհասող հիվանդությունը թաղոտությունն է: Հիվանդության դևը՝ թպղան, գորտանման ճիճու է, կարմիր կամ քառասուն ոտք ունեցող բոլոճ, խեցգետնանման բազմոտանի և այլն: Բուժումը կատարվում էր ժողովրդական ամենատարբեր միջոցներով ու ծիսահմայական գործողություններով<sup>16</sup>:

Չանգեգուրի ժողովրդական հավատալիքներում հիվանդության դև էր համարվում խաղլացավի որդը, որը՝ որպես հարուցիչ, ընկնում է կնոջ մարմնի մեջ ու սկսում անվերջ շարժվել: Խաղլացավոտի մարմնից դևին դուրս էին հանում հիվանդին անընդմեջ պարեցնելու և սաստիկ ծեծի միջոցով, որն ուղեկցվում էր գուռնայի ու դիտի նվագով և լալկան կանանց ողբասացությամբ<sup>17</sup>: Հիվանդին հոգնեցնելով ու ծեծելով, ըստ ժողովրդական պատկերացումների, հոգնեցնում ու վնասում էին նրա մեջ բույն դրած դևին կամ դևերին<sup>18</sup>: Հավատում էին, որ հոգնած դևին հիվանդի մարմնից հանելը կլիներ ավելի հեշտ ու արագ:

Լոռվա հավատալիքներում կենդանիներին հիվանդացնողը «ազար» կոչվող ոզին է, իսկ վանեցիները հավատում էին «տավրի չլուտ» ոգու գոյությանը, որը մերկ տղամարդու կերպարանքով շրջում էր գյուղեգյուղ և անասնացավ տարածում: Ի դեպ, սա միակ ոզին էր հայկական հավատալիքներում, որը չէր խափանվում խաչակնքելով: Տավրի չլուտից ազատվելու միակ ելքը սրբերին մատաղներ խոստանալն էր կամ Ս. Գեղարդը գյուղ բերելը<sup>19</sup>:

**Դիվահալածություն.** Դիվահարությունից խուսափելու և դիվահարին բուժելու համար ժողովրդական գրույցներում ու հավատալիքներում բազմաթիվ միջոցներ ու եղանակներ են առաջարկվում: Դևերից կարելի է պաշտպանվել չարահալած հատկանիշներով օժտված տարբեր բույսերի (բոշնի) ու մետաղների (երկաթ, պողպատ), հմայիլների, պահպանակների, թալիսմանների, աղոթքների

<sup>16</sup> Թպղայի մասին առավել մանրամասն տե՛ս **Գալստյան Հ.**, Թպղան հայ ժողովրդական սնահավատական գրույցներում//ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XIX, Գյումրի, 2016, էջ 177-185:

<sup>17</sup> Այս երևույթի մասին համակողմանի ուսումնասիրություն ունի ազգագրագետ Ժենյա Խաչատրյանը, տե՛ս **Խաչատրյան Ժ.**, Ծիսական պարը հայոց հավատալիքների համատեքստում, Եր., 2014, էջ 97-105: Տե՛ս նաև՝ **Բակունց Ա.**, Խաղլացավ, // Երկեր, Երևան, 1986, էջ 88-91:

<sup>18</sup> Աստվածաշնչյան մի գրույցում Քրիստոսը գերեզմանատանը բնակվող դիվահարին տանջող դևին հարցնում է, թե ի՞նչ է վերջինիս անունը: Դևը պատասխանում է. «Իմ անունս Լեզեոն է, վասն զի շատուոր ենք» (Աւետարան ըստ Մարկոսի, Ե 9-10): Կարծում ենք, թե Լեզեոնը և՛ չար ոզի է, և՛ ոզիների խումբ: Անվան ծագումը հավանաբար կապված է հունական գորաբանակների, գորախմբերի՝ լատիներեն «լեզեոն» բառի հետ:

<sup>19</sup> **Ավագյան Մ.**, Արճակ, // Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ. 8, Եր., ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1978, էջ 90:

միջոցով, դևերի անունը չտալով, երեխաներին պաշտպանելու դեպքում՝ վերահսկելի վրա փոքրիկի անունն ասեղնագործելով, սնարի մոտ՝ ճիպոտ, իսկ բարձի տակ՝ սուր, կտրոդ առարկաներ դնելով և այլն: Մակայն ամենագորեղ միջոցներն են խաչակնքելը, աղոթքն ու Աստծո անունը տալը:

Դիվահարության բուժումը կամ դիվահալած ծեսը նախ եղել է քրմերի ու հեքիմների, իսկ քրիստոնեության շրջանում՝ հոգևորականների մենաշնորհը: Դիվահարին բուժելու համար նրանք պետք է օժտված լինեն հմայական հատուկ գորությանը: Ժ. Խաչատրյանի դիտարկմամբ, «նրանք եղել են նյարդային ուժեղ համակարգի և հոգեկան կառուցվածքի տեր մարդիկ, որոնք թմրեցնող դեղերի օգնությամբ գրգռվելով, «բանակցությունների ու փոխհարաբերությունների» մեջ են մտել հիվանդության դևերի հետ և խնդրելու, համոզելու, չար հմայության ու բանադրանքի օգնությամբ «դուրս քաշել» նրանց մարդկանց միջից: Ազգագրագետներից շատերի կարծիքով, այդ անհատների հիմնական պարտականությունը հենց դևերին ու չարքերին մարդկանց միջից հանելն էր, որը կատարվում էր բեմական արվեստի մեծ տաղանդով»<sup>20</sup>: Քանաքեռի Ս. Հակոբ եկեղեցու քահանա տեր Բարսեղը, որն օժտված էր դիվահալած ծես կատարելու շնորհով, բազմաթիվ գրույցներ էր պատմում իր բուժումներից: Նա վկայում էր, որ մի ընկնավորի գլխին աղոթք կարդալիս տեսել է, թե ինչպես են հիվանդի մեջ բույն դրած դևերը դուրս գալիս և հետզհետե փոքրանալով՝ անհետանում<sup>21</sup>:

Մաշտոցի անվան Մատենադարանի N 5040 ձեռագիրը (էջ 89ա, 17-րդ դար) «երդմնեցուցիչ»<sup>22</sup> ձեռնադրելու կարգի մասին է, որտեղ եպիսկոպոսը քահանային օժտում է դիվահալածության ծես կատարելու շնորհով: Ներկա հոգևորականների մասնակցությամբ աղոթքով խնդրում են Աստծուն, որ իմաստություն շնորհի տվյալ հոգևորականին «երդմնեցուցչություն անելու» համար, որպեսզի կարողանա Սուրբ Հոգով հալածել դևերին մարդկանց *մարմիններից ու հոգիներից*: Աղոթքից հետո եպիսկոպոսը տվյալ հոգևորականին տալիս է Մաշտոցը, որտեղ գրված է մկրտության երդումը, որը վերջինս պետք է մտապահի, քանի որ իշխանություն է ստանում հիվանդների վրա իր ձեռքը դնելու և մկրտությամբ հրաժարեցնելու:

Միջնադարյան գրավոր աղբյուրներից քաղված դիվահարության աղոթքներից մեկում դիվահալածը կամ հմայողը խոսում է հիվանդությունների անձ-

<sup>20</sup> Խաչատրյան Ժ., Ծիսական պարը հայոց հավատալիքների համատեքստում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 99:

<sup>21</sup> Հասմիկ Գալստյանի գրառումներից, Եր., 2015:

<sup>22</sup> Երդվեցնող, երդվեցնելով չար ոգին մարդուց հալածող, չար ոգիներին սաստող: // Ղազարյան Ս., Գրաբարի բառարան, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2000, էջ 403:

նավորված պատկերացումների, մարդու մեջ բույն դրած չար ոգիների և վերջիններիս անունների մասին՝ հմայական խոսքն ավարտելով «Չիք ես և չիք դառնաս»<sup>23</sup> բանաձևով: «Հմայագործի կամքով հանդես են գալիս հրեշտակներն ու հրեշտակապետերը, որոնք քրիստոնեական սրբերով ու սրբություններով (365 սրբեր, 24 մարգարեներ, 12 առաքյալներ, 72 աշակերտներ, Սողոմոնի մատանի, աստվածագիր տախտակ, Ահարոնի պատմուճան, Քրիստոսի թաշկինակ, խաչի չորս մեխ, Տիրամայր, ս. Կույսի քաղցր կաթ, ս. Երրորդություն և այլն) կալում, կապում են հիվանդությունը հարուցող չար ոգուն»<sup>24</sup>:

Կապեմ զքեզ,  
Եթե երկնային ես, եթե երկրային ես,  
Եթե ի ծովու ես, եթե ցամաքու ես,  
Եթե յարևելից ես, եթե յարևմտից ես,  
Եթե յարաւային ես, եթե յիւսիսային ես,  
Եթե դև ես, եթե սատանայ ես,  
Եթե Բեեղզերուդ ես, եթե ալ ես,  
Եթե քաջք ես, կենդար ես,  
Եթե Նոփիադն ես, եթե դաս նետ ես,  
Եթե իշխան դիւաց ես,  
Եթե համր ես, եթե խուլ ես:  
Կապեցի զքեզ իշխանութեամբն հօր,  
Տէրութեամբն որդոյ,  
Զօրութեամբն սուրբ հոգոյն,  
Բարեխօսութեամբ սուրբ կուսին Մարիամայ  
Եւ ամենայն սուրբ կուսանացն  
Եւ աղօթիք սուրբ հայրապետաց և ճգնաւորաց,  
Եղիցի բժշկութիւն տիրացու Գրիգորին,  
Այս անուն դիւահար մարդուն<sup>25</sup>:

Միջնադարյան ձեռագրերում առկա նյութի և ժողովրդական գրույցների համաձայն՝ մարդու մեջ բույն դրած դևերը նախընտրում են անհայտ մնալ և ամեն ինչ անում են նաև իրենց անունը գաղտնի պահելու համար: Դիվահալածի համար կարևոր նախապայման է դևի անունը իմանալը, որպեսզի կարողանա վերջինիս հանել կամ վռնդել մարդու միջից: Ժողովրդի մեջ տարածված էր այն

<sup>23</sup> Հարությունյան Ս., Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2006, էջ 117:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 300:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 118:

հավատալիքը, որ «անունը անհատի մի մասն է: Տիրել մի մարդու անվանը՝ միևնույնն է, թե տիրել նրա էության մի մասին, և այն տալիս է տիրողին իշխանություն՝ վնաս հասցնելու այդ անձին, և սրանից առաջանում է շատ ժողովուրդների մեջ տիրող սովորությունը՝ խստությամբ ծածկել անունը»<sup>26</sup>: Թ. Հայրապետյանի դիտարկմամբ, «Մեզանում ցայսօր կերցադավարող «Անըմըդ ինձ բաշխի» առածը վկայում է անունը գաղտնի պահելու հնագույն սովորույթի մասին»<sup>27</sup>: Հովիվությունը՝ իրական փաստերի հիման վրա նկարահանված «Ծես» ֆիլմում երիտասարդ քահանան իր ավագ գործընկերոջ միջից հանում է Բահալ անունով դևին, որին չարչարում էր անընդմեջ աղոթելով, Աստծո և Սուրբ հոգու անունը տալով<sup>28</sup>: Դիվահալածը կարողանում է իմանալ դևի անունը և ազատել հիվանդին չարի կապանքներից:

Դիվահարին բժշկելու ամենատարածված և ժողովրդի կողմից առավել ընդունելի միջոցներից էր ուխտագնացությունը: Դիվահարին կամ ընկնավորին ծնողներն ու հարազատները գրկած, շալակած կամ թևանցուկ, ոտաբոբիկ կամ ծնկաչոք, երեք կամ յոթ տարի անընդմեջ տանում էին դիվահալած գործառույթով օժտված սրբավայրեր ու եկեղեցիներ: «Ալեքսանդրյանները և շիրակցիները հոգեկան ծանր խանգարումներով տառապողներին («կապի խելառներին») հիմնականում ուխտի էին տանում Կոշի Սուրբ Գևորգ և հավատում էին, որ վիշապասպան այս սուրբը իր նիզակով կխոցի հիվանդի ներսում բույն դրած դևերին ու չարքերին՝ ազատելով նրանց հոգեկան ու մարմնական տառապանքներից»<sup>29</sup>: Ղալթախչիի (Սպիտակ, Հարթագյուղ) Ս. Հովհաննես մատուռը նույնպես հայտնի էր ընկնավորներին բուժելու իր գործառույթով:

Դիվահալածության ժողովրդական դրսևորումներն իրենց արտացոլումն են գտել նաև հայ գեղարվեստական գրականության մեջ: Հայ դասականների բազմաթիվ գործերում համընդհանուր անդրադարձ է կատարում դիվահալածության ժողովրդական միջոցներին ու հնարքներին: Հիշենք Շիրվանզադեի Սոնային՝ «Չար ոգին» վիպակից, Նար-Դոսի Մարթային՝ «Բնչպես բժշկեցին» պատմվածքից, Բակունցի «Խաղաղացավ» պատմվածքը և շատ ու շատ այլ ստեղծագործություններ:

<sup>26</sup> Լալայեան Ե., Ծիսական կարգերը հայոց մեջ//Ազգագրական հանդես, գիրք XXI, Թիֆլիս, 1911, էջ 176:

<sup>27</sup> Հայրապետյան Թ., Արքեպիսկոպոսի հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում վիպապատմական բանահյուսության մեջ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 289:

<sup>28</sup> Ֆիլմը նկարահանվել է 2011թ., ԱՄՆ-ում՝ Մեթ Բեզլուի գրքի հիման վրա, ռեժիսոր՝ Մայքլ Հովստրին, դերերում՝ Էնտոնի Հովկինս և Ալիսա Բոագա:

<sup>29</sup> Բազեյան Կ., Աղանյան Գ., Ալեքսանդրյան Ս. Ազգագրական էսքիզներ (պատմագագրական ուսումնասիրություններ), Երևան-Գյումրի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 104:

*Եզրահանգում.* Համաձայն ժողովրդական գրույցներում առկա հավատալիքների՝ մարդու գրեթե բոլոր ցավերն ու հիվանդությունները չար ոգիների կամ դևերի ներգործության արդյունք են: Վերջիններիս կարևորագույն գործառույթներից մեկը հիվանդության հարուցիչ լինելն է: Աստվածաշնչում, հայ առասպելաբանության մեջ, միջնադարյան ձեռագրերում, ժողովրդական աղոթքներում, գրույցներում դիվահարությունը կամ դիվագդեցությունն ընկալվում է որպես հիվանդություն: Ըստ ժողովրդական պատկերացումների՝ դիվահարի ներսում չարքեր ու սատանաներ են բնակվում, որոնք էլ առաջ են բերում ընկնալորություն և այլ հիվանդություններ. դրանք բուժվում է հմայական և ժողովրդական աղոթքների, դիվահալած ամենատարբեր գործողությունների, մոգական հնարքների, նաև հիվանդին պարեցնելու և ձեռնադրելու միջոցով:

**ОДЕРЖИМОСТЬ ДЕМОНАМИ И ЭКЗОРЦИЗМ:  
БОЛЕЗНЬ И ИСЦЕЛЕНИЕ  
(по народным сказаниям и средневековым рукописям)**

*Галстян А. Г.*

**Ключевые слова:** *злой дух, демон, черт, одержимость, сказания, поверья, народные представления, традиция, языческая религия, суеверие.*

Согласно поверьям в народных сказаниях, вся боль и болезни человека являются результатом воздействия злых духов или демонов. Одной из важнейших функций последних является порождение болезни. В Библии, в армянской мифологии, средневековых рукописях, народных молитвах и сказаниях одержимость демонами также воспринимается в качестве болезни.

Во избежание одержимости в народных сказаниях и поверьях предлагались многочисленные средства особенно женщинам и детям, которые, по сути, считались наиболее уязвимыми группами для демонов. Применялись многочисленные колдовские средства, а благодаря использованию металлических изделий, талисманов и иных предметов, наделенных силой для изгнания злых духов, верили, что ограждали себя от влияния демонов. Самыми мощными средствами считались осенение себя крестом и произнесение имени Господа.

Согласно народным сказаниям, одержимость демонами считается заболеванием, которое излечивается благодаря колдовским и народным молитвам, различным действиям экзорцизма, магическим уловкам, а также посредством принудительных танцев и побоев.

**DEMON POSSESSION AND EXORCISM:  
ILLNESS AND HEALING  
(According to the folk stories and medieval manuscripts)  
*Galstyan H. H.***

**Key words:** *evil spirit, demon, Satan, demon possession, story, beliefs, folk imagination, tradition, pagan, superstition.*

According to the beliefs in folk stories, all the pain and diseases of the people result from the influence of evil spirits and demons. One of the main functions of the latter is causing illness. In the Bible, Armenian mythology, medieval manuscripts, folk prayers and stories demonic possession is also perceived as an illness.

In order to avoid possession numerous methods and means were suggested in the folk stories and beliefs, particularly for women and children, who are considered the most vulnerable groups for demons. Numerous magic means were applied, and thanks to the use of metallic items, other objects and talismans, given the strength of driving evil spirits, it was believed that they kept themselves away from demon influence. The most powerful means were making the sign of the cross and uttering the name of God.

Based on the folk stories, the demon possession is considered an illness, which is healed thanks to the magic and folk prayers, various exorcist actions, magical tricks, as well as compulsory dances and beating.

## **R e f e r e n c e s**

1. **Alishan Gh.** Hayots hin havatqy kam hetanosakan krony, Yerevan, "Hrazdan" hrat., 2002 (**In Armenian**).
2. **Alpoyajian A.** Patmutyun hay Kesario, h. B, Gahire, 1937 (**In Armenian**).
3. Astvatsashnchi hanragitaran, Hayastani Astvatsashnchayin ynkerutyun, 1999 (**In Armenian**).
4. Astvatsashunch, Mayr Ator s. Echmiadzin, 2000, Hayastani Astvatsashnchyan ynkerutyun (**In Armenian**).
5. **AvaOkyan S.** Archak // Hay azgagrutyun yev banahyusutyun, nyuter yev usumnasirutyunner, h. 8, Yerevan, HSSH GA hrat., 1978 (**In Armenian**).
6. **Bakunts A.** Khaghlat sav // Yerker, Yerevan, 1986 (**In Armenian**).
7. **Bazeyan K., Aghanyan G.** Alexandrapol. Azgagrakan esqizner, (patmazgagrakan usumnasiruthyun), Yerevan-Gyumri, HH GAA "Gitutyun" hrat., 2014 (**In Armenian**).
8. Bense, Harq (Msho Bulanykh) // Hay azgagrutyun ev banahyusutyun, nyuter ev usumnasiruthyunner, h. 3, HSSH GA hrat., 1972 (**In Armenian**).

9. **Buzand P.** Hayoc patmuthyun, Yerevan, YH hrat., 1987 (In Armenian).
10. **Galstyan H.** Tpgghan hay zhoghovrdakan snahavatakan zruycnerum, // HH GAA Shiraki hayagitakan hetazotutyunneri kentron, Gitakan ashkhatutyunner, h. XIX, Gyumri, 2016 (In Armenian).
11. **Galstyan H.** Devy hay zhoghovrdakan snahavatakan zruycnerum// Vishapy heqiati ev irakanutyun sahmanin, Yerevan, Hnagitutyun ev azgagrutyun instituti hratarakchutyun, 2019 (In Armenian).
12. **Ghazaryan S.** Grabari barraran, Yerevan, Yerevani hamalsarani hrat., 2000 (In Armenian).
13. **Haruthyunyan S.** Hay hmayakan yev zhoghovrdakan aghothqner, Yerevan, YH hrat., 2006 (In Armenian).
14. **Hayrapetyan T.** Arqetipayin harakcumner@ haykakan hrashapatum heqiatnerum yev vipapatmakan banahyusutyun mej. Yerevan, HH GAA "Gitutyun" hrat., 2016 (In Armenian).
15. **Khachatryan Zh.** Tsisakan par@ hayoc havataliqneri hamateqstum, Yerevan, "Gitutyun" hrat., 2014 (In Armenian).
16. **Koghbatsi L.** Yeghc aghandoc, Yerevan, 1994 (In Armenian).
17. **Lalayan Y.** Tsisakan karger@ hayoc mej // Azgagrakan handes, g. XXI, Tiflis, 1911 (In Armenian).
18. Mashtoci anvan Matenadaran, dzeragir 6677, Harcmunq Soghomoni tagavorin (In Armenian).
19. **Sukiasyan A.** Hayoc lezvi homanishneri bacatrakan barraran, Yerevan, EH hrat., 2009 (In Armenian).
20. Tuxh Krpo, Dever // Byurakn, 1898, tiv 24 (In Armenian).
21. Urbatagirq, Yerevan, "Zangak" hrat., 2012 (In Armenian).
22. //https://hy.wikipedia.org. (In Armenian).

*Ընդունվել է՝ 27.02.2020  
Գրախոսվել է՝ 14. 04. 2020  
Հանձնվել է տպ. 20. 11. 2020՝*

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Հասմիկ ԳԱԼՍՏՅԱՆ՝** ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, էլ. հասցե՝ [gasmik@mail.ru](mailto:gasmik@mail.ru)

ՀՏԴ՝ 398.2

ԽԻԿԱՐ ԻՄԱՍՏՈՒՆԻ ՍՅՈՒԺԵՆԵՐԸ  
ՇԻՐԱԿԻ ԵՎ ԿԱՐՍԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ  
*Էջերը Խեմյան*

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

*Բանալի բառեր՝ գրույց, խրատ, սկզբնաղբյուր, դպիր, պատում, տարբերակ, խորհուրդ, պուժե, գործառույթ:*

Հայ վիպական բանահյուսության պատմավիպական կերպարների շարքում ուրույն տեղ է զբաղում Խիկար Իմաստունի կերպարը: Հայաստանի տարբեր պատմաազգագրական տարածաշրջանների բանահյուսական ժառանգության մեջ պահպանվել են Խիկար Իմաստունի մասին գրույցներ, որոնց պուժեների հիմքում ընկած են խրատաբանության և մտավոր մրցամարտով փորձության ենթարկվելու մոտիվներ: Խիկարյան գրույցներում ներկայացվում են մարդ-անհատի վարքի ընդունված կանոնները հասարակության մեջ: Խիկարի խրատներն ուղղված են բոլորին՝ թե՛ թագավորական պալատում գտնվող բարձրաստիճան մարդկանց, թե՛ ծառաներին և թե՛ հասարակության ստորին խավը ներկայացնողներին: Այդ խրատներն ուսուցանում են, թե հասարակության տարբեր խավերի մարդկանց փոխհարաբերություններն ինչ ձևով պետք է զարգանան, և յուրաքանչյուրն ինչ պահվածք պետք է ունենա համապատասխան միջավայրում: Որպես իմաստուն անհատ՝ Խիկարը հայտնի է նաև մտավոր մրցամարտերում հնարամտությամբ, խելացիությամբ ու տրամաբանական վերլուծություններով հակառակորդներին հաղթելու կարողությամբ:

*Նախաբան.* Մերձավորարևելյան տարածաշրջանի ժողովուրդների հետ դարավոր շփումները զգալի ազդեցություն են թողել հայ ժողովրդական բանահյուսության երկացանկի վրա: Բանավոր և գրավոր ճանապարհով անվանակիր և անանուն մի շարք հերոսների մասին պատմությունները փոխառվել և տեղայնացվել են՝ հարստացնելով հայ վիպական բանահյուսության ժառանգությունը:

Արևելյան պատմավիպական հերոսների շարքում Խիկար Իմաստունը առանձնահատուկ տեղ է գրավում: Խիկարի գրույցները, սկզբնավորվելով ասորաբաբելական միջավայրում, շուրջ երկուսուկես հազարամյակ ակտիվ փոխանցումներով ու զարգացումներով կենցաղավարել են մերձավորարևելյան ժողովուրդների գրավոր և բանավոր ավանդության մեջ:

Ըստ ուսումնասիրողների քննության՝ Խիկար Իմաստունն իրական պատմական անձնավորություն է և եղել է Ասորեստանի թագավոր Սենեքերիմի դպիրն ու խորհրդականը: Խիկարի գրույցների պահպանված նախնական բնագրերը ասորական տարբերակի թարգմանություններն ու զարգացումներն են հրեական, արամեական, եթովպական, արաբական, հայկական և այլ ժողովուրդների գրական ավանդության մեջ: Խիկարի գրույցների գրավոր տարբերակները բազմակողմանի քննության են ենթարկվել գիտնականների կողմից:

Դեռևս XVIII դ. ուսումնասիրողներն ուշադրություն են դարձրել Խիկարի պատմությանը և այն տարբերակներին, որոնք հիշեցնում կամ գրեթե նույնությամբ կրկնում են միմյանց: Հատկապես Եզոպոսի կենսագրության բաբելոնյան հատվածը անունների տարբերությամբ համընկնում է Խիկարի պատմությանը<sup>1</sup>: Նինվեի Սենեքերիմ թագավորի փոխարեն հանդես է գալիս Բաբելոնի թագավոր Լիկուրգոսը, Խիկարի փոխարեն՝ Եզոպոսը, Եգիպտոսի փարավոնի փոխարեն՝ Եգիպտոսի Նեկտանեբոս թագավորը: Գիտնականներն ընդհանրություններ են նկատել Խիկարի պատմության և Տովբիթի գրքի միջև՝ համարելով, որ այն կարող էր Խիկարի պատմության սկզբնաղբյուրը լինել<sup>2</sup>: Ընդհանրությունները նկատելի են նաև Լոխամանի գրույցներում, միջագետքյան և արևելյան տարբեր ժողովուրդների բանահյուսական ավանդության մեջ<sup>3</sup>, «Հազար ու մի գիշեր» հեքիաթաշարում: Խիկարի պատմության հիմնական սյուժեն ձևավորվել է Խիկարի կողմից քեռորդուն որդեգրելու և նրան կրթելու խնդրի շուրջ: Իր տեսակի մեջ այս ստեղծագործությունը մի յուրօրինակ ուսուցողական ձեռնարկ է մատաղ սերնդին

<sup>1</sup> Եզոպոսի առակները, Եր., «Հայաստան» հրատ., 1990, էջ 61:

<sup>2</sup> Գիրք բանից Տովբիթայ.- Աստուածաշունչ. Մատեան Հին ու Նոր Կտակարանաց, հ. երկրորդ, Վենետիկ, Տպարան ի գործարանի Սբ Ղազարու, 1805, էջ 510-534:

<sup>3</sup> Мудрость Хикара и басни Лукмана, Петербург, Госиздат, 1920; Юсуф Хаттар Мухаммед, Мудрости Лукмана Хакима. Книгу с арабского перевел Ильяс Зинатулла, Уруссу, Татарстан, Изд-во «Иман», 2002.

կրթելու և դաստիարակելու համար: Խրատների շարքը, որ կիրառում է Խիկարը, Հին աշխարհում ընդունված չափանիշների համեմատ ուսուցանում է աշակերտին վարքի ու պահվածքի կանոններ:

Ակնբախ է, որ Խիկարի պատմության սկզբնաղբյուրը փոխանցվել է ոչ միայն «հորիզոնական» (այսինքն՝ միևնույն ժամանակաշրջանում ապրող ազգերի միջև գոյություն ունեցող բազմաբնույթ հարաբերությունների միջոցով), այլև «ուղղահայաց» ճանապարհով (այսինքն՝ նախնիներից՝ հետագա սերունդներին)<sup>4</sup>: Ուստի պրպտումները տանում են դեպի տարածաշրջանի վաղնջական մշակույթներ: Հին Միջագետքի հնագույն շումերական մշակութային շերտը ներառում է նաև իրատաբանության և բարոյախոսության բանահյուսության նախնական ժանրերը, որոնք կիրառվել են շումերական դպրոցներում (մ.թ.ա. IV-II հազարամյակի սկիզբ)<sup>5</sup>: Ուսումնական տեքստերի մեջ առաջնությունը տրվել է առած-ասացվածքներին, որոնց հակիրճությունն ու իմաստությունը երկու կարևոր գործառույթ են ունեցել. նախ դրանց սեպագրերը ֆիքսվել են կավի սալիկների վրա, ապա դրանց գործնական կիրառության հնարավորությունը նպաստել է աշակերտներին ուսուցանելու, կրթելու և դաստիարակելու որպես օրինավոր քաղաքացիների: Շումերական «Հայրը և իր անմիտ որդին» սալիկը բարոյախոսության և իրատաբանության նախնական օրինակն է, որը բազմաթիվ տարբերակներով հետագայում շրջանառվել է մերձավորարևելյան տարածաշրջանի ժողովուրդների մեջ: Հետևաբար Խիկարի պատմության սկզբնաղբյուրն ավելի շուտ է ձևավորվել, բայց սալիկները հայտնաբերվել են ավելի ուշ և հասու չեն եղել առաջին ուսումնասիրողներին: Անդրադառնալով Խիկարի պատմությանը՝ պետք է նկատել, որ Խիկարը թագավորի դպիրն էր, այսինքն՝ նա վարում էր արքունի գրագրությունները, ուներ մեծ լիազորություններ և արտոնություններ: Ժողովրդական պատումներից մեկում բանասացը գունեղ ներկայացնում է դիվանապետի արհեստավարժությունն ու թագավորի անկարողությունը. «Ղոռոյի դեսպանը նամակը բերեց տվեց Լորոյին ու սուսուփուս գնաց: Լորո թագավորն անգրագետ էր, մի զարմացեք, էրեխեք, ոնչ էլ ծծղացեք, դուք պատմությունն եք սովորում, բա ֆոննգների թաքավոր Կառլոս Մեծն անգրա-

<sup>4</sup> Sara Graca da Silva and Jamshid J. Tehrani, Comparative phylogenetic analyses uncover the ancient roots of Indo-European folktales (Сравнительный филогенетический анализ выявляет древние корни индоевропейских сказок), Published: 01 January 2016, Ֆիլոգենետիկ մեթոդը մշակվել է կենսաբանության մեջ: Ներկայումս այն կիրառվում է նաև բանագիտության մեջ՝ միջազգային հեքիաթային տիպերի միջմշակութային բաժանման վերլուծության համար: <http://mosmi.ru/science/20160408/236046033.html>.

<sup>5</sup> Афанасьева В. Литература Древнего Двуречья//История всемирной литературы, т. I, Изд. “Наука”, М., 1983, с.96-98.

զեա չէ՞ր: Անգրագետ թաքավոր շատ ա հելլէլ, Լորոն էլ անգրագետ էր: Լորո թաքավորը կանչեց հիրա դիվանապետին ու նամակը տվեց, որ կարթա»<sup>6</sup>: Այսինքն՝ ժողովրդական պատումներում ևս կարևորվում է Խիկարի դերը պետական գործերում:

Հին ժամանակներից մերձավորարևելյան տարածաշրջանի ժողովուրդների մոտ գրագրությունը պատվավոր մասնագիտություն էր և ժառանգաբար փոխանցվում էր: Հատկապես ձևավորված հայրիշխանության ինստիտուտը տնտեսական պայմանների թելադրանքով առաջադրում էր սերնդափոխության և հասարակական աստիճանակարգի սեփական կանոնակարգը, որը պահպանվում, կատարելագործվում և փոխանցվում էր սերնդեսերունդ: Հետևաբար գոյություն ունեցող կարգի համաձայն՝ անժառանգ Խիկարին որդի էր պետք, որ նրան փոխանցեր ոչ միայն իր հարստությունը, այլև մասնագիտությունն ու պաշտոնն արքունիքում: Որդեգիր Նաթանին նա կրթում և դաստիարակում է դարերով մշակված բարոյախրատական կանոններով. «Լսի՛ր ինձ, որդյա՛կ իմ Նաթան, ալկա՛նչ դիր իմ խոսքերին և հիշի՛ր դրանք, ինչպես խոսքերն աստծո»<sup>7</sup>, որին հաջորդում է առած-ասացվածքների, խրատների, ժողովրդական իմաստությունների շարքը՝ իրենց բարոյախրատական և գործնական նշանակությամբ:

Խրատաբանությունը կազմում է խիկարյան պյուժեների առանցքը: Հատկանշական է, որ այդ խրատներից շատերը համառոտ պյուժեի վրա են կառուցված, և իմաստի ստուգաբանությամբ ու դրանից արված եզրակացությամբ որոշակիանում է խրատի գործնական-կիրառական նշանակությունը: Օրինակ. «Որդեակ, լեզուն հարցաւ գլխոյն, թէ հալո ինչ է: Ասաց, թէ քանի դու լուռ կաս, ես խիստ հանգիստ եմ»,<sup>8</sup> կամ՝ «Որդեակ, եղեր ինձ որպէս խլուրդն, որ ելաւ ծակէն և այլ ընդ այլ գնաց, վասն աչաց չի տեսանելոյ, և արձակեցաւ արծիւ մի, էառ գնա: Ասէ խլուրդն. Եթե ոչ էր զգալիքս ի վերայ իմ գալոց, յիմ տեղն էի կացեալ խաղաղական կենօք»<sup>9</sup>:

Այսպիսով՝ Խիկարի պատմության առանցքը կազմող խրատաբանության ակունքը շուրջերական բանավոր մշակույթն է, որի պահպանված գրավոր տարբերակները հուշում են նրանց կենսունակությունն ու անցած ճանապարհը մինչև

<sup>6</sup> «Խիկար».- ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվ (այսուհետև՝ ՀԱԻԲԱ), FFXII: 2019-2023, բանահավաք՝ Գ. Ստեփանյան, բանասաց՝ Ա. Ջիգիյան, Սևանի շրջանի Դոմաշեն գյուղ:

<sup>7</sup> Խիկար Բնաստունից մինչև Ջանոն, Երևան, «Հայաստան» հրատ., 1990, էջ 12:

<sup>8</sup> Պատմություն և խրատք Խիկարայ Բնաստոնյ (հայկական խմբագրություն), գիրք Ա, աշխատասիրությամբ Ա.Ա. Մարտիրոսյանի, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 188:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 171:

ասուրաբաբելական, միջագետքյան ժողովուրդների բանավոր և գրավոր մշակույթ, ինչպես նաև ներկայացնում են բանահյուսական ժանրերի շարունակականության, կերպարանափոխվելու և գոյատևման զարմանահրաշ ֆենոմենը:

Նյութերի համադրությունից ուրվագծվում է մեկ ընդհանրական մոդել՝ շումերական անանուն գրագիր հայր → արքայական դպիր Խիկար Իմաստուն → Եզոպոս → Լոխման → բանահյուսական բազմաթիվ անանուն հայրեր, որոնք նույն սկզբունքով և խրատանիների հիմնականում կրկնվող ասույթաբանական հարուստ միավորների միջոցով ուսուցանում, կրթում ու դաստիարակում են իրենց հարազատ և որդեգիր զավակներին՝ ակնկալելով մեծացնել արժանավոր ժառանգորդ:

Շումերական ուսումնական տեքստերից՝ Էդուբիից (թարգմանաբար՝ «սալիկների տուն») սկզբնավորված «Պատմութիւն և խրատք Խիկարայ Իմաստնոյ» ստեղծագործությունը մեծ մասսայականություն է վայելել, թարգմանվել բազմաթիվ լեզուներով, փոփոխվել և հավելումներ ձեռք բերել<sup>10</sup>:

Հայկական ձեռագրերում Խիկարի պատմության հիմնական սյուժետային գիծը պահպանված է, այն է՝ անժառանգ Խիկարը որդեգրում է իր քրոջ որդուն՝ Նաթանին, կրթում և դաստիարակում է նրան, որպեսզի դարձնի իր իրավահաջորդը և ունեցվածքի տերը: Սակայն ապերախտ քեռորդին չի արդարացնում նրա հույսերը: Նա թագավորի մոտ զրպարտում է Խիկարին: Թագավորը հրամայում է մահապատժի ենթարկել Խիկարին ու զրկվում է իր իմաստուն խորհրդականից: Սակայն Խիկարի ընկերը՝ Աբուսմաքը, թագավորի հրամանը չի կատարում և նրան թաքցնում է գետնափոր տան մեջ: «Եւ իբրև լուաւ փարաւոն, եթէ սպանաւ Խիկար, ուրախ եղև յոյժ և գրեաց հրովարտակս առ արքայն Սենեքարիմ, բանս հարցուկս»<sup>11</sup>: Իմաստուն խորհրդականի մահը հնարավորություն է ընձեռում փարավոնին՝ հաշվեհարդար տեսնելու հակառակորդի հետ: «Եւ առաքեաց փարաւոն հրովարտակս առ Սենեքարիմ արքայ, որ ունէր օրինակ զայս. «Ի փարաւոնէ առ Սենեքարիմ արքայ, ողջոյն: Կամիմ ապարանս շինել ընդ երկինս և ընդ երկրի ի մէջ: Տես ստէպ և առաքեա առ իս այր իմաստուն և ճարտար, զի արասցէ զկամս իմ: Իսկ թէ անփոյթ արասցես զհրամայեալս յինէն, յարուցեալ եկից բազում զօրօք և բարձից զթագաւորութիւնդ քո»<sup>12</sup>: Անելանելի վիճակում հայտնված թագավորը հասկանում է, որ ճակատագրական սխալ է թույլ տվել և ափսոսում է Խիկարի կորստյան համար: Խիկարին դուրս են բերում

<sup>10</sup> Афанасьева В., նշվ. աշխ., էջ 114:

<sup>11</sup> Պատմութիւն և խրատք Խիկարայ Իմաստնոյ, գիրք Ա, էջ 111:

<sup>12</sup> Նույնը:

թաքստոցից, և նա լուծում է անհնարին խնդիրները ու ազատում թագավորությունը հարկատվությունից: Իր ծառայության դիմաց Խիկարը թագավորից խնդրում է իրեն հանձնել քրոջ որդուն, որպեսզի իր բացթողումները շտկի և նորից կրթի նրան. «Որդեա՛կ, որ ընդ ականջն ոչ լսե, ընդ թիկունս լսեցուցանեն»<sup>13</sup>՝ մտադրվելով կրթությունը զուգակցել գանահարությանը, որ կրթվողը մարմնապես զգա կրթության անհրաժեշտությունն ու կարևորությունը:

Հայ մատենագիտության մեջ պահպանված Խիկարի գրույցների ձեռագրերն իրենց վրա կրում են ընդօրինակող գրիչների «ստեղծագործական ազատ մոտեցումների» ակնհայտ դրսևորումներ, որոնց հետևանքով բնագրերում ի հայտ են եկել բազմաթիվ հավելագրումներ և նորամուծություններ<sup>14</sup>: Դրանք հիմնականում այն խրատներն ու ասույթաբանական տարբեր միավորներն են, որոնք ավելացվել են թարգմանիչների ու գրիչների կողմից, այդ իսկ պատճառով խրատների քանակը տարբեր բնագրերում տարբերվում է:

Հայ բանահյուսական ավանդության մեջ Խիկարի մասին պատումները սիրված ու տարածված են եղել և ընդգրկել են Հայաստանի գրեթե բոլոր պատմաագագրական տարածաշրջանները: Անկասկած, հայ ընտանեկան կյանքում ընտանիքի գլխավորի հեղինակության ու պաշտամունքի առկայությունը, երիտասարդ սերնդին կրթելու և դաստիարակելու անհրաժեշտությունը նպաստել են խիկարյան պատումների ներհուսքին հայ բանահյուսական ավանդույթ: Կարս-շիրակյան բանահյուսական ժառանգության մեջ խիկարյան սյուժեները ներկայացնում են CYC 922A=AA\*922 I<sup>15</sup>, ATU 922A<sup>16</sup> տիպը, որը արտացոլվել է հետևյալ սյուժեներում: Հակառակորդ թագավորը Խիկարի տեր-թագավորին առաջարկում է պալատներ կառուցել օդի մեջ: Խիկար Իմաստունը հնարամտորեն լուծում է անհնարին խնդիրը: Երկրորդը ATU 910 տիպն է<sup>17</sup>, ըստ որի՝ Խիկարը կամ որևէ այլ հերոս (Դանանդա Բահլուլ, Պըլը Պուլի) խելացի խորհուրդներով մահապատժից փրկում է իր հյուրին:

Ախուրյանի Ջաջուռ գյուղում 1969 թ. գրառված «Իմաստուն Խիկյար» պատումը<sup>18</sup> Խիկարի հանրահայտ գրական տարբերակների բանավոր արձագանքն

<sup>13</sup> Պատմութիւն և խրատք Խիկարայ Իմաստնոյ, գիրք Ա, էջ 119:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 25:

<sup>15</sup> Сравнительный указатель сюжетов. Восточнославянская сказка, Л., Изд-во «Наука», 1979, с. 235.

<sup>16</sup> Uther H.-J., The types of international folktales: A Classification and Bibliography Based on the System of Antti Aarne and Stith Thompson, part I, Animal Tales, Tales of Magic, Religious Tales. and Realistic Tales, with an Introduction, Helsinki, Academia Scientiarum Fennica, 2011, p. 554.

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 527-528:

<sup>18</sup> «Իմաստուն Խիկյար».-ՀԱԻԲԱ FV VIII: 2956,01-2965,00, բանահավաքներ՝ Սարգիս Հարությունյան, Արուսյակ Սահակյան, բանասաց՝ Ախուրյանի շրջանի Ջաջուռ գյուղից՝ Ավետիք Հարությունյան, 1969:

է: Պատումը ներկայացնում է Խիկարի պատմության այն դրվագը, ըստ որի՝ Խիկարի տեր-թագավորը հակառակորդ թագավորից ստանում է սպառնագին ուղերձ հետևյալ պայմանով՝ կա՛մ իմաստունը օղի մեջ պալատներ կառուցի, կա՛մ թագավորությունը ենթարկվի իր իշխանությանը: Խիկար Իմաստունը երկու շաբաթ ժամանակ է խնդրում՝ նախապատրաստվելու համար, երեք թոչուն է բռնում և վարժեցնում, որ օղի մեջ գոռան. «քար տվեք, կիր տվեք, փայտ տվեք»: Իմաստունը ներկայանում է հակառակորդ թագավորին, բաց է թողնում թոչուններին և պահանջում, որ իր վարպետներին շինանյութ հասցնեն, որ նրանք օղի մեջ պալատ կառուցեն: Պարտված թագավորը հրաժարվում է իր պահանջներից:

Այս պատումի հիմքում առկա է հնագույն ժամանակների այն սովորույթը, որից օգտվում էին հին աշխարհի թագավորներն իրենց պետության սահմաններն ու ազդեցության ոլորտներ լայնացնելու նպատակով: Դա մտավոր մրցամարտն էր. այն լայն արձագանք է գտել վիպական բանահյուսության ժանրերում և բազմաթիվ տարբերակներով շրջանառվել: Դրանք իրենցից ներկայացնում էին հարց-հանելուկներ, խնդիր-հանձնարարականներ, այլաբանական երկխոսություններ, որոնք մտավոր պատերազմի զենքերն էին և, լինելով մտավոր փորձության միջոցներ, կիրառվում էին տարբեր ոլորտներում, ինչպես նաև միջպետական հարաբերություններում<sup>19</sup>: Հակառակորդ թագավորները դեսպանների միջոցով սպառնագին ուղերձներ էին փոխանակում, և մտավոր մրցամարտում պարտվող կողմը հարկատու էր դառնում հակառակորդին: Պատումի հերոսը Խիկար Իմաստունն է, որն իր թագավորին օգնում է պետական կառավարման մեջ խելացի որոշումներ կայացնելու: Խիկարի գործունեությունը նախանձ է առաջացնում հարևան թագավորների մոտ: Հարևան թագավորի առաջադրած խնդիրը նախ պատճառ է նրա երկիրը գրավելու համար, այնուհետև նա նպատակ ունի փորձության ենթարկել Խիկար Իմաստունին. «Կերտաս, կրսես, օր ինքը եղպիսի իմաստուն ունի, եթե եղ իմաստունը օղի մեջ ընձի պալաղներ շինեց, ես անպայման,- ասում է,- իմ գազազածությունը գրթուլացնեմ, չեմ հարձավի իրան վրա, եթե ոչ,- ասում է,- անպայման գ'արձագվիմ»<sup>20</sup>: Առաջադրված խնդիրը Խիկարի մտավոր կարողությունները ստուգելու, նրա խելքն ու հնարամտությունը գնահատելու միջոց է:

Խիկարյան պատումներում Խիկարին բնորոշող գլխավոր առանձնահատկությունն իմաստությունն է, որով պայմանավորված է նրա՝ Խիկար Իմաս-

<sup>19</sup> **Խեմչյան Է.**, Հարց - հանելուկները և այլաբանական երկխոսությունները հայ բանահյուսության շահաբայան սյուժեներում, Պատմաբանասիրական հանդես, հ. 3, 2019, էջ 213-243:

<sup>20</sup> «Իմաստուն Խիկար».- ՀԱԻԲԱ FFVIII: 2956,01-2965,00:

տուն անվանումը: Իր գործառույթներով Խիկարը յուրօրինակ միջնորդ է թագավորի և հպատակների, թագավորի և այլ երկրների դեսպանների միջև: Խիկարի գործողությունները պայմանավորված են տրամաբանական վերլուծության արդյունքներով, կռահողականությամբ, դիմացինի հետագա քայլը կանխագուշակելու և կանխարգելելու կարողությամբ:

Շիրակյան այս տարբերակը շեղված է բուն պատումից. այստեղ Խիկարը չի ամբաստանվում և մահապատժի չի ենթարկվում, նա պաշտոնավարում է արքունիքում և ի պաշտոնե հանձնարարություն է ստանում լուծել հակառակորդի առաջադրած խնդիրը: Առաջադրված խնդիրը՝ օդում պալատ կառուցել, հենց սկզբից ենթադրում է անհնարիություն: Նախ՝ ըստ տվյալ ժամանակի պատկերացումների՝ օդային տարածքն աստվածների տիրույթն է, որտեղ իրենց գործառույթներն են ծավալում քամու և օդի տատանումները վերահսկող աստվածներն ու թևավոր աստվածային ավետաբերները<sup>21</sup>: Տարածքը հասու չէ մահկանացուին: Առավել ևս՝ մահկանացուն չի կարող ըստ իր պատկերացումների պալատ կառուցել այնտեղ: Տարածք կարող են մուտք գործել միայն թևավոր արարածներ, հետևաբար պետք է դիմել թևավորների, այն է՝ թռչունների օգնությանը: Նա վարժեցրած թռչունների միջոցով լուծում է խնդիրը: Պատումում օգտագործվում է «դուռ» բառը, որը չի մասնավորեցնում թռչնատեսակը: Քանի որ Խիկարը թռչուններին վարժեցնում է ասել՝ «քար տվեք, կիր տվեք, փայտ տվեք», պետք է ենթադրել, որ խոսքը խոսող թռչունի, այսինքն՝ թուրքակի մասին է: Այլ տարբերակում<sup>22</sup> Խիկարն օգտվում է «թառվան դշերի» ծառայությունից, որոնց վրա նստեցնում է վարժեցրած մանուկների, որոնք ասում են. «քար տուր, ցեխ տուր»: Հավանաբար «թառվան դուռ» անվանել են արծվին կամ բազեին, համենայն դեպս թռչունն իր չափերով պետք է մեծ լիներ, որ նրա վրա նստեցնեին երեխայի:

Չի բացառվում, որ այս մոտիվի ձևավորմանը նպաստել է միջագետքյան՝ արծիվի վրա նստած, երկինք բարձրացող հերոսի մոտիվը<sup>23</sup>, ինչպես նաև տարածաշրջանին բնորոշ արծվի պաշտամունքը, ըստ որի՝ արծիվը նաև հանդես է գալիս հրաշագործ օգնականի դերով: Խիկարը շահում է մտավոր մրցամարտը, հակառակորդն ընդունում է Խիկարի իմաստությունը և հրաժարվում իր պահանջներից: Խիկարյան զրույցներում մտավոր մրցամարտի մոտիվները խարրսխված են տարածաշրջանի ժողովուրդների կրոնական պատկերացումների,

<sup>21</sup> Мейлах М. Б. Воздух//Мифы народов мира, т. I, М., Изд-во «Советская энциклопедия», 1987, с. 241.

<sup>22</sup> ՀԱԻԲՍ ԲԲՎՊՑ: 8764,01-8775,00, բանահավաք՝ Գևորգ Գևորգյան, բանասաց՝ Մացակ Բոցինյան, Աշտարակ, 1970:

<sup>23</sup> Иванов В. В., Топоров В. Н. Орёл//Мифы народов мира, т. II, М., Изд-во «Советская энциклопедия», 1987, с. 258-260: Պատմություն և խրատը Խիկարայ Իմաստնոյ, գիրք Բ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 142:

հավատալիքների և սովորությունների կուռ համակարգի վրա: Խիկարը տիրապետում է այդ գիտելիքներին և այն կիրառում ըստ նպատակահարմարության: Կարս-շիրակյան տարածաշրջանի սյուժեներում մրցամարտի մոտիվի հանգուցալուծումը թռչնային մոտիվի կիրառումն է՝ խմբագրված տարբերակով, այսինքն՝ արժիվը փոխարինված է խոսող թռչունով: Մրցամարտի պայմանները թելադրած հակառակորդ թագավորն ի գորու չէ շինանյութ հասցնելու օդում գտնվող վարպետներին և հանձն է առնում իր պարտությունը:

Թե՛ գրավոր և թե՛ բանավոր սկզբնաղբյուրներում Խիկարի իմաստության գլխավոր նախապայմանը խրատաբանությունն է: Որպես խրատի նյութ ծառայում են ասույթաբանական բանահյուսության ժանրերը, որոնք մեկնաբանվում ու ներկայացվում են համառոտ զրույցների ու անեկդոտների բարոյախրատական եզրահանգումներով: Խիկարի խրատներն ուսուցողական դեր և նշանակություն ունեն: Նրա խրատները երբեմն ուղիղ նշանակությամբ են օգտագործվում. «Որդեակ, յորժամ ըմպես գինի, մի՛ շատախօսիր, զի շատախօսիս՝ կռիւ լինի, և հետ կովոյն՝ սպանութիւն»<sup>24</sup>, երբեմն՝ այլաբանորեն. «Որդեակ, եղեր ինձ որպես արջն, որ հանդիպեցաւ իշոյ միոյ և ասէ. Ողջոյն քեզ, էշ: Ասէ էշն. Այդ ողջոյնդ իմ տիրոջն պարանոցն, որ զիս արձակեաց ի մորէն, որ քեզ հանդիպեցայ և տեսի զքո գէշ երեսդ աղտեղի»<sup>25</sup>, երբեմն կարևոր միտքը համեմատության միջոցով է մատուցվում, որ լսողը եզրակացություն անի. «Որդեակ, որպէս հողն մայր է ամենայն տնկոց, նոյնպէս արբեցութիւնն մայր է ամենայն չարեաց»<sup>26</sup>:

Բանահյուսական սկզբնաղբյուրներում Խիկարի խրատները, ի տարբերություն գրական սկզբնաղբյուրների, սահմանափակ են: Դրանք պայմանավորված են սյուժեի պահանջներով և զարգացման ընթացքով: Կարս-շիրակյան բանահյուսական ժառանգության մեջ այդօրինակ սյուժեների բնորոշ տիպը Խիկարի խորհրդով մահից խույս տալու մոտիվն է: Հեքիաթի այս տիպը մեծ տարածում ունի համահայկական բանահյուսական ավանդություն և հաճախ համադրվում է այլ տիպերի ու մոտիվների: Հայ բանահյուսական ավանդություն այն երբեմն աղերսվում է Դանանդա Բահլուլի<sup>27</sup>, Պըլը Պուղու<sup>28</sup> և անանուն այլ հերոսների հետ:

<sup>24</sup> Պատմություն և խրատք Խիկարայ Իմաստոնյ, գիրք Ա, էջ 230:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 241:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 234:

<sup>27</sup> «Դանանդա Պահլուլն ու իրան դոնադը».- Կարս. հայոց բանահյուսական մշակույթը (այսուհետև՝ Կարս), Կազմողներ՝ **Հարությունյան Ս. Բ., Վարդանյան Ս. Ա., Խեմչյան Է. Հ., Ղոնջյան Լ. Խ., Խեմչյան Ս. Հ.**, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2013, էջ 315:

<sup>28</sup> «Պել Պողի».- Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 21, Տավուշ, Կազմող՝ **Խեմչյան Է. Հ.**, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 159:

Շիրակյան տարբերակը՝ «Իմաստուն Խիկյարի պատմությունը» վերնագրով, Սարգիս Հարությունյանը և Արուսյակ Սահակյանը գրառել են 1969 թ. Ջաջուռ գյուղում, կարայան տարբերակը «Իմաստուն Խիկարի խրատը» վերնագրով գրառել է Եղիշե Խաչատրյանը 1975 թ. Լենինականում: Տարբերակների այուժենները մասնակի փոփոխություններով գրեթե նույնն են: Պատումների համառոտ այուժեն հետևյալն է. Մի չարչի որոշում է ման գալ և գտնել հռչակավոր Խիկար Իմաստունին: Նա հյուրընկալվում է Խիկարի տանը: Թագավորը Խիկարին խնջույքի է հրավիրում, վերջինս պատճառաբանում է, որ հյուր ունի և չի կարող գնալ: Խիկարին առաջարկվում է հյուրին իր հետ տանել: Ճանապարհին Խիկարը հյուրին խորհուրդներ է տալիս, թե ինչպես պետք է իրեն պահի թագավորի պալատում, որ իր հյուրընկալին չխայտառակի: «Խիկար իմաստունը դոնախին կրտսե. – Այ մարդ, կերթանք թագավորի պալատը, դու թագավորական նիստուկացին ծանոթ չես, էնպես էրա, օր նա՛ դու խայտառակ եղնիս, նա՛ էլ ես: Հըմի քեզ կըսես, թե ինչ կենես: Օր կերթանք նես, չելնիս սեղանի վերևի գլխը նստիս, օր ամեն մարդ գա իրան տեղը նստի, քեզի տանին քցեն սեղանի ցածի կողմը: Եթե քեզի բանը չեն հարցնե, դու չխոսիս, օր սխալ բաներ խոսիս, համ դու խայտառակ չեղնիս, համ էլ ընձի խայտառակ էնես: Մե բանը օր քեզեն չեն ուզե, չհանես տաս: Ահան էս իրեք խրատը անկջիդ օղ կենես, լավ միտքդ կը պահես»<sup>29</sup>: Խիկարի հյուրն անտեսում է իրեն տրված խորհուրդները և ամբաստանվում որպես գող: Թագավորը որոշում է ամբաստանյալին հաջորդ առավոտյան դատել և կախադան բարձրացնել: Առաջնորդվելով հյուրընկալության չգրված օրենքներով՝ Խիկարը խնդրում է թագավորին՝ թույլ տալ իր հյուրին տուն տանել և գիշերը պահել իր տանը: Թագավորն առարկում է, որ նա կարող է հյուրին խորհուրդներ տալ: Խիկարը երդվում է, որ հյուրի հետ չի խոսի և նրան տանում է տուն: Նա հյուրին տանում է գոմ, սկսում է ծեծել էշին: Էշին դիմելով՝ Խիկարն անուղղակի խրատում է հյուրին, թե ինչպես պետք է իրեն պահի դատաբանում և ինչ ասի՝ մահապատժից խուսափելու համար: Հյուրը հասկանում է, որ էշին ուղղված խրատներն իր համար են և այս անգամ հետևում է Խիկարի խորհուրդներին ու ազատվում մահապատժից:

Պատումների այս տեսակը կառուցված է հերոսի վարքագծի երկակի դրսևորումների հակադրության վրա: Նախ՝ հերոսն անհաղորդ է մնում իրեն տրված իմաստուն խորհուրդներին և անձանոթ միջավայրում կորցնելով չափի զգացումը՝ հայտնվում է անելանելի վիճակում, ապա՝ Խիկարի ջանքերի շնորհիվ ստանում է խրատների երկրորդ խմբաբանակը, որի օգնությամբ ճարպկորեն խույս է տալիս մահապատժի ենթարկվելուց: Խիկարյան այուժենների այս տիպը

<sup>29</sup> «Իմաստուն Խիկարի խրատը» .- Կարս, էջ 313:

բարոյախրատական գործառույթ է իրականացնում և ունկնդիրներին անուղղակի ճանապարհով կյանքի դասեր է տալիս: Խիկարյան բարոյախրատական պատումները հավասարակշռում են մարդու վարքի ու պահվածքի թույլատրելիի ու անթույլատրելիի սահմանները, ուշիմ ունկնդրին սովորեցնում են հասարակության անդամի ճիշտ պահվածքն ու փոխհարաբերությունների ընդունված ու դարերով մշակված կանոնները: Խիկարի խրատները կյանքի փորձով ստուգված և բյուրեղացած ճշմարտություններ են, որոնց հետևելով՝ կարելի է խուսափել անհարմար վիճակից: Խրատաբանությունն ու բարոյախրատական եզրահանգումների գործնական նշանակությունը նպաստել է այս սյուժեների տարածմանը:

Թեև Խիկարի խորհուրդներն ու խրատներն ուղղված են եղել իր որդեգրին և ուսուցողական-դաստիարակչական գործառույթ են իրականացրել, այնուամենայնիվ դրանք հասարակական վարքի կանոններ էին, որոնք կիրառելի էին յուրաքանչյուր մարդու կյանքում: Կենսափորձի վրա ձևավորված, ճանաչողական մեծ արժեք ունեցող խրատները հասարակության լայն շերտերին հասու են դարձել բանահյուսական սյուժեների միջոցով: Խրատ ստացած հերոսի վարքագիծը համոզիչ փաստարկ է եղել ունկնդիրների համար, և խիկարյան պատումները միաժամանակ ուսուցանել և դաստիարակել են հասարակության անդամներին:

Ակնհայտ է շիրակյան պատումների կապը գրավոր սկզբնաղբյուրների հետ: Ինչպես Խիկարի որդեգիրն է անտեսում նրա խորհուրդներն ու խրատները, այնպես էլ մեր քննարկած սյուժեի անհասկացող հյուրը զանց է առնում իրեն տրված խորհուրդները: Խիկարն իր հետ պալատ գնացող հյուրին զգուշացնում է. «... թագավորական պալատ կերթանք, զգուշացի՛ր: Քեզի իրեք խրատ կուդամ: Ադ իրեք խրատս ականջներդ օղ կանես և միշտ կպաշտպանես»<sup>30</sup>: Մյուս տարբերակում ասում է. «... Էնպես էրա, օր նա՛ դու խայտառակ էղնիս, նա՛ էլ ես: Հըմի քեզ կըսես, թե ինչ կենես: Օր կերթանք նես, չեղնիս սեղանի վերնի գոխը նստիս, օր ամեն մարդ գա իրան տեղը նստի, քեզի տանին քցեն սեղանի ցածի կողմը»<sup>31</sup>: Խիկարի որդուն տրված գլխավոր պատվիրաններից մեկն այն է, որ մարդ հասարակության մեջ պետք է ճանաչի իր տեղը. «Որդեակ, յորժամ կոչեն զքեզ ի պատիւ, մի՛ նստիր քան զքո լայեխիդ տեղիքն ի վեր, զի մի ասիցեն, թե ել յայդ տեղացդ և եկ ի վայր, և դու ամօթով լինիս»<sup>32</sup>:

<sup>30</sup> «Իմաստուն Խիկարի պատմությունը».- ՀԱԻԲԱ, FFVIII: 2932,01-2955,00:

<sup>31</sup> «Իմաստուն Խիկարի խրատը».- Կարս, էջ 313:

<sup>32</sup> Պատմություն և խրատք Խիկարայ Իմաստնոյ, գիրք Ա, էջ 222:

*Եզրահանգում.* Բանահյուսական պատումները ցույց են տալիս, որ Խիկարի կերպարը ժողովրդի կողմից ընկալվել է որպես մի իմաստուն, որի խրատներն ու խորհուրդները պետք են բոլորին: Խրատները և բարդ խնդիրները լուծելը Խիկարի կերպարի բաղկացուցիչ մասն են կազմում, որով նա առանձնանում է բանահյուսական մյուս կերպարներից: Խիկարյան պատումների դաստիարակչական-ուսուցողական նշանակությունը նպաստել է այդ սյուժեների կենցաղավարման և փոխանցման գործընթացին: Միջազգետքյան տարածաշրջանից փոխառյալ հերոսն ու սյուժեները հայկական միջավայրում համապատասխան լսարանի առկայության պայմաններում սերտաճել են տեղական նմանատիպ սյուժեներին և ազգային նկարագիր ձեռք բերել:

Որոշ ուսումնասիրողների կարծիքով, Խիկար Իմաստունը հայկական ծագում ունի: Չի բացառվում, որ հայ բանահյուսական ավանդության մեջ եղած տեղական խրատատու հոր մասին պատումները ձուլվեին միջազգետքյան խիկարյան սյուժեներին:

## СЮЖЕТЫ АХИКАРА ПРЕМУДРОГО В ФОЛЬКЛОРЕ ШИРАКА И КАРСА

*Хемчан Э. Г.*

**Ключевые слова:** сказание, поучение, первоисточник, писец, сказ, вариант, совет, сюжет, функция.

Вековые общения с народами ближневосточного региона оставили существенное влияние на репертуаре армянского народного фольклора. Рассказы о ряде героев с именем и без имени устным и письменным путем заимствовались и локализовались, обогащая наследие армянского эпического фольклора.

В ряду восточных историко-эпических героев Ахикар Премудрый занимает особое место. Начинаясь в ассирио-вавилонской среде, сказы Ахикара Премудрого около два с половиной тысячелетия бытовали в письменной и устной традиции ближневосточных народов активными переносами и развитиями. Согласно исследователям Ахикар Премудрый был реальной исторической личностью, писцом и советником короля Ассирии Синаххериба. Сохранившиеся начальные тексты сказов Ахикара - переводы и развития ассирийского варианта в литературной традиции еврейских, арамейских, эфиопских, арабских, армянских и других народов. Письменные варианты сказов Ахикара всесторонне исследовались со стороны ученых.

В армянской фольклорной традиции рассказы о Хикаре были любимы, распространены и включали почти все историко-этнографические регионы Армении. В карс-ширакском фольклорном наследии в основном сохранились мотивы построения дворца между небом и землей по требованию враждебного царя (ATU 922A) и

избегания от смерти по совету Хикара (АТУ 910). В вариантах этого мотива Хикар иногда заменяется Данандой Бахлулом или другим героем, как образ, имеющий аналогичные функции.

Рассказы по своей структуре сохранили хикаровские поучения, которые образуют составную часть и бесспорно имеют воспитательно-обучающее значение, способствуют процессу для того, чтобы быть любимым и для распространения сюжетов. Заимствованный герой и сюжеты в армянской среде в условиях наличия соответственной аудитории срачивались с местными аналогичными сюжетами и приобрели национальный облик.

## THE PLOTS OF AHIKAR THE WISE IN THE SHIRAK AND KARS FOLKLORE

*Khemchyan E. H.*

**Key words:** *legend, teaching, source, scribe, tale, variation, advice, plot, function.*

The centuries-old contacts with the peoples of the Middle East region left a significant influence on the repertoire of the Armenian folklore. Stories about a number of named or nameless characters in verbally and written form borrowed and localized to enrich the heritage of the Armenian epic folklore.

Among the eastern historical and epic heroes, Ahikar the Wise has a special place. Beginning in the Assyrian-Babylonian environment, the tales of Akhikar the Wise about two and a half thousand years were present in the written and oral traditions of the Middle Eastern peoples with active transformations and developments. According to the researchers, Ahikar the Wise was a real historical figure, scribe, and advisor to the king Sennacherib of Assyria. The surviving initial texts of the tales of Ahikar are the transformations and developments of the Assyrian variation in the written tradition of the Jewish, Aramaic, Ethiopian, Arab, Armenian and other peoples. Written versions of the tales of Ahikar were thoroughly researched by scientists.

In the Armenian folklore tradition, the stories about Khikar were loved, spread and included almost all the historical and ethnographic regions of Armenia. In the Kars-Shirak folklore heritage, the motives of avoiding to build a palace between heaven and earth by the request of a hostile king (АТУ 922А) and avoiding death by the advice of Khikar was largely preserved (АТУ 910). In variants of this motive, Khikar is sometimes replaced by Dannanda Bahlul or another character, as the one having similar functions.

With their structure, the plots have preserved the Khikar's teachings, which form an integral part and undoubtedly have an educational significance, and also contribute to the process in order to be loved and to spread the plots. In the presence of a corresponding audience the borrowed character and the plots in the Armenian environment merged with local similar plots and acquired a national image.

**R e f e r e n c e s**

1. Afanas'eva V. Literatura Drevnego Dvurech'ya//Istoria Vsemimnoj Literatury, t. I, Moskva, Izd-vo "Nauka", 1983 (In Russian).
2. Astuatsashunch, Matean Hin u Nor Ktakaranats, h. erkrord, Girq banic Tovbitay, Venetik, Tparan i gordsarani Sb. Ghazaru, 1805 (In Armenian).
3. Hay azgagrutyun ev banahiusutyun, h. 21, Tavush, kazmogh Khemchyan E. H., Yerevan, HH GAA "Gitutium" hrat., 2000 (In Armenian).
4. HH GAA hnagituthyan ev azgagruthyan banahiusakan arkhiv (HAIBA), FFVIII:, FFXII (In Armenian).
5. Ivanov V.V., Toporov V. N. Oriol.//Mify narodov mira. T. II, M., Izd-vo "Sovetskaya enciklopedia", 1988 (In Russian).
6. Kars. Hayoc banahiusakan mshakuyt@, Kazmoghner: Harutyunyan S. B., Vardanyan S. A, Khemchyan E. H., Ghrejyan L. Kh., Khemchyan M. H., Yerevan, HH GAA "Gitutium" hrat., 2013 (In Armenian).
7. Khemchyan E.H., Harts-hanelukner@ yev aylabanakan erkkhosutiunner@ haj banahiusuthian shahabasian syuzhenerum, Patmabanasirakan handes, 3, 2019 (In Armenian).
8. Khikar Imastunits minchev Janon, Yerevan, "Hayastan" hrat., 1990 (In Armenian).
9. Mejlakh M. B., Vozdukh//Mifi narodov mira. T. I, M., Izd-vo "Sovetskaya enciklopedia", 1987 (In Russian).
10. Mudrost' Khikara i basni Lukmana, Petereburg, Gosizdat, 1920 (In Russian).
11. Patmuthiun yev khratq Khikaraj Imastnoj, girq A, ashkhatasirutyamb A. A. Martirosyani, Yerevan, HSSH GA hrat., 1969 (In Armenian).
12. Patmuthiun yev khratq Khikaraj Imastnoj, girq B, ashkhatasirutyamb A. A. Martirosyani, Yerevan, HSSH GA hrat., 1972 (In Armenian).
13. Sravnitel'niy ukazatel' syujetov. Vostochnoslavyanskaya skazka, Leningrad, Izd-vo "Nauka", 1979 (In Russian).
14. Yezoposi araknere, Yerevan, "Hayastan" hrat. 1990 (In Armenian).
15. Yusuf Khattar Mukhammed, Mudrosti Lukmana Khakima, Urussu, Tataristan, Izd. "Iman", 2002 (In Russian).

*Ընդունվել է՝ 04.07.2020*

*Գրախոսվել է՝ 09. 07. 2020*

*Հանձնվել է տպ.՝ 20. 11. 2020*

**Տեղեկություններ հեղինակի մասին**

Էսթեր ԽԵՄՉՅԱՆ՝ բանասիրական գիտությունների թեկնածու,  
 ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի  
 ավագ գիտաշխատող, էլ. հասցե՝ ekhemchyan@yandex.ru

ՀՏԴ՝ 398. 3

ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՀՈՌՈՄՆԵՐԻ  
ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐՆ ՈՒ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

*Գևորգ Ղազարյան*

Աթենքի ազգային համալսարան

*Բանալի բառեր՝ ազգագրություն, հայ բանահյուսություն, հեքիաթ, Սբ Գևորգ, Սբ Նիկողայոս, Ակն, ուղղափառ հայեր:*

Հաղորդման մեջ ներկայացվում են հայ հոռոմների բանահյուսական ժառանգության մեջ ուշագրավ էջ հանդիսացող ակնցիների ավանդապատումները: Դրանց մի մասը հրաշապատում ժանրից է: Այս խմբում են Սբ Գևորգ Զորավարի և Սբ Նիկողայոս Սքանչելագործի մասին հրաշապատումները, որտեղ այդ սրբերը հանդես են գալիս որպես ծառերի պաշտպաններ և խստորեն պատժում են բնության դեմ մեղանշողներին: Բացի այդ, Նիկողայոս հայրապետը ակնցիների հրաշապատումներում ներկայանում է որպես քրիստոնյաների պաշտպան սուրբ: Պատումների մի այլ խումբ հեքիաթի ու անեկդոտի ժանրերին է պատկանում: Աշխատանքում տեղ են գտել հունական արխիվային փաստաթղթերից ու տպագիր նյութերից քաղված նորահայտ տեղեկություններ հայ հոռոմների հարսանեկան ու թաղման ծեսերին, եկեղեցական կյանքին ու առօրյային առնչվող ավանդույթների ու սովորությունների մասին, որոնք թույլ են տալիս ավելի ամբողջական պատկերացում կազմել հայ ժողովրդի այդ յուրահատուկ էթնո-դավանական խմբի ազգագրական պատկերի մասին:

*Լախարան.* Հայ հոռոմները՝ ուղղափառ (օրթոդոքս) հայերը, մեր ժողովրդի կարևոր մի հատվածն են, և ուրույն տեղ ու նշանակություն ունեն հայոց պատմության ու հոգևոր-մշակութային ժառանգության մեջ: XIX դ. և XX դ. սկզբի դրությամբ Արևմտյան Հայաստանում նրանք հիմնականում բնակվում էին Ակնի

Վանք, Չորակ, Շրգու և Մուշեղկա, Երզնկայի Հողուս, Չմշկածագի Մամսա, Մեթրկա և Խնդրկիկ գյուղերում<sup>1</sup>: Հայ հոռոմները հայության՝ քիչ ուսումնասիրված խումբ են, ուստի նրանց մասին նոր տեղեկությունների վերհանումն ու հրապարակումը կարևոր է հայագիտության համար<sup>2</sup>: Այս տեսանկյունից արժեքավոր են այն տեղեկությունները, որոնք անցյալ դարի ընթացքում հավաքվել են 1924 թ. Հունաստան գաղթած հայ հոռոմներից: Ազգագրական այդ նյութը մեծավ մասամբ անտիպ է, և սույն հրապարակմամբ նպատակ ունենք այն հասանելի դարձնելու հայրենական հետազոտողների համար<sup>3</sup>:

*Ավանդապատումներ*

Ինչպես ասվեց վերը, ակնցի հայ հոռոմների բանահյուսական ժառանգության<sup>4</sup> մեջ ուշագրավ են Սբ Գևորգի ու Սբ Նիկողայոսի մասին

<sup>1</sup> Ակնի վերոնշյալ գյուղերից ու Հողուսից XV-XVII դդ. գաղթած հայ հոռոմները բնակություն էին հաստատել պատմական Բյուրանիայի (Բզմիթի) նահանգում՝ հիմնելով Օրթագյուղ ու Խուդի գյուղերը, ինչպես նաև Ֆնդզի գյուղախումբը: Նրանց մասին տե՛ս **Բարթիկյան Հ.**, «Հայ-հոռոմները (քաղկեդոնիկ հայերը) հունական պարբերականներում»//Պատմա-բանասիրական հանդես, 2008, թիվ 3, էջ 237-260:

<sup>2</sup> Հայ հոռոմների մասին տե՛ս **Ճանիկեան Յ.**, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 55-60: Ակն եւ ակնցիք, նախաձեռնեց եւ հաւաքեց **Ա. Քէչեան**, աշխ. եւ խմբ. **Մ. Պարսամեան**, Փարիզ, 1952, էջ 615, 621: Ակն և Ակնցին. 1020-1915, հաւաքեց, դասաւորեց եւ խմբագրեց **Ա. Քէչեան**, Պուրքէշ, տպ. «Հայ մամուլ», 1942, էջ 49-53; **Kévorkian R., Paboudjian P.** Les Arméniens dans l'Empire Ottoman à la vielle du Génocide, Les Editions d' Art et d'Histoire "Arhis", Paris, 1992, էջ 138-140, 379-380, 386, 456; **Georgelin H.** «Arméniens ou Grecs? Les Hay-Horoum aux XIX<sup>e</sup> et XX<sup>e</sup> siècles»//L'Église arménienne entre Grecs et Latins, fin XI<sup>e</sup>- milieu XV<sup>e</sup> siècle, textes réunis par I. Augé et G. Dédéyan, Geuthner, Paris, 2009: **Ղազարյան Գ.**, «Ակնի հայ հոռոմները»//Վարձք, № 12, 2016, էջ 19-26: **Ղազարյան Գ.**, «Ակնի Վանք գյուղի 1787 թվականի հայ հոռոմների Ավետարանը»//Բանբեր Մատենադարանի, 24, 2017, էջ 221-232: **Ղազարյան Գ.**, «Հայ հոռոմների ազգային ինքնության խնդրի շուրջ»//Նյութեր ակադեմիկոս Լ. Խաչիկյանի ծննդյան հարյուրամյակին նվիրված հայագիտական միջազգային գիտաժողովի (28-29 հունիսի 2018 թ.), Եր., Մատենադարան, 2019, էջ 180-204:

<sup>3</sup> 1962 թ. Աթենքի Փոքրասիական հետազոտությունների կենտրոնի (Κέντρο Μικρασιατικών Σπουδών) աշխատակցուհի Է. Ղազին մեկնել է Հունաստանի Էվիա կղզու Կաստանիոտիսսա գյուղ, որտեղ հաստատված են գաղթական ակնցի հայ հոռոմները, և նրանից տեղեկություններ է քաղել: Ղազինի հավաքած նյութը պահվում է Կենտրոնի պահոցում: Մեզ հետաքրքրող բանահյուսական նյութը անթեղված է Ակնի Վանք և Մուշեղկա գյուղերին նվիրված ծրարներում (տե՛ս Κέντρο Μικρασιατικών Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-1, Βανκ», նույն տեղում, Φάκελος «Χώρα Ευφράτη-1, Μουσεγκά»): 2013 թ. Կաստանիոտիսսա գյուղ կատարած մեր այցելության ժամանակ ակնցի հայ հոռոմների շառավիղներից մեզ հաջողվեց գրի առնել մի քանի պատումներ, որոնք մինչ այդ անհայտ էին:

<sup>4</sup> Ակնագետ, Գևորգյան հոգևոր ճեմարանի դասախոս Հ. Ճանիկյանը (1840-1902 թթ.) իր աշխատության մեջ ներկայացրել է ակնցի հայ հոռոմների մեջ լավագույնս պահպանված անտունիները (որոնք նոտայագրել է Կոմիտաս վարդապետը), մի քանի այլ երգեր և մեկ պատում (տե՛ս **Ճանիկեան Յ.**, նշվ. աշխ., էջ 203, 426-454, 472-473, 497-500):

ավանդապատումները, որոնց մի մասը հրաշապատում ժանրից է<sup>5</sup>: Մբ Գևորգը հնուց ի վեր Վանք գյուղի պաշտպանն է համարվել<sup>6</sup>: Գյուղի հին եկեղեցին՝ բնականաբար նվիրված Մբ Գևորգին, գտնվել է գյուղամերձ անտառի մեջ<sup>7</sup>: Այս անտառի հետ կապված ակնցի հայ հոռոմների մեջ պահպանվել են երկու նույնատիպ հրաշապատումներ: Դրանցից առաջինը հետևյալն է. «Չորպաջի» անունով մի թուրք հովիվ գնում է Մբ Գևորգի անտառ՝ ծառ կտրելու: Գործն ավարտելուց հետո նա պատրաստվում է փայտը շալակած տուն վերադառնալ, երբ հանկարծակի իր առաջն է կտրում երիտասարդ մի ձիավոր՝ մոխրագույն ձիով ու կարմիր թիկնոցն ուսերին: Ձիավորը՝ նույն ինքն Մբ Գևորգը, մոտենում է թուրքին, սուրը քաշում, պահում է նրա վրա՝ ասելով.

-Եթե հաջորդ անգամ անտառ գաս՝ ծառ կտրելու, քեզ կտոր-կտոր կանեմ: Եթե ուզում ես՝ չոր ծառերը կտրիր, բայց դալար ծառերի վրա ձեռք չբարձրացնե՛ս:

Թուրքը սարսափահար հասնում է Վանք: Դրանից հետո որևէ թուրք այլևս չի համարձակվում Մբ Գևորգի անտառը մտնել<sup>8</sup>:

Երկրորդ պատումի համաձայն՝ մի թուրք կին է մտնում նույն անտառն ու կիսականաչ մի ծառ է կտրում: Երբ ծառն ընկնում է, և կինը մոտենում է՝ այն շարժելու, կաշում-մնում է ծառին: Հայտնվում է կնոջը անտեսանելիորեն ծառին կապած ձիավոր Մբ Գևորգը՝ կարմիր թիկնոցն ուսերին: Թրքուհին անշարժացած է մնում մինչև ուշ երեկո՝ ճշալով և օգնության կանչելով: Օրվա վերջում կնոջ երեխան տնից դուրս է գալիս՝ տեսնելու, թե մայրն ինչ եղավ անտառում: Կինը տղային է պատմում զլխին եկածի մասին՝ խոստանալով, որ այլևս անտառ ոտք

<sup>5</sup> Հայ հոռոմների մեջ պահպանված այդ պատումները եզակի են հայ բանահյուսության համար, քանի որ այս երկու սրբերի մասին՝ բացառությամբ Մոկաց Փութկու Մբ Գևորգ վանքի պարագայի, հայոց մեջ այլ պատումներ վկայված չեն (տե՛ս **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Եր., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1969):

<sup>6</sup> Վանք գյուղն անկասկած տարածաշրջանի հնագույն բնակավայրն է և հայ հոռոմ գյուղերից նշանավորը (տե՛ս **Ճանիկեան Յ.**, նշվ. աշխ., էջ 58): Սկզբնապես այն գտնվելիս է եղել հսկա քարածայրի վրա, որտեղ առ այսօր կանգուն են հնադարյան «Կույսի բերդի» ավերակները: Ըստ ավանդազրույցների՝ XIV դ. թուրքերը վանքցիներին ստիպել են ժայռից իջնել և դրա ներքևում՝ Եփրատի ձախ ափին, նոր գյուղ հիմնել: Այս նոր գյուղի եկեղեցին՝ Մբ Գևորգի անունով, կառուցվել է անտառամիջում: Հետագայում՝ 1722 թ., նոր եկեղեցի է կառուցվել գյուղից դուրս՝ Եփրատի ափի ժայռերի վրա: Ինչպես պատմում է ավանդազրույցը, Եփրատի ուժգին վարարման ժամանակ հեղեղը գետափի ժայռերին է բերել երկաթե մի դուռ՝ խաչը վրան: Գյուղացիները կարծել են, թե դա Մբ Գևորգի նշանն է, և որոշել են այնտեղ եկեղեցի կառուցել (տե՛ս **Բարթիկյան Հ.**, նշվ. աշխ., 256-257. **Ղազարյան Գ.**, «Ակնի հայ հոռոմները», էջ 21-23):

<sup>7</sup> Հավանաբար հենց այս սրբավայրը նկատի ունի Հ. Ճանիկյանը, երբ գրում է. «Գիւղին վերեւ մորենիներու մէջ կայ ուխտատեղի մը որմնապատ, որոյ մէջ կայ քարէ պատկեր» (**Ճանիկեան Յ.**, նշվ. աշխ., էջ 58):

<sup>8</sup> Տե՛ս *Κέντρο Μικρασιατικών Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-1, Βανκ».*

չի դնի: Այդ խոստումից հետո Մբ Գևորգը նրան ազատում է անտեսանելի կապանքներից: Կինը Վանք է հասնում, բոլորին պատմում հրաշքի մասին՝ զգուշացնելով, որ ծառ կտրելու նպատակով մարդիկ այլևս անտառ չգնան<sup>9</sup>:

Չորակ գյուղի եկեղեցին, որն այսօր կիսավեր վիճակում է, նվիրված է Մբ Նիկողայոս Մքանչելագործ հայրապետին<sup>10</sup>: Համաքրիստոնեական այս սուրբն ուղղափառ հայերի հրաշապատումներում ներկայացվում է որպես ծառերի պաշտպան<sup>11</sup>: Այսպես, պատումներից մեկի համաձայն՝ ձորակցիները գնում են գյուղի անտառ՝ ծառ կտրելու, սակայն դա դուր չի գալիս Մբ Նիկողայոսին: Նա երազում հայտնվում է գյուղի քահանային ու ասում.

-Այլևս իմ անտառի ծառերը չկտրե՛ք: Ի՞նչ եք կարծում՝ ես կացին չունե՞մ: Եթե ուզենամ՝ ինքս կարող եմ կտրել:

Առավոտյան, երբ քահանան գնում է եկեղեցի, շեմի առջև գեղեցիկ մի կացին է գտնում: Գյուղացիներն այն անվանում են «Մբ Նիկողայոսի կացին», և մինչև այժմ այդ կացինը՝ որպես սրբություն, երկյուղածությամբ պահում են Կաստանիոտիսսայի Մբ Նիկողայոս եկեղեցում:

Հետևյալ երկու պատումներում Մքանչելագործ հայրապետը հանդես է գալիս որպես քրիստոնյաների պաշտպան: Այսպես, ինչ-որ թուրք իշխանավոր Չորակում արգելում է զանգ հնչեցնել: Գիշերը երազում նրան հայտնվում է սուրբը և ծեծում: Թուրքը սարսափած արթնանում է՝ ահավոր կապտուկներով և, բնականաբար, հետս է կոչում իր կարգադրությունը:

Հետաքրքրական է նաև մյուս պատումը. ինչ-որ կոտորածների ժամանակ (համիդյան, Մեծ եղեռնի, թե՛ ուրիշ՝ հայտնի չէ) թուրք հրոսակներն ուզում են մտնել Չորակ: Ճամփին նրանց դիմացն է ելնում խիստ դեմքով ու կացինը ձեռքին

<sup>9</sup> Σε' u Κέντρο Μικρασιατικών Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-1, Βανιο». Նմանատիպ մի պատմություն առնչվում է Հունաստանի Մետեորա շրջանի Թաշկինակավոր Մբ Գևորգ վանքին: Մի «հազարացի», մտնելով վանքից ներքև գտնվող անտառը, ծառ է կտրում, սակայն ընկնում է ու անշարժանում: Հասկանալով, որ մեղք է գործել՝ մտնելով վանքապատկան տարածք, մահմեդականն սկսում է աղոթել Մբ Գևորգին՝ խոստանալով ապաքինման դեպքում վանքին նվիրել իր կնոջ թանկարժեք չադրան: Մբ Գևորգը կատարում է իր հրաշքը, մահմեդականն էլ՝ իր ուխտը (տե՛ս 'Ο πανταχού προφθάνων εις βοήθειαν. Τοῦ Ἁγίου Μεγαλομάρτυρος καὶ Τροπαιοφόρου Γεωργίου τοῦ Θαυματουργοῦ θαύματα παλαιὰ τε καὶ νέα ὡς καὶ ἡ τιμὴ του εις το Ἅγιον Ὅρος τοῦ Ἄθωνος, <sup>2</sup>2010, էջ 120): Մբ Գևորգը եկեղեցապատկան հողերի կամ առհասարակ ունեցվածքի հանդեպ ոսոճություն կատարող մահմեդականներին խստիվ պատժում է (սրբապղծին ծեծելով կամ անշարժացնելով) հունական այլ հրաշապատումներում ևս (տե՛ս Նույն տեղում, էջ 102-103, 115-119):

<sup>10</sup> Եկեղեցին վերանորոգվել է 1794 թ. ձորակցի իգիթբաշի Նիկոլ Պայյանի հովանավորությամբ (տե՛ս **Ղազարյան Գ.**, «Ակնի հայ հոռոմները», էջ 24):

<sup>11</sup> Մբ Նիկողայոսի մասին հրաշապատումները գրի ենք առել 2013թ. Կաստանիոտիսսա կատարած մեր այցելության ժամանակ:

մի ծերունի՝ արգելելով ջարդարարներին գյուղ մտնել: Սահմուկած թուրքերը մի քանի անգամ փորձում են այլ ճանապարհներով մտնել Ձորակ, սակայն ամեն անգամ կացնավոր ծերունին կտրում է նրանց առաջը: Թուրքերն այդպես էլ չեն կարողանում գյուղ մտնել ու ստիպված հեռանում են: Որոշ ժամանակ անց թուրքերի հրամանատարն ինչ-որ գործով նորից Ձորակ է ժամանում: Գյուղին մոտենալով՝ տեսնում է, որ ժողովուրդը խաչերթի է դուրս եկել: Հոգևորականների բռնած սրբապատկերին նայելով՝ հրամանատարն ապշում է. պատկերված ծերունին՝ Սբ Նիկողայոսը, հենց այն ծերունին էր, որ իրենց թույլ չէր տվել մտնել Ձորակ ու կոտորել գյուղացիներին՝ այդպիսով փրկելով նրանց:

Եվս մեկ հրաշապատում՝ այս անգամ Տիրամոր հետ կապված. մի թուրք մարդ կթում է կովը և Տիրամոր մի հնամենի սրբապատկեր՝ գրեթե ջնջված, դնելով կաթի ամանի բերանին՝ որպես կափարիչ, գնում է ուրիշ գործերի: Վերադառնալով տեսնում է, որ «տախտակն» առանձին մի կողմ է դրված: Թուրքը նորից սրբապատկերը դնում է կաթի բերանին, սակայն քիչ անց հրաշքը կրկնվում է: Ի վերջո, զայրացած, սրբապիղծը կացնով փորձում է կոտորել սրբապատկերը, սակայն կացինը Աստվածամոր դեմքին դիպչելուն պես տախտակից արյուն է դուրս վազում: Լեղապատառ թուրքն շտապում է հայ հոռոմների մոտ՝ պատմելու հրաշքի մասին<sup>12</sup>:

### *Հեթիաթներ և ավանդազրույցներ*

Ակնցի հայ հոռոմներից պահպանվել են նաև երկու հեթիաթ, որոնցից մեկը կոչվում է «Խելառ կինը», մյուսը՝ «Ծերունին ու ջահել կինը»:

#### *«Խելառ կինը»*

Մի մարդ խելառ կին է ունենում: Օրերից մի օր կնոջը բամբակ է բերում՝ պատվիրելով այն մանել: Խելառ կինը բամբակը տանում է ջրի մոտ, դնում գորտերի առաջ, թե՛ բամբակը մանեք, մեկ շաբաթից կգամ վերցնելու: Մի շաբաթ անց խելառ կինը գնում է գորտերի մոտ, բայց ոչինչ չի գտնում. ջուրը բամբակը տարած է լինում: Կինն սկսում է դես ու դեն փնտրել ու մի քարի վրա ձվի չափ աղամանդ է գտնում<sup>13</sup>: Երբ տուն է գալիս, մարդուն է ցույց տալիս՝ պատմելով, որ

<sup>12</sup> Այս հրաշապատումը ևս գրի ենք առել 2013 թ. Գաստանիոտիսսա կատարած մեր այցելության ժամանակ:

<sup>13</sup> Հեթիաթի սկիզբը հիշեցնում է Հ.Թումանյանի «Անբան Հուրին» հեթիաթի սկզբնամասը: Հետաքրքրական է, որ հայոց մեջ IX դ. վկայված է «Հուր» անձնանունը, սակայն մեկ անգամ, այն էլ՝ որպես արական: Գա նաև «Հուրիկ»/«Խուրիկ» իգական անունը, որը «Հոփսիմե»-ի կրճատ ձևն է (տե՛ս **ԱՃառեան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հ. 3, Եր., Պետական համալսարանի հրատ. 1946, էջ 97): Գարծում ենք՝ կարելի է ենթադրել, որ թումանյանական «Հուրի» անձնանունը կարող է հենց «հոռոմ» բառի փոփոխված տարբերակը լինել:

բամբակը գորտերին է տվել, որ մանեն, իսկ գորտերը բամբակի տեղը ադամանդ են տվել իրեն:

Մարդը հասկանում է, որ խելառ կինը գլխներին մի փորձանք կբերի, և ասում է կնոջը.

- Ես քեզ շտապ պիտի թաքցնեմ, որովհետև խոշոր կարկուտ պիտի գա. Եթե դուրսը մնաս, կարկուտն աչքերդ կփչացնի, էլ բան չես տեսնի:

Այսպես ասելով՝ մարդը կնոջը տանում, մի փոսի մեջ է իջեցնում, իսկ փոսի վրա թիթեղ է դնում ու վրան զարի լցնում: Ջրհորի միջից կտկտոցը լսելով՝ կինը կարծում է, թե իսկապես կարկուտ է գալիս: Իսկ մարդն այդ ընթացքում ադամանդը թաքցնում է: Մեկ օր անց, երբ կնոջը հանում է փոսից, խելառն սկսում է սրան-նրան պատմել, որ ինքը ձվի չափ պսպղուն մի բան է ջրից գտել: Լուրը հասնում է թագավորի ականջը, սա էլ մարդիկ է ուղարկում՝ ադամանդը բերելու: Կինը սակայն ասում է, որ ադամանդը մարդուն է տվել: Հարցնում են մարդուն՝ թե քարն ո՞ր է:

- Ի՞նչ ադամանդ, ի՞նչ բան, - զարմանում է մարդը. - կինս խելառ է, մի քիչ հետը գրուցեք, կհամոզվեք:

Թագավորի սուրհանդակները նորից կնոջն են դիմում.

- Ադամանդը ե՞րբ ես գտել:

Այդ հարցնող մարդը մի աչքից կույր է լինում: Խելառ կինը նայում է նրա դեմքին ու ասում.

- Ա՛յ էն օրը, երբ կարկուտն եկավ ու աչքդ հանեց:

Թագավորի մարդիկ հասկանում են, որ կինը խելառ է, ու ձեռնունայն հեռանում են<sup>14</sup>:

*«Օ՛ւերունին ու ջահել կինը»*

Մի ծերունի ջահել կին է առնում: Մի գիշեր նկատում է, որ կինն արթնանում է, հագնվում ու տնից դուրս է գալիս, ապա որոշ ժամանակ անց վերադառնում է: Դա կրկնվում է, ու մի անգամ, երբ կինը գիշերով տնից դուրս է գալիս, ծերունին ելնում, տան դուռը կողպում է: Կինը վերադառնալով՝ դուրսն է մնում:

- Հը՞, հիմա խայտառակ եղա՞ր, - դռան ետևից ասում է մարդը:

- Դե թող հիմա մարդիկ իմանան, որ մարդ ունես, բայց ուրիշի մոտ ես գիշերները գնում:

Կինն սկսում է մարդուն աղաչել-պաղատել, որ դուռը բացի, սակայն իզուր:

- Դե, որ այդպես է, - ասում է կինը, - ես ինձ ջրհորը կզցեմ, մեղքը թող քո վիզը լինի:

Գնում է ջրհորի մոտ ու մի մեծ քար զցում մեջը: Օ՛ւերունին, դռան ետևից

<sup>14</sup> Տե՛ս Κέντρο Μικρασιατικών Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-1, Βανκ»:

ջրի ձայնը լսելով, դուռն անմիջապես բացում է, վազում ջրհորի մոտ՝ կնոջը փրկելու: Խորամանկ կինը թաքստոցից ելնում, մտնում է տուն ու դուռը կողպում: Խեղճ ծերունին դուրսն է մնում, իսկ կինն սկսում է բղավել:

-Ժողովու՛րդ, արթնացե՛ք, տեսե՛ք անամոթ ծերուկին, որ հա՛մ ինձ պես ջա-  
հել կին ունի, հա՛մ էլ գիշերն ուրիշի մոտ է գնում: Այս աղմուկի վրա մարդիկ  
արթնանում են, հարայ-հրոց գցում, ոստիկաններ են կանչում ու խեղճ մարդուն  
բանտն են գցում:

«Խորամանկ կինն աշխարհում մեծ չարիք է գործում» եզրափակում է  
հեքիաթը<sup>15</sup>:

Ընտանեկան խնդիրներին է նվիրված նաև «Ուրիշի դարդը երբեք չգիտես»  
առակը: Մի մարդ շատ գեղեցիկ, բայց շատ չար կին է ունենում: Երկար չարչար-  
վելուց հետո վերջապես բաժանվում է կնոջից: Մեկ ուրիշը, դրա մասին իմանա-  
լով, սկսում է մարդուն կշտամբել, թե՛ այդքան լավ կնոջն ինչու՞ ես թողել: Մարդը  
պատասխանում է.

-Հազիս գեղեցիկ կոշիկը տեսնու՞մ ես: Միայն ե՛ս գիտեմ, թե կոշիկը  
որտե՛ղ է ոտքս սեղմում:

«Ուրիշի դարդը երբեք չգիտես, մի՛ խառնվիր», - եզրակացնում է առակը<sup>16</sup>:

Վանքի հայ հոռոմների մեջ տարածված են եղել ոմն խոջայի մասին պա-  
տումները, թեպետ նրանք չեն իմացել, թե ո՛վ է այդ խոջան: Խոսքը հարկավ խոջա  
Նասրեղիինի մասին է: Ահա այդ պատումներից մեկը՝ «Հղի կովն ու խոջայի  
աղջիկը» վերնագրով: Խոջան ծեր կով է ունենում և կնոջ հետ կովը տանում է  
շուկա, որտեղ խոջան սկսում է գովել կենդանուն.

-Կովս ջահել է, վեց ամսվա հղի է:

Ի վերջո, մի մարդ հավատում է գովազդին ու կովն առնում է: Դրանից մի  
շաբաթ անց խոջան մտածում է իր աղջկան ամուսնացնել: Այդ նպատակի հա-  
մար երկու հարսնատես կանայք են գալիս խոջայենց տուն՝ խնամախոսության  
գործը կազմակերպելու: Խոջայի կինը, որը շուկայում ներկա է լինում կովի  
հաջող վաճառքին, չի թողնում, որ ամուսինը խոսի, այլ առաջ ընկնելով, սկսում  
է աղջկա գովքն անել.

-Մեր աղջիկը ջահել է, վեց ամսվա հղի է...

Լսելով այս՝ խնամախոսներն անմիջապես վեր են կենում ու հեռանում<sup>17</sup>:

<sup>15</sup> Նույնը:

<sup>16</sup> Տե՛ս Κέντρο Μικρασιατικών Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-1, Βανκ»:

<sup>17</sup> Նույնը: Նասրեղիինի մասին պատումների ռուսերեն ժողովածուի մեջ, որտեղ ընդգրկված է 1238  
միավոր, այս պատումը չկա: Ավելին, նմանօրինակ որևէ պատում չգտանք նաև Նասրեղիինի հու-  
նարեն հրատարակության մեջ, որտեղ ամփոփված են ոչ միայն Փոքր Ասիայի, այլև Հունաստա-

Պետք է նշել, որ այս ամենից բացի, հայ հոռոմները լավ են իմացել հայոց պատմությունը, օրինակ այն, որ Հայաստանն «Արմենիա» է կոչվել Արամ թագավորի անունով, իսկ հայերը՝ «հայ» իրենց առաջին թագավոր Հայկի անունով, որ Հայաստանն առաջ հզոր ու մեծ պետություն է եղել, որ հայերը հնում արեզակն ու աստղերն են պաշտել: Հայ հոռոմներն իմացել են Լուսավորչի վարքը՝ թե՛ պետն փոքրիկ սխալներով: Իմացել են նաև, որ հայերի՝ Եփրատ գետում մկրտվելուց հետո Շապուհը մեծ հալածանք է սկսել հայերի դեմ, բազում մարդկանց կոտորել և միայն Մեծն Կոստանդինոսի սպառնալիքից հետո է հայերին հանգիստ թողել<sup>18</sup>:

### *Ավանդույթներ*

Հունաստանում պահվող արխիվային փաստաթղթերում և մի քանի տպագիր նյութերում որոշ տեղեկություններ են պահպանվել նաև հայ հոռոմների հարսանեկան ու թաղման ծեսերին, եկեղեցական կյանքին<sup>19</sup> ու առօրյային առնչվող ավանդույթների ու սովորությունների մասին, որոնք թույլ են տալիս ավելի ամբողջական պատկերացում կազմել հայ ժողովրդի այդ յուրահատուկ էթնոգավանական խմբի ազգագրական պատկերի մասին:

Մասնավորապես, հետաքրքրական են հայ հոռոմների թաղման ավանդույթները: Օրինակ՝ եթե մարդն առավոտյան կամ կեսօրին է մահացել, ապա նրան նույն օրն են թաղել, իսկ եթե կեսօրից հետո, ապա դին մեկ գիշեր եկեղեցում են թողել: Որպես սգո նշան՝ տղամարդիկ չեն սափրվել և հագուստներից մեկը թարս են հագել: Մահվան օրվանից սկսած՝ ամեն օր, որպես ննջեցյալի բաժին՝ մի ավսե կերակուր են տվել որևէ աղքատի: Դա արել են մեկ տարի շարունակ, իսկ տարին լրանալուց հետո՝ ամեն շաբաթ-կիրակի: Հոգեհանգստյան կարգը կատարել են ըստ օրթոդոքս ծիսակարգի՝ 3-րդ, 9-րդ, 40-րդ օրերը, ապա երրորդ և վեցերորդ ամսին, տարելիցին ու երեք տարի անց<sup>20</sup>: Հայ հոռոմների

նի տարածքում շրջանառված պատումները: Սա խոսում է այն մասին, որ վերնաեջերյալ հայկական պատումն իր տեսակի մեջ եզակի է (հմմ. Двадцать четыре Насреддина/Сост., вступит. статья, примеч. и указатели М. С. Харитонова, 2-е издание. М.: гл. Ред. Вост. Литературы, 1986; Νασρεντίν Χότζας. Ιστορίες και χωράτά από τη Μικρά Ασία και τον ελλαδικό χώρο, Κέντρο Ανατολικών Γλωσσών και Πολιτισμού, Αθήνα, 2010).

<sup>18</sup> Κέντρο Μικρασιάτικων Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-2, Μουσεγκά»: Այս մասին պատմում է Մդ. Եկեղեցական պատմիչ Սոզոմենոսը (տե՛ս **Sozomène**, Histoire Ecclésiastique, Livres I-II, Texte Grec de l'édition J. Bidez, Sources Chrétiennes, էջ 288):

<sup>19</sup> **Պապանդրեոս Դամասկիեոս վրդ.**, Հայ Եկեղեցու հիմնադրումը և կազմավորումը մինչև Դ Տիեզերական ժողովը, թարգմ. Եզնիկ ծ.վրդ. Պետրոսյանը, Սբ Էջմիածին, 1997, էջ 68-70:

<sup>20</sup> Κέντρο Μικρασιάτικων Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-2, Μουσεγκά»: Հայ հոռոմները որպես հոգեհաց բաժանել են «գոլովա», այսինքն՝ խաշած ցորեն (տե՛ս **Ճանիկեան Յ**, նշվ. աշխ., էջ 57): Խոսքն օրթոդոքս ծիսակարգով մեռելոցներին ու հոգեհանգիստներին

գերեզմաններն ունեցել են կա՛մ հողաթումբ, կա՛մ շիրմաքար: Ի տարբերություն հույների՝ նրանք գերեզմանին կանթեղ չեն վառել, այլ միայն մոմ: Նորից ի տարբերություն հույների՝ արտաշիրիմում չեն կատարել: Յուրաքանչյուր ընտանիք իր տոհմական գերեզմանոցն է ունեցել<sup>21</sup>:

Հայ հոռոմների մեջ վառ է եղել կրոնական ջերմեռանդությունը, հատկապես Աստվածամոր և Սբ Գևորգի հանդեպ: Վանքի անտառը շատ ծաղիկներ է ունեցել, դրանք բոլորը «նարվոս» են կոչվել: Հայ հոռոմները դրանք հավաքել են ու եկեղեցում Տիրամոր սրբապատկերի առջև են դրել՝ հավատալով, որ նարվոսն Աստվածածնի ծաղիկն է<sup>22</sup>: Ամեն տարի ապրիլի 23-ին՝ Սբ Գևորգի տոնին, Վանքի եկեղեցում տոնական հանդիսավոր պատարագ է մատուցվել, մեծ տոնախմբություն է կատարվել, որին հյուր են եկել նաև մնացած գյուղերի բնակիչները: Պատարագից հետո կանայք եկեղեցու տրամագծով շուրջպար են բռնել: Տոնին տրվել է նաև մատաղ, մորթվել են եզներ, որոնց եղջուրներին մումեր են վառել<sup>23</sup>: Հետաքրքրական առանձնահատկություն է եղել Սբ Գևորգի հետ դեղին գույնն աղերսելը. հայ հոռոմները կարծել են, թե դա սրբի սիրած գույնն է: Որպեսզի Սբ Գևորգին հաճոյանան, կանայք նրա տոնին հնարավորինս շատ դեղին շորեր են հագել ու դեղին ձվեր պատրաստել՝ դրանք ներկելով նշենու տերևների եփուկով: Նույնիսկ Զատիկի տոնին ձվերի մի մասը ոչ թե կարմիր, այլ դեղին են ներկել՝ ի պատիվ Սրբի: Այս ավանդույթները պահպանվել են մինչև 1908թ., այնուհետ, երբ արտագաղթի պատճառով Վանքն սկսել է ամայանալ, դրանք մոռացության են մատնվել. գյուղացիները Սբ Գևորգի տոնին շարունակել են հին եկեղեցի այցելել, սակայն արդեն բավարարվել են սոսկ մոմավառությամբ<sup>24</sup>: Ապրիլի 23-ին տոնախմբություն է կատարվել նաև Մուշեղկայի Սբ Գևորգ եկեղեցում, որին հյուր են եկել մյուս գյուղերի մուշեղկացիները, Հոդուսի ու Մամսայի հայ հոռոմները, առաքելական հայերն ու թուրքերը<sup>25</sup>:

օրինվող κόλλιβα-յի մասին է: Ի դեպ, «կուլիբայ»/«կուլիվայ» ձևով այս բառն ամրագրված է նաև գրաբարի գանձարանում (տե՛ս Նոր Բաղգիրք Հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 1122):

<sup>21</sup> Στέυ Κέντρο Μικρασιατικών Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-2, Μουσεγκά»:

<sup>22</sup> Նույնը:

<sup>23</sup> Սբ Գևորգի պատվին ցուլ մատաղ անելը վաղնջական արմատներ ունի և տարածված է եղել Հայքում ու Վիրքում: Ըստ երևույթին, Միհրի պաշտամունքի մի վերհուշ է (տե՛ս **Հակոբյան Հ.**, «Հին Հայաստանի առնչությունը Միթրային նվիրված հռոմեական տաճարներին» (նախնական դիտողություններ)//Անտառ Ծննդոց: Հողվածների ժողովածու՝ նվիրված Ֆ. Տեր-Մարտիրոսովի հիշատակին, Եր., ԵՊՀ հրատ., 2015, էջ 183):

<sup>24</sup> Στέυ Κέντρο Μικρασιατικών Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη1, Βανκ»:

<sup>25</sup> Στέυ Κέντρο Μικρασιατικών Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-2-Μουσεγκά»:

Փոքրասիական հետազոտությունների կենտրոնի ծրարներում արժեքավոր տեղեկություններ կան նաև հայ հոռոմների խոնարհված սրբատեղիների, նրանց հետ կապված բարեպաշտական ավանդույթների մասին: Այսպես, Մուշեղկայից Շրգու ընկած ճանապարհին են գտնվել Սբ Պետրոս-Սբ Պողոս եկեղեցու ավերակները: Մեկ այլ եկեղեցի՝ Սբ Մկրտչի անունով, անտանիք է եղել, սակայն պատերը՝ կանգուն: Ամեն տարի՝ Սբ Կարապետի գլխատման տոնին՝ օգոստոսի 29-ին, այստեղ ս. Պատարագ է մատուցվել, իսկ երկու շաբաթը մեկ կանայք գնացել են՝ խոնարհված եկեղեցու կանթեղը վառելու: Տիրամոր Ննջման տոնին՝ օգոստոսի 15-ին, պատարագել են նաև Աստվածամոր անունը կրող մեկ այլ խոնարհված եկեղեցում<sup>26</sup>:

Հունաստանում ուշագրավ տեղեկություններ են պահպանվել նաև Երզնկայի հայ հոռոմների Հողուս գյուղի ավանդույթների մասին: Հողուսի եկեղեցին՝ Աստվածամոր անունով, եղել է քարաշեն, շատ ցածր դռնով, որպեսզի ձիավոր թուրքերը չկարողանան ներս մտնել: Եկեղեցին ունեցել է ն՝ սրբապատկերներ, ն՝ որմնանկարներ: Օգոստոսի 15-ին եկեղեցու բակում գառան մատաղ է կատարվել, որը կոչվել է «Աստվածամոր դուրբան»: Եփրատ գետից այն կողմ՝ հայ առաքելական գյուղերի շրջապատում, գտնվելիս են եղել ուղղափառ հայոց ավերակ սրբատեղիները՝ Սբ Խառալամպուր, Սբ Վարվառան ու Սբ Սաբբան<sup>27</sup>: Բոլոր գյուղացիներն այս սրբավայրերն այցելել են նշված սրբերի տոներին՝ համապատասխանաբար փետրվարի 10-ին, դեկտեմբերի 4-ին և 5-ին: Սբ Վարվառայի տոնին հայ հոռոմները հյուրընկալվել ու գիշերել են հայերի տներում, առավոտյան գնացել են մոմավառության Սբ Սաբբային, ապա Հողուս վերադարձել: Հողուսից դուրս եղել են չորս այլ խոնարհված սրբավայրեր՝ Սբ Դիմիտրիոս, Սբ Նիկողայոս, Սբ Գևորգ և Սբ Թեոդորոս: Առաջին երկուսի պատերը կանգուն են եղել, այնտեղ պահվել են Սբ Դիմիտրիոսի և Սբ Նիկողայոսի պատկերները՝ կանթեղով: Հոկտեմբերի 26-ին՝ Սբ Դիմիտրիոսի տոնին, առաջին մատուռում ս. Պատարագ է մատուցվել, ոչխար կամ այծ են մատաղ արել: Ուշագրավ է, որ այս սրբին թուրքերը «Կասիմ» են անվանել: Ինչ վերաբերում է Սբ Թեոդորոսին, ապա սրբաբակում թաղել են երեխաներին, մինչդեռ գյուղի Սբ Աստվածածին եկեղեցու

<sup>26</sup> Σεΰ Κέντρο Μικρασιατικών Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-2-Μουσεγκά»:

<sup>27</sup> Հողուսի շրջակայքում եղել են 15 մատուռներ: Սրբավայրերի այսպիսի առատությունը բացատրվել է այնու, որ իբր դրանք կառուցվել են, որպեսզի այնտեղ ծառայելու համար նախատեսված անձինք ազատվեն զինվորական ծառայությունից (տե՛ս **Λαμτσίδης Κ.** «Χοροὺς Ἑλληνοκόν Αρμενόφωνον χωρίον τοῦ Ἐρζυγγιῶν Πόντου»//Ποντιακή Εστία, 1956, τευχ. 74-75, էջ 3579):

բախում՝ միայն մեծահասակներին: Հողուսի շիրիմներին միայն պարզ խաչ են տեղադրել<sup>28</sup>:

Հողուսին մոտ է Փերեզակ սարը, որի վրա եղել են Սբ Եղիա մատուռի ավերակները: Երաշտի ժամանակ հողուսցիները՝ քահանան, գյուղի ուսուցիչը երեխաների հետ ու շատ ծեր կանայք, սար են բարձրացել՝ անձրևի համար մաղթանք կատարելու: Երեխաներն ու ծերերն անմեղ են համարվել, իսկ մյուս գյուղացիների ներկայությունը մաղթանքին արգելված է եղել, որպեսզի նրանց մեղքերն աղոթքի ներգործությանն արգելք չդառնան: Մաղթանքից հետո երկու-երեք այծ են մորթել ու տվել, որ երեխաներն ուտեն: Սարից իջնելիս, ինչպես տեղեկատուներն են պատմել, միշտ անձրև է սկսվել<sup>29</sup>:

Հողուսցիները հաճախ խնամություն են արել ակնցի հայ հոռոմների հետ: Հարսանիքին հրավիրել են՝ հարազատների տուն խմորեղեն կամ հալվա ուղարկելով: Հարսը քողը երեսին է պահել 40 օր շարունակ, այնուհետ քողը հանել է հարսանիքի քավորը: Հարսանիքից հետո մեկ շաբաթ նորապսակները փակված են մնացել իրենց սենյակում, այնուհետ հարսը ամուսնու բարեկամներին է բաժանել նրանց նվերները: Ամուսնական կյանքի առաջին մի քանի տարիներին հարսը չի խոսել ամուսնու հարազատների հետ<sup>30</sup>: Հողուսի տները եղել են հայկական ավանդական գլխատուն՝ կիսով չափ հողի մեջ, քարաշեն, միահարկ, ուղղանկյուն երկու բաժանմունքով, թոնրով, որտեղ և թխել են լավաշը<sup>31</sup>:

*Եզրահանգում.* Փաստ է, որ հայ ժողովրդի հոգևոր-մշակութային ժառանգության հարստությունն ապահովվում է, ի միջի այլոց, նաև բազմաշերտությամբ ու բազմազանությամբ: Հայ հոռոմները դրա վառ ապացույցն են. լինելով հայ ժողովրդի անքակտելի մասը և ընդհանուր հայ մշակույթի կրողները՝ հայ հոռոմները, շնորհիվ դավանական տարբերության, ունեցել են իրենց յուրահատկությունները, որոնք արտահայտված են նրանց բանահյուսության մեջ: Հուսով ենք, որ այս ներկայացմամբ հրապարակված նյութի հետագա, մասնագիտական ուսումնասիրությունը՝ կատարված ազգագրագետների կողմից, կնպաստի ոչ միայն հայ ժողովրդի այդ ինքնատիպ ենթախմբի նկարագրի ավելի խորը ճանաչմանը, այլև արժեքավոր կլինի առհասարակ հայագիտական լայն հետաքրքրությունների համար:

<sup>28</sup> Στέ' u Κέντρο Μικρασιάτικων Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-9-Χογούζ»:

<sup>29</sup> Նույնը:

<sup>30</sup> Στέ' u **Μαραβελάκης Μ., Βακαλόπουλος Α.** Αί προσφυγικοί έγκαταστάσεις έν τή περιοχή Θεσσαλονίκης, Θεσσαλονίκη, 1955, էջ 110:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 110-111:

ПРЕДАНИЯ И ОБЫЧАИ ХАЙ ХОРОМОВ  
ЗАПАДНОЙ АРМЕНИИ

*Казарян Г. С.*

**Ключевые слова:** *этнография, армянский фольклор, сказка, святой Георгий, святой Николай, Акн, православные армяне.*

Православные армяне или так называемые «хай хоромы» (т. е. армяне ромеи) являются важной частью армянского народа, занимая свое особое место в истории Армении, в ее духовном и культурном наследии. В фольклоре православных армян примечательны предания акнцев, некоторые из которых относятся к жанру сказаний о чудесах святых. В этой группе рассказы о святых Георгии Победоносце и Николае Чудотворце. В них эти святые предстают как защитники деревьев, растительности, и строго наказывают тех, кто грешит против природы. Кроме того, в рассказах акнцев святитель Николай является защитником христиан. Другая группа рассказов относится к жанрам сказки и анекдота. В архивных материалах, хранящихся в Греции и в нескольких опубликованных материалах сохранились сведения о свадебных, погребальных обрядах хай хоромов, данные о традициях и обычаях, относящиеся к их церковной и обыденной жизни. Эти свидетельства помогают нам составить более полное представление об этнографическом облике этой уникальной конфессиональной группы армянского народа.

THE TALES AND TRADITIONS OF HAY HOROMS  
OF WESTERN ARMENIA

*Kazaryan G. S.*

**Key words:** *ethnography, Armenian folklore, fairy tale, St George, St Nicholas, Akn, Orthodox Armenians.*

Orthodox Armenians or the so-called “Hay Horoms” are an important part of the Armenian people, occupying a special place not only in the history of Armenia, but also in its spiritual and cultural heritage. In the folklore of Orthodox Armenians the traditions of Akn are remarkable, some of which belong to the genre of legends about the miracles of saints. In this group there are stories about St George and St Nicholas the Wondermaker. In them, these saints appear as protectors of trees, vegetation, and severely punish those who sin against nature. In addition, in these stories, St. Nicholas is the defender of Christians. Another group of stories relates to the genres of fairy tales

and anecdote. The archival materials stored in Greece and in several published materials contain information about the wedding, funeral rites of Hay Horoms, data on traditions and customs relating to their church and everyday life. This information helps us to have a more complete picture of the ethnographic image of this unique confessional group of Armenians.

## References

1. Akn yew aknc' in. 1020-1915, hawakec, dasaworec yew xmbagrec A. K'eċean, Bucharest, tp. «Hay mamul», 1942 (In Armenian).
2. Akn yew akncik, naxadzer nec yew hawak'ec A. K'eċean, xmb. M. Par samean, Paris, 1952 (In Armenian).
3. Bartikyan H. Hay horomner (k'alkedonik hayer) hunakan parberakannerum// Patmabanasirakan handes, 2008, № 3, pp. 237-260 (In Armenian).
4. Ćanikean Y. K. Hnut'yunk' Aknay, T'iflis, 1895 (In Armenian).
5. Dvadcat chetire Nasreddina/Sost., vstupit. statya, primech. i ukazateli M. S. Kharitonova, 2-e izdanie, M., red. Vost. Literaturi, 1986 (In Russian).
6. Hakobyan H. « Hin Hayastani arnċutyună Mitrayin nvirvac hromeakan taĉarnerin (naxnakan ditohutyunner)//Antaĉ Cnndoc: Hodvacneri ņolovacu nvirvac F. Ter-Martirosovi hiģatakin, Yerevan, EPH hrat., 2015, pp. 172-206 (In Armenian).
7. Kazaryan G. Akni hay horomner@, Vardzk, №12, 2016, pp.19-26 (In Armenian).
8. Kazaryan G., Akni Vank' gyuli 1787 t' vakani hay horomneri Avetaran@//Banber Matenadaran, 24, 2017, pp. 221-232 (In Armenian).
9. Kazaryan G. Hay horomneri azgayin inknuthyan xndri ņurj//L.Xachikyan-.Haryuramyak: Nyuter akademikos L.Xachikyani cnndyan haryuramyakin nvirvac haya-gitakan mijazgayin gitaņolovi 2018 t, Yerevan, Mane tanadaran, 2019, pp. 180-204 (In Armenian).
10. Kentro Mikrasiatikon Spoudon/Arkheio proforikis paradosis/fakelos «Khora Euf-rati-1» (In Greek).
11. Kentro Mikrasiatikon Spoudon/Arkheio proforikis paradosis/fakelos « Khora Eurati-9-Khogouz» (In Greek).
12. Kentro Mikrasiatikon Spoudon/Arkheio proforikis paradosis/fakelos « Khora Euf-rati-2, Mousegka» (In Greek).
13. Lamtsidis K. « Khogouz. Ellinikon Armenofonon khorion tou Erziggian Pontou//Pontiaki Estia, 1956, teukh. 74-75, pp. 3578-3581 (In Greek).
14. Ćanalanyan A. Avandapatum, Yerevan, HSSH GA hrat., 1969 (In Armenian).

15. **Maravelakis M., Vakalopoulos A.** Ai prosfigiakai egkatastaseis en ti periokhi Thessalonikis, Thessaloniki, 1955. (In Greek).
16. **Nasrentin Khotzas** Istories kai khorata apo ti Mikra Asia kai ton elladiko khoro, Kentro Anatolikon Glosson kai Politismou, Athens .<sup>2</sup>2010 (In Greek).
17. Nor Bargirk' Haykazean Lezwui, h. 1, Venice, 1836 (In Armenian).
18. **Papandreou Damaskinos vrd.** (Mitropolit Šveycariayi), Hay yekelecuc himnadrum@ yev kazmavorum@minchev D Tiezerakan žołov@, hun. t'argm. Eznik c. vrd. Petrosyan, S. Ejmiacin, 1997 (In Armenian).

*Ընդունվել է՝ 03. 02.2020*  
*Գրախոսվել է՝ 01. 04. 2020*  
*Հանձնվել է սույ.՝ 20. 11. 2020*

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Գևորգ ՂԱԶԱՐՅԱՆ՝** Աթենքի ազգային համալսարանի  
աստվածաբանության ֆակուլտետի դոկտորանտ,  
էլ. հասցե՝ dngevorg@gmail.com

Ա Ր Վ Ե Ս Ս Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
ИСКУССТВОВЕДЕНИЕ  
ART STUDIES

ՀՏԴ 7.072.2

ԱԼԲԵՐՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ.

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊՍՏՄՈՒԹՅՈՒՆ

*Արարչի Մարգարյան*

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ,  
Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

**Բանալի բառեր՝** գյումրեցի քանդակագործ, «Պուլսար», բրոնզաձուլյալ քանդակներ, քանդակ-խտալյացիա, «Վիրահատական միջամտություն», ժամանակակից արվեստ, «Տոտեմներ», «Ասպետներ» շարքը, մոդեռն ոճ, նոն ֆիկստո:

Հոդվածում դիտարկվում է 1980-ականների սերնդի վառ ներկայացուցիչ, գյումրեցի քանդակագործ Ալբերտ Վարդանյանի ինքնատիպ արվեստը, նրա անկրկնելի ձեռագիրը, մնայուն տեղն ու ինքնատիպ դիմագիծը: Նրա կերտած քանդակներն ավանդականի ու ժամանակակիցի, արևմտյանի և արևելյանի, ազգային ու համամարդկային արժեքների յուրօրինակ համադրում ու խաչաձևում են: Վարդանյանին, իրավամբ, կարելի է համարել Գյումրու ժամանակակից արվեստի հիմնադիրներից մեկը, ով առաջին քայլերն է արել հետերկրաշարժյան քաղաքում արվեստի հանրայնացման ուղղությամբ: Նրա՝ չափերով ոչ մեծ քանդակները մոնումենտալ են, ամբողջական: Քանդակագործի ստեղծագործությունը, սնվելով ազգային ակունքներից, շոշափում է համամարդկային գաղափարներ՝ սեր, ասելություն, քաղաքակրթական զարգացումներ, խաղաղություն, ցավ, տառապանք՝ հասկանալի բոլորին ու յուրաքանչյուրին: Պատճառը թեմաների ընտրության մեջ է, որոնք չեն սահմանափակվում տարածությամբ ու ժամանակով: Բրոնզեձուլյալ «Պուլսարը» Վարդանյանի գլուխգործոցն է, սիմվոլիկ պատկերացումների հանրագումարը:

**Նախաբան.** 20-րդ դարի վերջին քառորդին Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները, միմյանց հաջորդելով, կոտրում էին բոլոր կայացած

կարծրատիպերը, փոխում երկրի կյանքի բնականոն ընթացքն ու նկարագիրը ամենուր, այդ թվում նաև Գյումրիում: Ավանդաբար լինելով մշակութային քաղաք և անդրադառնալով բոլոր փոփոխություններին ու նորամուծություններին՝ Լենինականը (Գյումրին) արձագանքում էր քաղաքական, տնտեսական, մշակութային շրջադարձերին: Խորհրդային Միության փլուզումը, Հայաստանի անկախացումը, Արցախյան պատերազմը, ավերիչ երկրաշարժը իրենց կնիքը դրեցին մարդկանց հոգեբանության վրա: Քաղաքը «կորցրեց» իր պատմությունը թե՛ գաղափարական և թե՛ նյութատեխնիկական առումով. խզվեց կապը անցյալի ու ներկայի միջև: Իրականությունը բաժանվեց երկու մասի՝ երկրաշարժից առաջ և հետո, ինչպես կասեր Բողլերը՝ «հինը դեռ չէր ավարտվել, իսկ նորը դեռ չէր սկսվել»<sup>1</sup>: Շատերը, հայտնվելով երկու արժեհամակարգերի միջև, կորցնում էին իրենց դեմքն ու հանձնվում ճակատագրի քմահաճույքին: Արվեստագետները, ընդհակառակը, փորձում էին կռիվ տալ ժամանակի ու հանգամանքների հետ՝ բացահայտելով նոր ժամանակների գաղափարները, թաքնված իմաստները, առանձնահատկությունները. նրանք իրենց արվեստով ուղիներ էին հարթում նոր գաղափարների հաստատման համար:

Նման արվեստագետներից էր քանդակագործ Ալբերտ Վարդանյանը, որն ունի անկրկնելի ձեռագիր, մնայուն տեղ ու ինքնատիպ դիմագիծ: Նրա քանդակները ծնվում են ավանդականի ու ժամանակակցի, արևմտյանի և արևելյանի, ազգային ու համամարդկային արժեքների համադրումից ու խաչաձևումից: Ապրելով ու ստեղծագործելով Գյումրիում՝ Վարդանյանը ընդունված է արտերկրում. նրա գործերը զարդարում են շատ հայտնի հավաքածուներ ու թանգարաններ: Վարդանյանը որոնող ստեղծագործող է, որի արտահայտչամիջոցները մշտապես ենթարկվում են փոխակերպումների: Նա օժտված է ժամանակի սուր զգացողությամբ ու կարողանում է այն ենթարկել իր գաղափարներին ու նպատակներին:

Վարդանյանը ծնվել է 1954 թվականի մարտի 18-ին Լենինականում, ու թեև նրա ընտանիքում չկային արվեստագետներ, սակայն հետաքրքրությունը կյանքի առեղծվածի հանդեպ, թաքնված ձևերի որոնումը արյան մեջ են: Հասարակ իրերի ու երևույթների մեջ կյանքի գեղեցկությունը տեսնելու ու ամեն ինչում խոր իմաստ որոնելու սովորությունները տարբերում էին Վարդանյանին ի սկզբանե: Նրա կայացման գործում կարևոր դերակատարություն ունեցավ Գյումրին՝ յուրօրինակ մարդկանցով ու անկրկնելի միջավայրով: Իր տված հարցազրույցներից մեկում քանդակագործը խոստովանել է, որ տեսալով ու մարդկային նկարագրով պարտական է իր հայրենի քաղաքին, որը անսպառ սնուցող աղբյուր է

<sup>1</sup> <http://www.arteria.am/hy/1328187975>

հանդիսացել իր ստեղծագործությունների համար, ձևավորել աշխարհայացքն ու մտածողությունը:

Վարդանյանի՝ չափերով ոչ մեծ քանդակները մոնումենտալ են, ամբողջական: Նրա ստեղծագործությունը սնվելով ազգային ակունքներից՝ շոշափում է համամարդկային գաղափարներ՝ սեր, ատելություն, քաղաքակրթական զարգացումներ, խաղաղություն, ցավ, տառապանք՝ հասկանալի բոլորին ու յուրաքանչյուրին: Պատճառը թեմաների ընտրության մեջ է, որոնք չեն սահմանափակվում տարածությամբ ու ժամանակով: «Ասպետների», «Տոտեմների» շարքերում, «Պուլսարում» Վարդանյանն օգտագործում է սիմվոլիկ արտահայտչամիջոցներ՝ համադրելով պլաստիկ լուծումներին: Վարդանյանի քանդակները կատարված են մոդեռն ոճով: Որոշ դեպքերում գործերը թողնում են անավարտի տպավորություն /նոն ֆինիտո/՝ թույլ տալով դիտողին մտովի զարգացնելու և դառնալու հեղինակի համախոհն ու գաղափարակիցը:

Արարչագործությունը Վարդանյանի համար կախարդանքի ձև է, մոգություն, երբ բլթբլթացող բրոնզի անշունչ հեղուկը ստեղծագործական պրոցեսի արդյունքում ստանում է ձև, իմաստ, բովանդակություն: Ձև, որի մեջ ներթափանցում է բովանդակություն, կամ էլ հակառակը՝ բովանդակությունը հուշում է արտաքին ձևը: Արարչագործությունը տեղի է ունենում արարչի ենթագիտակցությունում և արվեստագետի մատների հպումից ստեղծված մտքերի, հույզերի, ժամանակի, ապրած կյանքի սուբլիմավորված ամբողջությունն է: Արարման ընթացքում արվեստագետը կոչված է լուծելու նաև բազում տեխնիկական խնդիրներ: Չէ՞ որ հանդիսատեսին չեն հետաքրքրում հեղինակի «որոնումը», թափած ջանքերը: Նրան հետաքրքրում է լոկ հայտնագործությունը, վերջնարդյունքը՝ որոշակի ձևի ու իմաստի ամբողջությունը: Եվ կարևոր չէ, թե ինչ չափերի է ու որ նյութից է ստեղծագործությունը: Կարևոր են նրա ներգործությունը, ներքին ուժն ու ասելիքը: Արվեստագետին Վարդանյանը համարում է դեսպան, որին տրված է ընդլայնելու երկրի սահմանները, ճանաչելի դարձնելու փոքր հայրենիքը մեծ աշխարհում: Որքան արվեստագետը մաքսիմալիստ է, որոնող, կատարյալին ձգտող, այնքան շատ մարդկանց է տանում իր հետևից, վարակում իր հեքիաթով: Վարդանյանին հաջողվել է գտնել իր համախոհներին ու վարակել իր հեքիաթով...

1988 թվականի ավերիչ երկրաշարժը, երբ Լենինականը/Գյումրին վերածել էր ավերակների, խաթարել բնականոն կյանքը, շատ արվեստագետներ գերադասեցին հեռանալ երկրից, աշխատել ու ստեղծագործել ապահով պայմաններում հայրենիքից հեռու: Վարդանյանը, որն ուներ բազում հնարավորություններ ու կապեր, գերադասեց մնալ ու վերակենդանացնել հայրենի քաղաքը: 1996

թվականին մի խումբ գյումրեցի նկարիչների՝ Համբարձում Ղուկասյանի, Վահան Թոփչյանի, Գարիկ Մանուկյանի, Վալերի Խաչատրյանի հետ, Ալբերտ Վարդանյանը ձեռնամուխ եղավ նախկին Մանկավարժական ինստիտուտի /ներկայիս՝ Տեխնոպարկի/ հետնամասում գտնվող «Նկարիչ» սրճարանի ձևավորմանը: Ինստիտուտի շենքի պատուհանները, որ երկաթի կտորներով փակված էին աղետից հետո, փոքր-ինչ ուղղելուց հետո սկսեցին նկարել: Ժողովուրդը մեծ հետաքրքրությամբ հետևում էր նրանց. հանրայնացման առաջին փորձերից է վիրավոր քաղաքում: Սրճարանը այդ նույն ժամանակ վերաբացվեց: Դա նկարիչների ուղերձն էր քաղաքին՝ «Կյանքը շարունակվում է»...

Արվեստի հանրայնացման գործողություններից էր նաև «Վիրահատական միջամտություն» քանդակ-խստալյացիան: Վարպետաց փողոցում գտնվող ճարտարապետական կառույցներից մեկը երկրաշարժին ճեղքվել էր: Վարդանյանը ուղղակի միջամտությամբ վերականգնում է վնասված պատը՝ «կարկատելով» երկաթե «թելերով»: Փոխելով «քանդակ» հասկացությունը /ուղղակի միջամտությամբ, այն է՝ վիրահատելով պայմանականորեն բուժել քաղաքի վերքերը/, քանդակագործը անդրադառնում է արվեստի ներքին, թաքնված ներուժին. չէ՞ որ իրական արվեստն ի գործ է իրականացնելու արվեստում սուբլիմավորված իմաստները... Այս գաղափարների կյանքի կոչելը, ինչպես նաև մանր պլաստիկայի այլ նմուշներ հնարավորություն են տալիս Վարդանյանին համարելու Գյումրու ժամանակակից արվեստի հիմնադիրներից ու վառ ներկայացուցիչներից մեկը:



«Ջրահարս»



«Ասպետ» շարքից

«Ասպետներ» շարքը ստեղծվել է 1990-ական թվականներին, երբ քաղաքը դեռ գտնվում էր ավերակների մեջ. կային հազարավոր զոհեր, մարդիկ կորցրել

էին հավատը ապագայի նկատմամբ... Մարդկանց պատկերացմամբ՝ հարկավոր էր որևէ ասպետի (սրբի) կերպար, որ կկարողանար ժողովրդին դուրս բերել փակուղուց, հոգևոր և նյութական ճգնաժամից: Թե ինչպիսին էր նա, ոչ ոք չգիտեր: Վարդանյանը տալիս է նրա սիմվոլը՝ ատրիբուտը՝ զրահի տեսքով: Դա յուրօրինակ առաջնորդի որոնում էր, որ վարակել էր քաղաքի լավագույն արվեստագետներին: Պատահական չէ, որ ասպետի թեմային նույն ժամանակահատվածում անդրադառնում են գյումրեցի մյուս նկարիչները՝ Համբարձում Ղուկասյանը, Գևորգ Սարգսյանը և այլք:

Բրոնզաձույլ «Պուլսարը», որը նա արարել է 2006 թվականին Գերմանիայի Բոխում քաղաքի համար, այժմ գտնվում է «Քրիստոս» եկեղեցու բակում, Վարդանյանի գլուխգործոցն է, սիմվոլիկ պատկերացումների հանրագումարը: «Պուլսարը» ունի ձվի ուրվագիծ, միևնույն ժամանակ այն կրում է մեզալիթյան «ծակ քարի» գաղափարը՝ երկու դեպքում էլ խորհրդանշելով կյանքի սկզբնավորում, ծնունդ: «Ծակ քարը» հայկական հնագույն հավատալիքների մեջ օժտված է մոգական ուժով և զուգորդվում է անպտուղ կնոջը զավակ պարգևելու, հիվանդին բուժելու, վերակենդանության ու վերածնության գաղափարներին: Բրոնզե կոթողի վրա դաջված են տարբեր քաղաքակրթությունների հետքերն ու մարդկային արարչագործության պատմությունը՝ Էյֆելյան աշտարակի, Կոլիզեոմ ամֆիթատրոնի, Չինական պարսպի, տարբեր այբուբենների, Մեծամորից հայտնաբերված տիեզերքի մանրակերտի, հունական սափորանկարչության, երաժշտական նոտաների, ֆիզիկայի բանաձևերի, Չվարթնոցի տաճարի հատակագծի ու գյումրեցի վարպետի շողուլի և այլ պատկերների միջոցով: Վարդանյանը գովերգում է մարդու արարելու, տիեզերքի բարձունքները հասնելու ու օվկիանոսների խորքերը ներթափանցելու կարողությունը: Փառաբանելով տարբեր քաղաքակրթությունների թողած արժեքավորն ու մնայունը՝ նա խոսում է նաև մարդու կործանարար գործունեության մասին, որը ակնարկվում է «Պուլսարի» մեջ մխրճված սեպերի միջոցով: Սեպեր, որոնք խաթարում են կյանքի պատմությունը՝ հիշեցնելով խաչելություն, պատերազմներ, մարդածին արհավիրքներ: «Պուլսարի» պատկերագրությունը միևնույն ժամանակ խորհրդանշում է նաև Քրիստոսի կյանքի փուլերը՝ ծնունդ /ձու/, մկրտություն /ծակ քար/, խաչելություն/ խաչով սեպեր/, հարություն...



«Տոտեն» շարքից

**Եզրահանգում.** Ո՞րն է այսօր այն նորը, որը բազմաթիվ ու բազմապիսի նորերի մեջ ավելի «նոր» է ու հավակնում է կոչվելու «ժամանակակից»: Վարդանյանն ունի հետևյալ բանաձևը. «Առաջ գնալու համար հարկավոր է հետ նայել, նորը որոնել հին քաղաքակրթական դաշտում»: Չափերով ոչ մեծ «Տոտենների» շարքը օժտված է մոնումենտալությամբ, հզոր արտահայտչականությամբ: Դարեր ու հազարամյակներ են բաժանում վիշապաքարերը, մեգալիթյան հուշարձանները Վարդանյանի «Տոտեններից», սակայն դրանք նույն սակրալ մտածողության դրսևորումներն են: Լույս ու ստվերի յուրօրինակ խաղի, շարժման, սիմվոլի միջոցով քանդակագործը արժևորում է ավանդույթը, նոր կյանք հաղորդում մոռացված նախնիների ուժին ու զորությանը: Մի՞թե սրանում չէ արվեստի առեղծվածը...

## АЛЬБЕРТ ВАРДАНИЯН: ИСТОРИЯ СОЗИДАНИЯ

*Маркарян А. В.*

**Ключевые слова:** *гюмрийский скульптор, «Пульсар», бронзовые скульптуры, скульптуры-инсталляции, «Хирургическое вмешательство», современное искусство, «Тотемы», серия «Рыцарь», стиль модерна, non finito.*

В статье рассматривается яркое и самобытное творчество представителя 1980-ых, гюмрийского скульптора Альберта Варданяна, его неповторимый почерк и стилистические особенности в искусстве. Его скульптуры являются синтезом традиционного и современного, западного и восточного, национального и общечеловеческого. Его можно считать основоположником современного искусства Гюмри, кто после землетрясения сделал первые шаги для создания и распространения современ-

ного искусства. Даже небольшие по размерам скульптурки монументальны и целостны. Скульптор питаясь национальными истоками затрагивает общечеловеческие темы любви, ненависти, мира, страдания, понятные всем и каждому. Причина кроется в избираемых автором темах, которые не ограничиваются временем и пространством. Шедевром является бронзовая скульптура «Пульсар», который является синтезом символического самовыражения автора.

## ALBERT VARDANYAN: HISTORY OF CREATION

*Markaryan A.V.*

**Key words:** *Gyumri dweller sculptor, "Pulsar," bronze cast, sculpture-installation, "Surgery," contemporary art, "Totems," "Knights" series, modern style, non-finito.*

The article depicts an outstanding representative of the 1980<sup>th</sup> generation, the unique and brilliant art of the Gyumri dweller sculptor Albert Vardanyan, his unparalleled handwriting and stylistic singularity. His sculptural work is a unique blend of traditional and contemporary, western and oriental, national and international values. Mr.Vardanyan can be truly considered as one of the founders of modern art of Gyumri and who made his first steps in the post-earthquake city for art publicization. His small-sized sculptures are monumental and integral. The sculptor's works, being nurtured by national sources, touch upon the universal concepts, i.e. love, hatred, civilization developments, peace, pain, suffering comprehensible to all and everyone. The reason is in the choice of topics not limited by space and time. The bronze cast "Pulsar" is Vardanyan's masterpiece, the constellation of symbolic perceptions.

## References

1. Ode auf den Frieden "Pulsar","Tigran Mets" hrat.,Yerevan,2006 (In Germany/In Armenian).
2. Place of statue Albert Vardanyan, "Printinfo"hrat.,Armenia, 2004 (In Armenian/In English).
3. Rosa Hovhannisyanyan "Pulsar"-i babakhagrow, // "Ekhegan pokh", 2006 (In Armenian).
4. Arax Margaryan, Shirak ashkharhi stekhcagorcokhner, Yerevan,2016 (In Armenian).
5. <http://www.arteria.am/hy/1328187975>

*Ընդունվել է՝ 27.06.2020*

*Գրախոսվել է՝ 11.08.2020*

*Հանձնվել է տպ.՝ 20.11.2020*

## Տեղեկություններ հեղինակի մասին

Արաքս ՄԱՐԳԱՐՅԱՆ՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ

ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղի կերպարվեստի տեսության ամբիոնի վարիչ,

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի դասախոս

Էլ. հասցե՝ [araxmargaryan@gmail.com](mailto:araxmargaryan@gmail.com)

ՀՏԴ՝ 811.19

ԶԵՂՉՈՒՍԸ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՐԵՔ ՓՈՒԼԵՐՈՒՄ

*Գուրգեն Խաչատրյան*

Վանաձորի Հովհ. Թումանյանի անվ. պետական համալսարան

*Բանալի բառեր՝ զեղչում, նախադասության անդամ, նախադասության հարակից անդամ, նույնական և ոչ նույնական, լրիվ զեղչում, մասնակի զեղչում, գրաբար, միջին հայերեն, արևելահայերեն, արևմտահայերեն:*

Խնդրո առարկա թեման ցայսօր համակողմանի ուսումնասիրության չի ենթարկվել, սակայն մի շարք աշխատություններում տեղ են գտել գրաբարին, միջին և նոր գրական հայերեններին վերաբերող քննություններ ու դիտարկումներ<sup>1</sup>: Այս հոդվածում համադրության, համեմատության և նկարագրական մեթոդներով ուսումնասիրվում են զեղչման հիմնական դրսևորումները գրական հայերենի զարգացման բոլոր փուլերում՝ գրաբարում, միջին գրական հայերենում և նոր

<sup>1</sup> Կարապետյան Լ.Լ., Հովսեփյան Լ.Ս. և ուրիշներ, Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, էջ 143-148, 190: Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն. Ա. և ուրիշներ, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976, էջ 445-458: Բշխանյան Ռ.Ա., Արդի հայերենի շարահյուսություն, Պարզ նախադասություն, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1986, էջ 269-299: Գյուլբուրդյան Ս. Վ., Ժամանակակից հայոց լեզու, Պարզ նախադասություն, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1988, էջ 236-241: Աբրահամյան Ս. Գ., Հայոց լեզու, Շարահյուսություն, Եր., «Լույս» հրատ., 2004, էջ 51-55: Խաչատրյան Գ.Կ., Շահվերդյան Թ.Ս. և ուրիշներ, Գրական հայերենի պատմության դասընթաց, հ. Բ, Շարահյուսություն, Եր., «Արման Ասմանգուլյան» հրատ., 2018, էջ 172-179, որտեղ տողերիս հեղինակն անդրադարձել է գրաբարի, միջին գրական հայերենի և արևելահայերենի խնդրո առարկա իրողություններին:

գրական հայերենի երկու ճյուղերում՝ արևելահայերենում ու արևմտահայերենում<sup>2</sup>:

**Նախաբան.** Զեղչումը քերականական այն իրողությունն է, որի կիրառմամբ ձևավորվում են արտահայտության պլանում ոչ ամբողջական (թերի), իսկ բովանդակության պլանում ամբողջական նախադասություններ: Զեղչմամբ կատարվում են ոչ միայն ժամանակի, մարդկային ջանքի, նյութի և այլ տնտեսումներ, այլև կարելի է հետապնդել խոսքի ոճավորման նպատակ:

Զեղչումը բնորոշ է գրական հայերենի երեք շրջաններին, որտեղ զեղչվում են թե՛ ամբողջական նախադասություններ, թե՛ նախադասությունների առանձին հատվածներ, թե՛ գլխավոր ու երկրորդական անդամներ և վերջիններիս բաղադրիչներ, թե՛ նախադասության հարակից անդամներ, անգամ՝ որոշ հնչյուններ: Նախադասություններն ու նրա առանձին հատվածները (երկանդամ և բազմանդամ բառակապակցություններ և այլն) սովորաբար զեղչվում են բարդ կառույցների կազմում: Նախադասության բուն և հարակից անդամները կարող են զեղչվել թե՛ պարզ նախադասություններում, թե՛ բարդ կառույցներում: Հնչյունների զեղչումը կատարվում է նախադասության բուն և հարակից անդամների կազմում: Ասվածը նշանակում է՝ բարդ նախադասություններն այն կառույցներն են, որոնցում կարող է ի հայտ գալ զեղչման համալիր պատկերը:

Զեղչում կարող է կատարվել բոլոր այն դեպքերում, երբ վերոնշյալ միավորները շարահյուսական միևնույն կամ տարբեր գործառույթներով բառային արտահայտություն ունեն *նույն, նախորդ կամ հաջորդ որևէ նախադասության կազմում*<sup>3</sup>, իսկ եթե անգամ բառային արտահայտություն չունեն, ապա խոսքային տվյալ իրադրության բովանդակության պլանում ենթադրվում են: Այսպես՝ միջինհայերենյան «Ժողովեցան դատաւորքն...: Եւ ի վերայ այսր բանին խորհուրդ առին եւ քննութեամբ այդպէս հաստատեցին ի մէջ կնոջ եւ ի մէջ զաւակաց ողորմած հոգուն» (Կ-Պ) կից կառույցներից առաջինի բառային-քերականական

<sup>2</sup> Առաջիկա շարադրանքում զեղչված լեզվական միավորները բերվում են ուղղանկյուն փակագծերում:

<sup>3</sup> Երբեմն զեղչված միավոր(ներ)ը և վերջին(ներ)ին՝ խոսքի նախորդ հատվածում քերականական արտահայտություն ունեցող համարժեք(ներ)ը կարող են միմյանցից ընդմիջարկված լինել մեկ կամ մի քանի անկախ նախադասություններով, որոնք խոսքում ներդրյալ շարահյուսական միավորների տպավորություն են ստեղծում: Օրինակ՝ Ամենքն ալ տարեց էին: Երկրաբանական հին շրջաններուն կազմված կարգով քարայրներեն մեկուն առաջքը տարածած էին օթոցները, ու ծալլապատիկ, շուրջանակի նստած էին: *Հաճի Ներսես աղան առտուն կանուխ ծառան դրկա ծ, կարգադրություններ ընել տված էր: Իր ու գյուղին աղաներուն արբանյակը՝ երկայն Այիքսանն ալ խոհարար կարգած էր: Բեմկիներու ու հունապենիներու մացառուտքին մոտ օձախները շինած էին անոնք, ու սաներուն մեջ կերակուրները կեփեին: Մուխերը քարայրներեն վեր կբարձրանային ու, ուղղությունին փոխելով, գետին դեմի ափի այգիներուն վրա կտատանեին:* Օղիով սկսան (ՄԼՁ):

արտահայտություն ունեցող ենթական [*դատաւորքն*] հաջորդ բարդ կառույցի երկու նախադասություններում զեղչվել է ենթադրվելու պատճառով: Մինչդեռ «Տեսայ իմ հոգոյս հոգին՝ Ջարդարած ու բաղնէլուայ» (Հ) նախադասության մեջ ենթական բառային արտահայտություն չունի, բայց այդ նախադասության, մասնավորապես ստորոգյալի (*տեսայ*) արտահայտության և բովանդակության պլաններից էլնելով՝ այն կարելի է վերականգնել [*ես*]:

Գրական հայերենի բոլոր շրջաններում առավել հաճախ զեղչվում են նախադասության անդամները, մասնավորապես՝ գլխավորները: Նմանատիպ կառույցներում, զեղչված անդամ(ներ)ին զուգահեռ, հաճախ հանդես են գալիս ընդհանուր անդամներ<sup>4</sup>: Ընդհանուր և զեղչված անդամները կարող են ունենալ բառային-քերականական միևնույն կամ տարբեր արտահայտությունները և հանդես գալ միևնույն կամ տարբեր շարահյուսական գործառույթներով: Ըստ այդմ՝ ընդհանուր և զեղչված անդամները՝

1. նույնական են, երբ նույն կամ տարբեր կառույցներում և՛ իմաստային պլանում են նույնը (ցույց են տալիս նույն առարկան), և՛ ունեն խոսքիմասային պատկանելության, ձևաբանական արտահայտության ու շարահյուսական գործառույթի նույնություն: Այսպես՝ միջինհայերենյան «Իմ եարն ինձի դէմ դիպաւ, Գլխարկովըն զիս ծածկեց» (Հ) բարդ կառույցի առաջին նախադասության *իմ եարն* և երկրորդ նախադասության զեղչված անդամները [*իմ եարն*] նույնական են, քանի որ երկուսն էլ արտահայտված են նույն խոսքի մասերի, համապատասխանաբար, սեռական և ուղղական հոլովներով (կատարում են, համապատասխանաբար, հատկացուցչի ու ենթակայի շարահյուսական գործառույթ):

2. Ոչ նույնական են, երբ նույն կամ տարբեր կառույցներում իմաստով նույնն են, խոսքիմասային պատկանելությամբ կարող են լինել նույնը կամ տարբեր, իսկ ձևաբանորեն և շարահյուսական գործառույթով տարբեր են: Այսպես՝ միջինհայերենյան «Նախ՝ հաստատեցին ի մէջ գաւակաց այսպէս. Որ էլնեն ի այդ տանէն եւ ի բաց կենան իւրեանց մօրու մօտէն» (Կ-Պ) բարդ կառույցի ընդհանուր անդամի (*ի մէջ գաւակաց*) և երկրորդ նախադասության զեղչված անդամի [*գաւակց*] կապը ոչ նույնական է. թեև այդ կապն առկա է շնորհիվ ընդհանուր անդամի (*գաւակ*), սակայն վերջինս տարբեր նախադասություններում ունի ձևաբանական և շարահյուսական տարբեր լուծումներ (համապատասխանաբար, սեռական հոլովով կապվող բառ և ուղղական հոլովով ենթակա):

Ոչ նույնական հարաբերության մեջ են նաև միևնույն նախադասության կազմում առկա՝ բառային-քերականական արտահայտություն ունեցող, և զեղչված անդամները, որոնք տարբեր են թե՛ խոսքիմասային պատկանելությամբ, թե՛

<sup>4</sup> Տե՛ս Աբրահամյան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 253:

ձևաբանորեն (արտահայտության պլանով) և թե՛ շարահյուսական գործառույթով: Նրանք ունեն միայն քերականական կարգերի նույնություն: Այսպես՝ միջինհայերենյան «Իմ սիրտս է պատառ մի միս, Քո սիրուն ինչպե՞ս դիմանամ» (Հ) կառույցի երկրորդ նախադասության առկա ստորոգյալի (*դիմանամ*) և զեղչված ենթակայի [*էս*] միջև գոյություն ունի ոչ նույնական հարաբերություն, քանի որ՝ ա) արտահայտված են տարբեր խոսքի մասերով, բ) մեկը բայի թեք ձևով է արտահայտված, իսկ մյուսը՝ գոյականի ուղղական հոլովով, գ) մեկը ստորոգյալի գործառույթ ունի, մյուսը՝ ենթակայի, դ) և միայն դեմքի ու թվի քերականական կարգերն են նույնը:

Զեղչված միավոր(ներ)ի և դրանց՝ խոսքի նախորդ կամ հաջորդ հատվածում քերականական արտահայտություն ունեցող (կամ չունեցող) համարժեք(ներ)ի ուսումնասիրությունից պարզվում է, որ բովանդակության պլանում դրանց միջև առկա է թվային համապատասխանություն<sup>5</sup>. Եզակի թվով զեղչված անդամին համապատասխանում է եզակի համարժեք անդամ (առկա կամ զեղչված), իսկ հոգնակի թվով զեղչված անդամին՝ հոգնակի կամ մեկից ավելի համարժեք անդամներ (առկա կամ զեղչված): Այսպես՝ արևմտահայերեն

«–Կերևա թե՛ կովուն ցավերը շատցան, – ըսավ կեսուրը, հարսին հասակին նայելով, – մինչև իրիկուն կըլլա որ՝ [կովը] կծնի» (ՄՆԶ) կառույցի [կովը] զեղչված անդամին համապատասխանում է *կովուն* առկա անդամը: «– Խաթումամ, *Խորո աղբարս* Սերոյենց կալին տակը ճնճուկ բռնել գնաց,– ըսավ աղջնակը: –Ալ ի՞նչ հոգ ունինք որ,– հարեց պառավը,– [Խորոյին] ոտքերը չարոխ չկա, ... [Խորո] հիմա ալ ելեր՝ ճնճուկ բռնել կերթա...» (ՄՆԶ) կառույցի [Խորոյին]/[Խորո] զեղչված անդամին համապատասխանում է *Խորո* առկա անդամը: «Ու չգիտես՝ զայրանում է [*հին որսորդը*], թե ժպտում հին որսորդը...» (ԱԲ) կառույցի [*հին որսորդը*] զեղչված անդամներին համապատասխանում են [հին որսորդը] առկա անդամները: «[դու] Ինչո՞ւ [իմ] քովս եկար, կուզե՞ս, որ մեկը վրա գա, քեզ տեսնեն ու [մենք//ես և դու] ամենուն բերանը ինկնանք» (ՄՆԶ) կառույցի [մենք//ես և դու] զեղչված անդամին համապատասխանում են [դու] և [իմ] զեղչված համարժեք անդամները, ինչպես հետևյալ կառույցում՝ [ես] զեղչված և *քեզ հետ* առկա համարժեք անդամները՝ «... [ես] քեզ հետ եմ, [մենք//ես և դու] ջերմում ու մրսում ենք» (ՊՄ) և այլն:

Գրական հայերենի երեք փուլերում զեղչման հետևանքով առաջանում են կազմությամբ թերի, բովանդակությամբ ամբողջական նախադասություններ, որոնք, ըստ գործածության, լինում են *անկախ* կամ *կախյալ*:

<sup>5</sup> Նշված համապատասխանությունն էապես տարբերվում է թվի քերականական կարգով տեղի ունեցող համաձայնությունից:

1. Անկախ են կառուցվածքով պարզ և ինքնուրույն գործածություն ունեցող թերի նախադասությունները: Օրինակներ՝

Գրաբարից՝ Ահա [էս] նշանագրեցի յայսմ եւթն յեղանակիս (ԵՂ): Ունէին [նոքա] եւ զանթիւ կարասի զանձուցն առաջի թագաւորին (ՓԲ):

Միջին հայերենից՝ Տարին տասներկու ամիս [ես] Կու տապիմ ի մեջ զնտանիս (Հ): Այսպես [ես] ճանչցա Ալբանիան (ԱՍ):

Արևելահայերենից՝ Ու Կարինէ Քոթանճյանին անգամ չասած մնաս բարով՝ [ես] Անց եմ կենում հիմա օտար քաղաքների ճանապարհով (ԵՉ): Քեզ այս ձևով ունենալու-չունենալու պատճառով [ես] Կորցրել եմ ունեցածս՝ հպարտությունս հաղթողի (ՊՍ):

Արևմտահայերենից՝ Այո՛ ըսել կուզեր [հարսը] (ՄՆՁ): Նախ [մենք] բան մը ունինք ճշտելիք (ՏՉ): [ես] Այնքա՛ն կփափագեի տեսնել անգամ մը քաղցր ու հանդարտ ծովակը (ՏՉ): [ես] Կզարմանամ քեզի (ԼՇ):<sup>6</sup>

2. Կախյալ թերի նախադասությունները հանդես են գալիս բարդ նախադասությունների կազմում, ինչպես նաև երկխոսություններում: Օրինակներ՝

Գրաբարից՝ Իբրեւ [Զրուան] ծնաւ զմես եւս որդի, [նա] անուանեաց զնա Որմիզդ. [նա] եհան զթագաւորութիւն յԱրհմնէ (ԵՂ): Ապա հարցանէր թագաւորն Պարսից Շապուհ [ցՎասակ] եւ ասէ [Շապուհ ցնա]. Աղէ՛՛ [դու] տուր ինձ զիտել... (ՓԲ):

Միջին հայերենից՝ «...եթէ զառաջնորդն մեր հայիոյեցին նոքա՛ կունդ եւ քաչալ անուն տային [նոքա նմա], [դու] հարկ եւ խարաճ դիր ի վերայ քրիստոնէից, զի [նոքա] ուրանան զՅիսուս եւ [նոքա] դարձցին յանօրէն օրէնքս մեր» (ԹՄ): Եկաւ Աննա Խաղունն. որ կոչի Յեօլպէին Մխիթարին որդուն կողակիցին. եւ եբեր [Աննա Խաղունն] զիր կտակն. որ գրել էր [նա] իւր յօժար կաման (Կ-Պ):

Արևելահայերենից՝ [ես] Քեզ հետ եմ. [մենք] ջերմում [ենք] ու մրսում ենք (ՊՍ): Որբացած հոգիս ողջունում է քեզ, .... Դյութական ձայնով [որբացած հոգիս] կանչում է [քեզ] հանդես (ՀԹ):

Արևմտահայերենից՝ Յերեկ մը ջաղացքը ադոն չկար, աշնանավերջի արևին մեջ, մինակը, դուռը նստեր էր, կռնակը պատին տվեր [էջ]՝ կմրափեր (ՄՆՁ): Փոքրիկը ուղղեց, ըսավ թե՛՛ այս գիշեր պիտի չդառնա իր հայրիկը, հոն պիտի պառկի [իր հայրիկը] (ՄՆՁ): Չէ՞ որ բնութենեն հեզ է քու հոգիդ և սիրտդ բարի [է] (ԼՇ):

<sup>6</sup> Արևմտահայերենից քաղված օրինակները բերում ենք՝ պահպանելով բնագրերի ուղղագրությունը:

Գրական հայերենի երեք փուլերում և՛ նախադասությունների, և՛ նախադասության անդամների ու հարակից միավորների կազմում կատարվել և կատարվում է՝ ա) *լրիվ* կամ բ) *մասնակի* զեղչում<sup>7</sup>:

1. Լրիվ կարող են զեղչվել, օրինակ, երկխոսություններում պարտադիր բաղադրիչ համարվող գերադաս նախադասությունները՝ հեղինակային խոսքերը: Օրինակներ՝

Արևելահայերենից՝

— Դո՛ւ էիր հանցավորը, Գո՛՛ն, ինչպե՛ս կարողացար լոկ ենթադրության վրա հիմնված, թագուհու ներկայությամբ ասել, թե կաթողիկոսը փախչում է Այրիվանքից ... [- ասաց մայրը որդուն]:

— Ենթադրության վրա չէի հիմնված, մայրի՛կ, այլ իսկության, - ընդհատեց Գոռը ... (Ս):

Արևմտահայերենից՝

— Ինչո՞ւ աքլորը վար ձգեցիր,- պոռաց Մխսին՝ ձեռքը ոտքը դող ելած:

— Ինչո՞ւ պատիս վրա կթառի [- հարցուց Մնուշ Մխսիին]:

— Պիտի թառի [- պատասխանեց Մխսին Մնուշին] .... (ՀԱՍ):

Լրիվ զեղչվում են նաև բարդ կառույցով արտահայտված մեջբերվող ուղղակի խոսքի գլխավոր կամ երկրորդական նախադասությունները<sup>8</sup>:

Օրինակներ՝

Արևելահայերենից՝

— Ինչո՞ւ ես շտապում:

— [Շտապում եմ,] Որպեսզի ժամանակին տուն հասնեմ<sup>9</sup>:

Արևմտահայերենից՝

— Ինչո՞ւ չմնացիք Հայաստանում:

— [Չմնացինք Հայաստան, որովհետև] Համայնավարները չենք սիրեր (ՎՇ):

— Քանի՞ օր մնալու էք Թիֆլիս:

— Չեմ գիտեր ... (ՎՇ):

2. Նախադասությունների մասնակի զեղչման դեպքում բառային արտահայտություն չունեն մեկ կամ մի քանի բուն կամ հարակից անդամներ: Մասնակի զեղչում կարող է կատարվել և՛ պարզ, և՛ բարդ նախադասություններում, այդ թվում՝ երկխոսություններում, ինչպես՝

— ....

<sup>7</sup> *Լրիվ զեղչում* և *մասնակի զեղչում* տերմինների մասին տե՛ս Գարսպետյան Լ.Լ., Հովսեփյան Լ.Ս. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 145:

<sup>8</sup> Հմմտ. Աբրահամյան Ս. Գ., էջ 54:

<sup>9</sup> Այլ մոտեցմամբ սա կարելի է համարել բարդ ստորադասական կառույցի մասնակի զեղչում:

- [ես] Ենթադրության վրա չէի հիմնված, մայրի՛կ, այլ [ես] իսկության [վրա էի հիմնված], - ընդհատեց Գոռը [մոր խոսքը]:
- [դու] Իսկության<sup>10</sup> [վրա էիր հիմնված]. ինչպե՞ս [էիր դու իսկության վրա հիմնված]:
- Այո՛, ճշմարտությունը ես ծածկեցի թագուհուց, որովհետև [ես] չէի կամենում անհանգստացնել նրան:
- Ի՞նչ ճշմարտություն [դու ծածկեցիր թագուհուց]:
- Այն [ճշմարտությունը ես ծածկեցի թագուհուց], որ շուտով մեր լեռների վրա հարձակում կլինի.... (Մ):

Նախադասության անդամների մասնակի զեղչումը տեսականորեն կարող է վերաբերել նախադասությունից փոքր՝ պարզ, բաղադրյալ կամ վերլուծական կազմությամբ շարահյուսական միավորներին, որոնցից են երկանդամ կամ բազմանդամ կապակցությունները, պարզ և բաղադրյալ ենթակաները, ստորոգյալներն ու խնդիրները, վերլուծական կազմությամբ պարզ ստորոգյալները, օժանդակ բայերը, ինչպես նաև հարակից անդամներ: Ահավասիկ մասնակի զեղչման օրինակներ՝

Գրաբարից՝ Վասն այնորիկ ոչ կամի կեալ եւ [ոչ կամի] զոյս տեսանել (ԱԳ): .... գոր .... ի հնոց ժամանակաց հետէ առ ձեզ Արշակունիս *վաստակեալ եմք, եւ եղեալ [եմք]*<sup>10</sup> զանձինս մեր ի վերայ ձեր (ՓԲ):

Միջին հայերենից՝ Զգիտեմ՝ վարդէ՞ դ առնեմ, Թ՛ [թէ] ռահնէդ, ուր հոտն է անուշ (Հ): Յանկարծ, որ երկուք լինէր՝ Նայ *հան՛ի [հանէի]* զմէկիկն ու *մորթ՛ի [մորթէի]* (Հ): Մահալօքս ի վար *կուզի [կու գայի]* (Հ) և այլն:

Արևելահայերենից՝ Նայում ես և չես կարողանում որոշել՝ ծեր է Ավին, թե դեռ երիտասարդ .... գուցե մարդ չէ, այլ խրտվիլակ [է] (ԱԲ): Ու չգիտես՝ զայրանում է, թե ժպտում [է] հին որսորդը ... (ԱԲ): Օգտատերերի մի մասը բողոքում է սոցցանցերի դանդաղ ներբեռնելուց, [օգտատերերի] մի մասը՝ նամակներ ուղարկելու ժամանակ առաջ եկող խնդիրներից, [օգտատերերի] մի մասն էլ չի կարողանում տեսանյութերը դիտել (ՀՏ):

Արևմտահայերենից՝ Լըճա՛կ, դու ես թագուհիս, Ջի թ՛ [թէ] հովէ մ՛ալ խորշումիս, Դարձյալ խորքիդ մեջ խրոռով Ջ՛իս կը պահես դողդղալով (ՊԴ): Հետեւյալ առտուն .... կառքը երկու կիները Պաղչեճիկեն իջեցուցեր [էր], ծովեզերքը բերեր

<sup>10</sup> Ընդգծված տիպի կառույցների հետագա զեղչումից ձևավորվել են ընդհանուր օժանդակ բայով *յառդեալ եւ ուսեալդ ես* (ԱԳ), *միամտեալ եւ հաւանեալ եւ նուաճեալ էին* (ԱԳ), *զնեալ եւ զգուշացեալ լինի* (ԱԳ) և նմանատիպ կառույցներ, որոնցից *եւ-ի* (ապա նաև *ու-ի*) զեղչման հետևանքով հենց 5-րդ և հետագա դարերում սկսել են կազմվել առավել սերտ կապակցություններ՝ զուգաբայեր՝ *անցեալ եկեալ լինէր* (ԱԳ), *զարմացեալ զարմացեալ եւ*, եւ կարի քաջ (ԱԳ), *դիմեալ եկեալ էր* (ԱԳ), *անկեալ ելեալ էին* (ԱԳ) և այլն:

ձգեր էր (ԳԶ): Ժայռ մ' [ւը] ալ հեռուն, մութին մեջեն կարծես թե Հի՛ն կրոնքի դի-  
ցուհի մ' [ւը] է սրբանվեր (ԱՄ):

Շարահյուսական միավորները սովորաբար զեղչվում են հիշատակված լինելու դեպքում (ավելի հաճախ հիշատակվում են զեղչումից առաջ, երբեմն՝ հե-  
տո), սակայն որոշ միավորներ կարող են զեղչվել նաև առանց նախապես կամ  
հետագայում հիշատակված լինելու: Այսպես՝

1. Ենթական կարող է զեղչվել լրիվ կամ մասնակիորեն:

1.1. Ենթական կարող է լրիվ զեղչվել թե՛ նախապես կամ հետո հիշատակ-  
ված լինելու դեպքում, թե՛ առանց հիշատակված լինելու:

1.1.1. Առաջին դեմքի ենթակաները կարող են զեղչվել թե՛ առանց նախա-  
պես կամ հետագայում հիշատակված լինելու, թե՛ նախապես կամ հետագայում  
հիշատակված լինելով: Օրինակներ՝

Գրաբարով՝ Սորա լինին որդիք երեք եւ դուստր մի, որպէս [եւ] ասացի  
(ՄԻ): Արդ էս արկից գբեզ ի տանջանս եւ [եւ] եդից դանդանաւանդ ի կզակս քո  
(ԱԳ):

Միջին հայերենով՝ Թէ [մենք] ապրինք՝ [մենք] հետրաց ապրինք, Թէ  
[մենք] մեռնինք՝ սերն այլ հերիք է (Հ): Եւ էս գնացի նարա մոտն եւ [եւ] սկսայ  
ասել նմա. թէ ինչ ճուաբ տաս (Կ-Պ):

Արևելահայերենով՝ [մենք] Պարենք մեր անձկացած ու նեղացած հոգում,  
Ինչ ուզում է լինի՝ հերն անիծած (ՊՄ): Նանի՛, ներքում էս մարդիկ տեսա, [եւ]  
Կարծեցի՝ թուրքեր էին լողանում... (ՀԹ):

Արևմտահայերենով՝ – «[մենք] Խըմե՛նք, – ըսավ, – ու տոնենք Արշակունի  
գահերուն Թավալումներն անդունդի և մեղկանքի մեջ փըցուն» (ԴՎ): Ես կհա-  
մակվեի, [եւ] կհափշտակվեի միշտ ալ զգացական այդ դրվագներեն (ՄՆԶ):

1.1.2. Երկրորդ դեմքի ենթակաները նույնպես կարող են զեղչվել և՛ առանց  
նախապես կամ հետագայում հիշատակված լինելու, և՛ նախապես կամ հետա-  
գայում հիշատակված լինելով: Օրինակներ՝

Գրաբարով՝ Եւ ասեր. «Ա՛յ, [դուք] մի՛ լինիք տիրասպանուք» (ՓԲ): Զի դու  
միայն կալոց եւ [դու] մնալոց ես յաւիտեան (ԱԳ):

Միջին հայերենով՝ [դու] Ի Վարագ ի յուխտ կերթաս, Զան առջի ծնրիկն,  
որ [դու] դնես, Թող քեզի դարիմ լինի, Թէ [դու] չասես՝ զով որ [դու] կու սիրես (ՀՕ):  
[դու] Եդիր հետեւող իմաստութեան հետ. Եթէ [դու] չուսանիս՝ [դու] բժիշկ ես ան-  
գետ. Լինիս յո՞ւզ գիտուն, [դու] արա՛ բանիս պետ. Գրոցն անունն է՝ Անգետի ան-  
պետ (ԱԱ):

Արևելահայերենով՝ .... [դու] Գերել ես հայացքով քո անեզր և [դու] կապել  
քո սիրո հմայքին (Դ): - Քու կենտրոնում փոստը յո՞ւ ստացել ես և [դու] տեսել, որ  
մենք դատարանից նամակ ունենք (ՀՄ):

Արևմտահայերենով՝ Օ՛, [դուք] չի սոսկաք, երբ անպատմելի պատմութիւնս ձեզի պատմեմ...(Ս): - [դուն] Ինչո՞ւ քովս եկար (ՄՆՁ): Է, հիմա հավատա՞մ, թե *դուն* վար չիջար, [դուն] չզացիր մոտը (ՄՆՁ):

Նշված ենթականերն առավել հաճախ գեղջվում են երկրորդ դեմքի ստորոգյալով ուղղակի խոսքերում, մասնավորապես՝ կոչականի առկայության դեպքում<sup>11</sup>: Օրինակներ՝

Գրաբարով՝ «Ո՛վ Սողոն, Սողոն, [դու] գեղեցիկս բարբառեցար, ոչ երանել զբարեբախտութիւն մարդոյ մինչեւ ի վախճան» (ՄԽ): Տէ՛ր, [դու] լուր աղօթից իմոց .... (ՍԳ):

Միջին հայերենով՝ – Աղջի՛կ, աղբօրտ արևուն, [դու] Նօշըպէն պտիկ մի ջուր տուր (Հ): .... Լացաւ ու լալով ըսաւ, – Եա՛ր, [դու] զիս խաղք արիր ցորեկով (Հ)<sup>12</sup>:

Արևելահայերենով՝ – Օ՛, Սուլամի՛թա, [դու] բա՛ց արա դուռդ (ՊՍ): – Քամիներ՛ր, [դուք] իջեք, Մազերս [դուք] պոկեք, Ա՛խ, էլ մազերս գուրգուրող չունիմ (ՀԾ):

Արևմտահայերենով՝ Է՛հ, [դուք] մնա՛ք բարով, աստվա՛ծ և արն՛, Որ կ՛պլպլաք իմ գլխուս վերև (ՊԴ): – Օդո՛ւլ,- ըսավ անոր,- Էֆենտիիդ տղան կսիրե կոր քեզի, [դուն] ա՛լ ի՞նչ կ՛ուզես (ԳՁ): — [դուն] Ալութային գոմը ավրլեցի՞ր,— խոսեցավ կեսուրը դադարե մը հետո,— [դուն] մաքիներուն առաջքը ցախ դրի՞ր, որ ուտեն (ՄՆՁ): – Աղջի, օտար տան ցախավել, [դուն] ըսե թե այս գիշեր պիտի չգա,— հծծեց հարսը իր աղջկանը ,- [դուն] խո՞ւլ ես, ինչ ես (ՄՆՁ): – [դուք] Պիտի մսիք,- կրկնեցի,- [դուք] շատ անզգույշ եք, օրիորդ Իոմա (ԱՍ):

1.1.3. Երրորդ դեմքի ենթական սովորաբար գեղջվում է նախապես հիշատակված լինելու դեպքում: Ընդ որում, այն կարող է հիշատակված լինել նույնականորեն (միևնույն խոսքի մասով, միևնույն քերականական ձևով և շարահյուսական միևնույն գործառույթով) կամ ոչ նույնականորեն: Հմմտ. հետևյալ երկուական օրինակները՝

Գրաբարով՝ « .... զքեզ կալցին *քաջք*, տարցին [*քաջք*] յԱզատն ի վեր ի Մասիս .... » (ՄԽ) և Եւ *ղթագաւորն Վարազդատ* հալածեցին ի յերկրէն ի սահմանացն Հայոց. չոգաւ գնաց [*ղթագաւորն Վարազդատ*] ի յերկիրն Յունաց. անդ եկաց [*ղթագաւորն Վարազդատ*] որչափ եւ եկեաց, եւ անդէն մեռաւ [*ղթագաւորն Վարազդատ*] (ՓԲ):

Միջին հայերենով՝ Իմ *եարն* է քարամ արել Ու [*Իմ եարն*] խրկել զմեզ հարցուցել (152) և Եւ տանի ողորմած հոգուն ստացուածոց *տղոց* պաշար, որ [*տղաքն*] առանձին իւրեանց խարճ առնեն (ԿՊ):

<sup>11</sup> Այս փաստը լավագույնս վկայում է ուղղակիորեն մեջբերվող գրավոր և բանավոր խոսքերի սերտ կապի մասին (հմմտ. **Գարապետյան Լ. Լ., Հովսեփյան Լ.Ս. և ուրիշներ**, նշվ. աշխ. էջ 145):

Արևելահայերենով՝ .... *Ոստ ու ճյուղերը* փակում են ճամփադ, Իսկ մթնշաղին կամ աղջամուղջին [*ոստ ու ճյուղերը*] ճանկոտում են դեմքդ, [*ոստ ու ճյուղերը*] Աչքիդ սպառնում (ՊՍ) և Զարհուրանքով կարելի է նայել *նրան*, երբ [*նա*] փողոցի անցուդարձ անողներից պահված, մի անկյունում քաշված, սրանրա համար տրեխ է գործում (ԱԲ):

Արևմտահայերենով՝ Ու խելացնոր այս խեղճ կինը բոլոր սրտերը գոց գտաւ, [կինը] .... Իր Աստուծմէն յոյսը կտրեց եւ [*կինը*] մտածեց թշնամիէն պաղատիլ գայն... [*կինը*] Գնաց անոնց ոտքերն ինկաւ եւ [*կինը*] սուրերնին համբուրեց ... (Ս) և .... Երբոր վերջին ճախրին մեջ Տրդատ բըռնեց [*Նազենիկի*] բազուկեն Եվ ծունկին վրա նըստեցուց [*Նազենիկը*] (ԴՎ)<sup>13</sup>:

Նշեցինք, որ զեղչված անդամը կարող է բառային-քերականական արտահայտություն ունենալ խոսքի կա՛մ նախորդ հատվածում, ինչը սովորական է համարվում, կա՛մ հետագա, ինչը ոչ միշտ է պատահում: Ահա 3-րդ դեմքով ենթակայի՝ խոսքի առաջին, ոչ թե երկրորդ հատվածում զեղչման օրինակներ գրական հայերենի տարբեր փուլերից՝ Եւ իբրեւ եկն թագաւորն Շապուհ յերկիրն Հայոց, սա եթող զկինն իւր եւ փախեաւ: Ապա տարան [*Պարսիկքն*] զՀամագասպուհի յերկիրն Տոսպայ, ի քաղաքն ի Վան, հանեալ կախեցին զնա *Պարսիկքն* զբարձր աշտարակացն (ՓԲ): Մակար զինքն ընդ յինք թողում, Որ երի [*կաշիս*] և սևնա կաշիս (Հ): Ու չգիտես՝ զայրանում է [*հին որսորդը*], թե ժպտում հին որսորդը ... (ԱԲ): [*Մոնան*] Ինչո՞ւ եկավ այգին, արդյոք Սոնան մանկության ատվակի ջրե՞րն էր կարոտել, թե՞ պատահմամբ մոտեցավ հնձանի դոնակին՝ մտածելով, որ ներսն էլ ամայի է, ինչպես այգում (ԱԲ): Թութերուն ծառերը թոթվելու չէին սպասեր: [*թութեր*] Վիասուննային, կթափեին գետին: Նոր *թութեր* կբուսնեին (ՄՆԶ): Երբեմն տունը կը գտնվեր [*Մարտիրոս*] ու մոռցված հանձնարարություն մը լսելու համար Մարտիրոս մինչև հանրմին երանավետ սենյակը կ'ելլեր (ԳԶ):

1.2. Ենթական կարող է զեղչվել նաև մասնակիորեն, եթե կազմությամբ բաղադրյալ է և հաջորդում է նախօրոք հիշատակված բաղադրյալ ենթակայի՝ *Վեցն ի նոցունց* շարժեն զաչսն, և երեքն [*ի նոցունց*] ժողովեն զբարակ ջլացն զտակսն<sup>14</sup>: Հավաքվածներից ոմանք ցուցադրաբար պատռել և գետին են նետել

<sup>13</sup> Չեղչված ենթակայով նախադասությունների հետ չպետք է շփոթել միակազմ նախադասությունները, որոնց ենթական խոսքի ո՛չ նախորդ հատվածում է հիշատակվում, ո՛չ էլ հաջորդ: Օրինակներ միջին հայերենից և արևմտահայերենից՝ Եւ թէ յիմար լինի [բժիշկն]՝ նա լաւն այն է, որ չի տանին առ հիւանդն, եւ ոչ զնա բժիշկ համարին (ԱԱ): Միսերուն տաք ու ախորժաբեր շոգին բարձրացավ ամաններէն: Վարդանին ախորժակը գրգռվեցավ, ու սպասեց, որ աման մըն ալ բերէն, իր առաջքը դնեն, ու՝ կեր ըսեն (ՀՄ): – Գիշերով ելավ գնաց: Ա՛լ չպիտի գար, Դշխուին տունը զնաց, *հոնկն պիտի առնեն ու տանին*, - կըսեր մամը հեկեկալով (ՄՆԶ): — Ինչո՞ւ քովս եկար, կուզե՞ս, որ մեկը վրա գա, *քեզ տեսնեն* ու ամենուն բերանը ինկնանք: Մի կենար, զնա, - ըսավ (ՄՆԶ):

<sup>14</sup> Հմմտ. Վարապետյան Լ. Լ., Հովսեփյան Լ. Ս. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 147:

իրենց մոտ եղած դուլարը, (*հավաքվածներից*) ոմանք էլ դուլարն ու ոսկին փոխանակել են թուրքական լիրայով (ՀՏ): Հոս միայն մեզի համավիճակ եղողներուն տեղն է, ծերունի՛, մեզմէ ոմանք դրամի սիրուն ճշմարտութիւնը աղբանոց նետողներն են, [*մեզմէ*] ոմանք՝ խաթեր համար, իրենց անձնական համոզումէն ու անկախութենէն մաշուած անճարակները (Թ):

2. Ստորոգյալը նույնպէս գեղջվում է լրիվ կամ մասնակիորեն:

2.1. Ստորոգյալը լրիվ գեղջվում է՝

2.1.1. Երբ կազմութեամբ պարզ է՝ արտահայտված համադրական ժամանակաձևով: Օրինակներ՝

Գրաբարով՝ Յետ Արշակայ առնու զթագաւորութիւն նորա Արշական .... ամս երեսուն. ապա [*առնու*] [զթագաւորութիւն նորա] Արշանակ՝ ամս երեսուն եւ մի .... (ՄԽ):

Միջին հայերենով՝ Աբիմելէք .... դատեաց զԲարայէլ ամս երեք. եւ զկնի նորա [*դատեաց*] [զԲարայէլ] Թովղա ամս քսան եւ երկու (ՎՄ):

Արևելահայերենով՝ Դու այսուհետև ժողովվես պիտի Նախ՝ ինքդ քո մեջ Եվ ապա՝ [դու] [*ժողովվես պիտի*] քո շուրջ (ՊՄ):

Արևմտահայերենով՝ .... ո՛չ ինքզինքն ինտոր ուղղելիքը գիտէ և ո՛չ հասնելիք նպատակը [*գիտէ*] (ԱԶ): .... մայրերը հինա կուզեն՝ իրենց մագերը հինայելու, հարսերը [կուզեն]՝ իրենց ձեռքերը հինայելու (ՄՆԶ): Հա՛յ, ես անոնց սուտ հավատը և ծոմոնիկ լեզուն ... [.... ] (ԼԾ): Հեղ մ՛ալ նայեցա՝ նե՛ չպուխ կա, նե՛ Միջո [*կա*] (ՀԱՄ): «Ծո, ջորի, ես քու հոր ... [.... ]», - խոսեցավ վարպետը .... (ՀԱՄ):

2.1.2. Երբ արտահայտված է ասացական բայի համադրական կամ վերլուծական ժամանակաձևով և ուղղակի խոսքին նախորդող հեղինակի խոսքի կազմում է: Օրինակներ՝

Գրաբարով՝ .... որ թէպէտ եւ յուրաստ եղեալ Արտաշեսի [*ասէ*], թէ չէ այդպէս՝ ոչ հաւատացին լսողքն (ՂՓ): Վասն որոյ բազում անգամ ընդդիմանայր նմա եւ յանդիմանէր սուրբն Խաղ եպիսկոպոսն. մանաւանդ յորժամ ստիպէին զնա, [*ասէին*] թէ ե՛կ ուղղեա սեղան յեկեղեցուջն յաւանն յԱրշակաւան (ՓԲ):

Միջին հայերենով՝ Ես ալ ի դէմիկն ելայ, [*կանչեցի*]. – Ո՞ւր կերթաս, քո ժամն է հարամ (Հ): Օրիկ մի չելար, չեկիր, [*չասիր*]. – Ի՞նչ կանես կամ ո՞նց կու լինիս (Հ): Էկան էն դամագ մարդիքն, [*ասին*] Թէ՛ Բե՛ր, զքո ետն մեզ ցըցու (Հ):

Արևելահայերենով՝ Իմ հերը [*հարցրել է*] թե՛ «ինչի՞, այտա, ես տանձի չի՞ր եմ» (ՀՄ): Բորչալու, Վրաստան, ցորնագողի բկից է բռնել, [*ասել է*], թե՛ «էս է կովս, կովս գտա» (ՀՄ): .... Նա էլ [*հարցնում է*] թե՛ «նագա՞ն ես հանում» (ՀՄ)<sup>15</sup>:

<sup>15</sup> Աբրահամյան Ս. Գ., էջ 215:

Արևմտահայերենով՝ — Միսերը թո՞ւլ էին,- [հարցուց Ազիկ]: — Պինդ, ձիգ... վրան ընկույզ կոտրե,- [պատասխանեց Պեկամու]: [Ազիկ] Տեղը փոխեց, ու ավելի լավ իմանալու համար՝ առաջը եկավ, ծունկ-ծունկի նստավ ու տեղացուց հարցումները. — Մինա՞կ էր, մարդ կա՞ր: — Մինա՞կ... մարդ չկար,- [ըսավ Պեկամու]: — Ուրտե՞ղ էր, ուրտե՞ղ, Պեկամու,- [հարցուց Ազիկ]: — Ուրի Ձոր,- [պատասխանեց Պեկամու]... — Ուրի Ձո՞ր... ինչպե՞ս ալ տեղն է եղեր, ճիշտ ալ տեղը,- [ըսավ Ազիկ] (ՄՆՁ):

2.2. Մասնակիորեն գեղջվում են բաղադրյալ և այն պարզ ստորոգյալները, որոնք ունեն վերլուծական կամ բարդ կազմություն, մասնավորապես՝

2.2.1. Վերլուծական ժամանակաձևով արտահայտված պարզ ստորոգյալների օժանդակ բայերը: Օրինակներ՝

Գրաբարով՝ .... Մերուժանն Արծրունի վաղուց եւս .... օրէնս Մազդեզանացն յանձն առեալ էր, եւ ուրացեալ [էր] զհաւատսն քրիստոնէութեան հաւատոց (ՓԲ):

Միջին հայերենով՝ Գլխակս ի վայր եմ դրեր, Այն անուշ քունըն [է] զիս տարեր (Հ): Քանի ես մօրէս ծել [եմ]՝ Նա փատէ խամագ չեմ տեսեր (Հ):

Արևելահայերենով՝ Մեկ օր խմում [ենք] և երկու օր արդեն խումար ենք ընկնում, .... Մեկ ժամ քայլում [ենք] և երկու ժամ խոսում [ենք] դրա օգուտից Կամ վնասից .... (ՊՍ): Շշմած մարդն սթափվում էր, հավաքում [էր] այն, ինչ հանձնում էին՝ ձիու սանձը, չվանները, համետը (ԱԲ):

Արևմտահայերենով՝ .... ու այն պզտիկ, մուրացիկ մանչը .... գուցէ ողջ է ու հասակ նետած [է] (ՎՇ): Երկու օր իս Դպրենց հարսը, մեկ ալ՝ մերերոնց հարսը եկեր [են], ծծցուցեր են (ՄՆՁ): Ուզեցի անպատճառ զինքըն անձամբ ճանչնալ, իր ձեռքը սեղմած, իր հետը խոսած ըլլալ (ԱՉ):

2.2.2. Վերլուծական պատճառական բայերով արտահայտված պարզ ստորոգյալի *տալ* բաղադրիչը: Ահա մեկական օրինակ գրական հայերենի երեք շրջաններից՝ .... եւ ոչ տամ համբուրել քրիստոնէից զկապանս նորա, եւ ոչ [տամ] երկիր պագանել ոսկերաց (ՂՓ): .... եւ ետ բերել նալ ծանրագին եւ բարձրահասակ ի Խլաթայ, եւ [ետ] դնել ի վերայ գմբեթի կաթուղիկէին (ՎԱ): Մայրն այդ բանաստեղծությունը նախ կարդալ տվեց, հետո՝ արտագրել [տվեց]//Մայրն այդ բանաստեղծությունը նախ կարդալ [տվեց], հետո՝ արտագրել տվեց:

2.2.3. Միջին հայերենի սահմանական, ենթադրական և հարկադրական եղանակներով արտահայտված ստորոգյալների *պիտի* (*տի*)<sup>16</sup>, հազվադեպ՝ *կ* (*կր*//*կու*) եղանակիչները՝ Բայց տեսնուլ պիտի եւ փնտոել [պիտի] եւ իմանալ

<sup>16</sup> Բացառիկ դեպքերում հանդիպում է նաև *պի* գեղջված ձևով՝ Եւ ծննդեան կրկին այլ *պի* բերէ եւ տայ ի ձեռն տանուորացն անպատճառ (Կ-Պ):

[*պիտի*] զմտնելոյն, որպէսն ի վարձն ու ի ամէն կերպ (ՄՄԴ): Մեյ մ՛ ալ տուշմանս ուր տեսնիմ, Տի հանիմ չախուեկս ի ճեպէս, *Չախուեկս ի ճեպէս* [*տի*] *հանիմ*, Տի մորթիմ սն ոշխրրի պէս (Հ): Կանանչ ու մօռ կու հագնիս, [*կու*] *Քաս*, ի յիմ դիմացըս [*կու*] *կանգնիս* (Հ): Թէ չէ կսպանէ գթեզ, Արիւնով ձեռովին [*կու*] լուանայ (Հ): Յորժամ աղէկ կին տեսնում, Կու նայիմ և խիստ [*կու*] *ցանկանամ* (Հ): – Ո՛չ կատնեմ ծոցիկս ի քուն, Ո՛չ տէստուր [*կու*] *տամ՝* երթասս ի տուն (Հ):

2.2.4. Արևելահայերենի և արևմտահայերենի *պիտի//պիտ//պետք է//պետք էր* եղանակիչները՝ Պանինի շները պիտի հարձակվելին նրա վրա, [*պիտի*] *հայաձեհն* (ԱԲ): Նա հետո պիտի դառնա պատանի, Ե՛վ երիտասարդ [*պիտի* դառնա], և՛ այր իմաստուն [*պիտի* դառնա], Անբախտ Մարոյին լացով [*պիտի*] *սպանի*, Մեր հառաչանքը [*պիտի*] *հասցընի* Աստծուն (ՊՍ): Կարծես [գիշերը] պիտի գար վրանիս ու [*պիտի*] տապալէր մեզ (ՎՇ): Կարծենար ամենուն, որ իր հարսիկն ալ ուխտ պիտի տաներ զինքը: Իրեն նոր .... տրեխներ պիտի կարեր ու [*պիտի*] հագցնէր իրենց (ՄՆՁ): Ան ատեն խորհեցա, որ պետք էր օգնության հասնիլ մեր տարաբախտ ընկերոջ և [*պետք էր*] թույլ չտալ, որ .... ծեծի ու նախատինքի ենթարկվի (ԵՕ): Բայց չպետք է հուսահատիլ, այլ [*պետք է*] սպասել հոգեբանական բույրին (ԵՕ):

2.2.5. Պարզ ստորոգյալների կազմում հանդես եկող *թող, եկ//եկուր, բեր* և նմանօրինակ եղանակավորիչները: Օրինակներ՝

Գրաբարից՝ .... թող ծառայեսցուք թագաւորին Յունաց, [թող] կացցուք ի հնազանդութեան իշխանութեան թագաւորութեանն Յունաց (ՓԲ): Թող ինքն նախ երթայր և [թող] առնոյր զթագաւորութիւնն (ԵԿ):

Միջին հայերենից՝ Ով որ սպիտակ ծոց ունի, Թող ապրի, [թող] շապիկ հագանի (Հ): Թող մուկն իր կարասն ընկնի, [թող] Կատուն զիր ձկնակն աւիրէ (Հ):

Արևելահայերենից՝ Թող դուք կորչեիք հորթերի տեղակ, [թող] Մի արջ պատահեր, մի գազան, մի գել (ՀԹ): Թող երգեն առաջվա պէս և [թող] ստեղծագործեն, [թող] նոր շենքեր կերտեն (ԱԲ):

Արևմտահայերենից՝ «Ասոնք տանիմ, Ավագանին ձորը պտտցնեմ, թող վագեն, [թող] խաղան, [թող] ձայներնին կտրեն» կխորհի (ՄՆՁ): «Աման, թող մայրը աղէկնա, [թող] ոտքի ելլէ, [թող] տղան ալ մեռնի նը՝ ի՞նչ ընենք. առջինեկ է, թող մայրը նորեն ուրիշ մը բերե» ըսեր են ամենքը (ՄՆՁ): — Հայտի, բան մը պիտի չընեմ քեզի, .... եկուր Բարիկանց ածուքը մտնենք, [եկուր] անոնց մեծ փշատի ծառին տակը նստինք, [եկուր] քիչ մը խոսինք (ՄՆՁ):

2.2.6. Բայական և անվանական բաղադրյալ ստորոգյալների հանգույցները<sup>17</sup>: Օրինակներ՝

Գրաբարով՝ [Արտաւագդ] Ջանայ ելանել եւ [ջանայ] առնել վախճան աշխարհի (ՄԽ): .... եւ տուեալ գոսկին՝ կամի խնդրել գունդ եւ [կամի] ապստամբել» (ՂՓ): Եւ ասէ Վասակ. Լերինքն երկուք, մի դու էիր, եւ մի թագաւորն Յունաց [էր] (ՓԲ):

Միջին հայերենով՝ Ասէ առիծն *ընդ աղուէսն*. Եթէ կարես էջ մի գտանել եւ [կարես] բերել (ՎԱԱ): Ու կարաւոյ է թագաւորն յիր առողջութեան եւ ի մահուն կտակ գրել, ու [կարաւոյ է] սահմանել եւ [կարաւոյ է] տալ զլեռն եւ զդաշտն եւ զիր ամէն երկիրն զինչ ցեղ որ իր կամքն լինի (ՍՄԴ): .... Եա քաղցրը նոան զինի [լինէի], Ջոր գրո շիշատ պիտէի (Հ): .... քրիստոնէայքն աղաղակեցին. «Մէք Քրիստոսի ծառայք ենք եւ հաւատացեալք [ենք]» (ԹՄ): Ես՝ աչք [եմ] ու դուն՝ լուս [եա], հոգի՛, Առանց լուս՝ աչքն խաւարի (Հ):

Արևելահայերենով՝ Սակայն հո չէ՞մ կարող ես մի եզի նման Անգիտաբար լիզել իմ կողերին քսած Ամեն կավիճ ու ցեխ, - կամ .... [հո] [չէ՞մ կարող] Անմտորեն փնջալ հին թելերից հյուսված Երեսն ի վայր կախված չոր ծոպերի փնջին (ԵՉ): Երկրորդ՝ եկեղեցու շրջապատի օդը ավելի մաքուր և առողջարար կլինի, տեսարանը՝ դյուրական [կլինի] (Մ):

Արևմտահայերենով՝ [Թորոս] Չկրցավ մոտենալ, [չկրցավ] բերանը բանալ, [չկրցավ] խոսք մը ըսել (ՄՆՁ): .... կը փորձեր հարձակիլ կնոջական Էմանցիբացիայի առաքյալին վրա և [կը փորձեր] լռեցնել նորա ճշմարտախոսության շեփորը (ԵՕ): .... պատճառը .... այդ դժվարին ու քիչ մըն ալ ձանձրալի աշխատության փոխարեն սպասված նվերն է, և հետո՝ անձնասիրության այն փաղաքշումը [է], գոր կունենա [փոքրիկ անառակը] (ԱՉ): Ավա՛ղ, կասկած չկա, որ չեմ կրնար գործս ձգել ու վերստին մատնվիլ այն լլկիչ տանջանքին .... (ԱՍ):

Հատկանշական է, որ բաղադրյալ և վերլուծական կազմությամբ պարզ ստորոգյալների, համապատասխանաբար, հանգույցը և օժանդակ բայը կարող են զեղչվել ոչ միայն նախապես հիշատակված լինելուց հետո, ինչը սովորական է, և այս դեպքում թերի ստորոգյալին նախորդում է լրիվը, այլև նախապես հիշատակված լինելուց առաջ, որի դեպքում թերի ստորոգյալին հաջորդում է լրիվ կազմությամբ ստորոգյալ: Օրինակներ՝

<sup>17</sup> Մասնակիորեն կարող է զեղչվել նաև բայական միադիմի միակազմ նախադասության գերադասանդամը: Օրինակ գրաբարից՝ «Մի՛ լիցի ինձ ստել Արարչին իմում՝ պատճառանօք եւ կամ ճշմարտութեամբ, եւ մի՛ [լիցի] [ինձ] ուրանալ զայն առաջի անօրէն եւ մահկանացու ազգի» (ՂՓ):

Արևելահայերենից՝ Ես քու *հոքիրն [եմ]* ... ես քու *նանն եմ* ... Ես էլ ազիզ *բարեկամ [եմ]* ... (ՀԹ): Մեկ օր խմում [ենք] և երկու օր արդեն խումար ենք ընկնում ... (ՊՍ):

Արևմտահայերենից՝ Մենք ալ կիսամերկ *[էինք]* ու անսուաղ էինք: .... և բոլո՛րս ալ, որք էինք ու պանդուխտ *[էինք]* (ՎՇ): Փետտեր էր կորիճնաներուն կապույտ ու մանիշակ կոճակները, դերձանի վրա շարեր *[էր]* .... (ՄՆՁ): Սիսեռնե՛րուն ալ կանաչ փեճիկները բացեր *[էր]*՝ թարթիչներուն բռնել տվեր էր (ՄՆՁ):

3. Լրիվ կամ մասնակիորեն կարող են գեղջվել նաև պարզ և բարդ նախադասությունների, համապատասխանաբար, պարզ և բաղադրյալ երկրորդական, այլև հարակից անդամները:

### 3.1. Լրիվ կարող են գեղջվել՝

3.1.1. նախադասության տարբեր անդամներ, որոնց թվում ամենահաճախադեպը թերևս երկխոսությունների անքակտելի մաս կազմող հեղինակի խոսքի հանգման (հաղորդման) խնդիրն է: Օրինակներ՝

Գրաբարով՝ ....առաւել եւս գրգռեալ զթագաւորն եւ զամենայն աւագանին ասելով *[ցնուսա]*. «Եթէ ոչ ուստեք ունէին նոքա յայլուստ օգնականութեան յոյս ...» (ՂՓ): Եւ գթացեալ Արտաշիսի՝ հրամայեաց ածել *[գնա]*. եւ հարցեալ *[ցնա]* եւ ուսեալ, թէ զի՛նչ է որ աղաղակեացն՝ հրամայեաց ներել *[ննա]* զտանջանսն» (ՄԽ) և այլն:

Միջին հայերենով՝ Ասեն կանայք *[ցնա]*. «Դու կոչեա զառաջնորդքն մեր, եւ *[մեք]* դէմ յանդիման վկայեմք նոցա» (ԹՄ): Նա դառն ոգով ասաց *[ցնուսա]*. «Ո՛վ որդիք, [դուք] լուարուք ինձ. վայ եւ եղուկ է ամենայն մարդկան (ՎԱ): Այնչափ սուման հասոյց Յովանէսն եւ վճարեց [Յովանէսն] *[այնչափ]* *[սուման]* լման ինձի (Կ-Պ): Կու գան ու կու տան [ինձ] հազար, Չե՛մ առնուր ու քեզ չե՛մ ի տար [նոցա] (Հ): Զգինդս յականջէս հանին, Զմատանին *[ի մատնէս]* *[հանին]* (Հ):

Արևելահայերենով՝ - Իսկ եթե ուրախ լուր չբերե՞՞հարցրեց թագուհին [Գոհար իշխանուհուն] (Մ): Մարսափած աչքերով կինը նայեց շուրջը. [կնոջ] աչքերը սև էին, սև [էին] ու ջինջ [էին] (ԵՉ): Որբացած հոգիս ողջունում է քեզ ... [որբացած հոգիս] Դյութական ձայնով *[քեզ]* կանչում է հանդես (ՀԹ): Շատ սպասելով, զուր սպասելով հարմար պաշտոնի, Ես ինքս եմ ահա ինձ նշանակում *Լուսավորության նախարար*՝ ասեմ, *Թե՞՞ կատարածու լուսավորության, Այսինքն՝ լույսի, լսպտերի, ջահի* *[նախարար կամ կատարածու]* (ՊՍ):

Արևմտահայերենով՝ - Մենակ կարո՞ղ էք ճանապարհը գտնել,- հարցուց [ինձի օրիորդ Շահամիրեան] (ՎՇ): Աղաները, տեսնելով, որ Վարդանն ալ կղեգերի իրենց շուրջը, գոհ եղան ու ըսին. [անոր] — Աֆերիմ Վարդան, աղեկ խելք ըրեր ես ու եկեր ես (ՄՆՁ): Մեր թելլալը Հաճի Տյուրիկն է, - Մերն ալ *[Հաճի Տյու-*

*րիկն է* (ԳԶ): Տեսեր էր՝ .... արյունոտ աչքերով մարդիկ, որ իր հորը վրա հարձակվեր [*էի՛ն*], [արյունոտ աչքերով մարդիկ] բիրի հարվածներով զայն զգեստներ [*էի՛ն*], [արյունոտ աչքերով մարդիկ] անոր զլուխը կտրեր [*էի՛ն*] ու [արյունոտ աչքերով մարդիկ] գնդակի պես իրարու նետեր [*էի՛ն*] ու հետո [արյունոտ աչքերով մարդիկ] ուրախության աղաղակներով մեկներ էին (ԱԶ):

- Կուգա... հո՞գո է որ,- պատասխանեց կեսուրը,- [դուն անոր] ցա՞վն ես քաշեր, [դուն անոր] մա՞յրն ես, որ սիրտդ ցավի, [դուն] օտար աղջիկ չե՞ս (ՄՆԶ):

3.1.2. նախադասության հարակից և օժանդակ անդամները՝ շաղկապներ, հարաբերյալներ ու հարաբերականներ և այլն: Օրինակներ՝

Գրաբարով՝ Արդ հաստատ գիտեմ [զի] զոր լուայն թե ստոյգ է (ՓԲ): Գիտեա [և] տես [թե] զիա՞րդ ապրեցուցես զանձն քո եւ զմեզ (ՓԲ): Արդ՝ ծանիցեն զքեզ [թե]՝ յորոց վերայ մեռար դու (ԱԳ): Զորս իմանային օգնականս [այնպէս]՝ որզովն ի հարագատս յուսացեալ եղբարս (ՆՀԲ):

Միջին հայերենով՝ Գիտեմ, [զի] շատ հայրեն գիտես (Հ): Չեմ գիտեր՝ [թե] ո՞րն է սիրելու (Հ): Որչաք ի մսէն ջուր ելանէ, [այնչաք] դուն հետէն ա՛ն զջուրն (ՄՀ): Այնչափ ողորմիկ կու լամ՝ [որ] Աչերուս արիւն կու կաթէ (Հ):

Արևելահայերենով՝ Թոա՛ն, [որպեսզի] շուտով գտնեն բերեն անշեջ հուրը աղջկան (ՀԹ): Չգիտեմ, [թե] որտեղի՞ց է գալիս ջութակի հեկեկանքը տրտում (ՎՏ): Կյորեսը մեռնում էր [այնպես], ինչպես մեռնում է Խուռուփի ձորի վերջին կաղնին (ԱԲ):

Արևմտահայերենով՝ .... Նայինք՝ [թե] ինչեր գրված կան (ՊԴ): .... ես՝ որ ամենէն մտերիմ ընկերներու իսկ դժուարութեամբ ցոյց կու տայի գրածներս, չեմ գիտեր [թե] ի՞նչպէս զինաթափ եղած էի իր աղուոր նայուածքին տակ (ՎՇ): .... ջաղացպանը՝ Պապոն, .... երկանաքարերը քանի ատեն է՝ [որ] չէր կռանած (ՄՆԶ): Գիտե՞ս [որ] զիշե՛րը կուլամ, Մոմիս դիմաց մինակուկ (ԱԶ): Տեսնելու են [այն] ինչ որ կա իրերուն ներսդին և ինչ որ հորիզոնին ետև կթաքչի (ԱԶ):

3.2. Մասնակիորեն կարող են գեղջվել կազմությամբ բաղադրյալ և կապական կապակցությամբ արտահայտված երկրորդական անդամները: Օրինակներ՝

Գրաբարով՝ .... ապստամբեալ ասեն ի Մակեդոնացւոց եւ թագաւորեալ ի վերայ ամենայն արեւելից եւ ի վերայ՝ Ասորեստանեայց (ՄԽ):

Միջին հայերենով՝ Յաղագս երկնի և [յաղագս] զարդուց նորա (ՆՇ): Վասն ստածման եւ [վասն] բժշկութեան առաջին ցեղ հալեմաշ ջերմանն (ՄՀ):

Արևելահայերենով՝ «Մի մարդ երեք ընկեր ուներ: Նրանցից երկուսին շատ էր սիրում ...., իսկ [նրանցից] երրորդին քիչ տեղ էր տալիս» (ՀՏ): Առանց հավատի կյանքում դյուրին չէ նույնիսկ մեռնելը, Իսկ [առանց հավատի] ապրելն ... արդեն անկարելի է (ՊՍ):

Արևմտահայերենով՝ .... խորտակված հույսերու [մեջեն], փլած հավատքներու մեջեն աշխարհն ինծի կերևար ինչպես Ճակատագրին մեկ կուպիտ սխալը (ԱԶ): .... այնքա՛ն տարանման իրադարձությանց մեջեն անցնելե [հեռոն], է՛ն մաքուր փառքերն ու է՛ն սոսկալի փորձանքներն ճանչնալե հետո, դուն կհոսիս միշտ, ո՛վ Լեզու Հայկական (ԱԶ): .... նկատեց ծերուկ Լորը, առանց գլուխը վերցնելու ու [ամսնց] աչքերը բանալու (ՄՆԶ): Թարապուլուսի փայլփլուն գոտի կուզեն հարսները, սև թավիշ՝ բարձր կոնաձև գլխարկներ շինելու համար, արծաթ ու պղինձ զարդադրամ՝ գլխարկներուն ճակատը քունքեքունք կարելու [համար], ապրշում, արծաթ ու ոսկեգույն սրմա՝ գրպաններն ու էնթարիները երիզելու [համար], դեղին ու կարմիր մորթե կանացի չետուկ, կարկեհանի ու սուտակի գույն վարտիքցու, սնդուս ու թավիշ՝ իրենց մեջքերեն մինչև կրունկները իջնող ակնահմա վարտիքներուն համար (ՄՆԶ):

4. Միջին հայերենի նյութական և ոչ նյութական իմաստ արտահայտող մի շարք բառերում ու բառաձևերում գեղջվում են նաև որոշ հնչյուններ<sup>18</sup>, որով մասամբ հետապնդում է բանաստեղծական տողաչափերը կարգաբերելու, մասամբ էլ՝ կից ձայնավորների արտասանական անբարեհնչունությունը կանխելու նպատակ<sup>19</sup>: Այստեղ գեղջվում են՝

4.1. Ձայնավորով վերջացող և ձայնավորով սկսվող բառերի միջև գործածված *ni* և *zi* շաղկապների, համապատասխանաբար, *n* և *z* ձայնավոր հնչյունները<sup>20</sup>՝ Մանուկն է շահին բազա, Կու թռչի ՚ի [zi] այլ երամ խառնի (Հ): Ով գրեզ յիսնե բաժնեց՝ Բօստի ՚ի [zi] ի ոսկերքն՝ ցեց (Հ):

4.2. Ձայնավորով սկսվող բառերին նախորդող *թէ*, *նա* շաղկապների, *մի/մը* անորոշ դերանվան, *տի* եղանակիչի ձայնավորները. Ն՛ [նա] ալվայ երեսիս ջրբեն Կու վախեմ, թէ մարդ իմանայ (Հ): Ով կերթայ ն՛ [նա] աժան կու տայ, Ես կերթամ՝ ի սուղ կու ծախե (Հ): Վարի վարճինակ մ՛ [մի/մը] եկաւ, Զորսն առաւ այն երկու քաջին (Հ): Հաշուենք թ՛ [թէ] անպըտուղ փայտ ես՝ Կըրակին լինիս վառելիք (Հ): Յայն գաղտ դուռն ի դուրս ելայ, Լուկ գտայ հատիկ մ՛ [մի/մը] ալ ոսկի (Հ): Արունը գինի *ա*՛նիմ, Տի խմիմ անպակ գինու պէս, Մսիկն ալ քեպապ տ՛ անիմ, Տի ուտիմ կաքու մսի պէս (Հ):

<sup>18</sup> Տեղի է ունենում ձայնավորից կամ ձայնավորից ու բաղաձայն(ներ)ից կազմված վանկի անկում կամ սղում:

<sup>19</sup> Կից ձայնավորների գործածությունը հայերենի բառակազմական յուրահատկություններից չէ՝ սկսած դեռևս գրական հայերենի առաջին շրջանից: Պատահական չէ, որ կից ձայնավորների միջև թույլ կամ ուժեղ հնչում է *j* ձայնակապը:

<sup>20</sup> Հմմտ. Ղազարյան Ս.Ղ., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1981, էջ 273:

4.3. *Գալ, գիտել, եւ, մորթել, սիրել, ունել* և այլ բայերի անցյալ անկատարի (/կու/ *գայի, գիտի, ունի, էի, /կու/ սիրելի* և այլն) խոնարհված ձևերի խոնարհիչ ձայնավորները (*ե/է, ա*), յ ձայնակապը և/կամ *ի* դիմաթվային վերջավորությունը և այլն: Օրինակ՝ Յանկարծ ցան զիս էառ, Թուլցաւ բնութիւնն, որ *ունի* [*ունի*] (Հ): Այնչափ քնքուշ *չէնք* [*չէնք*] տեսեր, Երբ տեսայ՝ նա ուշքս գնաց (Հ): Մահալօբդ ի վար *կու գի* [*գայի*], Լօք տեսա չոր գանգ մի ձըգած (Հ): *Երթիր* [*երթայիր*], իմ եարին *ասիր* [*ասէիր*], Խոռով է, հաշտեր հետ ի յիս (Հ): Աստուած է վերն ի վկայ, Որ զքեզ մէկ սրտով *կու սիրի* [*սիրէի*] (Հ): Երբոր *չէր* [*չէիր*] սիրեր դու զիս՝ է՞ր կու գայիր լեզուվդ ի խրատ (Հ): Դու .... զիշուն միսն ի ներս լից եւ շալկէ եւ *արեկ* [*արի եկ*] գետեզերովն անցիր (ԱՅԳ): Դաւիթ *մարգար* [*էի*] որդին Սոդոմոն՝ զա՛յս մեզ կու ասէ (Հ):

5. Հնչյունների զեղչում է կատարվում նաև արևելահայերենում ու արևմտահայերենում, ինչն, ըստ էության, միջին հայերենից, ապա և բարբառներից ժառանգված լեզվական իրողություն է: Արևմտահայերենում, օրինակ, ձայնավորով սկսվող բառերից առաջ զեղչվում են ձայնավորով վերջացող *ւր* անորոշության ցուցիչի, արգելական հրամայականի *մի՛* օժանդակ բառի, *թէ* ստորադասական շաղկապի ձայնավոր հնչյունները և այլն, ինչպես՝ Այտերուն վրա ժպիտ *միւր* [միւր] անուշ փթթեցավ (ԱԶ): - *Միւր* [միւր] անիծեր Սառիկ, ճահիլություն է (ՀԱՄ): - «Ձեռքդ երկարե, *սասվ* [*ըսասվ*] Տրդատ»: - «Դու գիրկդ բաց, կը ցատկեմ» (ԴՎ): ... քեզի պան մը *պիտոր* [*պիտի որ*] ըսեմ (ՀԱՄ) և այլն:

**Եզրահանգում.** Գրական հայերենի երեք փուլերում՝

1. Զեղչումը լայն տարածում ունի: Այն բնորոշ է եղել բանավոր խոսքին, որտեղից էլ անցել է գրավորին և հետապնդում է տարատեսակ (ժամանակ, ջանք, նյութ և այլն) տնտեսումների, ինչպես նաև խոսքի ոճավորման նպատակ: Զեղչումը առանձնապես հաճախադեպ է նոր գրական հայերենի երկու ճյուղերի՝ ուղղակիորեն մեջբերվող գրավոր խոսքերում:

2. Զեղչվում են թե՛ ամբողջական նախադասություններ, թե՛ նախադասությունների առանձին հատվածներ, թե՛ գլխավոր ու երկրորդական անդամներ կամ վերջիններիս բաղադրիչներ և թե՛ հարակից անդամներ, անգամ՝ հնչյուններ: Վերոնշյալ իմաստակիր միավորները շարահյուսական միևնույն կամ տարբեր գործառույթներով բառային արտահայտություն ունեն նույն, նախորդ կամ հաջորդ որևէ նախադասության մեջ, իսկ եթե անգամ բառային արտահայտություն չունեն, ապա խոսքային տվյալ իրադրության մեջ ենթադրվում են: Նշանակում է՝ զեղչման ամենակարևոր նախապայմանը խոսքի բովանդակային պլանն անխաթար պահելն է: Նախադասությունների, նախադասության անդամների ու հարակից միավորների կազմում կարող է կատարվել՝ ա) լրիվ կամ բ) մասնակի զեղչում: Զեղչման հետևանքով ձևավորվում է կառուցվածքով թերի, սակայն

բովանդակությամբ լրիվ շարահյուսական միավոր, որը և նրա՝ կառուցվածքով լրիվ տարբերակը շարահյուսական համանիշներ են: Թերի նախադասությունները լինում են՝ ա) անկախ կամ բ) կախյալ:

3. Ջեղչված միավորը ուղղակի կամ խորքային կապով առնչվում է խոսքի կա՛մ նախորդ հատվածում, ինչը սովորական է, կա՛մ հաջորդում տեղ գտած լեզվական որևէ միավորի հետ: Քերականորեն արտահայտված և զեղչված միավորները կա՛մ նույնական են, կա՛մ ոչ նույնական:

Միջին հայերենի նյութական և ոչ նյութական իմաստ արտահայտող մի շարք բառերում ու բառաձևերում զեղչվում են նաև որոշ հնչյուններ, որով հետապնդվում է մասամբ բանաստեղծական տողաչափերը կարգաբերելու, մասամբ էլ երկու կից ձայնավորների արտասանական անբարեհնչունությունը կանխելու նպատակ, ինչը որդեգրել են ժամանակակից արևելահայերենն ու արևմտահայերենը:

### Հ ա մ ա ռ ո տ ա գ ը ու թ յ ու ն ն ք

ԱԱ – Ամիրդովլաթ Ամասիացի

ԱԲ – Ակսել Բակունց

ԱԳ – Ագաթանգեղայ Պատմություն Հայոց

ԱՅԳ – Վարդան Այգեկցի

ԱԶ – Արշակ Չոպանյան

ԱՍ – Արամայիս Սրապյան

Ա.Ս – Ա. Սեմա

ԳԶ – Գրիգոր Զոհրապ

Դ – Դև (Մարգար Ղարաբեգյան)

ԴՎ – Դանիել Վարուժան

ԵԿ – Եզնկայ Կողբացույ Եղծ աղանդոց

ԵՂ – Եղիշէի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին

ԵԶ – Եղիշե Չարենց

ԵՕ – Երվանդ Օտյան

Թ – Յարութին Թլկատինցի

ԹՄ – Թովմա Մեծոփեցի

ԼՇ – Լևոն Շանթ

Կ-Պ – Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (XVI դ.)՝ աշխատասիրությամբ Վ.Ռ. Գրիգորյանի, Երևան, 1963

Հ – Ա. Մնացականյան, Հայրեններ, Երևան, 1995

ՀԱՄ – Համաստեղ

ՀԹ – Հովհաննես Թումանյան

ՀՄ – Հրանտ Մաթևոսյան  
ՀՏ – համացանցային տեղեկատվություն  
ՂՓ – Ղազարայ Փարպեցույ Պատմություն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան  
Մ – Մուրացան  
ՄԽ – Մովսիսի Խորենացույ Պատմություն Հայոց  
ՄՀ – Մխիթար Հերացի  
ՄՄ – Միսաք Մեծարենց  
ՄՆԶ – Հակոբ Մնձուրի  
ՆՀԲ – Նոր բառգիրք հայկազեան լեզուի  
ՆՇ – Ներսէս Շնորհալի  
ՇՇ – Շահան Շահնուր  
ՊԴ – Պետրոս Դուրյան  
ՊՍ – Պարույր Սևակ  
Ս – Սիամանթոն  
ՍԳ – Գիրք Աստուածաշունչը Հին և Նոր կտակարանաց  
ՍՄԴ – Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք  
ՎԱ – Վարդանայ վարդապետի Հաւարումն պատմութեան  
ՎԱԱ – Վարդան Այգեկցի, Առակք  
ՎՇ – Վազգէն Շուշանեան  
ՎՏ – Վահան Տերյան  
ՏՉ – Տիրան Չրաքյան  
ՓԲ – Փաւստոսի Բուզանդացույ Պատմութիւն Հայոց

## ЭЛЛИПСИС В ЛИТЕРАТУРНОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ НА ТРЕХ ЭТАПАХ ЕГО РАЗВИТИЯ

*Хачатрян Г. К.*

**Ключевые слова:** *эллипсис, член предложения, примыкающий член предложения, тождественный и нетождественный, полный эллипсис, частичный эллипсис, древнеармянский язык, среднеармянский язык, восточноармянский язык, западноармянский язык.*

На трех этапах развития литературного армянского языка наблюдается следующая картина:

1. Эллипсис имеет широкое распространение. Он преследует различные цели: вариативную экономию (время, энергетика, материал и т.д.), а также речевую стилизацию. Эллипсис особенно часто встречается в двух ветвях современного литературного армянского языка в непосредственно цитируемой письменной речи.

2. Эллиптические единицы (предложения, отдельные фрагменты предложения, главные и второстепенные члены или их компоненты, смежные члены, даже

звук) в идентичных или разных синтаксических функциях имеют лексическое выражение в предшествующем, последующем или в том же самом предложении, а если не имеют лексического выражения, то оно предполагается в данной речевой ситуации. Благодаря эллипсису образуется неполная по структуре, однако, полная по содержанию синтаксическая единица. Неполное по составу предложение и его полный вариант - синтаксические синонимы. Неполные предложения могут быть: а) зависимыми или б) независимыми.

3. Связь между грамматически выраженными и эллиптическими членами может быть тождественной и нетождественной. В составе предложений, членов предложений и смежных единиц может наблюдаться: а) полный эллипсис или б) частичный эллипсис.

В целом ряде слов и словоформ среднеармянского языка, выражающих материальное или нематериальное значение, эллипсису подвергаются также некоторые звуки, что связано, с одной стороны, с версификацией стихотворной метрики, а с другой – с устранением артикуляционного неблагозвучия двух смежных гласных, что в какой-то степени унаследовали литературный восточноармянский язык и западноармянский язык.

## ELLIPSIS IN THE THREE STAGES OF DEVELOPMENT OF LITERARY ARMENIAN

*Khachatryan G. K.*

**Key Words:** *ellipsis, members of sentences, sentence adjacent member, identical and non-identical, complete ellipsis, partial ellipsis, Old Armenian, Middle Armenian, Eastern Armenian, Western Armenian.*

Ellipsis has the following characteristics in Literary Armenian:

1. Ellipsis has a wide-spread use in the three stages of development of literary Armenian. Being characteristic of oral speech and further penetrating into written speech, ellipsis is a means of enhancing the Economy Principle (time, energy, material, etc.) and the stylistic colouring of speech. Ellipsis is a frequent occurrence primarily for the two branches of literary Armenian, more specifically for explicitly stated written utterances.

2. Ellipsis can be used to reduce complete sentences and sentence fragments on the one hand, and primary and subordinate clauses, their constituent or adjacent parts or even sounds on the other hand. The above mentioned units have their semantic manifestations with similar or different syntactic properties in the same, preceding or following sentences but if they don't have their lexical antecedents, they are implicated in a certain situational context. This means that the most important precondition for ellipsis is the maintenance of the semantic representation of the utterance. In terms of complete and partial ellipsis, omissions can occur in sentence structures, members of sentences and in adjacent language units. Ellipsis results in getting structurally incomplete yet semantically complete syntactic units which together with their semantically complete counterparts form syntactic

synonyms. Elliptical sentences can be dependent and independent.

3. The ellipited member is explicitly or implicitly related to some language unit(s) used either in the preceeding or following parts of the utterance, the former being more common. Grammatically overtly expressed and ellipited members are either identical or non-identical.

In Middle Armenian, some sounds were ellipited in a considerable number of words and word forms denoting material and abstract meanings which aim at partially regulating poetic rhythm and, to some extent, preventing the articulation dissonance of two adjacent vowels. This has been adopted in Modern Eastern Armenian and in Western Armenian.

## References

1. **Abrahamyan S. G.** Hayoc lezu, Sharahyusutyun, Yerevan, “Luys” hrat., 2004 (**In Armenian**),
2. **Abrahamyan S. G., Parnasyan N. A., Ohanyan H. A., Badikyan Kh. G.** Zhamanakakits hayoc lezu, h. 3, Sharahyusutyun, Ye., HSSH GA hrat., 1976 (**In Armenian**),
3. **Ghazaryan S. Gh.** Hayots lezvi hamarot patmutyun, Yerevan, Yerevani hamalsarani hrat., 1981 (**In Armenian**),
4. **Gyulbudaghyan S.V.** Zhamanakakits hayoc lezu, Parz nakhadasutyun, Yerevan, Yerevani hamalsarani hrat., 1988 (**In Armenian**),
5. **Iskhanyan R. A.** Ardi hayereni sharahyusutyun, Parz nakhadasutyun, Yerevan, Yerevani hamalsarani hrat. (**In Armenian**),
6. **Karapetyan L. L., Hovsepyan L. S., Vardapetyan P. K.** Aknarkner migin grakan hayereni patmutyan, h. B, Yerevan, HSSH GA hrat., 1974 (**In Armenian**),
7. **Khachatryan G. K., Shahverdyan T. S., Petrosyan L. H.** Grakan hayereni patmutyan dasentats, h. B, Sharahyusutyun, Ye., “Arman Asmangulyan” hrat., 2018, (**In Armenian**).

*Ընդունվել է՝ 13. 06. 2020*

*Գրախոսվել է՝ 10. 07. 2020*

*Հանձնվել է տպ.՝ 20. 11. 2020*

### Տեղեկություններ հեղինակի մասին

**Գուրգեն ԽԱՉԱՏՐՅԱՆ՝** բանասիրական գիտությունների դոկտոր,  
Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի  
հայոց լեզվի և հայ գրականության ամբիոնի պրոֆեսոր,  
Էլ. հասցե՝ gxachatryan@yahoo.com

ԽՈՍՔԻ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
ԸՍՏ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՊՈԵՄՆԵՐԻ

*Մարիետա Խաչատրյան*

Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան

*Բանալի բառեր՝ անորոշ դերբայ, ստորոգելի, խոսքի ելևէջում, անվանական նախադասություն, անդեմ բայական նախադասություն, գլխավոր անդամ, գեղարվեստական արժեք:*

Հոդվածում քննվում են խոսքի գեղագիտության հարցեր՝ ըստ «Ալագյազի մանիներ», «Աբու-Լալա Մահարի» և «Մասմա Մհեր» պոեմների լեզվական նյութի: Նշված պոեմներն ընդհանրառում են Իսահակյանի խոսքին բնորոշ հատկանիշով՝ ասելիքով պայմանավորված լեզու: «Մանիներում» գերիշխողը ժողովրդական մտածողությունն է՝ համապատասխան լեզվամիջոցների հնուտ գործածություններով, «Աբու-Լալա Մահարի» պոեմի լեզուն գրական արևելահայերենի գեղարվեստական տարբերակի բացարձակ նոր որակ է՝ աննախադեպ բառագործածություններով և խոսքի գեղարվեստականացման միջոցներով, «Մասմա Մհերի» լեզվի գեղագիտությունն ապահովված է գրական արևելահայերենի, Սասունի, Կարնո բարբառների՝ տարբեր մակարդակների լեզվամիջոցների հետաքրքիր զուգորդումներով:

Փաստական նյութի վերլուծություններով արվում է հետևություն, որ լեզվական առումով միանգամայն տարբեր պոեմները իրենց տեսակի մեջ գեղարվեստական կատարելություն են ձևի և բովանդակության ներդաշնակության շնորհիվ:

*Նախաբան.* «Ալազյազի մանիները» ընթերցելիս հարց ես տալիս՝ իրական է արդյոք այն աշխարհը, ուր ապրել է Ալազյազի «մարմար» գեղեցկուհին՝ Ջարոն: Գրականագիտության մեջ Ջարոն ներկայացված է իբրև «կիսաստված-կիսամարդ, ինչ-որ շատ լեռնական ու վայրի, բայց և ինչ-որ եթերային ու ասքային նկարագրով: Ասես հայրենի աշխարհի գեղեցկության գաղտնիքն է Ջարոն, նրա անորսալի հմայքն ու կախարդանքը»<sup>1</sup>: Ուրեմն իրակա՞ն է Ջարոն: Միանգամայն: Ջարոն ու Ավետիքն էլ էին «մանկության ընկերներ, և նրանց սերն էլ ծնվել էր նույնքան աննկատ, ինչպես մի գիշերում բացվում է մուգ մանուշակը»: Եվ բազում տասնամյակներ անց, երբ Ջարոյի շիրմի տեղը թերևս իմացողներ արդեն չկային, իր ծոցատետրում Բասիակյանը գրում էր. «Ջարոյի պատկերը լուսապսակի պես միշտ գլխուս վերևն է»<sup>2</sup>:

Մանթաշի երազ հովիտը, Արագածի փեշերն են այն իրական միջավայրը, ուր ապրել ու մաքառել է Բասիակյանի ներկայացրած հայ մարդը, սիրել, կարոտել ու տառապել, արարել ու երազել է այդ հողի ու երկրի, մայր բնության զավակը՝ հաճախ չզգալով իր և հայրենական եզերքի սահմանագիծը, միշտ նրա մեջ, նրանով կատարուն: Այդպես նաև ինքը՝ բանաստեղծը: «Միրտս պոնկեպոունկ լցված էր մի հզոր, ամենատարած սիրով, որ հեղեղանման գեղում էր դեպի արարածները և դեպի իրերը...»<sup>3</sup>, - գրում է բանաստեղծը:

Այստեղից հետևում է, որ իրականությունը բանաստեղծություն է դարձել համայնատարած սիրո ներշնչանքով և սրտի զգացածր, անկեղծ, վսեմ ապրումները պարզ լեզվով, ժողովրդի բնական, անզարդ մտածողությամբ վերարտադրելու վարպետությամբ: Այդ եզերքն ու նրա մարդիկ են «Ալազյազի մանիներում», այդտեղ է նաև Վարպետի «մանուկ» սերը՝ գեղջուկ երեխաներին հատուկ առօրյայով և լեզվամտածողությամբ:

«Ալազյազի մանիների» լեզուն (ինչպես Բասիակյանի բանաստեղծությունների առաջին շրջանի լեզուն՝ ընդհանրապես) մեր գեղարվեստական մտածողության մեջ աննախադեպ է, նաև եզակի: Եզակիությունը պայմանավորված է թե՛ բառագործածությամբ, թե՛ քերականական ձևերի, թե՛ արտահայտչականության ու պատկերավորության միջոցների ամենահմուտ ընտրությամբ ու կիրառություններով:

Պոեմը բացող «Բմ բախտին» բանաստեղծությունը տիպիկ ժողովրդական երգ է՝ բառ ու բանով, քերականական ձևերի համակարգով, լեզվի պատկերավորման միջոցներով, որոնցով ամբողջանում է պոեմի լեզվական մթնոլորտը,

<sup>1</sup> **Հովհաննիսյան Գ.**, Ավետիք Բասիակյան, «Հայաստան» հրատ., Եր., 1975, էջ 41:

<sup>2</sup> **Բասիակյան Ավ.**, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. IV, «Սովետական գրող», Եր., 1979, էջ 119:

<sup>3</sup> **Բասիակյան Ա.**, Գիտական կենսագրություն, Եր., 2000, էջ 86:

որը սկզբնավորվում է խորագիրը կրող երկու՝ *Մշակագյալ* և *մանի* բառերի գործածությամբ: Նրանք արևելյան լեզուներից կատարված բանավոր փոխառություններ են, որոնք բնորոշ են բարբառին և Իսահակյանի մայրենի խոսվածքին: Քննարկենք:

Էս գիշե՛ր, ամպով գիշե՛ր, Կարոտ աչքիս քուն չի գա,  
Էս վշտեր, մրմուռ-հուշեր Իմ սև սրտես վազ չեն գա...<sup>4</sup>

Ժողովրդական – խոսակցական, բարբառային բառերն ու ձևերը թույլ են տալիս կարծել, թե բանաստեղծը ոչ մի ջանք չի գործադրել խոսքը գեղարվեստականացնելու համար, այն ինքնաբերաբար է այդպես իրենց հույզերն արտահայտում են հողագործը, սարվորը, հովիվը, այդպես է բնության կախարդանքն ու իր հույզը համադրում այդ բնության յուրաքանչյուր գավակ: Թերևս դրանով են պայմանավորված պոեմի վարակիչ անմիջականությունն ու առինքնող գեղեցկությունը: Սակայն հիշենք լեզվաբանի դիտարկումը. «Խոսքի նրբագեղության գաղտնիքներից մեկն էլ բառերի կապակցությունների մեջ է թաքնված»<sup>5</sup>: *Մմպով գիշերն* անդորր պիտի բերեր, սակայն *աչքին* տրված *կարոտ* գոյական մակդիրը լիովին բացահայտում է երգում գործածված *աչքին քուն չգալ* դարձվածքի և նրա տարբերակային ձևերի՝ *քունը թռչել*, *քուն չունենալ*, իսահակյանական գործածությունների իմաստային-բովանդակային լիցքը և ստեղծում տրամադրությունների ներդաշնակություն: *Մմպով* բառը բնության և մարդու ներաշխարհի հակադրության եզրն է դառնում, որի խորքին ընդգծվում են ցավն ու տառապանքը, որ արտահայտվում են *սև սիրտ*, *խոր վերք*, *դարդոտ գլուխ* արտահայտություններում, նաև *մրմուռ-հուշեր* զծիկով միացած բաղադրիչներով բառի գործածությամբ: Նկատենք, որ այդպիսի բառերը հիմնականում որոշիչ - որոշյալի սովորական շարահյուսական կապակցություններ են և որպես օրենք՝ գրվում են առանձին, մինչդեռ Իսահակյանը դրանք որպես պատկերավոր մտածողության միջոցներ է գործածում՝ հատկանիշն ու բնութագրվող առարկան միաձուլվող գործածելով: Նման կապակցությունները բազմաթիվ են ոչ միայն «Մանիների», այլև ընդհանրապես բանաստեղծի՝ 900-ականից 10-ական թվականների չափածոյի լեզվում: Ահա մի քանի օրինակ ևս՝ զմրուխտ-երագ/34/, լույս ցողեր /14/, հրաշք-աղջիկ /21/ և այլն:

Հեղինակային այս կազմություններին գուզընթաց՝ բանաստեղծը մեծ հաճախականությամբ գործածել է հարադիր բայեր՝ և՛ լեզվում եղած, և՛ իր կերտած, ինչպես՝ «Արևի պես սիրուն Ջարո, Շափաղ տալով դուն կուգաս, Էն մութ ձորին, իմ խոր սրտին Շողեր տալով դուն կուգաս» /13/ կամ՝ «Փուշ ու մացառ մեկդի

<sup>4</sup> Իսահակյան Ավ., Երկեր, հ. 2, Եր., 1958, էջ 7: Այսուհետև մեջբերումների էջերը կնշենք փակագծերում:

<sup>5</sup> Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ. 2, ԵՊՀ հրատ., Եր., 1991, էջ 309:

քաշվեք, Նազան Չարոն մոտս գա» /19/ և այլն:

«Մանիների» լեզվի գեղագիտությունն ապահովող միջոցներից են նաև կրկնավոր և բաղիյուսական բարդությունների բազմաթիվ գործածությունները, որոնցով ապահովվել են զգացմունքային նրբերանգներ, ինչպես՝ «Հավթերն եկան թնին տալով Երամ-երամ իրենց տուն» /24/ և հեղինակային՝ «Հարոսները սոսի՛ն-սոսի՛ն Հովը հովտում կը հևա» /24/: Վերջինս, անշուշտ, ավելի շատ է օժտված հուզականությամբ:

Բաղիյուսականները ժողովրդական լեզվամտածողության իսկական զարդեր են, որ խոսքին բնականություն, անմիջականություն են հաղորդում և սրանցով՝ գեղագիտական արժեք: Նրանք այնպես են ներհյուսված երգերի լեզվական այլ տարրերին, որ վերլուծաբար չդիտարկելու դեպքում չեն էլ նկատվում, ինչպես՝ «Սրտիս միջին դրախտ ունիմ, Վարդ ու բլբուլ, սեր ու սագ» /8/, ժողովրդական-բարբառային՝ «Ետ գնացե՛ք քար ու քռա... Փուշ ու մացառ մեկդի քաշվեք» /37/ և այլ բազմաթիվ գուգորդումներ:

Սակայն բովանդակային-ոճական առումով առավել արժեքավոր են հեղինակային կազմությունները, որոնք կերտվել են տվյալ խոսքի պահանջով, և նրանց բաղադրիչ բառերը մեծ քնարերգուին առնչակից-համադրելի են թվացել, ինչպես՝ «... Այնքան սիրուն, այնքան նազիկ ու վճիռ, Արշալույսի ծիրան-ծաղիկ ու շողիկ» /27/:

Միջավայրի և լեզվամտածողության բներանգն ապահովելու հարցում անգնահատելի է դարձվածքների դերը: Բանաստեղծի գործածած և կերտած «ջբեղ», «փարթամ» /Նիկոլ Աղբալյան/<sup>6</sup> դարձվածքներից յուրաքանչյուրը բաց է անում հայ մարդու կյանքի, հոգեբանության ու երազի մի ուրույն շերտ, սեղմ խոսքով կերտում այդ աշխարհի հարազատ պատկերներ, ինչպես՝ «Ու սարն ի վեր ձենն է ձգել Չուռնան բանձրիկ ու հզոր»/31/, «Ով որ անցավ էս դեհով, Էդ գեղեցկի ոտքն ընկնել»/36/: Ոչ մի, թեկուզ ամենահաջողված նկարագրություն չէր թողնի «ոտքն ընկնել» դարձվածքի տպավորությունը: Այդպես էլ. «Իմ չոր գլու՛իս, բուն չունիս, Դարտոտ գլու՛իս, տուն չունիս, Արար-աշխարհ ման կուգաս, Սիրած գրկում բուն չունիս» /7/: Չոր գլուիս-ը նախատիպ է դարդոտ գլուիս-ի, բուն չունենալ-ը՝ տուն չունենալ, բուն չունենալ դարձվածքների համար: Կա՞ մեկնողական խոսք, որ ավելին է, քան այս գոհարները: Իրավացի չէ՞ գրականագետը, թե «այսպիսի լեզու մեր բանաստեղծներից ոչ ոք չի ունեցել»<sup>7</sup>:

Խոսքի գեղագիտական հատկանիշներն ապահովելու գործում, անշուշտ, բառագործածությունն ու բառընտրությունն անհամեմատելի կարևոր դեր ունեն,

<sup>6</sup> Տե՛ս Բասիակյան Ա., Գիտական կենսագրություն, ... էջ 430, 431:

<sup>7</sup> Նույնը:

ասկայն երկրորդային չեն հնչունական և քերականական իրողությունները, որոնց անհաղորդ չէ Իսահակյանի գրիչը: Ակներն է, թե ինչ նպատակադրմամբ է նա կատարում հնչունների, նմանահունչ բառերի կուտակումներ, ինչպես՝ «... Հովը հովտում կը հևա» /24/, «Շարմաղ Զարոն ձորի միջին Վարդ կփնջե շողշողուն, Ալ-շրթունքին, լալ-շրթունքին Մեկ էլ նստավ զառ մեղուն» /14/ կամ՝ «Փրփուր կտրած առուն կուգա՝ Այրին, ժայռին ձեն տալով» /19/ և այլն: Մեղեդին լսելի է: Սակայն «Մանիների» լեզվի երաժշտականությունն ընթանում է նկարչական-պատկերային գորեղ միջոցների զուգորդումներով, որոնք նպաստում են խոսքի բանաստեղծականացմանը: Ահա թե ինչպես է տեսել Վարպետը բնության հրաշքը և ճարտարապետել ու գունանկարել Արագած լեռը. «Դու, Արագած՝ ծալմաստ վահան Կայծակեղեն թրերի...» /9/. պատկեր, քանդակ, գույն, մեղեդի. խոսքի վսեմ գեղեցկություն, որ կանթեղակիր լեռանը հաղորդում է հավերժականության և արարչականության վեհությունը: Դրան բանաստեղծը հասել է նաև *խոհականության* հնարքի կիրառմամբ. հորինվածքում չկա և մեկ դիմավոր բայ:

Գործածված համապատասխան լեզվամիջոցների շարքում առաջնային դեր ունեն քերականական իրականությունները, մասնավորապես՝ հոլովական և խոնարհման ձևերի դրսևորումները, որոնց խոսակցական-բարբառային տարրերի առատ գործածությունները պայմանավորված չեն արտահայտչականություն հաղորդելու ձգտմամբ. սրանք ևս բառագործածության նման բխում են ասելիքից, խոսքի բովանդակությունից: Իրավացի է Ռ. Իշխանյանը, թե Իսահակյանը «գոնե իր գրական գործունեության առաջին շրջանում լեզվական այս կամ այն տարբերակին դիմել է պարզապես բանաստեղծական ներշնչանքի պահի թելադրանքով»<sup>8</sup>: Այսպես. Իսահակյանի մայրենի խոսվածքին բնորոշ է ա ձայնավորով վերջացող գոյականների որոշյալ առումով գործածություններում ձայնավորի հընչունափոխությունը /ա>ե/, ինչպես՝ Ասել է *տղին*. «- Ա՛յ սիրուն տղա...» /21/, կամ *ա* ձայնավորի հնչունափոխության բնորոշ դեպքեր բառամիջում. «*Ճակտիս* աստղե պսակ ունիմ...» /8/:

Խոսվածքին հատուկ են նաև սեռականի ու և հատկապես բացառականի -ե/է/ հոլովակազմիչով ձևեր՝ -ն, երբեմն -ս, -դ հոդերի ուղեկցությամբ: Պոեմի լեզվում վերջիններս բացարձակ գերակշռություն ունեն, ինչպես՝ «...Ու կարոտի, սիրու խոսքով Իրար քնքո՛ւշ ձեն կուտան» /16/, կամ՝ «Շատ եմ լացել, իմ աչքերեն Քունը վաղուց թռել է. Շատ եմ լացել, յա՛ր քու սերեն Սիրոսս խոր վերք է դառել» /7/, այդպես էլ՝ աղոթանեն/11/, աշխարհներեն/11/, վարդ-սերեն/18/, քու աչքերեղ /15/, «Ու լացել է սիրու վերքեն»/33/, նաև «Հավաքվել են առավոտուց»/30/ և բազմաթիվ այլ դրսևորումներ:

<sup>8</sup> Իշխանյան Ռ., Արևելահայ բանաստեղծական լեզվի պատմություն, Եր., 1978, էջ 282:

Հոլովական ձևերին գրեթե հավասար գործածություն ունեն կապերը հոդերի ուղեկցությամբ, ինչպես՝ «Ծաղիկներդ լուսափթիթ *Վրաս* մետաքս-վառ ծածկոց» /11/, նաև ստացական հոդով ձևերը դերանվան ուղեկցությամբ, ինչպես՝ «*Քու աչքերդ՝* պայծառ աղբյուր»/15/, «Իմ սև *սրտես* վազ չեն գա» /17/:

«Մանիների» լեզվում իշխող են նաև խոնարհման համակարգի ժողովրդախոսակցական և բարբառային ձևերը, որոնց մեջ հատկապես՝ սահմանական ներկայի կազմությունները /-կ եղանակիչով/: Ահա կենդանի խոսքի մի օրինակ. «Ժրաջան կանայք, առավոտուն վաղ, Թոնիր կը-վառեն, լավաշ կը թխեն, խնոցիները կը շխկան ուրախ, Ծաղկի պես հոտով կարագ կը շինեն» /12/:

Բարբառին հատուկ որոշ բայերի –ի- խոնարհիչով ձևերը նույնպես բնորոշ են պոեմի լեզվին և ներդաշնակ են մյուս ձևերին, ինչպես՝ «Մինամ հավքի թևեր ունիմ, Թոնիմ կերթամ Ալագյազ», հատկապես՝ կերթամ բնորոշ ձևի ուղեկցությամբ: Ժողովրդական լեզվի տիպականությունը, որը և խոսքի գեղագիտության չափանիշ է, Վարպետն ապահովել է նաև լեզվի պատկերավորման և արտահայտչական միջոցների ամենահմուտ կիրառություններով, որոնք ազդեցիկ են իրենց պարզությամբ, սովորական մարդուն բնորոշ մտածողությամբ, հասկանալիությամբ: «Մանիներում» այդպես պարզ ու անպաճույճ են *մակդիրները՝* ժողովրդի գեղագիտական ըմբռնումներին համապատասխան: Ահա Ջարոն՝ մարմար /8/, եղնիկ /14/, նազիկ /14/, նազան /19/, «Արի՛ մոտս, եղնիկ աղջիկ...» /14/ և այլն:

Այդպիսի հուզականությամբ օժտված են նաև միմյանց գերազանցող համեմատությունները, փոխաբերությունները և պատկերավորման ու արտահայտչականության միջոցներ:

«*Համեմատության* գեղագիտական ուժը կախված է նրա անսպասելիությունից և թարմությունից»<sup>9</sup>: Միանգամայն իրավացի է լեզվաբանը, եթե անգամ համեմատության հիմքը շատ հայտնի է, ինչպես հետևյալ օրինակում. «Ալմաստ առուն՝ մոր պես անքուն՝ Նանիկ կասե, օ՛ր, օ՛ր, օ՛ր...» /15/ և այլն:

Խոսքի գեղարվեստականացման հարցում *փոխաբերության* դերն անգերազանցելի է, և պատկերավորման միջոցներին զուգընթաց անխուսափելի գործածությունները գեղագիտական զգացողություն առաջացնելու տեսակետից անմրցելի են, ինչպես՝ «Ծաղկունանց պես աստղերն էլան Ցնցուղ տվին շողերի, Գլուխս դրած ծնկիդ վրան, Բույրը կառնեմ աստղերի» /22/: Ահա թարմ ու միև-

<sup>9</sup> Գյուրջինյան Գ., Հայոց լեզու. Խոսքարվեստի դասագիրք, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», հրատ., ս. Էջմիածին-2015, էջ 71:

նույն ժամանակ ծանոթ գուգորդումներով փոխաբերության դիպուկ մեկ այլ համատեղ դրսևորման օրինակ. «Ու շրթունքդ բաժակ արիր՝ Ոսկեջրած, հակինթով, Ինձ խենթի պես հարբեցրիր Սիրու գինով հոգեթով»/16/ և այլն, և այլն:

Ինչպես տեսանք, «Մանիներում» միանգամայն որոշակի, սահմանագծված են միջավայրը, իրականությունը, որտեղ սիրում ու երագում, տառապում ու հավատում են այդ իրականության մարդիկ, մինչդեռ հաջորդ՝ «Աբու-Լալա Մահարի» պոեմը, համամարդկային արծարծումներով աշխարհընդգրկուն է՝ բնականաբար համապատասխան լեզվական մթնոլորտով: Համաշխարհային գրականության հավերժական արժեքներից մեկը ճանաչված այս պոեմով բանաստեղծն ասես թարմացնում է մարգարեի հարցը. «Իսկ հապա ե՞րբ կընթանա մարդկության քարավանը արդարության ուղիով»: Մեծ Իսահակյանը մեծն Նարեկացու մտատանջությամբ՝ մարդուն կատարյալ տեսնելու երագանքով է բռնված պոեմի յոթ և վերջին սուրահներում, որոնցում «հակառակագործ երկու հալոցները»՝ իրականությունն ու բանաստեղծի երագանքը, ներկայացվում են գեղարվեստական միջոց ընտրելով քարավանով առերևույթ փախուստը մարդուց և աշխարհից, որը հեքիաթ է՝ «անսկիզբ, անվերջ, հրաշք դյուրական»<sup>10</sup>: Ակնբախ է այդ աշխարհի հանդեպ սերը, հորդում է մարդասիրությունը: Դիմենք իրեն՝ բանաստեղծին: Նա «գրական վարպետության պայմաններից» մեկը համարում է «նյութից առաջադրված, նյութով պայմանավորված լեզուն»<sup>11</sup>: Այս մոտեցումն արդեն լույս է սփռում բանաստեղծի՝ իրարից այդքան տարբեր լեզվաոճակներ դրսևորելու հարցի վրա: Իրավացի է ինքը՝ բանաստեղծը. «Եթե չլիներ արվեստագետի աչքը, մարդիկ շատ բան չէին կարող տեսնել կամ տեսած լինել»<sup>12</sup>: Հակիրճ խոսքով, գեղագիտորեն ճիշտ բառն ընտրելով՝ Իսահակյանը կերտում է պատկերներ, որոնք ամբողջական են և՛ ժամանակի, և՛ սովորությունների, և՛ հոգեբանության ու ամենատարբեր հարաբերությունների առումով, ինչպես՝ առաջին սուրահում Արևելքի պատկերը. «Մեղկ փափկության մեջ Բաղդադն էր նիրհում ջեննաթի շքեղ, վառ երագներով, Գյուլիստաններում բլբուլն էր երգում գազելներն անուշ՝ սիրո արցունքով» /46/, երրորդ սուրահում աշխարհի հեքիաթն է՝ «Մեխակի բույրով հովն է շշնջում հեքիաթներն հազար ու մի գիշերվա, Արմավն ու նոճին անուշ քնի մեջ՝ օրորվում էին ճամփեքի վրա» /56/:

Ուշադրություն դարձնենք. գործածված բառերն իսկ բանաստեղծականություն են հաղորդում խոսքին, ստեղծում գեղագիտական մթնոլորտ: Դիմենք կյանքի դառնությունները ժխտող, արատներն ու անկումներն ատող ու անիծող

<sup>10</sup> Իսահակյան Ավ., Երկեր, հ. 2, 1958, էջ 57: Այսուհետև մեջբերումների էջերը կնշվեն փակագծում:

<sup>11</sup> Իսահակյան Ավ., Աֆորիզմներ, Եր., 2001, էջ 209:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 212:

բանաստեղծական խոսքին չորրորդ սուրահում: Ահա հակադրվող /նախորդներին/ բնանկարը «*Գիշերն ահարկու՝ և՛ սև, և՛ հսկա մի չղջիկի պես թները փռեց, Անծիր թները իջան, ծածկեցին քարավանն, ուղին և դաշտերն անափ*» /62/: Գործածված համեմատությունը, փոխաբերությունը, մակդիրները բովանդակային-ոճական առումով բացարձակ ներդաշնակության մեջ են: Դիտարկենք բնութագրող մակդիր բառերը՝ «կույր ու գուլ», «եղկելի» մարդիկ, «զազիր ու նանիր հոգիներ», «ժանտ քաղաքներ», «բազմաժխոր կրքեր», «նենգ ու դրուժան, չարակամ ու վատ» ընկերներ ու բարեկամներ, «սերունդներ լափող» իշխանություններ, հայրենիք՝ «պերճ արոտավայր հարուստների ցոփ» և վերջապես՝ «խորամանկ, խաբող, առնախանձ սարդ, հավերժ նանրամիտ» կին: Ժխտելով հաստատելու, ատելով սիրելու այս անկրկնելի խոսքը հայոց քնարական պոեմների գագաթ «Մատյան ողբերգության» կոթողի հանգույն բացահայտում է անկատարությունների անծիրությունը բառագործածության հազվագյուտ շնորհով. «**Եվ հորիզոնից մինչև հորիզոն** /անընդգրկելիություն/ երկինքը լցվեց մռայլ ամպերով. Չէին շողշողում լուսինն ու աստղեր. **Խավարն՝** ասես թե՛ պատած **խավարով**» /62/: Խավարի անթափացելիությունը /որ անկրկնելի փոխաբերություն է/ որևէ այլ հնարանքով չէր առաջացնի այն տրամադրությունը և չէր թողնի այն տպավորությունը, ինչ որ Բասիակյանը գտել է վերին շնորհքով:

«Մանիների» մտերմիկ, պարզ, ծանոթ մակդիրներին, փոխաբերություններին, համեմատություններին և այլ գեղարվեստական միջոցներին հակադրվում են ամենապերճ ու վսեմ գեղեցկության կապակցություններ, լեզվատարրեր: Այսպես՝ դրական հարիմաստներ՝ չքնաղ երագ, սուրբ արտասուք, սեր անսահման, բայց և միանգամայն նոր ու թարմ զուգորդումներ՝ *ճիածանաթն հավքեր* /56/, *վերասալաց անուրջներ* /59/, *ազատ աստղեր* /60/, *լույս թարթումներ ոսկի աստղերի* /61/, *արմավենու անտառներ կույս* /63/ և այլն, և այլն: Բացասական հարիմաստներ՝ *վայրի տատասկ դժնի* /55/, *նողկալի համայնք* /69/, *ունայնաշունչ հողմ* /58/, *վշտոտ կարոտ* /55/, *հազարաճիրան մոլի բորենի* /70/, *իշխանության քինոտ բռունցք* /71/ և այլն, և այլն:

Անզուգական են *օքսիմորոնները*, ինչպես՝ *չքնաղ դժոխք* /52/, *վայրագ հովանի* /71/, *արյունոտ արդարություն* /75/ և այլն, *փոխաբերությունները*՝ «Եվ քարավանը ճեղքելով վատահ մըրրկապարը վայրագ ջինների, Անշեղ ու անվախ ձգվում էր առաջ՝ դողանջուններով հուզված զանգերի» /67/, կամ «Մութն հավաքում էր քղանցքը թավշյա» /79/ և այլն, զարմանալի *համեմատությունները*՝ «Եվ լալիս էր նա առանց արցունքի, և նրա վիշտը նման անհունի, Բնչպես իր ուղին, որ գալարվում է՝ անծայր օձի պես և վախճան չունի» /77/ և այլն: Պատկերավորության միջոցի առանձնահատկություններն ամբողջությամբ արտահայտված են այս մեկ օրինակում:

Խոսքի դինամիզմը նույնպես վարպետ բառընտրությամբ է ապահովվում: Համեմատենք. «Եվ քարավանը մեղմիկ կարկաչով չափում էր ուղին ոլոր ու մոլոր» /54/ և «Եվ քարավանը զրը՛նգ, սրընթաց առանց նայելու անցնում էր անդարձ...» /76/, իսկ դեպի արևն ընթանալիս. «Եվ ուղտերն իբրև ոսկի մակույկներ, հուր ալիքները ծով-անապատում ճեղքելով արագ սլանում էին դեպի բոցավառ, լուսավառ հեռուն» /84/: Բառերն ընտրված են գեղագիտորեն և իմաստաբանորեն ճիշտ և համապատասխան բառային միջավայրում:

Բովանդակային-ռճական իմաստով ընդգծված դեր ունեն *ճարտասանական հարցերը*, որոնցով ընդգծվում են և վարակիչ դառնում տրամադրությունները, ինչպես՝ «Եվ ի՞նչ ենք թողել, ի՞նչ կա մեր հետև, որ մեզ պատրանքով ետ կանչե նորից. Փա՞ռք, զա՞նձ, օրենքնե՞ր և իշխանություն՞ն ...»/67/:

Արևի ծեսը, ազատության շքեղագույն փառաբանությունը գրական հայերենի անօրինակ և աննախադեպ բարձունք է: Ահա բառային շրջապատը՝ *անպարփակ ազատ, ազատությունը՝ անհուն, անսահման* /79/, «*Ո՛վ ազատություն, դու դրախտային չքնաղ վարդերի լուսեղեն բուրմունք*» կամ՝ «*լույս-բլբուլների անմահ Սլ-Կորան*» /80/ և այլն: Այսպիսի արժեք ունեցող ազատության խորհրդանիշ արևը, պարզ է, հարուցում է պաշտամունքի հասնող սեր և ձգտում, որն *աստիճանավորման* հրաշալի միջոցով և վարակիչ **դինամիզմով** է ներկայացվում վերջին սուրահում: Ահա. «*Ուղտերը արձակ պարուսաններով հուժկու, մոլեգին, այնպես խոլարար Սլանում էին, ճախր էին առնում հրեղեն թափով, խենթ ու խոլագար*» /85/:

Այս և նախորդ սուրահներում, ըստ բովանդակության, հաճախադեպ են արևելյան լեզուներից եկող բառերի գործածությունները, որոնք, սակայն, միանգամայն տարբեր են «Մանիների» լեզվում, այսինքն՝ ժողովրդական խոսքում անխուսափելիորեն առկա բառերից: Այս բառերը մի տեսակ վսեմություն են հաղորդում բանաստեղծի երազին՝ կազմելով ազատություն-արևի միջավայրը, Արևելքի բներանգը, ինչպես՝ «Սալամ քեզ, արև՛, շյուքր բյուրաբյուր» /81/, կամ՝ «Շեմս-արևն էլավ՝ շքեղ, լուսավառ...» /81/: Այդպես էլ *բաղիե, վուհաղի, քասիդ, սերաք* և այլն: Արևին ձուլվելու, նրան մերձենալու, մեծարելու փառաբանական խոսքը դարձյալ վսեմ ու հանդիսավոր է դառնում հատուկ բառընտրությամբ, նաև բառակերտությամբ. «Տիեզերական *հազարահանդես* /հեղինակային/ դու մեծ խրախճանք, բարի՛ արեգակ...»/81/ կամ՝ «*Երջանկասիյուն* /հեղինակային/ քո լույս-գիրկը բաց, ես սիրաբորբոք /հեղինակային/ թոչում եմ դեպ քեզ» /89/: Խոսքը բանաստեղծականացնող միջոցների համախումբ գործածությունները կատարված են ճաշակով և վարպետորեն:

Ապա *կրկնության* հազվագյուտ օրինակներով իր իդեալն է ամբողջացնում: Ահա դրանցից մեկը. «Դու աստծուց հզոր, դու միակ իմ սեր, դու միակ իմ

մայր, մայրական դու գիրկ, Դու միակ բարի, դու միայն սո՛ւրբ, սո՛ւրբ, դու գերա-  
հրաշ, միակ գեղեցիկ» /83/: «Սուրբ» բառը ի վերջո ծառայում է կատարելության  
երագի, մայրական անաղարտ գրկի փառաբանությանը և բազմաթիվ գործածու-  
թյուններից /*սուրբ հեռու, սուրբ մենակություն*/ հետո այս օրինակով նպաստում  
է գեղագիտական խնդրի լուծմանը:

Մեծ քնարերգուի երեք պոեմները, բոլորովին տարբեր լինելով նպատա-  
կադրմամբ, ուստի և լեզվով, նաև ժանրային առանձնահատկություններին հա-  
մապատասխանությամբ, այնուամենայնիվ, միանգամայն նույնական են իբրև  
արվեստի նմուշներ՝ իրենց կատարելության չափով: «Ալագյազի մանիները»  
պատանեկան սիրո լույսով առլեցուն հայացք է՝ ուղղված աշխարհին: «Աբու-Լա-  
լա Մահարին»՝ իրականությունից սնված հայացք՝ ուղղված աշխարհին, «Սաս-  
մա Մհերը» գիտակցական երազանքից, հայրենաբաղձությունից ծնված հայացք  
է՝ ուղղված աշխարհին: Ճիշտ է, որ Փոքր Մհերը «աշխարհահեղաշրջման, աշ-  
խարհավերակառուցման համամարդկային ձգտումների» մարմնացումն է: Այս  
պոեմում ևս «կոիվ է բռնության դեմ՝ հանուն բացարձակ ազատության, բացար-  
ձակ մարդու»<sup>13</sup>: Երկու պոեմում էլ կա դիցական արևը: Ահա բառընտրությունը.  
«Մհեր... Հոր նման պարթև, աչքերն՝ ակն-արև, Հայացքը՝ արծվենի, ճակատն՝  
արքենի, Մազերը՝ բոց-հուր, Մեջք ու բազուկները՝ պողպատիկ ու կուռ» /89/:  
Նկարագրական մակդիրներով ոչ միայն կերտվել է արտաքին կերպարը, այլև  
ծագումը՝ ըստ ժողովրդի վաղնջական պատկերացումների: Մենք առանձին  
անդրադարձել ենք պոեմի լեզվին<sup>14</sup>՝ նշելով, որ այն գրական արևելահայերենի  
/Մհեր թեև տղա էր տկար, Իրեն ուժի տեր Սասուն մարդ չկար /88/, Սասունի,  
Կարնո /Կվազեր Մհեր շանթի հետևեն /89/ բարբառների լեզվատարրերի հեղի-  
նակային զուգորդումներով առանձնահատուկ լեզու է, որտեղ բնականաբար  
ընդգծված է Սասունի բներանգը, ինչպես՝ «Իմ ակն-արեգակ հորըս անունով Իմ  
կորյուն որդուս Կանչեցեք Մհեր. Նա պիտի դառնա մեր աշխարհին տեր, -Ով  
գերկաթն իշխե՛ իշխանն է մարդուս» /88/:

Պոեմի նպատակադրմամբ պայմանավորված լեզվամիջոցները նպաստել  
են գեղարվեստական խոսքի համոզականության, բազմազանության, ճշտու-  
թյան ապահովմանը, որով նաև ապահովվում են խոսքի գեղագիտական հատ-  
կանիշները: Լեզվաբանն այդպես էլ գնահատում է. «Գեղարվեստական լեզվի

<sup>13</sup> Բասիակյան Ավ., Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1951, էջ 159:

<sup>14</sup> Խաչատրյան Մ.Կ., «Սասմա Մհեր» վիպերգի լեզվի առանձնահատկությունները//ԳՊՄԻ հան-  
րապետական գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007, էջ 11-14:

էությունը լավագույնս ներկայացնող հանգամանքներից մեկը խոսքի գեղագիտական հատկությունն է»<sup>15</sup>:

Գեղարվեստական լեզվին՝ իբրև գրական լեզվի տարբերակային ձևի, բազմաթիվ առանձնահատկություններից գատ, վերապահված է գեղարվեստական խոսքի առանձնաշնորհը՝ «մտածողության ու հույզի արվեստավոր ու գեղեցիկ արտահայտություն» լինելը: Իրեն հետաքրքրող իրողությունները, տրամադրությունները «արվեստավոր ու գեղեցիկ» ներկայացնելով՝ գրողն իրացնում է գեղարվեստական երկի կարևորագույն առաքելությունը՝ ընթերցողին տրամադրություն և հույզ հաղորդելը, նաև գեղագիտական զգացողություններ պարզակելը: Այս դեպքում արդեն արծարծվում են խոսքի գեղագիտական հարցեր:

Ընդունված է յուրաքանչյուր գրողի ոճը գնահատել նրա անհատականությամբ, աշխարհայացքով, իրականության ընկալումներով, խառնվածքով, ճաշակով և այլն: Սակայն երբ քննարկում ենք անհատ գրողի խոսքը ձևավորող լեզվաոճական իրակությունները, բացահայտվում է գրողի ոճի բնութագրման չափանիշների խիստ ընդհանրական բնույթը, և հայտնի է դառնում, որ խոսքի գեղագիտությունն ապահովող օրինաչափությունները ոչ միայն գրողից գրող են տարբեր, այլև նույն գրողի գործից գործ՝ և՛ միևնույն, և՛ տարբեր ժամանակահատվածներում ստեղծված, նաև միևնույն ժանրի շրջանակներում: Խոսքը որոշարկենք՝ դիմելով հայ բանաստեղծության Վարպետի՝ Ավ. Բսահակյանի պոեմներին, որոնք և՛ գրականագիտորեն, և՛ լեզվի տեսակետից գնահատելիս միասնական մոտեցում չեն ենթադրում: Ժանրային բնութագրումով նրանք չեն ընդհանրանում, սակայն չեն միավորվում նաև ժամանակագրորեն, ըստ որի՝ Վարպետի չափածո ստեղծագործական ուղին՝ բավական ընդգրկուն մի ժամանակահատված, լեզվական առումով երկու շրջանի է բաժանվում. առաջին շրջանն ընդգրկում է 1891-1908 թթ., երկրորդ շրջանն սկսվում է 1909թ.-ին «Աբու-Լալա Մահարի» պոեմի լույսընծայումով:

*Եզրահանգում.* Լեզվամիջոցների համեմատական քննությունը բացահայտում է. «Մանիները» Բսահակյանն է համարել պոեմ, սակայն կառուցվածքով այն չի համապատասխանում ժանրի սահմանման չափանիշներին. առանձին բանաստեղծություններ ու «պատումներ» պոեմ են դառնում «տարբեր տրամադրություններ ներդաշնակ միասնության մեջ համադրելու եղանակով» և արտացոլում են «հողագործի, հովվի, գեղջկուհու հույզերն ու ապրումները, հայրենի բնության կախարդանքը»: Ճիշտ է նկատված, թե «այնտեղ հայկական ոգին է, այնտեղ Հայաստանն է բուրում»: Եվ բուրում է նախ՝ հմուտ բառօգտագործումով,

<sup>15</sup> Մելքոնյան Ս. Ա., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 232:

յուրաքանչյուր բառի արժեքը և տեղը որոշելու բացառիկ զգացողությամբ. այսպես՝ պոեմի վերնագրի «մանի» բառը «երգ»-ի փոխարեն Արագածի Ալազյազ ձևի զուգորդմամբ արդեն բաց է անում այդ աշխարհի կյանքի, սիրո, տառապանքի եզակի պատկերներ, և ապա ժողովրդական-խոսակցական և բարբառային բառերի գործածություններ պարզ ու անզարդ խոսքային միջավայրում: Այդպես է, օրինակ, բառերի ժողովրդական հնչյունափոխված ձևերը, համեմատությունները, փոխաբերությունները, մակդիրները նույնպես բնորոշ են ժողովրդական լեզվամտածողությանը, դարձվածքները, ինչպես նաև ձևաբանական և շարահյուսական լեզվաձևերը նպաստում են պոեմի լեզվի բանաստեղծականացմանը և գեղագիտական հատկանիշների խորացմանը:

Այլ է «Աբու-Լալա Մահարի» պոեմի լեզուն. այն շրջադարձային է և գրական արևելահայերենի հարստության ու գեղեցկության աննախադեպ ու անզուգելի նմուշ: Խոսքի գեղագիտությունն այստեղ բանաստեղծն ապահովել է բառերի անսպասելի, անսովոր զուգորդություններով, նորակերտ և եղած պատկերավոր բառերի քաջահմուտ գործածություններով, ինչպես՝ աշխարհասփյուռ ազատություն, ծիածանաթև հավքեր, լուսազգեստ եզերք, ցավատանջ արյուն և այլն: Գեղագիտորեն անմրցելի են պոեմի լեզվի պատկերավորման և արտահայտչական միջոցները:

«Մասմա Մհեր» վիպերգի հարցում Իսահակյանը չի հետևել իր լեզվի զարգացման շրջանների լեզվամիջոցներին, այլ ձգտել է ստեղծել հայոց էպոսի գունավորում՝ գործածելով ոչ թե Մասունի բարբառը, այլ կատարել է գրական արևելահայերենի, Մասունի, Կարնո բարբառների հետաքրքիր զուգորդումներ: Փաստորեն Վարպետի երեք պոեմները լեզվական առումով խիստ տարբեր են միմյանցից, սակայն լեզվի և բովանդակության փոխադասմանավորվածության առումով նրանցից յուրաքանչյուրն իր տեսակի մեջ գեղարվեստական կատարելություն է, արվեստի նմուշ:

## ЭСТЕТИКА РЕЧИ В ПОЭМАХ АВЕТИКА ИСААКЯНА

*Хачагрян М. К.*

**Ключевые слова:** *личная форма глагола, предикативность, интонация, назывное предложение, безличное глагольное предложение, главный член, художественная ценность.*

В статье рассматриваются вопросы эстетики речи на основе лингвистического материала поэм «Алагязские песенки», «Абу-Лала-Маари» и «Сасма Мгер». Упомя-

нутые стихи обобщены характерным слогом Исаакяна, обусловленным определенным, особым языком. «В песенках» преобладает народное мышление с умелым использованием соответствующих языковых инструментов, язык поэмы «Абу-Лала-Маари» - это абсолютно новое качество восточноармянского художественного языка с беспрецедентным использованием слов и средств художественной речи, эстетика языка «Сасма Мгер» обеспечивается интересными сочетаниями восточноармянских, сасунских, карнских литературных языковых средств разных уровней.

Анализ материала показывает, что фактически, три поэмы Мастера в языковом аспекте слишком разные, но в плане взаимосогласованности языка и содержания каждая из поэм в своем виде литературное совершенство, образец искусства.

## AESTHETICS OF SPEECH IN AVETIK ISAHAKYAN'S POEMS

*Khachatryan M. K.*

*Key words: personal forms of verbs, predicativeness, intonation, nominal sentence, impersonal verb sentence, lead member, artistic value.*

The issues of speech aesthetics based on the poems “Alagyaz songs”, “Abul-Ala-Maari” and “Sasma Mher” linguistic material had been discussed in the article. The mentioned poems are summarized by Isahakyan's characteristic style, conditioned by a certain, special language. In the “Songs” the folk thinking with skillful use of appropriate language tools are dominated, the language of the poem “Abul-Ala-Maari” is an absolutely new quality of the Eastern Armenian literary language with an unprecedented use of words and literary speech, the aesthetics of the language “Sasma Mher” is provided by interesting combinations of Eastern Armenian, Sasun, Kars literary language means of different levels.

Analysis of the actual material shows that linguistically completely different poems can be literary perfections in their own way due to the harmony of their content

## References

1. **Gyurjinyan D.** Hayoc lezu, khosqarvesti dasagirq, «Mayr Ator Sb Ejmiatsin» hr. Ejmiatsin, 2015 (**In Armenian**).
2. **Ishkhanyan R.** Arevelahay banastekhdzakan lezvi patmuthyun (17-rd daric minchev 1920). Yerevan University hrat., Yerevan, 1978 (**In Armenian**).
3. **Inchikyan Ar.** Avetik Isahakyan, "Sovetakan grogh", Yerevan, 1977 (**In Armenian**).

4. **Isahakyan Av.** Aphorizmner, Yerevan, 2001 **(In Armenian)**.
5. **Isahakyan Av.** Yerkeri jokhovatsu vec hatorov, h. IV, "Sovetakan grogh"hrat., Yerevan, 1979 **(In Armenian)**.
6. **Isahakyan Av.** Yerker, h. 2., Haypethrat, Yerevan, 1958 **(In Armenian)**.
7. **Isahakyan Av.** Yerkeri jokhovatsu, h. 4, Haypethrat, Yerevan, 1951 **(In Armenian)**.
8. **Isahakyan Avik** Gitakan kensagrutyun, HH GAA "Gitutyun" hrat., Yerevan, 2000 **(In Armenian)**.
9. **Hovhannisyany G.** Avetik Isahakyan, "Hayastan" hrat., Yerevan, 1975 **(In Armenian)**.
10. **10.Khachatryan M.** «Sasma Mher» vipergi lezvi arandznahatkuthyunner@, GPMI Hanrapetakan gitakan nstashrjan, Gyumri, 2007 **(In Armenian)**.
11. **Melkonyan S.** Aknarkner hayoc lezvi voch`abanuthyan, Yerevan, 1984 **(In Armenian)**.
12. **12.Poghosyan P.** Khosqi mshakuyti yev woch`abanuthyan himunqner 2, EH hrat., Yerevan, 1991 **(In Armenian)**
13. **Poghosyan P.** Wochagitakan ymbrnumneri tsagumn u zargacum@ Hin Hyastanum yev Hromum, Yerevan, 1975 **(In Armenian)**

*Ընդունվել է՝ 23. 07. 2020*

*Գրախոսվել է՝ 21. 09. 2020*

*Հանձնվել է տպ.՝ 20. 11. 2020*

#### **Տեղեկություններ հեղինակի մասին**

Մարիետա ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ բանասիրական գիտությունների թեկնածու,  
Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարանի հայոց լեզվի  
և հայ գրականության ամբիոնի դոցենտ, էլ.հասցե՝ marieta-20@mail.ru

ՀՏԴ՝ 81.19

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՅՈՒՍՐՈՒ ԱՐԴԻ  
ԽՈՍՎԱԾՔԻ ԴԱՐՉՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ  
Սուսաննա ԶԱՔԱՐՅԱՆ

Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան

*Բանալի բառեր՝ ազգային լեզվամտածողություն, համատեքստ, լեզվական և արտալեզվական գործոններ, արաբական, թուրք-թաթարական, պարսկական ազդեցություններ:*

Աշխատանքում անդրադարձ է կատարվում Գյումրու արդի խոսվածքում նկատելի շերտ կազմող, արևելյան լեզուներից կատարված բանավոր փոխառություններին, որոնք խոսվածք մտած այլ անհարկի փոխառությունների, նաև մերժելի լեզվական դրսևորումների հետ միասին անցանկալի հետք են թողնում սերունդների ազգային լեզվամտածողության վրա:

Լեզվի բառապաշարը լեզվական և արտալեզվական գործոնների հանդեպ իր զգայունությամբ՝ առավել ենթակա է օտար ազդեցությունների, որոնցից շատերի՝ բազմաթիվ բառերի ու արտահայտությունների սոսկ թվարկումը բավական է բացահայտելու մեր ժողովրդի ճակատագրի վրա արաբական, թուրք-թաթարական, պարսկական ազդեցությունների բնույթը և հետևանքները:

Անառարկելի ճշմարտություն է այն, որ «ամենամեծ քերականագետը ժողովուրդն է», և նրա անադարտ լեզվամտածողությունը ազգապահպան արժեք ունի: Այս համատեքստում հեղինակն ավելի վաղ առանձին հոդվածով անդրադարձել է խոսվածքում արևելյան

բառային փոխառությունների խնդրին:<sup>1</sup> Սույն հոդվածում քննության են առնվում փոխառյալ բաղադրիչ ունեցող կամ ամբողջապես փոխառյալ դարձվածային միավորներն ու արտահայտությունները, որոնց մի ստվար մասը, շնորհիվ հաճախակի գործածության, դրսևորում է խոսվածքում դեռևս «երկար կյանք» ունենալու առանձնահատկություն, ավելին՝ ձեռք է բերել հանրային մտածողությանը հարազատ նրբիմաստներ:

**Նախաբան.** Դարձվածքները, առած-ասացվածքները, ժողովրդական իմաստախոսությունները սեղմ և պատկերավոր ոճով արտահայտում են ժողովրդի կենցաղը, սովորույթները, նրա դավանած մշակութային արժեքները, հոգեբանությունը, երազանքները և ընդհանրապես՝ պատմական ճանապարհը, հետևաբար նրանք «ձևավորվել են հայերենի պատմության ողջ ընթացքում՝ պատմական տվյալ պայմաններից կախված ուժեղանալով, թուլանալով կամ նույնիսկ ընդհատվելով»:<sup>2</sup> Ժողովրդական մտածողության բյուրեղացած այս ձևերում «միջազգային բառարանի»<sup>3</sup> (Հր. Աճառյանի բնութագրմամբ) շատ բառեր նշույթավորվելով պահպանվել են նաև այն դեպքերում, երբ սերնդափոխության, բնակչության տեղաշարժի, ներգաղթ-արտագաղթի, վերջին տասնամյակներում նաև երկրաշարժի պատճառով հետևանքներով պայմանավորված՝ ազատ բառերը պակասել կամ դուրս են եկել խոսվածքից: Որպես պատրաստի վերարտադրվող լեզվական իրականություններ՝ նրանք անընդհատ կիրառվում են՝ դրանով «ապահովելով» նաև իրենցում առկա օտար բառերի երկարակեցությունը: Միտքը դիպուկ արտահայտելու և լեզվական խնայողության նպատակով գործածվող շատ դարձվածքներ անցել են սերնդեսերունդ և այսօր էլ գործածվում են, ինչպես՝ *ջանը դուրս գալ, ո՛չ շատին, ո՛չ խեղին, նաֆաս առնել, յախա թափ տալ, յախեն բռնել* և այլն: Իրադրությունը, մարդկային փոխհարաբերությունները մեկնաբանելիս հիշվածները գործածվում են բնական, կենդանի խոսք կառուցելու միտումով:<sup>4</sup> *Ոտքը յորդանի չափ պարզել, խաթրից դուրս գալ, դժի թևով, քոռ կոպեկ, փոր ու փոշման, նամուսի գերի, նամուսի մեռած, սամթը առնել, սաղ-սաղ թաղել* և բազ-

<sup>1</sup> **Խաչատրյան Մ.Կ., Զաքարյան Ս. Հ.** Արևելյան լեզուներից կատարված բանավոր փոխառությունները Գյումրու խոսվածքում//ՇՊՀ «Գիտական տեղեկագիր», հ.1, պրակ Բ, Գյումրի, 2018, էջ 57-69:

<sup>2</sup> **Զահուկյան Գ. Բ.**, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1992, էջ 347:

<sup>3</sup> **Աճառյան Հր. Հ.**, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Եր., 1951 էջ 118:

<sup>4</sup> Տե՛ս նաև **Հայրապետյան Ս. Ա.**, Գյումրու արդի խոսվածքը//«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային ութերորդ զիտածողովի նյութեր, «Գիտություն» հրատ., Գյումրի, 2010, էջ 278:

մաթիվ այլ դարձվածքներ առայժմ բնութագրական են ոչ միայն ավագ և ավագագույն, այլև միջին, նույնիսկ երիտասարդ սերնդի լեզվին: Ինչպես երևում է օրինակներից, դարձվածքները և՛ երկբաղադրիչ են, և՛ բազմաբաղադրիչ, հաճախադեպ են թե՛ բայական, թե՛ անվանական դարձվածքների գործածությունները: Իսկ *խոսք ու խորաթեն տեղը* դարձվածքը, որ դարձյալ շատ գործածական է, ունի *համով խոսող, հասկացող, բանհմաց* նրբերանգները: Բնութագրական խոսքի մեջ այս դարձվածքը առայժմ տեղը չի զիջում նշված ոչ մի բառի, օրինակ՝ որևէ բառով չի փոխարինվում *հալալ-գուլալ ախպեր* դրական իմաստ ունեցող դարձվածքը: *Հալալ* բառը *դարդ* բառի նման «քաղաքացիություն» է ստացել Կարնո բարբառում, և ոչ ոք *դարդ ու ցավ* դարձվածքի մեջ օտար երանգ չի նկատում, այդպես էլ *դարման ու ճար, շառ ու ցավ, կռիվ-դալմադալ /էնել/, սուտ ու դորթ խոսել, սաղ-սալամաթ/գալ/* և այլն:

Կարեկցանք, անհանգստություն, նվիրվածություն և նման ու մոտ հարիմաստները գյումրեցին արտահայտում է պատրաստի լեզվամիջոցներով՝ խոսուն, տարողունակ դարձվածքով, որով և ապահովվում է խոսքի սեղմությունը, ինչպես՝ *կաթի գյորա* /ամեն մարդ իր կերած կաթի գյորա/: Շատ գործածական են և դիպուկ նաև *ջիգրի մրմուռ* /ջիգրի մրմուռ չտեսնիս/, *ջիգրին ջոմարտություն* *չկա* /հարազատի համար ամեն ինչի պատրաստ/, այդպես էլ՝ *դարդ ու բալա* է շատ կենսունակ դարձվածքները: Այդպիսի ընդհանրացում ունեն բացասական հարիմաստ արտահայտող *դալպ մարդ, հարամ կաթ* և նման դարձվածքները, որոնց գործածությունն առայժմ սահմանափակված չէ:

Բառապաշարի անբաժանելի բաղադրիչներ են օրհնանքները, անեծքները, որոնց կազմում նշույթավորված են արևելյան փոխառյալ բառերը, ինչպես՝ *ջանդ սաղ, բոյ ու բուսատդ մեռնի, նալլաթ չար սատանին, թարսի պես, դուշմանի աչքը հանել* և այլն:

Ընդգծված գործածություն ունի հասարակաբանական-խոսակցական շերտը, որը քիչ բառերով վերաբերմունք արտահայտելու միջոց է, ինչպես՝ *բոշեն՝ փաշա, ծակ բողագ, հարամ գադե* և այլն:

Հայտնի է, որ դարձվածքները հասկացություն են արտահայտում, սակայն շատ կարևոր է նրանց՝ այս կամ այն վերաբերմունքն արտահայտելու առանձնահատկությունը, որը հուզաարտահայտչական իր դերով բնութագրական է բանավոր խոսքին, մասնավորապես՝ բարբառներիին, եթե հատկապես մեր քննարկած խնդրին՝ բանավոր փոխառություններին են առնչվում: Ինչպես նշեցինք, արևելյան լեզուներից փոխառված վերոբերյալ բառերը, դարձվածքներում նշույթավորվելով, ապրում են ժողովրդական լեզվամտածողության մեջ: Օրինակ՝ խնդրո առարկա խոսվածքում բավական շատ են տարբեր վերաբերմունք

(դրական, բացասական, ընդհանուր)<sup>5</sup> արտահայտող դարձվածքները, որոնցում առկա օտար բառերը խոսողության ընթացքում չեն էլ գիտակցվում որպես այդպիսիք, օրինակ՝ *հայիլ-մայիլ մնալ, հուրի-մալաք, խաս թիքա, ջան ու դուրբան էնել, սեր ու սավդա գցել, ինչ խաբար է* և այլն, որ արտահայտում են հաճելի ապրումներ, հիացական վերաբերմունք և անպակաս են առտնին հարաբերություններում շփումների լեզվից<sup>6</sup>: Այդպես էլ նվիրվածություն և մեծ սեր են արտահայտում *դուրբանդ էղնիմ, փայ ու բաժինդ մեծ էղնի, գլխիդ դուրբան, դաղեղ տանիմ* և նման այլ վերաբերական դարձվածքներ: Գյումրու բարբառակիր բոլոր հասակներն էլ գործածում են, օրինակ՝ *դաղորդ իմանալ* (արժանիքը, նշանակությունը գնահատել) դարձվածքը, որը խոսքի ինքնընթացության օրենքով անընդմեջ գործածվել է, և չի նկատվում պակասելու միտում: Այդպես էլ *խոսք ու խորաթա* դարձվածքը, որ նշանակում է *տարաձայնություն, դժգոհություն* և առայժմ գերակշիռ գործածություն ունի: Պետք է նշել, որ հաճախ գործածվում է նաև *խոսք խորաթա*:

Բոլորին է հայտնի, որ բառերի կյանքը պայմանավորված է գործածությամբ, իսկ նշված բառերը դեռևս խիստ հաճախադեպ են, քանի որ ձեռք են բերել հանրության մտածողությունն արտահայտող նրբիմաստներ և շարունակում են մնալ այդ հատկանիշի կրողները: Այդպես է ընդհանրապես, սակայն սերնդափոխությունն իր հետ բերում է որոշակի փոփոխություններ, որոնք նկատելի են նաև Գյումրու խոսվածքում: Եթե ավագագույն և ավագ սերունդները մեծ հաճախականությամբ էին գործածում առած-ասացվածքները, ապա այսօր նույն միտումը չկա: Շատ առածներ այլևս չեն գործածվում կամ սակավադեպ են դարձել, օրինակ՝ *Քաստանից* է դուրս եկել, կպեճին չի հավնի: Գլուխդ ներս չհավքած տեղը, *ջանդ* ներս մի՛ տանի: *Առսըզ իսանը* շատ կապրի: *Նամարդի* հացը չի ուտվի և այլն: Դեռ գործածվում են որոշ առած-ասացվածքներ ավագ սերնդի խոսքում, ինչպես՝ *Հարամը քինա չի բռնե: Սաղ մորս հալը կհարցնեն... Օղորթ* խոսողի ձին դուռն է: *Յա* գժի հետ խոսել ես, *յա* գարի հաց կերել ես: *Հալալին* աստված կուտա, *հարամին*՝ սատանեն և այլն:

Օտար բառերի գործածության հարցը տարակարծությունների տեղիք է տվել: Սակայն ուզում ենք առանձնապես հիշել Վ. Կատվայանի բնութագրումը: Նա գրել է. «Բարբառը, ինչպես և գրական լեզուն, լեզվական համակարգ է, այն մաքուր կամ անմաքուր լինել չի կարող»<sup>7</sup>: Սակայն լեզվաբանը տողատակում

<sup>5</sup> Մելքոնյան Ս.Ա., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 195:

<sup>6</sup> Այդ մասին տե՛ս նաև *Հայրապետյան Ս.Ա.*, Խոսվածքի երեկն ու այսօրը, // ԶՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.14, «Գիտություն» հրատ., Գյումրի, 2011, էջ 71-79:

<sup>7</sup> Կատվայան Վ., Հայ բարբառագիտության հարցեր, Եր., 2014, էջ 26:

հղում է անում. «Գրական լեզվի կամ որևէ բարբառի մաքրության ցուցանիշ թերևս կարող է լինել միայն օտար անհարկի փոխառությունների սակավությունը»<sup>8</sup>: Լեզվաբանը միանգամայն իրավացի է:

Առածներն ու ասացվածքները, թևավոր խոսքերը ոչ միայն պատկերավոր մտածողության միջոցներ ու ձևեր են, այլև օժտված են դաստիարակչական արժեքով, ուստի նրանց գործածությունը սերնդից սերունդ է անցնում որպես խրատ, որպես դաս: Այսպիսով՝ ապրում են նաև արևելյան լեզուներից անցած բառերը՝ շարունակելով ընկալվել որպես բարբառի անբաժանելի լեզվական բաղադրիչներ, ինչպես՝ *Հոր տան խերին մեննիմ*, Մեյդանիդ գյորա *ձիդ քշե: Չուկր ծովը բազար չեն էնե: Ուրիշին տնագ էրի, գլուխս էլավ: Քոռն ինչ գուգե՝ ջուխտմ աչք: Հալալն օր մագ էդնի, չի կտրի, հարամն օր գերան էդնի, կկտորվի: Կան նաև միայն փոխառյալ բաղադրիչներով կազմված ասացվածքներ, ինչպես՝ *Բոլ է փարեն, կսաղցնե յարեն: Հալալ գաղեն կշինե յոլ ու դայդա* և այլն:*

